Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ

ՄՕՍԿՈՒ

3

ԹՈՒՐՔԵՐԸ
ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

III

ԿԱԶՄՈՂ ԵՎ ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ
ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63. 3 (2Հ)
Թ 988

Հրատարակված է պետական պատվերով

Թ 988 Թուրքերը թուրքերի մասին, հատոր III,/ Կազմ. և խմբ.՝ Ռ. Մելքոնյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011, 308 էջ:

Գրքում ներկայացված են Հայոց ցեղասպանության վերաբերյալ ժամանակակից թուրք պատմաբանների, վերլուծաբանների տեսակետները, որոնք տարբերվում են թուրքական պաշտոնական թեզերից: Հավելվածում ներկայացված են երիտթուրքերի դատավարության մի շարք վավերագրեր:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1515-7

© ԵՊՀ հրատ., 2011
© Մելքոնյան Ռ., 2011

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Արդեն երկար տասնամյակներ է, ինչ Հայոց ցեղասպանության փաստի և դրա միջազգային ճանաչման դեմ Թուրքիան պայքարում է ոչ միայն քաղաքական, այլև գիտական ոլորտում: Հարկ է շեշտել, որ թուրքական պաշտոնական պատմագրություն կոչվածը, ըստ էության, նույնական է պատմության խեղաթյուրմանը հատկապես, երբ խնդիրը վերաբերում է Հայոց ցեղասպանությանը կամ Հայկական հարցին: Պատմությունը նորովի և իրենց հարմար ձևով կերտելու, այսինքն՝ կեղծելու հանձնարարականը թուրքական պատմագրությանը տրվել էր Թուրքիայի Հանրապետության հիմնադրի՝ Քեմալ Աթաթյուրքի կողմից և այդ հարցը գտնվում էր նրա անմիջական վերահսկողության ներքո: Փաստերը ցույց են տալիս, որ Թուրքիայի պատմագրությունը իր կեղծ թեզերով սպասարկում է թուրքական քաղաքականությանը: Հայության դեմ թուրքական պատմագիտական հարձակումը հատկապես ակտիվանում է 1965 թվականից հետո և այդ գործընթացը շարունակվում է մինչ օրս: Ներկայումս ևս Հայոց ցեղասպանության հարցը թուրքական պատմագրության թիվ մեկ խնդիրն է, որի ուղղությամբ նա իրականացնում է սիստեմատիկ քաղաքականություն:

Այս ամենի համատեքստում պետական թեզից տարբերվող տեսակետ ունեցող թուրք պատմաբանների հոդվածները, հարցազրույցները ունեն կարևոր նշանակություն: Միևնույն ժամանակ նկատենք, որ ամենահամարձակ թուրք պատմաբաններն անգամ տարածքային փոխհատուցման խնդրի հետ կապված ունեն խուսափողական և, հաճախ, պահպանողական մոտեցումներ:

Մատենաշարի սույն հատորում ներկայացված են վերջին մի քանի տարում թուրք պատմաբանների, վերլուծաբանների հոդվածները, հարցազրույցները Հայոց ցեղասպանության խնդրի առնչությամբ: Կարևոր ենք համարում նշել, որ նրանց կիրառած մի շարք տերմիններ ինչպիսիք են՝ Արևելյան Անատոլիա, Ազգային-ազատագրական շարժում (քեմալական շարժում) անընդունելի են մեզ համար և հակասում են պատմական օբյեկտիվ իրականություններին, սակայն բնագրի տեքստին հավատարիմ մնալու նպատակով նույնությամբ տեղ են գտել հայերեն թարգմանություններում: Նկատենք նաև, որ հիշյալ նյութերը հիմնականում տեղ են գտել համեմատաբար ավելի ազատ թուրքական մամուլում, ինչպես նաև 2005 թ.՝ Հայոց ցեղասպանության 90 ամյակին Թուրքիայում տպագրված «1915-ին ի՞նչ է եղել» հոդվածների ու հարցազրույցների ժողովածուում:

Ավելորդ չենք համարում նշել, որ սույն հատորում ընդգրկված թարգմանությունների գերակշիռ մեծամասնությունը (բացի Թոլգա Էրենի հեղինակած հոդվածից) կատարվել են Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի տարբեր կուրսերի ուսանողների կողմից:

Հավելվածում ներկայացված է թուրքագետ Մելինե Անումյանի արժեքավոր աշխատությունից մի հատված, որը վերաբերում է երիտթուրքերի դատավարությանը :

Ռուբեն Մելքոնյան
բ.գ.թ., դոցենտ

«ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ ԷԼ ԿԱՌՈՒՑԵԼ ԵՆՔ ԺԽՏՄԱՆ ԵՎ ՈՒՐԱՑՄԱՆ ՎՐԱ»[1]

(Հարցազրույց պատմաբան Թաներ Աքչամի[2] հետ)

Արիֆե Քյոշե – Վարչապետ Էրդողանը վերջերս հայտարարեց, որ Թուրքիայում ապօրինի աշխատող 100 հազար հայերին կարող է վտարել երկրից: Ինչպե՞ս եք գնահատում Էրդողանի այս խոսքերը: Արդո՞ք հայերը կանգնած են մի նոր աքսորի վտանգի առջև:

Թաներ Աքչամ – Առաջին անգամ, երբ որ լսեցի Էրդողանի խոսքերը, մտածեցի՝ ահա և հիմա ամբողջությամբ իրավունք վաստակեցինք Եվրոպայի անդամ լինելու: Սա կատակ չէ, ես լուրջ եմ ասում: Որովհետև Եվրոպան լի է կուսակցություններով, ովքեր իրենց երկրներում ապօրինի ներգաղթյալ աշխատողներին վտարելու քաղաքականություն են վարում: Քանի որ ես 15 տարի ապրել եմ Գերմանիայում, գիտեմ, որ գոյություն ունեն մեծ թվով գերմանացի ազգայն ականներ, պահպանողական կուսակցություններ և աջակողմյաներ, ովքեր ցանկանում էին ինձ վտարել: Ավելի վաղ Էրդողանը հայտարարել էր, որ այս երկրից քրիստոն-

---

[1] http://www.durde.org/2011/04/taner-akcam-tarihimizi-hep-inkar-uzerine-yok-saymak-uzerine-kurduk/

[2] Թուրք պատմաբան, ներկայումս ապրում և աշխատում է ԱՄՆ-ում:

յաներին քշելը ֆաշիստական մտայնության արդյունք է: Իսկ այժմ, երբ նա հայտարարում է, որ իր երկրում գտնվող քրիստոնյաներին, ապօրինի աշխատողներին վտարելու է, թող ձեզ չզարմացնի այն, որ դա բոլորին կհիշեցնի 1915-ի հայերի աքսորն ու կոտորածը: Ենթադրում եմ, որ թուրք ժողովուրդը կուշտ է 95-ամյա ստերից և գրկաբաց կընդունի մեկին, ով դուրս կգա ու համարձակ կասի՝ այո եղբայր, նման բան եղել է:

Արիֆե Քյոշե – Ամեն անգամ, երբ Թուրքիայում ապրող հայերի նկատմամբ որևէ սպառնալիք է լինում, ինչպես Դուք նշեցիք, բոլորը միանգամից հիշում են աքսորն ու 1915-ի դեպքերը: Ըստ Ձեզ՝ ի՞նչ տեղ է գրավում հայկական հարցը թուրքական ազգային ինքնության մեջ:

Թաներ Աքչամ – Սա որոշ ժամանակ առաջ պաշոնապես ձևակերպեց Թուրքիայի պաշտպանության նախարարը Եվրոպայում ասելով. «Եթե քրիստոնյաներին չքշեինք, ապա թուրքական պետությունը չէինք կարող հիմնել»: Ասվածը ճշմարտություն է: Նմանատիպ խոսքեր «Միություն և առաջադիմություն» կուսակցության իշխանության օրոք էլ են ասվել. օրինակ՝ արտաքին գործերի նախարարի և ազգային ժողովի նախագահի պաշտոնը զբաղեցրած Հալիլ Մենթեշը: Մալթայում նրա գրած մի նամակում կան խոսքեր, որոնք վերաբերում են այն հանգամանքին, որ եթե երկրից հայերին և հույներին չքշեին, ապա իրենք այս պետությունը չէին կարողանալու հիմնել: Նման խոսքեր շատ ավելի պարզ ձևով ասվել է 1920 թ. Անկարայի ազգային ժողովում Հասան Ֆեհմիի կողմից: «Նախքան աքսորն իրականացնելը գիտեինք, որ մեզ մարդասպան կկոչեին»,– ասում է և հարցնում. «Ինչո՞ւ մենք գնացինք մարդասպան կոչվելու ռիսկին»: Հարցնում է և ինքն էլ պատասխան տա-

լիս. «Մենք դա ստիպված էինք անել մեր պաշտելի հայրենիքի բարօրության համար»: Այդ ժամանակ շատ ավելի մեծ թվով խիզախներ կարող էին խոսել այդ տրամաբանությամբ: Հարցի կարճ բովանդակությունը հետևյալն է. Թուրքիայի Հանրապետությունը ստեղծվեց նաև 1915-ի Հայոց ցեղասպանության արդյունքում: Մեր հանրապետությունը հիմնած գործիչների մի մասն ուղղակիորեն մասնակիցն էին արյունահեղություններին կամ էլ լավ տեղեկացված են եղել այդ մասին: Յուրաքանչյուր ազգ ունի իր մի խումբ ազգային հերոսները, որոնց հետ բավական դժվար է հաշվեհարդար տեսնելը կամ եթե նրանց գործերում ոճրագործություններ կան, ապա դրանց հետ առերեսվելը: Թուրքիայի Հանրապետությունը հիմնած գործիչների փառքը մեր ազգային ինքնության անքակտելի մասն է: Նրանց քննադատելը կամ մեղադրելը կարծես մի տեսակ նման լինի ինքնամեղադրանքի և սա շատ դժվար է: Միմիայն դեմոկրատական մշակույթը ընբռնող հասարակություններն են ի վիճակի իրականացնել այդ առերեսումը:

Թուրքիայի այս բարդույթը միաժամանակ նաև նրա ծախերի խնդիրն է: Գիտեք, որ մեր ծախակողմյա ավանդույթներն էլ ազատագրական պայքարը դիտում էին որպես յոթ պետության դեմ իրականացված հակաիմպերիալիստական պայքար: Այդ պատճառով էլ ազատագրական պայքարն իրականացնող գործիչները մեզ համար առանձնահատուկ և կարևոր տեղ են զբաղեցնում: Ես հիշում եմ, թե դատարաններում ավանդաբար ինչպես էին պաշտպանվում ծախակողմյաները: Ասում էին, որ իրենք երկրորդ ազգային բանակն են, որ ազատագրական բանակը չկարաղացավ հեղափոխությունը բավարար չափով իրականացնել և իրենք շարունակելու են հեղափոխությունը՝ նրանց կիսատ թողած կետից: Գիտեք, որ 1968 թ. սերունդը իրեն բնորոշում էր որպես ազգային բանակ: Այսինքն՝ ազգային

բանակը մեր ձախ ինքնության մի մասն է կազմել: Մինչդեռ այդ բանակում կան դեմքեր, որոնք շատ լուրջ ձևով առնչվել են ոճիրին: Հիմա ուզում եմ այստեղ մանրամասնել. ես սա չեմ ասում այն իմաստով, որ մեղադրեմ մի ամբողջ սերնդի, որի նպատակը օտարի լծից ազատվելն էր: Բայց Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների մեջ կան մարդիկ, ովքեր մասնակից են եղել 1915 թ. ցեղասպանությանը կամ տեղյակ են եղել դրա մասին և ազատ խոսելու մեր դժվարությունը նաև այստեղից է բխում:

Արիֆե Քյոշե – Դուք Ձեր մի հոդվածում ասել եք, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանցիների պարտությունից հետո նրանք դեմառդեմ մնացին երկու հարցի հետ. դրանցից մեկը այն հարցն էր, թե ի՞նչ են լինելու Օսմանյան պետության տարածքներն ու ինքնիշխանության իրավունքը, իսկ մյուսը՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ սեփական քաղաքացիների նկատմամբ իրականացրած ոճրագործությունների հարցը: Նշում եք նաև, որ այս երկու հարցերն էլ չեն մոռացվել: Կարո՞ղ եք մի քիչ մանրամասնել ասվածը:

Թաներ Աքչամ – Անմիջապես 1918-ին, երբ Թուրքիան պարտված դուրս եկավ պատերազմից, Փարիզում սկսվեցին խաղաղության բանակցություններ, որտեղ օսմանցիներին առնչվող երկու կենտրոնական հարց կար: Նախ՝ արդյո՞ք Օսմանյան պետությունը պահպանելու էր իր տարածքային ամբողջականությունը: Այս հարցի վերաբերյալ երկու տարբեր տեսակետներ կային. առաջինը այն տեսակետն էր, որը պաշտպանում էր թուրքական ազգայնական շարժումը և անգամ Ստամբուլի իշխանությունը: Սրա համաձայն՝ օսմանցիներին մնացած, բայց դեռևս չգրավված տարածքներին չպիտի դիպչեին և 1918 թ. Մուդրոսի զինա-

դադարով որոշվելիք սահմանները պիտի ճանաչվեին որպես Օսմանյան պետության սահմաններ (այն ժամանակ Թուրքիայի Հանրապետության մասին որևէ մտադրություն դեռ չկար): Սա ավելի ուշ կոչվելու էր ազգային պակտի քաղաքականություն, որը մենք պաշտպանելու էինք ու այս հարցի վերաբերյալ Ստամբուլի և Անկարայի կառավարությունների մեջ որևէ լուրջ տարաձայնություններ չկային: Իսկ երկրորդը հաղթող պետությունների տեսակետն էր. նրանք ցանկանում էին բաժանել Անատոլիան իրենց և այլ ազգերի մեջ: Հույները, քրդերը, հայերը, նրանք բոլորը ցանկանում էին այս տարածքների վրա հիմնել իրենց պետությունները: Այսինքն՝ առաջին հարցը հետևյալն էր. արդյո՞ք տարածքները բաժանվելու էին, եթե այո, ապա ո՞վ և ո՞ր տարածքն էր ստանալու, և երկրորդը՝ ի՞նչ էր լինելու պատերազմի ժամանակ իրականացված մեղսագործությունների հարցը: Անգլիան և Ֆրանսիան օգտագործում էին օսմանցիների իրագործած ոճրագործությունները Ամերիկային պատերազմի մեջ ներքաշելու նպատակով և ամբողջ աշխարհին հայտնել էին, որ պատժելու են օսմանյան կառավարիչներին: Թոյնբիի «Կանաչ գիրք»-ը, Մորգենթաուի հիշողությունները. այս բոլորը հրատարակվել էին այդ ժամանակ Ամերիկային պատերազմի մեջ ներքաշելու նպատակով: Պատերազմի ամբողջ ընթացքում դաշնակիցները շատ հաճախ օգտագործել են օսմանցիների՝ իրենց սեփական հպատակների դեմ իրագործած ոճրագործությունները դադարեցնելու մոտիվացիան: Փարիզում քննարկվող հարցը հետևյալն էր. իրականացված այս մեղքերի պատճառով օսմանցիները ինչպե՞ս պիտի պատժվեին, ի՞նչ պատիժ են սահմանելու այս մեղքերն իրականացնողների նկատմամբ: Այս թեմայի վերաբերյալ մի քանի կարծիք ևս կա:

Արիֆե Քյոշե – Ո՞րոնք են այդ կարծիքները:

Թաներ Աքչամ – Անկարայի ազգայնական կառավարության կարծիքը հետևյալն էր. այս ոճրագործությունները իրականացվել են և դրանց պատասխանատուները թող դատվեն, բայց նրանք 3-5 իթթիհաթականներ են ու մենք չենք կարող ընդունել այն, որ բացի նրանցից պիտի պատժվի ամբողջ թուրք ազգը: Սրան հակառակ՝ հաղթած պետությունները անգլիացիների գլխավորությամբ ասում էին, որ պատիժը չի կարող սահմանափակվել 3-5 իթթիհաթականներով և ցանկանում էին, որպեսզի ընդլայնվի մեղադրյալների ցանկը: Բացի անհատների պատժից, նրանք ավել շատ պահանջում էին թուրք ազգի պատիժը: Եվ այդ պատիժն էլ պիտի լիներ Անատոլիայի մնացած հողերը ուրիշ ազգերի միջև բաժանելը: Առանց այդ էլ հարցի ամենազգայուն կետն էլ հենց սա էր: 1919 թ. ապրիլ ամսին Ստամբուլի բարձրագույն կոմիսար կոչվող անձնավորությունը Փարիզի հաշտության բանակցություններին ուղղված նամակում այս իրավիճակի մասին շատ պարզ խոսում էր. «Թուրքիային պատժելու երկու ձևն էլ համարում եմ տեղին»,– ասում էր: «Նախ՝ անձնապես այս մեղքն իրականացնողներին պատժելով՝ թուրքերին դաս կտրվի: Երկրորդն էլ պետք է Թուրքիային վերածել այնպիսի մի փոքր պետության, որ այլևս չկարողանա ոչ մի նման ոճրագործություն իրականացնել»: Այսինքն՝ Անատոլիայի տարածքների բաժանումը բերվեց օրակարգ և կյանքի կոչվեց ոչ թե որպես իմպերիալիստական քաղաքականության անհրաժեշտություն, այլ որպես պատիժ Թուրքիային, ով մարդկության դեմ մեղք էր գործել: Այդ ժամանակ Անկարայում Մուսթաֆա Քեմալն էլ, Ստամբուլի կառավարությունն էլ ասում էին, թե եկեք մեղավորներին պատժենք, բայց սա չպետք է իրականացվի Անատոլիայի բաժանման ձևով: Ան-

հրաժեշտ է ընդգծել, որ այդ ժամանակ բոլորն ընդունում էին, որ իրականացվել է ոճրագործություն. բոլորը պաշտպանում էին այն միտքը, որ մեղք իրականացնողներին պետք է պատժել: Բայց Անկարան և Ստամբուլը դեմ էին արտահայտվում, որ պատիժը լինի Անատոլիան բաժանելու ձևով: Անկարան մի կողմից պաշտպանելով պատիժը՝ մյուս կողմից էլ պայքարում էր ազգային պակտ հիմնելու համար:

Ստամբուլում այս ընթացքում շատ կարևոր մի բան տեղի ունեցավ: Օսմանյան կառավարության կողմից հիմնված դատարանները, որոնց նպատակը հայերին կոտորելու մեղքն իրագործած իթթիհաթականներին դատելն էր, սկսեցին դատել նաև Ազգային պակտը պաշտպանող ազգայնական շարժման առաջամարտիկներին: Մուսթաֆա Քեմալն ու ընկերները ևս հեռակա կարգով մահապատժի դատապարտվեցին: Նույն դատարանների կողմից սկսեցին դատվել և՛ նրանք, ովքեր ցանկանում էին ազգային անկախություն ու մնացած տարածքների վրա Օսմանյան ինքնիշխանության պահպանում, և՛ նրանք, ովքեր մեղադրվում էին հայերին կոտորելու համար: Հայերին կոտորած մարդասպաններին դատող դատարանը դատեց նաև անկախության պայքար ծնող ազգային շարժման առաջնորդներին: Ըստ իս՝ ահա հենց այստեղ էլ հանգույցը քանդվեց: Մինչ այդ պահը Անկարան 1915 թ. պատասխանատուներին մեղադրելը դիտում էր որպես ազգային պակտի համար անհրաժեշտ գին, որը պետք է վճարվեր ու աջակցում էր դրան: Բայց այն ժամանակ, երբ Անկարան տեսավ, որ չնայած անհատական պատժին՝ չի կարողանալու պաշտպանել ազգային պակտը, անգամ իրենք իրենց չեն կարողանում պաշտպանել, իր դիրքորոշումը փոխեց: Այսինքն՝ 1915 թ. հիշելը, մեղավորների համար պատիժ պահանջելը սկսվեց ընկալվել որպես «հայրենիքի և ազգի մասնա-

տում»: Այսպես ձևավորվեց տարօրինակ մի տրամաբանություն. եթե ասում եք, որ 1915-ը ցեղասպանություն է, որ մեղավորները պիտի պատժվեն, ուրեմն սա նշանակում է, որ միևնույն ժամանակ ասում եք, թե «թող Անատոլիան բաժանվի»: Այս պատճառով էլ Հրանտ Դինքին և պարոն Սարգսին դատելու ժամանակ դատարանը վճռեց, որ «ցեղասպանություն բառը օգտագործելը նշանակում է օրակարգ բերել Թուրքիայի Հանրապետության մասնատումը»: Կարճ ասած, մենք 1920-ականներին հստակ ընդունում էինք, որ կոտորած է եղել, հայերի նկատմամբ այս տեսակ ոճրագործություններ են իրականացվել, բայց այն ժամանակ, երբ Անգլիան մարդասպանների պատիժը նույնական դարձրեց Անատոլիայի բաժանմանը, այդ պահից Անատոլիայի շարժումը փոխեց իր միտքը կապված այս թեմայի հետ: Մենք դրանից հետո մոռացանք, որ պաշտպանում էինք մարդասպանների պատժելու գաղափարը: Այդ պատճառով իմ գլխավոր թեզը հետևյալն է և սա ես միշտ կասեմ. եթե Անգլիան ընդուներ Մուսթաֆա Քեմալի և Ստամբուլի կառավարության առաջարկը, այսինքն՝ այսօրվա Թուրքիայի Հանրապետության սահմանները ամբողջությամբ ճանաչեին որպես այն ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության սահմաններ և ի պատասխան դրան պահանջեին, որ Հայոց ցեղասպանության համար մեղավորներին դատեին, ապա մենք այսօր իթթիհաթականների մասին կխոսեինք այնպես, ինչպես գերմանացի նացիստների մասին ենք խոսում:

Ուզում եմ բերել մի երկու օրինակ կապված նրա հետ, թե ինչպես էին այն ժամանակ քննադատվում հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունները: 1919-ին հոկտեմբեր ամսին Ամասիայում Ստամբուլի և Անկարայի կառավարությունները ստորագրեցին հինգ արձանագրություն: Առաջին արձանագրության մեջ նշվում էր, որ քա-

ղաքական անհրաժեշտություն է դատել 1915-ի աքսորի մեղավորներին: Ավելի ուշ Քեմալը ընտրություններից հետո կազմված Անկարայի մեջլիսում իր խմբի ծրագիրը գրելիս անդրադարձել է այդ խնդրին ու նշել, որ ոճրագործություն իրականացնողների պատիժը չպետք է մնա թղթի վրա և անհրաժեշտ է իրական պատիժ՝ որպես դաս բոլորին: 1920-ին Անկարայի մեջլիսի բացման ժամանակ իր խոսքում 1915 թվականի կոտորածը նա որակեց «ամոթալի գործողություն»: Այսինքն՝ 1918-21 թթ. ամբողջությամբ միակարծություն էր տիրում այն հարցում, որ հայերը զանգվածային ոչնչացման են ենթարկվել, այդ զանգվածային կոտորածների համար պատասխանատու են իթթիհաթականները և անհրաժեշտ է նրանց պատժի ենթարկել: Դրա մասին խոսում էին բացեիբաց: Բայց այն ժամանակ, երբ իթթիհաթականներին պատժելու փոխարեն պահանջեցին, որ պատիժը լինի մի ամբողջ պետության բաժանման ձևով, այդ ժամանակ մենք մոռացանք այս հարցը:

Արիֆե Քյոշե – Երբ խոսում ենք 1915 թվականի դեպքերի մասին, առաջինը որ մտաբերում ենք, այն է, թե ի՞նչ են արել հայերը: Ի՞նչ եք կարծում սրա մասին:

Թաներ Աքչամ – Այո, այն պահին, երբ սկսում են քննարկել, թե 1915-ին ինչ է եղել, իսկույն ասում են, թե հայերն էլ այս կամ այն բանն են արել: Սա անիմաստ և ապարդյուն քննարկում է: Հայերի կատարածները բնավ կարևոր չեն, եթե այն դիտեք նրանց նկատմամբ իրականացրած ցեղասպանության լինել-չլինելու տեսանկյունից: Հետևաբար, ցանկացած մեկը, ով ուզում է քննարկել, թե 1915-ին հայերի նկատմամբ իրականացրածը ինչպես է բնորոշվելու, նախևառաջ դժվարանում է մի կողմ դնել այն հարցը, թե ինչեր են արել հայերը: Նման անհեթեթ քննարկում չի

կարող լինել: Ասեմ, թե ինչու. կա մահացած մարդ և նրա գլխավերևում կանգնած է մեկը: Հարցը հետևյալն է. «գետնի վրա գտնվող մարդը սպանվել է» թե՞ «կողքի կանգնածն է նրան սպանել»: Այս հարցին պատասխանելիս կասեք կամ «սպանել է» կամ էլ «չի սպանել»: Այժմ այս հարցին պատասխանելիս, եթե սկսեք պատմել, թե մահանալուց առաջ հատակին պառկած մահացած մարդն ինչեր է արել, դուք կզբաղվեք դատարկաբանությամբ, որովհետև հարցն այն չէ, թե սպանվելուց առաջ մարդն ինչեր է արել: Հարցն այն է, թե արդյոք գետնին պառկած մարդը սպանված է, թե՞ ոչ: Այսինքն՝ անուղղակիորեն 95 տարի շարունակ մեր իրականացրած քննարկումը, թե հայերը այս կամ այն բանն են արել, ցեղասպանության տեսանկյունից նայելիս մի իմաստ ունի. այն է, մենք պատմում ենք, թե ինչու ենք հայերի նկատմամբ իրականացրել ցեղասպանություն: Ցեղասպանության հարցի պատասխանը այն է, թե «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայերին սպանել է, թե՞ չի սպանել: Ինչ ուզում է հայերն արած լինեն, որն ուզում է լինի պատճառը, արդյո՞ք իթթիհաթականները սպանել են, թե՞ ոչ, եթե դուք պատմեք հայերի արածները, ապա միայն ասած կլինեք, թե ինչու է ոճրագործությունը իրականացվել: Սրանք գուցե կարող են լինել «մեղմացուցիչ հանգամանքներ», բայց միայն այդքանը:

Արիֆե Քյոշե – Ո՞րն է այս հարցի Ձեր պատասխանը: Օրինակ՝ ասում են, որ իթթիհաթականների կողմից հայերը գիտակցաբար չեն սպանվել, որ մահացել են գաղթի ժամանակ, ճանապարհին սովի, անբարենպաստ պայմանների պատճառով և ուստի այս դեպքերը «ցեղասպանություն» չեն կարող կոչվել:

Թաներ Աքչամ – Համաձայն մի տեսակետի՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը չէր կարող իրականացնել քաղաքականություն, որ նպատակ էր հետապնդում ոչնչացնել հայերին: Շատ լավ: Քանի՞ սպանված կա: Թվերի հաշվով կարծես թե բոլորը միանշանակ համակարծիք են: Եթե չափազանցումները մի կողմ դնենք, ապա ըստ 1919-ի օսմանյան պաշտոնական թվերի՝ 800 հազար հայ է ոչնչացվել: Հեշտ է ասելը՝ 800 հազար հայ է կոտորվել և պարզ է, որ պետությունը պատասխանատու է այսքան մարդու սպանության համար և սարսափելի թիվը բացատրում ենք այս կամ այն պատճառներով: Եկեք այս պատասխանը դիտարկենք ավելի մանրամասն. ասենք թե 800 հազար մարդ մահացավ «քաղցից, անբարենպաստ պայմաններից, անհասկանալի պատճառներից» և այլն: Լավ, բայց նույն 1916, 1917, 1918 թվականներին Օսմանյան կառավարությունը 1,5 միլիոնից ավել մուսուլմանների տեղահանությունը կատարեց առանց որևէ խնդրի: Շատ լավ, այդ պետությունը, որ 1,5 միլիոն մուսուլմաններին առանց որևէ խնդրի տեղահանեց, ինչպե՞ս չկարողացավ խոչընդոտել մոտավորապես մեկ միլիոն հայերի կոտորածին: Այս սպանություններն էլ միանգամից տեղի չեն ունեցել. դրանք եղել են երկու տարվա ընթացքում, շաբաթ առ շաբաթ, ամիս առ ամիս: Կարելի էր հարց բարձրացնել օսմանյան իշխանությունների առջև. «Մահվան մասին գիտեիր, լավ, բայց ինչո՞ւ չդադարեցրիր աքսորը»: Նահանգապետերից, գավառապետերից եկող հեռագրեր կան, որտեղ ասվում են. «անվտանգություն չկա, չեմ կարող աքսորել», սրան ի պատասխան հրամայում եք, թե ինչ էլ ուզում է լինի աքսորիր: Այսինքն՝ դու կանխատեսում ես մահերը: Ասելու ես, թե «պատերազմ էր, դժվարանում էիր», բայց հենց նման բան ասողին էլ կոչում են մարդասպան: Հարցն այնչափ պարզ է: Այսինքն՝ եթե գիտեք, որ ձեր գործողությունների արդ-

յունքը մահն է և չնայած դրան՝ շարունակում եք ձեր գործողությունը, ասել է թե դուք կատարում եք մեղքը՝ հասկանալով այն: Ըստ էության, հենց սա էլ կոչում են ցեղասպանություն:

Մի կարևոր կետ ևս կա. Անատոլիայի բոլոր շրջաններից են հայերն աքսորվել՝ Անկարայից, Բուրսայից, Քյութահիայից, Ամասիայից, Թոքաթից, Սամսունից, Էդիրնեից, Թեքիրդաղից: Այս վիլայեթները կարևոր են: Նայեք, թե հայերին այս վիլայեթներից հանում և ո՞ւր են քշում՝ Սիրիայի և Իրաքի անապատներ: Ընդ որում, օսմանյան փաստաթղթերով Սիրիան և Իրաքը հայտարարվել էին պատերազմական տարածքներ: Գիտեք՝ մենք պաշտոնական մի սուտ ունենք. ասում են, թե «հայերը մեզ թիկունքից հարվածելու էին, հարվածում էին, այդ պատճառով պատերազմական շրջաններից նրանց հանեցինք և առավել անվտանգ վայրեր տարանք, որպեսզի մեր դեմ չպատերազմեին»: Այժմ վիլայեթների անունները կրկնում եմ՝ հայերին հանում եք Բոլուից, Քաստամոնուից, Անկարայից, Մուղլայից, Իզմիրից, Քյութահիայից, Անատոլիայի կենտրոնից՝ ամենաանվտանգ վիլայեթներից, ուր որևէ դեպք չի եղել և ուղարկում ուղիղ պատերազմական շրջան՝ անգլիացիների հետ պատերազմի: Միթե այստեղ տարօրինակ ոչինչ չկա...

Մի ուրիշ կետ ևս. ասում են, թե «հայերը մահացել են սովից»: Բայց այդ ընթացքում օսմանյան կառավարությունը հրաժարվում էր ԱՄՆ-ի և Գերմանիայի որևէ տեսակի օգնության առաջարկից: Այս պետությունները դիմում էին պաշտոնապես. ասում էին օգնություն ցուցաբերենք ձեզ ուտելիքի, վրանների և այլնի տեսքով, բայց դա մերժվում էր: Հայերին օգնել ցանկացող օտար երկրների ներկայացուցիչներին սպառնում էին մահվամբ: Օգնություն ուղարկող թուրքեր կամ էլ որոշ հայեր ձերբակալվում էին: Այսինքն՝ արգելված էր ամեն տեսակ օգնություն... Տիրանում

էին հայերի թողած ունեցվածքին՝ փոխարենը չվճարելով հայերին անգամ մի դուրուշ...Կարծես թե այս պարզ փաստերն անգամ բավական են ցույց տալու, որ իթթիհաթականները ունեցել են հայերին ոչնչացնելու նպատակ:

Արիֆե Քյոշե – Գիտենք՝ ապացուցելու համար, թե ցեղասպանություն եղել է կամ չի եղել, կարևոր կետը այն է, թե արդյոք դա ունեցել է որևէ նպատակ: Արդյոք կարիք չկա՞, որ ցույց տաք և ապացուցեք, որ իթթիհաթականները նպատակ են ունեցել հայերին կանխամտածված սպանելու: Արդյոք կա՞ մի փաստաթուղթ, որ ցույց կտա, թե հայերի նկատմամբ իրականացրածը ցեղասպանություն է:

Թաներ Աքչամ – Բավական շատ փաստաթղթեր կան և դրանց մեծ մասը հրատարակված են: Նպատակի հարցը կարևոր է: Նպատակն ինչպե՞ս է ապացուցվում: Միջազգային իրավաբանության մեջ ավելի շատ օգտագործվում է երկու տեսակ սկզբնաղբյուր: Առաջինը՝ անհրաժեշտ է, որ լինեն գրավոր փաստաթղթեր, հրամաններ հետևյալ ձևերով՝ որոշում է ընդունվել այս խմբին ոչնչացնել: Ոճրագործները հիմար չեն: Իրենց հետևից նման հետքեր չեն թողնում: Անգամ Հիտլերը նման մի հրաման չունի: Երկրորդը hate speech կոչվող խնդիրն է, որ ենթադրում է ատելություն և թշնամանք սպանված խմբի նկատմամբ: Այսինքն՝ եթե լինեին գրություններ և ելույթներ հայերին ու հրեաներին սպասվող արհավիրքի, նրանց ոչնչացնելու, կոտորելու անհրաժեշտության վերաբերյալ, ապա դրանք կարող են օգտագործվել որպես ապացույց: Հիտլերի՝ 1939 թ. կուսակցական ժողովում արած հայտնի զեկույցը նման մի օրինակ է: Սակայն հնարավոր չէ ամեն անգամ

նմանատիպ փաստաթղթեր գտնել: Այդ դեպքում միջազգային իրավաբանությունը լուրջ խնդրի է բախվում. ինչպե՞ս ապացուցել կանխամտածվածությունը: 1985 թ. ենթահանձնաժողովը, որը ՄԱԿ-ում զբաղվում էր այս հարցով ընդունեց Whitaker կոչվող մի զեկույց: Այս զեկույցում մի նորություն օրակարգ եկավ կապված մտածված կոտորածի խնդրի հետ: Այս նորության էությունը իրականում 19-րդ դարի անգլիական քրեական իրավունքի կանոններից մեկի ընդլայնումն էր: Սա անվանում են գիտակցված անզգուշություն: Այսինքն՝ եթե իրականում կոտորածի նպատակ ունեք և ձեր գործողություններում երևում է այդ ամենի հնարավորությունը, բայց այն չեք կանխում, ուրեմն դա գիտակցված անզգուշություն է: Սա բավարար է, որ ձեր արածը համարվի կոտորած: Կրկնեմ. եթե չկարողանան գտնել փաստաթուղթ, որ իրականում ցույց է տալիս կանխամտածվածությունը և եթե անգամ իշխանական խումբը կոտորածի որևէ մտադրություն չունի էլ, սակայն նրա գործողության արդյունքում մարդիկ են մահացել և դրանք կանխելու համար ոչինչ չի ձեռնարկվել, ապա համարվում է որ դա կանխամտածված է:

Մերոնք հայերի աքսորը սկսեցին 1915-ի ապրիլի վերջին և մայիսի սկզբին: 1915 թ. մայիսից մինչև 1916 թ. վերջը նրանց լուրեր էին հասնում, որ հարյուրավոր և հազարավոր հայեր սպանվում են ու սրա հետ կապված օսմանյան կառավարությունը ոչ մի միջոցառում չձեռնարկեց: Անգամ սա բավարար ապացույց է, որ մտադիր են եղել ցեղասպանություն իրականացնել: Այստեղ կարող եմ ավելացնել մի բան ևս: Օսմանյան արխիվներում չկա նահանգներից կենտրոն ուղարկված որևէ փաստաթուղթ: Կրկնեմ, արխիվում չկան որևէ նահանգի, գավառի կառավարիչից Ստամբուլ ուղարկված հեռագրեր, փաստաթղթեր, որոնք վերաբերեն հայերի աքսորին: Ինչո՞ւ երկու տարի շարունակ

Անատոլիայից Ստամբուլ եկող որևէ փաստաթուղթ չկա, որովհետև դրանք տեղեկացնում էին մահվան դեպքերի մասին: Կարող եմ երկու կոկրետ օրինակ բերել: Մի փաստաթուղթ կա հրատարակված 1915-ի հունիսին: Գերմանացիների պարտադրանքով Թալեաթ փաշան հեռագիր է ուղարկում Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդին: Հեռագրում Թալեաթն ասում է. «Համաձայն մեր տեղեկությունների, Դիարբեքիրում սպանում եք մարդկանց և առանց խտրականության սպանում եք բոլոր քրիստոնյաներին: Մինչդեռ մենք այս «կարգաբանական միջոցառումները» ձեռնարկել ենք բացառապես հայերի համար: Սխալ է, որ այն իրականացնում եք բոլոր քրիստոնյաներին նկատմամբ: Ինձ տեղեկացրեք վիճակի մասին»: Երբ ես սա Թուրքիայում օգտագործեցի որպես սպանության կարևոր ապացույց և որպես փաստաթուղթ, որ ցույց էր տալիս կառավարության տեղեկացվածությունը, Հալաչօղլուն և նրա խումբը ասացին, թե պարոն, ահա ինչպես տեսնում եք՝ Թալեաթն ասում է, որ դադարեցնեն կոտորածը: Նախ՝ Թալեաթը չի ասում դադարեցրեք արյունահեղությունը, այլ միայն՝ տեղեկացրեք վիճակի մասին: Եվ երկրորդ. եթե նահանգապետի կողմից 2 հազար մարդ սպանվի, ի՞նչ կանեք: Հետաքննություն կսկսեք, այնպես չէ՞: Բայց այստեղ որևէ հետաքննություն չկա: Վերջին գրքումս տպագրեցի, որ հայերին աքսորելու ժամանակ ցուցաբերած ակտիվության համար Դիարբեքիրի ոստիկանությանն ու ժանդարմեային տրվում են ծառայողական բարձր մեդալներ և դրամական պարգևներ: Սա արվում է վերը նշված քաղաքում սպանություններ իրականացնելուց հետո:

Նմանատիպ մի օրինակ էլ Բողազլըյանի գավառապետ Քեմալ բեյի հետ է կապված. Բողազլըյանի հրամանատար Մուսթաֆա բեյը Ստամբուլ է ուղարկում մի հեռագիր, որտեղ նշվում է, որ գավառապետ Քեմալ բեյը պատասխա-

նատու է 3610 մարդու սպանության համար: Արդյունքում ի՞նչ եղավ: Բողազլըյանի գավառապետի պաշտոնը բարձրացվեց: Այսինքն՝ անուղղակիորեն ակնհայտ է, որ իթթիհաթականները վարում էին գիտակցված քաղաքականություն:

Բացի այս պարզ օրինակներից, իմ գրքերում կան նաև տասնյակ փաստաթղթեր, որոնց մեծամասնությունը լույս է սփռում Ստամբուլում տեղի ունեցած դատական գործընթացների վրա: Օրինակ՝ Բեհաեդդին Շաքիրը ունի մի հեռագիր, որտեղ ասվում է. «Մեզ շտապ տեղեկացրեք, թե ձեր մոտ գտնվողներին կոտորե՞լ եք, թե՞ աքսորել»: Ստամբուլում տեղի ունեցած դատական պրոցեսների ընթացքում սրա նման ուղղակիորեն կոտորածի հետ կապված տասնյակ փաստաթղթեր բացահայտվեցին: Օրինակ՝ Կեսարիայի զինվորական հրամանատարի ուղարկած մի հեռագրում պարզ ձևով օգտագործվում էր. «աքսորը նշանակում է կոտորած» արտահայտությունը: Բողազլըյանի կառավարիչ Քեմալը իր ցուցմունքում ներկայացնում է, որ ինքը ստացել է հրաման կոտորել հայերին: Անկարայի նահանգապետ Մազհարը, Յոզղաթ նահանգի կառավարիչ Զեմալը դատարանին տված իրենց գրավոր և բանավոր ցուցմունքներում ասել են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության քարտուղարներից իրենք գաղտնի հրամաններ են ստացել: Եվ կրկին 1918 թ. նոյեմբեր ամսին խորհրդարանում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ կառավարության անդամ Ռեշիդ փաշան իր խոսքում նշում է. «Կառավարությունում շատ քիչ եմ պաշտոն զբաղեցրել: Այդ ընթացքում տեսա ներքին գործերի նախարարության փաստաթղթերը: Աքսորին զուգահեռ նաև կոտորածի հրաման էր ուղարկված նահանգներ»: Հետևաբար, մեր ձեռքում կան բավարար ապացույցներ, որոնք վերա-

բերում են այն հանգամանքին, որ դեպի շրջաններ ուղարկվել են կոտորածի հրամաններ:

Արիֆե Քյոշե – Ինչպե՞ս է իրականացվել ցեղասպանությունը, ինչպե՞ս են սպանվել հայերը:

Թաներ Աքչամ – Հայերին սպանել են՝ օգտագործելով չորս տարբեր մեթոդներ: Առաջին. Սև ծովի շրջանում, Տրապիզոնում և Սամսունում հայերին քշել են դեպի ափեր և խեղդել ծովում: Այս մասին 1918 թ. հոկտեմբերին ստամբուլյան հանդիպումների ժամանակ ասել է Տրապիզոնի պատգամավոր Հաֆըզ Մեհմեթը: Նա նշել է, որ այնտեղի գավառապետերից մեկը սպանվել է այն պատճառով, որ ընդդիմացել է այդ գործին: 1919 թ. ապրիլ և մայիս ամիսներին Ստամբուլի դատավարության ժամանակ հենց Տրապիզոնի կոտորածի ականատես-վերապրողներն են պատմել ծովում խեղդելու դեպքերի մասին: Երկրորդ. սպանվել են իրենց բնակավայրերում նույնիսկ առանց աքսորի ենթարկվելու: Հատկապես Մուշի և Բիթլիսի շրջաններում հայերը սպանվել են իրենց տներում, ողջ-ողջ այրվել եկեղեցիներում: Երրորդ. հայերը կոտորվել են որոշակի վայրերում՝ կուսակցության գաղտնի միավորումների կողմից: Այդ գաղտնի միավորումները հարձակվում էին աքսորյալ հայերի քարավանների վրա և ոչնչացնում նրանց: Եթե նրանց թիվը չէր բավարարում, ապա քրդական ցեղերի հետ համաձայնության գալով՝ հայերին հանձնում էին այդ ցեղերին: Սրանք այն քրդերն էին, որ համագործակցում էին կառավարության հետ: Սպանության ամենավերջին միջոցն էլ հայերին անապատ քշելն ու առանց սննդի թողնելն էր: Արդյունքում, համաձայն մեր թվերի՝ 800 հազար հայեր ամբողջությամբ կոտորվեցին:

Արիֆե Քյոշե – Ըստ Ձեզ՝ հնարավո՞ր է արդյոք, որ կարճ ժամանակամիջոցում թուրքական որևէ կառավարություն ճանաչի ցեղասպանությունը:

Թաներ Աքչամ - Ուրիշ հնար չունի: Այդ դեպքերը չի անվանի ցեղասպանություն, ուրիշ անուն կտա, բայց ստիպված կլինի ընդունել, որ կատարվածը մեծ ոճրագործություն է և ամոթ: Ես չեմ կարող իմանալ, թե սա 5, 10, 20 թե 50 տարի հետո կլինի: Թուրքիան չի կարող ապրել այս ոճրագործությունը ծածկելով: Սա Թուրքիայի ամոթն է: Այս ամոթով Թուրքիան չի կարող ոչ Եվրամիության անդամ դառնալ, ոչ էլ ժամանակակից աշխարհում տեղ ունենալ: Պարզապես թույլ չեն տա: Մենք այսօր այս հարյուրամյակն անվանում ենք ներողություն խնդրելու դար: Թուրքիան նման էր մի կաթսայի. ԱԳՆ-ն կափարիչն էր, որը դժվարությամբ էր «ծածկում» Թուրքիան: Այժմ այս կաթսան պայթում է. արդեն հնարավոր չէ Թուրքիային արտաքին աշխարհից մեկուսի պահել: Ամեն տեղից կաթսան ժայթքում է: Այս դարում, այս գլոբալիզացման աշխարհում, տեխնոլոգիաների այս մակարդակում թուրք մարդուն չեք կարող ստով, երդմամբ որևէ բան համոզել: 95 տարի շարունակ Թուրքիայում մեզ ասել են, որ քուրդ չկա: Երբ ես միջնակարգ դպրոցում էի մեզ բաժանել էին Ֆահրեթթին Քըրգըզօղլուի գրքերը, որտեղ գրված էր, որ «քրդեր չկան, քրդերն էլ թուրքեր են»: Սրանք գիտական գրքեր էին: Սա ծանոթագրություններ և նման բաներ ունեցող ակադեմիական աշխատանք էր: Իսկ քրդերը ահա սարերում շրջող թուրքերն են, իբր թե ձյուն է եկել, ձյան վրա քայլելիս ոտնաձայններից լսվել է «քյարթ, քյուրթ» ձայնը և այդ պատճառով էլ սարերում ապրող թուրքերին քուրդ են անվանել և այլն: 95 տարի շարունակ մեզ բթացրել են ստով, թե «քուրդ չկա»: Իսկ այս պահին այն, ինչ ասում են Հայոց ցե-

ղասպանության վերաբերյալ, հետևյալն է. «1915 թ. ոչինչ չի եղել: Եթե անգամ մի բան եղել է, ապա դրանում հայերն են պատասխանատու»: Այս ստով ավելի հեռու չեն կարող գնալ: Սա էլ է խաբեություն, ինչպես սուտը, թե քուրդ չկա: Պետությունը, որ չի կարողանում հաջողությամբ առերեսվել սեփական պատմությանը, նույնն է, ինչ պետությունը, որը չի կարողանում լինել ժողովրդավար: Հետևաբար, եթե ցանկանում ես կյանքի կոչել ժողովրդավարությունը ուրեմն պետք է առերեսվես քո պատմության մեջ եղած խայտառակության հետ: Մոտ ժամանակներս Թուրքիայում նոր էթնիկ խմբեր ևս ի հայտ կգան, օրինակ՝ դերսիմցիները և կհայտարարեն. «Մեր նկատմամբ իրականացվածը ևս ցեղասպանություն է, պահանջում ենք դրա ճանաչումը»:

Արիֆե Քյոշե – Լավ, իսկ որո՞նք են այն քայլերը, որ պետությունը պիտի ձեռնարկի այս խնդրի ուղղությամբ: Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը տարածք կամ էլ փոխհատուցում տալու խնդրի վերաբերյալ:

Թաներ Աքչամ – Նախ և առաջ պետք է ներողություն խնդրել: Թուրքիայի Հանրապետությունը պետք է հայտարարի. «Սա մեծ խայտառակություն է և ներողություն ենք խնդրում»: Անշուշտ, պետությունը կարող է ասել նաև, որ «դա իրականացնողների և Թուրքիայի Հանրապետության մեջ կապ չկա»: Առանց այս ամենի մասին հայտարարելու ոչինչ հնարավոր չէ ձեռնարկել: Այդ քայլից հետո անկասկած կքննարկվի, կխոսվի, թե հայերի կրած վնասների փոխհատուցումը ի՞նչ է լինելու: Տարբեր մտքեր կարող են ի հայտ գալ կապված այդ փոխհատուցման հետ: Այս խնդրի հարցում կարող եք սկսել փոքր քայլերից: Ես կարծում եմ, որ լավ կլինի, եթե փոխհատուցման խնդրի քննարկման ժամանակ Թուրքիան Եվրոպային՝ Անգլիային,

Ֆրանսիային, Գերմանիային և հրավիրի սեղանի շուրջ: Նրանք որոշակիորեն մասնակից են եղել այս մեղքին: Հայոց ցեղասպանությունը Եվրոպայի պատմության մասն էլ է կազմում:

Արիֆե Քյոշե – Երբ Հայկական հարցը օրակարգ մտավ, ամենաշատը առաջ քաշվող գաղափարներից մեկն էլ այս խնդիրը պատմաբաններին թողնելու անհրաժեշտությունն էր: Ի՞նչ եք կարծում այս թեմայի վերաբերյալ:

Թաներ Աքչամ – «Եկեք այս հարցը թողնենք պատմաբաններին» նախադասությունը արդեն ձանձրացրել է: Հայտնի է, որ Թուրքիայում գործում է «Անհիմն հայկական ցեղասպանության դեմ պայքարի կոմիտե», նմանատիպ մի կառույց էլ կա Ազգային անվտանգության խորհրդում, բոլոր նախարարությունների ինտերնետային կայքէջերը (ներառյալ նաև գլխավոր շտաբի) պայքարում են «անհիմն հայկական ցեղասպանության պնդումների դեմ»: Թուրքիայի արտգործնախարարությունն ու մեր դիվանագետները չգիտես ինչու դարձել են աշխարհի ամենամեծ պատմաբանները: Եվ այս ամենից հետո ասում եք, թե այս հարցը թողնենք պատմաբաններին: Այսինքն՝ կթողնեք պատմաբաններին միայն այն ժամանակ, երբ նրանք կասեն այն, ինչ դուք եք ուզում: Եվ հակառակը՝ չեք թողնում խոսեն այն պատմաբանները, որոնք հայտնում են ձեր տեսակետից տարբերվող տեսակետներ: Ըստ իս՝ այս միտքը, թե «հարցը պետք է թողնել պատմաբաններին», ձանձրացրած հիմարություն է: Սա ամբողջովին քաղաքական հարց է և անհրաժեշտ է, որ երկու երկրների քաղաքական գործիչները նստեն ու լուծեն այս հարցը:

Թուրքերենից թարգմանությունը՝ (Շուշան Խաչատրյանի)

«ԵԹԵ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԷ, ՄԻԹԵ ԱՅՆ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԼԻՆԵԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»[3]

(Հարցազրույց պատմաբան Թաներ Աքչամի հետ)

Հարց – Հարցը, որի պատասխանը փնտրում ենք, հետևյալն է. «Ի՞նչ եղավ 1915 թվականին»:

Թաներ Աքչամ – Օսմանյան «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայ ազգաբնակչությանը համարելով երկրի ապագայի համար սպառնալիք՝ որոշեց բնաջնջել նրանց: Չնայած ոչնչացման գաղափարը նախկինում ևս կար, հավանական է, որ 1915 թ. փետրվար-մարտ ամիսներին է իրագործման որոշումը կայացվել: Այս որոշման համաձայն Անատոլիայի հայկական բնակչությունն իր բնակավայրերից արտաքսվեց դեպի Սիրիայի և Իրաքի անապատները, դեպի մահ: Ոչնչացումն իրականացվեց համաձայն հստակ ծրագրի: Մեր ձեռքի տակ եղած բոլոր աղբյուրները (հիմնականում արխիվային նյութեր, հուշեր և այլն) շատ հստակ ձևով ցույց են տալիս այդպիսի ծրագրի գոյությունը: Առաջին հերթին ձերբակալվեցին մտավորականները, հոգևորականները, քաղաքական գործիչները, այսինքն՝ բոլոր նրանք, որոնք կկարողանային առաջնորդել

---

[3] **Kaplan S.**, 90. Yılında Ermeni Trajedisi: 1915'te ne oldu?, İstanbul, Hürriyet, 2005, 2-inci baskı, s. 37-42.

հայ հասարակությանը: Այս մարդիկ կամ բանտում տանջամահ եղան կամ քաղաքների հրապարակներում նույնիսկ առանց դատարանի որոշման մահապատժի ենթարկվեցին կամ էլ խմբերով քաղաքից դուրս տարվեցին և գնդակահարվեցին: Ավելի ուշ աքսորեցին հայ ազգաբնակչությանը այնպիսի հապճեպությամբ, որ անգամ չթողեցին, որպեսզի մարդիկ իրենց հետ վերցնեն անհրաժեշտ իրերը: Այդ մարդիկ խմբերով ուղարկվեցին Սիրիայի և Իրաքի անապատներ ու թե՛ աքսորի ճանապարհներին, թե՛ աքսորի վերջնակետերում նրանք սիստեմատիկ կերպով կոտորվեցին: Ըստ 1919 թ. մայիսին հայտարարված օսմանյան պաշտոնական թվերի՝ սպանվել է 800 000 հայ:

Հարց – Դուք ինչպե՞ս եք վերաբերում թուրքական պաշտոնական այն թեզին, համաձայն որի. «Այդ դեպքերի քննությունը պետք է թողնել պատմաբաններին»:

Թաներ Աքչամ – Պետք է ընդունեք, որ ստեղծվել է մի տարօրինակ իրավիճակ: Ի՞նչ հարց եք ուզում, որ պարզաբանեն պատմաբանները: Հարցը 1915 թվականի դեպքերին «ցեղասպանություն» անունը տալ կամ չտա՞լն է: Այդ դեպքում մի ուրիշ հարց էլ ավելացնեմ. «Եթե 1915 թվականի դեպքերին տվեցինք ոչ թե ցեղասպանություն, այլ էթնիկական զտում, սպանություն կամ կոտորած անունը, այդ դեպքում տեղի ունեցածներն ավելի փո՞քր հանցագործություն կհամարվեն»: Եթե չանվանենք ցեղասպանություն, ի՞նչ եք մտածում մենք կփրկվե՞նք: Եթե 1915 թվականին կատարվածը ցեղասպանություն չէ, դադարո՞ւմ է լինել հանցագործություն: Կարող եք ինչպես ցանկանում եք խաղալ թվերի հետ, սակայն փաստ է, որ այդ դեպքերի հետևանքով հայ ազգաբնակչության 40-60 տոկոսը ոչնչաց-

վեց: Ինչ անուն ուզում եք տվեք սրան, բայց ստիպված եք ընդունել, որ սա հանցագործություն է:

Հարց – Հնարավո՞ր է միջազգային համաձայնագրերի շրջանակներում 1915 թ. տեղի ունեցածները բնութագրել որպես «ցեղասպանություն»:

Թաներ Աքչամ – Առաջին հերթին ցանկանում եմ ընդգծել, որ ներկայիս մեր խնդիրը այն չէ, թե արդյոք 1915 թ. տեղի ունեցածները համապատասխանում կամ չեն համապատասխանում 1948 թվականի բնորոշմանը: Սա, եթե կարելի է այդպես ասել, հարցի ամենադյուրին կողմն է: Իրական խնդիրն այն է, որ հասարակությունը կարողանա 1915 թվականի մասին խոսի բացահայտ, անկաշկանդ և ազատ: Եկեք չմոռանանք, որ ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ 1990-ականներին Յուգոսլավիայում Սրեբրենիցա գյուղաքաղաքում 8000 մուսուլմանի սպանության մեջ մեղադրվող մի գեներալ դատապարտվում է ցեղասպանության հոդվածով: Ըստ թուրքական պաշտոնական տվյալների՝ Օսմանյան կայսրությունում սպանվել է 800 000 հայ. այսպիսի գործողությունն ինչպե՞ս եք պատրաստվում բնորոշել:

Հարց – Տեղահանությամբ նպատակ էր հետապնդվում օսմանյան պետությունում բնակվող բոլո՞ր հայերին ոչընչացնել:

Թաներ Աքչամ – Այո, վստահաբար: Սխալ է հայերի նկատմամբ իրականացված գործողությունները դիտարկել իբրև պատերազմական վիճակում ձեռնարկված կանխարգելիչ միջոց: Բացի այդ, այս հարցն ունի իր նախապատմությունը. հայերն արտաքսվել են ոչ միայն պատերազմական

գոտիներից, այլ ամբողջ Անատոլիայից և հայ լինելը արդեն բավարար է եղել արտաքսվելու համար: Հայերի աքսորն ու ոչնչացումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության 1912 թ. Բալկաններում կրած պարտությունից հետո Անատոլիայում մուսուլման-թուրք միատարր հասարակություն ստեղծելու գաղափարի մի մասն է:

Հարց – Բայց բոլորը չէ, որ տեղահանվել են, բացառություններ էլ կան:

Թաներ Աքչամ – Այս խոսքերի զգալի մասը սուտ է: Օրինակ՝ պնդում են թե՝ ա) միայն պատերազմական տարածքներից են հայերն արտաքսվել: Սուտ է. հայերն ամբողջ Անատոլիայից են արտաքսվել, բ) Արևմտյան Անատոլիայից արտաքսվել են միայն հանցագործ և կասկածյալ հայերը: Սուտ է. հայերն արտաքսվել են առանց որևէ բացառության՝ կին, երեխա, ծեր, երիտասարդ, գ) բողոքական և կաթոլիկ հայերը չեն արտաքսվել: Սուտ է. նրանք էլ են աքսորվել, դ) Ստամբուլից և Իզմիրից հայերը չեն աքսորվել: Սուտ է. այս քաղաքներից էլ են աքսորվել հայերը: Իզմիրի աքսորը կանգնեցրել է գերմանացի գեներալ Լիման վոն Սանդերսը, երբ արդեն հսկայական քանակությամբ հայ էր աքսորվել:

*Թուրքերենից թարգմանությունը՝ (**Ալիսա Ավագյանի**)*

«ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ»[4]

(Հարցազրույց թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլի[5] հետ)

Հարց – Ի՞նչ է տեղի ունեցել 1915 թվականին:

Սելիմ Դերինգիլ – Նախ ասեմ, որ ես Հայկական հարցի մասնագետ չեմ: Այլ խնդիրներին զուգահեռ անդրադարձել եմ նաև այս հարցին, սակայն ես ավելի շատ Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի վերաբերյալ գործեր ունեմ: Աբդուլ Համիդի շրջանը ուսումնասիրելիս խուսափում էի Հայկական հարցին անդրադառնալուց, որովհետև սա այնպիսի թեմա է, որի մասին ոչ ոք չէր ցանկանում խոսել: Եթե անդրադառնամ Ձեր հարցին, ապա կասեմ, որ 1915 թվականին Օսմանյան կայսրությունում կազմակերպվել է տեղահանում, որի ընթացքում գրեթե ամբողջ հայ ազգաբնակչությանը հանել են իր բնակավայրերից և քշել մեծ մասամբ դեպի անհայտություն: Ես չեմ քննարկելու, թե արդյոք դա ցեղասպանություն էր թե ոչ, որովհետև կարծում եմ, որ դա իրավական խնդիր է: Տեղահանման ժամանակ

---

[4] **Kaplan S.**, 90. Yılında Ermeni Trajedisi: 1915'te ne oldu?, İstanbul, Hürriyet, 2005, 2-inci baskı, s. 67-74.

[5] Թուրք պատմաբան, Ստամբուլի Բողազիչի համալսարանի պրոֆեսոր:

սարսափելի ողբերգություններ են տեղի ունեցել: Հայերին արտաքսել էին Անատոլիայի ամբողջ տարածքից և նույնիսկ Թրակիայից: Սա էլ հանդիսանում է այդ ազգաբնակչության մեծ մասի ոչնչացման պատճառ: Ահա սա է 1915 թվականը:

Հարց – Ինչո՞ւ այդ ժամանակահատվածը ուսումնասիրող պատմաբան չկա:

Սելիմ Դերինգիլ – Բոլորիս հայտնի պատճառներից ելնելով՝ ժողովուրդը փորձում է հեռու մնալ այդ թեմայից: Ես էլ 1915 թվականի շուրջ շատ չեմ աշխատել: Քիչ թե շատ միայն 1890-ական թվականներից կարող եմ կարծիք հայտնել: Սակայն այսօր տեղահանման մասին պետական մեկնաբանություններ կան, որոնցում ասվում է, որ Թուրքիան փորձում էր պաշտպանել ինքն իրեն: Մասնավորապես ասվում է. «Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ էր, հայ պարտիզանները համագործակցում էին ռուս զինվորների հետ, թիկունքից հարվածում էին օսմանյան բանակին, ուստի հայերի տեղահանումը Օսմանյան կայսրության օրինական պաշտպանության միջոց էր»: Զինված, համակարգված հայկական պաշտպանության մասին է խոսքը: Ոչ ոք չի հերքում նաև, որ հայերը ռուսների հետ համագործակցում էին: Սակայն մյուս կողմից էլ անունը իրավաբանորեն ինչ ուզում եք դրեք, իրականում տեղի է ունեցել հայերի սիստեմատիկ ոչնչացում: Հայերն արտաքսվել են այս տարածքներից, նրանց ստիպել են քայլել մի ճանապարհով, որից անհնար էր ողջ դուրս գալ: Նրանց որոշ վայրերում սիստեմատիկ կերպով կոտորել են: Բոլորն էլ սա գիտեն: Այս ամենի իրավական ծավալը և անվանումը կարող են պետությունները քննարկել, սակայն ես,

որպես պատմաբան, իմ բարոյական պարտավորությունն եմ համարում ոչ թե իրադարձությանը անուն տալը, այլ խնդիրը քննարկման ներկայացնելը:

Հարց – Կարո՞ղ ենք ասել, որ Օսմանյան կայսրությունը ցանկանում էր վերացնել իր տարածքում ապրող բոլոր հայերին:

Սելիմ Դերինգիլ – Միգուցե ցանկացել են «բոլոր» հայերին վերացնել, սակայն սա իրականում այնքան էլ հնարավոր չի եղել: Կաթոլիկ հայերը մեծ մասամբ փրկվում էին տեղահանումից, նաև փրկվում էին Ստամբուլի և Իզմիրի նման շատ «աչքի ընկնող» վայրերում ապրող հայերը: Սակայն այս առանձին դեպքերը «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը չեն ազատում պատասխանատվությունից: Նաև գիտենք, որ շատ տեղերում իսլամացված հայերին անգամ տեղահանում էին պատճառաբանելով. «Միայն կյանքը փրկելու համար են մուսուլման դարձել»: Այս ամենը տեղ է գտել Թուրքիայի Պատմական ընկերության կողմից հրատարակված փաստաթղթերում: Նախ կա պետական գրագրություն, որտեղ նշվում է, որ անհրաժեշտ է հնարավորինս պաշտպանել տեղահանվող մարդկանց, ապահովել ուտելիքով, ջրով և միջոցներ ձեռնարկել, որ տեղահանման ժամանակ նրանց նկատմամբ որևէ բռնություն չիրագործվի: Սակայն աշխարհում գոյություն ունի պետական դիրքորոշում հասկացությունը և այլ իրականություն: Տեղահանման ժամանակ պետությունը տալիս էր այդ հրամանները, սակայն մյուս կողմից էլ ստեղծել էր «Հատուկ կազմակերպությունը»: Դժբախտաբար այս թեմայի վերաբերյալ բացի Թաներ Աքչամի «Մարդու իրավունքները և Հայկական հարցը» գրքից ուրիշը չկա և բոլորը ստիպված են նրան վկայակոչել: Գրքում Աքչամը

առաջ է քաշում այն միտքը, որ գրված հրամաններից բացի կային նաև չգրվածները: Բայց քանի որ գրավոր ոչինչ չկա, այն կարողանում ենք տարբեր իմաստներով ներկայացնել: Տարբեր ապացույցներից պարզ է դառնում, որ մի շարք տեղերում մարդկանց քարավաններով աքսորում են և որոշ ժամանակ անց «Հատուկ կազմակերպության» կամ քաղաքացիական անձանց կողմից այդ մարդիկ սպանվում են: Այս ամենը եղել է, սա չընդունելը ըստ իս բարոյական չէ: Իմ առաջարկած սկզբնակետն էլ հենց դա է: Այս հարցը խղճի հետ է կապված: Կարմիր գիծ կոչվող արտահայտություն կա, այ իմ կարմիր գիծը հենց սա է: Ոչ մի բան չի կարող արդարացնել այնպիսի մի իրադարձություն, որը ստիպում է մորը իր սեփական ձեռքերով գետում խեղդել իր ութ տարեկան աղջկան՝ ուրիշների ձեռքերից փրկելու համար: Անգամ այդ կնոջ ամուսնու դաշնակ լինելն էլ չի կարող արդարացում լինել: Ոչ մի բացատրություն չի կարող արդարացնել այս իրադարձությունը ինձ համար: Իմ կարմիր գիծը սա է:

Հարց – Վերջերս Թուրքիայի պետական դիրքորոշումը սկսել է ակնհայտորեն փոփոխվել: Երկար ժամանակ է ինչ տարբեր աստիճանի մարդիկ ասում են. «Սա պատմական խնդիր է, այս գործը պետք է պատմաբաններին թողնել»: Իսկ պրոֆեսոր Շուքրու Հանիօղլուն դեմ դուրս գալով այս թեզին, ասաց. «Սա ոչ թե պատմական, այլ քաղաքական հարց է: Ուստի պետք է այն լուծվի քաղաքական գործիչների կողմից»: Ո՞րն է ձեր մոտեցումը:

Սելիմ Դերինգիլ – Մենք՝ պատմաբաններս, միշտ էլ քննարկում էինք այս հարցը: Ասում են. «թող պատմաբանները լուծեն», սակայն արդյո՞ք պատմաբաններին հարցրել են: Ո՛չ, նրանք ունեն պատմաբաններ, որոնց ես

կոչում եմ «Ա թիմ»: «Հարցը թողնենք պատմաբաններին» ասելով հենց նրանց նկատի ունեն: Նրանք էլ «Ամենալավ պաշտպանությունը հարձակումն է» սկզբունքով առաջնորդվելով՝ սկսեցին բարձրաձայն խոսել: Եվ ինչքան ժամանակ է արդեն, որ ասում են. «Մենք մեր պատմաբաններին ուղարկենք, հայերն էլ իրենց պատմաբաններին թող ուղարկեն, բացենք արխիվները, ինչ դուրս գա՝ ուրեմն դա է մեր բախտը»: Պրոֆեսոր Շուքրու Հանիողլին էլ արդարացիորեն ասում է. «Պատմաբաններից այդպիսի բան սպասելը անօգուտ է, որովհետև արխիվը բնական գիտությունների լաբորատորիա չէ»: Ի վերջո արխիվը և՛ մեկնաբանության, և՛ շահարկումների համար շատ բաց աղբյուր է: Հայ և թուրք պատմաբանները գալու են իրենց հաստատուն դիրքորոշումներով: Այս պարագայում ոչ մի կերպ հնարավոր չի լինի, որ մի կողմը համոզի իր դիրքորոշումը մյուսին: Ընդհակառակը երկու կողմին էլ ավելի շատ վնաս կպատճառի:

Հարց – Ձեր անձնական կարծիքով ինչքա՞ն մարդ է մահացել տեղահանման ժամանակ:

Սելիմ Դերինգիլ – Ես այնքան էլ չեմ սիրում թվերից խոսել, որովհետև թվերի առումով էլ կարելի է խաբել: Այն պնդումը, որ 1,5 միլիոն հայ է մահացել, իմ կարծիքով չափազանցված թիվ է: Իհարկե, պետականորեն ընդունված թվերն էլ ծիծաղելի են: Եթե պարտադիր ուզում եք, որ մի բան ասեմ, ես ավելի խելամիտ եմ համարում ՄԱԿ-ի առաջ քաշած և շատերի կողմից ընդունված 800 000 թիվը: Իհարկե սրան հակառակվողներ կան և կլինեն: Սակայն կարծում եմ ամենախելամիտ թիվը սա է: Եթե անգամ 800 000-ի փոխարեն Թուրքիայի պետական դիրքորոշումը արտահայտող գրքերի մեջ ընդունված 400 000-500 000 լինի, արդյո՞ք սա նվազեցնում է խնդրի կարևորությունը:

Հարց – Ինչպես գիտենք «ցեղասպանություն» հասկացությունը միջազգային օրենքի կարգավիճակ է ստացել 1948 թվականի կոնվենցիայով: Որոշ մարդիկ ասում են, հայերի տեղահանման ժամանակ տեղի ունեցածները համընկնում են կոնվենցիայի կետերին, որոշներն էլ ասում են՝ չի համընկնում: Ո՞րն է ձեր մոտեցումը:

Սելիմ Դերինգիլ – Այս հարցի վերաբերյալ իմ մոտեցումը հետևյալն է. կոնվենցիայի կետերին համընկնելը կամ չհամընկնելը կարևոր չէ: Իմ կարծիքով կարևորն այն է, որ մի ամբողջ ժողովուրդ վտարվել է տվյալ տարածքից: Ասենք մի ժամանակ Երզրումում 30 000 հայ կար: Հիմա չկա: Ի՞նչ է պատահել այս մարդկանց: Որպես պատմաբան մեր խղճի պարտքն է գտնել այս հարցի պատասխանը: Կարևոր չէ թե Դաշնակցության կամ «Հատուկ կազմակերպության» մեղքով են ոչնչացվել: Այս մարդիկ այլևս չկան և սա է կարևորը: Այս պատմությունը պետք է ազատ քննարկվի: Եվ եթե տարբեր կարծիքներ ի հայտ գան, չպետք է կոպիտ վերաբերմունք ցույց տալ, ասես մեկի ծնողին են հայհոյել: Սա այնքան նուրբ հարց է, որ եթե հակասող մի միտք ես ասում, մարդիկ ասես խելագարվում են: Սրա պատճառն էլ հոգեբանները պետք է պարզեն:

*Թուրքերենից թարգմանությունը՝ (**Անի Դեկիրմենչյանի**)*

«ԱՔՍՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ԵՆ ԹԱԼԵԱԹ, ԷՆՎԵՐ ԵՎ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՆԵՐԸ»[6]

Հալիլ Բերքթայ[7]

Հարց – Ի՞նչ է տեղի ունեցել 1915 թվականին:

Հալիլ Բերքթայ – Սկսած 1915 թվականից և մասնավորապես 1915-1916 թվականներին իսկապես սարսափելի մի իրադարձություն է տեղի ունեցել: Սա տարբեր պատճառներ ունի: Որոշ պատճառներ շատ ավելի լայն են, որոնք կապված են կայսրության դիրքերի թուլացման և այս ընթացքում հատկապես հույն, բուլղար և հայ ազգայնականության կողմից հարուցվող դժվարությունների հետ: Որոշ պատճառներ ավելի խորն են. դրանք կապված են իշխանությանը բնորոշ ձևի, հասկացության, հայացքների և քաղաքական մշակույթի հետ: Եթե վերջինս փոքր-ինչ ընդլայնենք, կտեսնենք, որ 1913 թվականի Բաբը Ալիի ճնշումից հետո, այսինքն երիտթուրքերի հեղաշրջումից սկսած, Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակը կազմել էին մի ուժեղ զինվորական դիկտատուրա: Չնայած դասագրքերում հաճախ հանդիպում ենք «Օսմանյան պետություն կամ էլ երիտթուրքերի կառավարություն» արտահայտություններին, սա-

---

[6] **Kaplan S.**, 90. Yılında Ermeni Trajedisi: 1915'te ne oldu?, İstanbul, Hürriyet, 2005, 2-inci baskı, s. 57-66.

[7] Թուրք պատմաբան, Ստամբուլի Սաբանջը համալսարանի պրոֆեսոր:

կայն սրանք իրականությունից հեռու են: 20-րդ դարի սկզբներին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Օսմանյան կայսրությունից շատ ավելի հզոր պետություններում դեմոկրատական ռեժիմը առաջին պլան էր մղել զինվորականներին: Եվ բնական է, որ Օսմանյան կայսրությունում, որտեղ դեմոկրատական ռեժիմը շատ ավելի թույլ էր արտահայտված, ամբողջ ուժը կենտրոնացած էր այս եռյակի ձեռքում: Սա հատուկ եմ նշում, որովհետև այնպես ինչպես չենք կարող 1915 թվականի կատարվածը բարդել այսօրվա Թուրքիայի Հանրապետության վրա, այնպես էլ միանգամայն դժվար է մեղքն ամբողջությամբ բարդել այն ժամանակվա ամբողջ Օսմանյան կայսրության (բանակի և բյուրոկրատիայի), անգամ կառավարության և իշխող կուսակցության վրա: Ինչևէ ահա այս եռյակի հրամանով նախ առաջ քաշվեց տեղահանման հրամանը: Այս հրամանի համաձայն՝ Օսմանյան կայսրության տարածքներում ապրող բոլոր հայերը զուտ հայ լինելու պատճառով նախ ձերբակալվում էին, ստիպված էին լինում լքել իրենց ամբողջ ունեցվածքը՝ անկախ այն հանգամանքից, որ դաշնակ էին թե ոչ, օրինախախտ էին թե ոչ, ի դեպ հաշվի չէր առնվում նաև կին, տղամարդ, երիտասարդ, երեխա և այլ հանգամանքներ:

Հարց – Սակայն օրենքում որոշ բացառություններ կային:

Հալիլ Բերբեյ – Այստեղ կարևորն այն է, որ Օսմանյան կայսրության հայ քաղաքացիները սոսկ հայ լինելու պատճառով քաղաքական, գաղափարական տեսակետից որակվել էին որպես կասկածելի, անգամ պոտենցիալ թշնամի կամ դավաճան: Սա հատուկ ընդգծում եմ հետևյալ պատճառներից ելնելով. նախ դեռևս գոյություն ունեն հայտնի

առասպելներ՝ ըստ որոնց տեղահանումը տեղի է ունեցել միայն Արևելյան Անատոլիայի՝ ռազմաճակատին մոտ հատվածում: Իմանալով այս ամենի մտացածին լինելը՝ մարդիկ շարունակում են գործածել այս միտքը: Նույն կերպ էլ գոյություն ունի մեկ այլ վարկած, ըստ որի տեղահանման հրամանի (և դրա իրականացման) թիրախ ընտրվել էին մասնավորապես Դաշնակցության կողմնակիցները, ակտիվիստները կամ կասկածելի ազգայնական հայերը: Այս ամենը ճիշտ չէ, սկզբունքորեն Օսմանյան կայսրության ցանկացած մասում ապրող ամբողջ հայ ժողովուրդն էր որպես թիրախ ընտրվել, միայն սրանից հետո են իրականացվել բացառություններ, այն էլ շատ քիչ: Իսկ ինչպես էր իրականացվում տեղահանման հրամանը: Հայերը սկզբում ձերբակալվում էին, այնուհետև շարքերով և ժանդարմների հսկողությամբ իրենց ապրած տարածքներից քշվում էին դեպի Անատոլիայի արևելք և հարավարևելք, այդտեղից էլ արաբական վիլայեթներ: Օրենքի համաձայն այս ամենի նպատակը նրանց այնտեղ բնակեցնելն էր:

Հարց – Հնարավո՞ր է տեղահանումը տեխնիկական տեսանկյունից նույնացնել տեղափոխման հետ, որովհետև պետությունը տեղահանում է մի ժողովուրդ իր տերության մի տարածքից մյուսը, ոչ թե այլ երկիր:

Հալիլ Բերքթայ – Վերջին ժամանակներս որոշ գրքերում, որոնք կողմ են այս հարցի վերաբերյալ ընդունված տեսակետին, նկատվում է հետևյալ հակվածությունը. Օսմանյան շրջանի փաստաթղթերում օգտագործվող «տեղահանում» տերմինից պետք է հրաժարվել (համապատասխանաբար «տեղահանում» բառը հանվել է դասագրքերից և եթե չեմ

սխալվում դրա օգտագործումը արգելվել է): Անգամ վերջերս նկատել եմ, որ կան պրոֆեսորներ, որոնք ժխտում են այս բառի գոյությունը Օսմանյան շրջանի փաստաթղթերում: Ի միջի այլոց այս կիրառումը պարզորեն ցույց է տալիս, որ այն անձինք, ովքեր արխիվի և փաստաթղթերի մասին խոսում են առանց մտածելու, միևնույն ժամանակ հենց այդ նույն արխիվը և փաստաթղթերի նյութը կարող են չկարևորել, եթե դա էլ ձեռնտու չէ: Մեր օրերում «դեպորտացիա» բառը ժամանակակից ժողովրդավարական երկրներին բնորոշ քաղաքական բառապաշարում ունի «սահմանից դուրս հանել» իմաստը: Սա լայն իմաստ ունի. այն կարելի է օգտագործել տեղահանման հրամանի համար, այս պարագայում չենք կարող տեղահանումը փոխել դեպորտացիայի: Իհարկե առավել ուշադիր և մանրամասն պատմական մեթոդաբանության համար հարկ է նշել այն հանգամանքը, որ դժվար է լիովին որոշել, թե 1915 թվականի Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող պատմական վիլայեթները ամբողջովին մտնո՞ւմ էին կայսրության տարածքի մեջ, թե ոչ: Ամեն ինչից առաջ կարևոր է այն, որ Օսմանյան կայսրությունը այսօրվա մեր պատկերացրածի նման (մաքուր և միատարր) ժամանակակից պետություն չէր: Ժամանակակից ժողովրդավարական երկիր ասելով մենք հասկանում ենք երկիր՝ հստակ որոշված սահմաններով: Այնինչ Օսմանյան կայսրության ղեկավարները հատկապես Բալկանյան պատերազմներից հետո և Առաջին Համաշխարհային պատերազմի պայմաններում իրենք էլ գիտակցում էին, որ կորցնում են իշխանությունը արաբական վիլայեթների վրա: Այսինքն՝ կարելի է ասել, որ այդ տարածքները և՛ Օսմանյան կայսրության կազմի մեջ էին, և՛ չէին: Այդ ամենով հանդերձ, տեղահանումը լայն իմաստով սահմանից դուրս հանելու գործողություն չէ: Գոնե տեխնի-

կական տեսանկյունից այդպես ասել հնարավոր չէ: Այս ամենին կարելի է միայն ինչ-որ «ներքին դեպորտացիա» անունը տալ:

Հարց – Կրկին վերադառնանք «Ի՞նչ տեղի ունեցավ 1915 թվականին» հարցին:

Հալիլ Բերքթայ – Պետականորեն ընդունված թեզերը զարգացնում են հետևյալ գաղափարները. 1915 թվականին պատերազմի պայմաններում, հայ ազգայնականները արևելյան ռազմաճակատում և թիկունքում, համագործակցելով ցարական Ռուսաստանի բանակի հետ, տարատեսակ գործողություններ են ծավալել: Այս ընթացքում շատ վնասներ են պատճառել թուրք-մուսուլման ժողովրդին՝ հարձակումներ գործելով վերջիններիս վրա: Հետևաբար պատերազմական գոտու անվտանգության նկատառումներից ելնելով, պետությունը ստիպված որոշում է կայացրել, ըստ որի հայերը պետք է գաղթեին այլ տարածքներ:

Հարց – Ձեր նշածների մասին խոսվում է նաև Տեղահանության հրամանի և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոնգրեսի արձանագրություններում:

Հալիլ Բերքթայ – Իհարկե: Ես չեմ էլ ուզում ասել, որ այս ամենը ճշմարտությանը չի համապատասխանում: Ես չեմ էլ ասում, որ հայ ազգայնականները վերը նշված տարատեսակ գործունեությունները չէին ծավալում, հարձակումներ չէին ձեռնարկում: Սակայն 1914-1915 թվականներին (1915 թվականի ապրիլից առաջ) ընդհանուր առմամբ ոչ մի հայկական ապստամբություն չկար, Արևելյան Անատոլիայում համազգային ապստամբության մասին խոսք անգամ չկար, հայկական կազմակերպությունների անդամների

գործողությունները չէին հասել մեծ ծավալի: Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի մեծամասնությունը խաղաղ և հանգիստ կյանք էր վարում:

Հարց – Ի՞նչ էր տեղի ունենում տեղահանման ժամանակ:

Հալիլ Բերքթայ – Այստեղ հարցը միայն տեղահանումը չէր այլ այն, որ տեղահանումը ուղեկցվում էր կորուստներով և կոտորածներով: Նույնիսկ թուրքական աղբյուրները նշում են 300 000-400 000 զոհերի մասին (օրինակ Քամուրան Գյուրունը), իսկ հայկական սփյուռքի կարծիքով՝ 1,2 միլիոն: Եվ մի փաստ ևս. այս մարդիկ մահացել են մեկ կամ մեկ ու կես տարվա ընթացքում: Երբ ինձ հարցնում են զոհերի թվաքանակի մասին, ես ասում եմ կամ 600 000 կամ 800 000 կամ 1 միլիոն, եթե ցանկանում եք կարող եմ 300 000-ն էլ ընդունել, ի՞նչ տարբերություն: Կարևորն այն է, որ կարճ ժամանակահատվածում մի քանի հարյուր հազար մարդ է մահացել: Սա սարսափելի թիվ է: Մենք պետք է մտածենք, թե այս կարճ ժամանակահատվածում այսքան մարդ ինչպե՞ս է մահացել:

Հարց – Իրոք, ինչպե՞ս է այդքան կարճ ժամանակահատվածում այդքան մարդ մահացել:

Հալիլ Բերքթայ – Մինչև այսօր Թուրքիայի Հանրապետության պաշտոնական մոտեցումը այս հարցին հետևյալն է. այս մարդիկ «հանկարծակի» են մահացել: Ինքներս մեզ պետք է հարցնենք. չնայած պետության ուշադրությանը և ուղեկցող ժանդարմներին, հնարավո՞ր է արդյոք, որ 1-1,5 տարվա ընթացքում այդքան մարդ «հանկարծակի» մահանա: Թուրքական պաշտոնական թեզը նաև ասում է, որ

նախապես մտածված կոտորած չի եղել, եթե անգամ եղել են սպանություններ, ապա դրանք եղել են հանկարծակի և ոչ դիտավորյալ, ժանդարմների վրա հարձակվող ավազակների պատճառով: Պաշտոնական թեզի համաձայն հայերը մահացել են նաև վարակիչ հիվանդություններից և սովից:

Հարց – Սակայն պատերազմական պայմաններում այս բոլորն էլ հնարավոր էր:

Հալիլ Բերքթայ – Իհարկե հնարավոր էր, սակայն սա ինչ հարց կարող է լուծել: Այստեղ շատ խնդիրներ կան: Եթե պետությունը հայերին աքսորում է և հետո այս մարդկանց մեծ մասը սովից և ծարավից մահանում են, արդեն միայն դա պետության մեղավորությունն է: Այս պարագայում անհնար է իմանալ, թե որն է դիտավորյալ, որը ոչ:

Հարց – Իսկ անձամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարությո՞ւնն է հրամայել կոտորել հայերին:

Հալիլ Բերքթայ – Այո, փաստաթղթեր կան, որոնք ապացուցում են, որ կոտորածների մասին եղել են հրամաններ:

Հարց – Այդ փաստաթղթերը ցո՞ւյց են տալիս, որ կոտորածները ծրագրված էին:

Հալիլ Բերքթայ – Այո: Շատ հետազոտողներ կան, որոնք ուսումնասիրել են այդ կոտորածների կազմակերպված բնույթը և սա անհանգստություն է պատճառում պետականորեն ընդունված թեզերի կողմնակիցներին: Օսմանյան բանակը Գերմանիայի հետ դաշնակից էր, այդ իսկ պատ-

ճառով Անատոլիայում այն ժամանակ մեծ թվով գերմանացի սպաներ կային: Ինչպես նաև կային բազմաթիվ դեսպաններ, ուսուցիչներ և այլն: Առկա են նրանց բոլոր զեկույցները, հետազոտություններն ու արձանագրությունները: Սակայն այս ամենը թուրքական պաշտոնական թեզի կողմից որակվում են որպես «հայկական քարոզչություն»: Այդ իսկ պատճառով էլ չեմ ցանկանում կանգ առնել այդ զեկույցների քննարկման վրա: Ճիշտն այն է, որ Օսմանյան կայսրության ներքին նամակագրության մեջ էլ փաստեր կան, որոնք իրականում ապացուցում են այդ ամենի նախապես պլանավորված լինելը: Օրինակ, իմ բոլոր հետազոտություններում ես խոսում և քննարկում եմ Թալեաթ փաշայի մի հեռագիր, որը տեղ է գտել Թուրքիայի պետական արխիվի ղեկավարության կողմից 1994 թվականին հրատարակված «Օսմանյան փաստաթղթերում հայերը» գրքում: Ինչպե՞ս է եղել, որ հրատարակվել է: Կարծում եմ, որ լիովին չեն հասկացել, թե հեռագիրն ինչ է արտահայտում, այդ իսկ պատճառով էլ տպագրել են: Այսինքն՝ որոշ իմաստով սխալմամբ է հրատարակվել: Թալեաթ փաշան այդտեղ ասում է. «Հայերը պետք է տեղահանվեն, սակայն նրանց նկատմամբ ուրիշ ոչ մի բան չպետք է իրագործվի. նրանց կյանքի պահպանումը ձեր ձեռքերում է»: Սակայն Թալեաթ փաշան ստացել է ոչ միայն հայերի, այլև բոլոր քրիստոնյաների կոտորածի մասին լուրը: Նա կարող էր ասել. «Դադարեցրեք հայերի և բոլոր մյուս քրիստոնյաների կոտորածը»: Այս հեռագիրը վառ ապացույցն է այն իրողության, որ կոտորածները կանխամտածված են եղել: Այս հեռագրի իմաստը շատ պարզ է բոլոր այն պատմաբանների համար, ովքեր երևույթի նկատմամբ անաչառ վերաբերմունք ունեն: Ստեղծենք պատմաբանների մի միջազգային հանձնաժողով, ուրիշ ոչ մի բան, միայն այս հեռագիրը թուրքերենով և անգլերեն ու ֆրանսերեն թարգմա-

նություններով դնենք նրանց դիմաց: Միայն ես գնամ, ներկայացնեմ, պարզաբանեմ իմ մեկնաբանությունները և մեկ էլ թող բոլոր այն պետական պատմաբանները և պաշտոնաթող դեսպանները գան, ովքեր ասում են. «Ոչ, Հալիլ Բերքթայը թուրքերեն չի հասկանում, այս հեռագիրը դա չի նշանակում»: Եվ տեսնենք, թե այդ հեռագիրը ցանկացել է հայկական կոտորածը կանգնեցնե՞լ, թե՞ դրա շարունակության վրա աչք է փակել, տեսնենք, թե աշխարհահռչակ պատմաբանները ի՞նչ կասեն այս երևույթի վերաբերյալ:

Հարց – Ինչպե՞ս եք գնահատում. «Խնդիրը թող պատմաբանները քննարկեն և լուծեն» պետական տեսակետը:

Հալիլ Բերքթայ – Թուրքիայի պետական և կիսապետական դիրքորոշման խնդիրը բավականին դժվար է: 1915-1930 թվականներին կոտորածների մասին բոլորը գիտեին: Դրա համար էլ, երբ ուսումնասիրում ենք այդ ժամանակաշրջանի պատմագրությունը, երբեք չենք հանդիպում. «այդպիսի բան չի եղել, դա սուտ է» արտահայտությանը: Պատճառն այն է, որ այս իրադարձությունները դեռևս սերունդների հիշողությունների մեջ էր և բոլորն էլ գիտեին, թե ինչ է տեղի ունեցել: Կային նաև մարդիկ, ովքեր հպարտանում էին ասելով՝ «Եթե մենք չսպանեինք, նրանք էին սպանելու»: 1926 թվականին Los Angeles Examiner թերթում տպագրվում է Աթաթուրքի հետ մի հարցազրույց: Այդ ժամանակ արդեն ավարտվել էր երիտթուրքական կուսակցության որոշ անդամների դատավարությունը: Պատասխանելով լրագրողի հարցին Մուսթաֆա Քեմալն ասում է. «Այն մարդիկ, ում մենք այսօր դատապարտում ենք, նախկինում Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ սարսափելի բռնությունների և կոտորածների հեղինակներն են»:

Հարց – Ո՞րն է խնդրի լուծման ձեր առաջարկը:

Հալիլ Բերքթայ – Ըստ իս՝ միակ խելացի խոսքերը, որ կարելի է ասել, հետևյալն են. «Այո, պարզ է, որ 1915-1916 թվականներին այսպիսի սարսափելի իրադարձություն է տեղի ունեցել: Դրա համար մենք շատ ցավում ենք: Սակայն այսօրվա Թուրքիայի Հանրապետությունը չի կարող գիտական, գիտակցական և խղճի տեսանկյունից պատասխանատվության ենթարկվել: Օսմանյան կայսրությունը ուրիշ պետություն էր, Թուրքիայի Հանրապետությունը՝ ուրիշ»: Եվ բացի այդ 1915-1916 թվականներից տասնամյակներ են անցել: Այսօրվա սերունդների հիշողության մեջ այն չկա: Սա պատմական մի իրադարձություն է, այսինքն՝ գիտական հետազոտության և ուսումնասիրության առարկա է: Մենք պետք է հանենք վերջին 3-4 տարիների ընթացքում դասագրքերում հաջողությամբ տեղադրված նոր մեթոդները: Այլևս չպետք է ստիպենք մեր երեխաներին անգիր անել «Հայերն են թուրքերին կոտորել» միտքը: Մենք ցանկանում ենք, որ թուրք հասարակության մեջ այս հարցը ազատ քննարկվի առանց գրաքննության:

Հարց – Ըստ Ձեզ դա կօգնի՞ գործին:

Հալիլ Բերքթայ – Թուրքական բազմաթիվ պետական և կամ կիսապետական փաստաթղթերի մեջ 1915-ի իրադարձությունների մասին ապացույցներ այսպես թե այնպես կան, սակայն Թուրքիայում հայերի սարսափելի ցավերի և վերքերի նկատմամբ սիրտ շահելու չնչին փորձ, անկեղծության զգացում անգամ չկա: Աշխարհը հիմար չէ: Արտերկրի դիվանագետները, պատմաբանները, մտավորական մարդիկ հիմար չեն: Բոլորն էլ ունակ են տարբերակելու, թե ինչ է բարոյական խիղճը, իրական վիշտը և կեղծավորությունը: Արդեն ժամանակն է, որ այս ամենը փոխարինվի իրական, խելացի անկեղծությամբ:

Թուրքերենից թարգմանությունը՝ (Սանամ Դավթյանի)

1919 ԹՎԱԿԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[8]

Մուրաթ Բելգե[9]

Հայերի կոտորածի վերաբերյալ Թուրքիայում անցկացված դատավարությունը տեղի ունեցավ պաշարված Ստամբուլում: Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում տեղի ունեցող դատավարությանը մարդիկ լուրջ չեն վերաբերվի կամ դրա հանդեպ կանխակալ տրամադրվածություն կունենան: Այնուամենայնիվ, այս դատավարությունը տեղի ունեցավ և դատարանում հարցերին պատասխանող «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր շտաբը երբեք չօգտագործեց այս թեմաների համար որոշ մարդկանց առաջ քաշած ոճը: Այսօրվա ներկայացուցիչներն առաջնորդվում են «Կոտորա՞ծ, ո՞վ է ասել. ամբողջովին զրպարտություն է, այդպիսի բան տեղի չի ունեցել» ոճի խոսքերով: Բայց նրանք, ովքեր հարցաքննվել էին դատարանի կողմից, ասում էին, որ ոչ թե այդպիսի բաներ չեն պատահել, այլ իրենք պատահածի հետ կապ չունեն: Այդ տարիներին մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցրած Սաիդ Հալիմ փաշան ասում էր. «Ախր «վերաբնակեցրեք» հրամանից չի կարող բխել «սպանեք» իմաստը: Հրամանի կատարումը վատ է իրականացվել»: «Ինչպես ամեն ինչի, այնպես էլ այս դժբախտության մասին կատարվելուց հետո իմացա»,– ավելացնում է նա: Սաիդ Հալիմը բացահայտորեն ասում է նաև, որ Թալեաթ փաշան և ներքին գործերի նախարարությունը այս գործը թաքցրել են:

---

[8] **Kaplan S.**, 90. Yılında Ermeni Trajedisi: 1915'te ne oldu?, İstanbul, Hürriyet, 2005, 2-inci baskı, s. 155-158.

[9] Թուրք մտավորական, գրականագետ, հասարակական գործիչ:

Շեյխ-ուլ-իսլամ Հայրի էֆենդին պատմում է հետևյալը. «Ազգային ժողովի նախագահ պարոն Հալիլը եկավ, հուզված պատմեց, որ իր լսածների համաձայն հայերին գավառում դժբախտություններ են սպասվում: Այդ օրը ես գնացի Բաբ-ը Ալի: Սրա հետ մեկտեղ որոշ ընկերներիս և իմ միջև մտածելակերպի ու հայացքների տարբերությունների պատճառով ի հայտ եկած տարաձայնություններից ելնելով մի քանի անգամ փորձեցի հրաժարական տալ»:

Իսկ դատարանի որոշման մեջ այսպիսի բառեր են օգտագործվում. «Ներքին գործերի նախարարության վարչության պետ Իհսան բեյը տեղեկացնում է, որ Քիլիսի կառավարիչ եղած ժամանակ Դերսաադեթից Հալեպ ուղարկված Աբդուլլահ Նուրի բեյը հարմար է գտել վերաբնակեցումը իրականացնել ոչնչացմամբ»,– և ավելացնում է. «Ես կապի մեջ եմ եղել Թալեաթ բեյի հետ, ոչնչացման հրամաններն անձամբ եմ ստացել: Պատճառաբանելով, որ հայրենիքի բարօրությունը դրանից է կախված, փորձել է նրան էլ համոզել»:

Առկա են նաև Մամուրեթ-ուլ Ազիզ նահանգի կառավարչի հետևյալ խոսքերը. «Բոլոր ճանապարհները լի են կանանց և երեխաների դիակներով, չենք հասցնում թաղել»:

Սրանք են դատարանի արձանագրությունները՝ փաստաթղթերով, վկայություններով և անհրաժեշտ մանրամասներով: Մեղադրյալներից ոչ ոք այս ամենը լսելիս խոր զարմանք չի ապրել: Ինչպես և վերևում նշեցի, ոչ ոք չի ասում, թե այդ ամենը տեղի չի ունեցել, ուղղակի նշում են, որ այդ ամենի հետ իրենք ոչ մի կապ չունեն:

Այս ամբողջ նկարագրություններից ես անհատապես չեմ եզրակացնում, որ տեղի է ունեցել համակարգված մի «ցեղասպանություն»: Բայց այն, որ մի խումբ մարդիկ համակարգված և սառնասիրտ ձևով հանցագործություն են կատարել, կասկածի ենթակա չէ:

Թուրքերենից թարգմանությունը՝ (Ամալյա Պետրոսյանի)

ՈՎՔԵՐ ՏԻՐԱՑԱՆ ՀԱՅԵՐԻ ԳՈՒՅՔԻՆ[10]

Այշե Հյուր[11]

Գերմանացի գեներալ Լիման Վոն Սանդերսի գաղափարով, օսմանյան բանակի չորրորդ կորպուսի պատերազմական շտաբի նախագահ Զաֆեր Թայյերի (Էղիլմեզ), Իզմիրի նահանգապետ Ռահիմի ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար Մահմուդ Ջելալի (Բայար) կողմից իրականացված սարսափազդու գործողությունների հետևանքով ըստ Բայարի՝ 200 հազար, իսկ ըստ «Հատուկ կազմակերպության» ղեկավար Քուշչուբաշը Էշրեֆի՝ 1,5 միլիոն հույն արտաքսվեցին Օսմանյան կայսրությունից: Նմանատիպ տարհանման գործողություններ կիրառվեցին նաև այլ քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ, բայց ամենադաժանը հայերին էր ուղղված: 1915-17 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում ապրող հպատակ հայությունը «հայրենիքին դավաճանելու» պատճառաբանությամբ պարտադրաբար տարհանվեց երկրից: Անգամ պաշտոնական պատմաբանները կարծում են, որ ամենաքիչը 300 հազար հայ այդ աքսորի ընթացքում մահացել է: 1915 թվականի ապրիլի 24-ին Ստամբուլում հայ համայնքի բոլոր հայտնի մարդիկ տարհանվել և աքսորվել են, իսկ ընդհանուր երկրի մասշտաբով

---

[10] Taraf, 02, 03, 2008.

[11] Թուրք վերլուծաբան-հրապարակախոս:

աքսորը պաշտոնապես սկսվել է 1915 թվականի մայիսի 27-ին:

Երիտթուրքերը աքսորից անմիջապես հետո մի օրենք էին ներկայացրել այն մասին, թե հայերից մնացած գույքին և ունեցվածքին ի՞նչ ճակատագիր է սպասվելու: Եվ ըստ 1915 թվականի մայիսի 30-ին օսմանյան խորհրդարանի հաստատած արձանագրության և նույն թվականի հունիսի 10-ի որոշման, կառավարությունը աքսոր իրականացրած շրջաններում ստեղծելու էր «լքված ունեցվածքների» հանձնաժողովներ, որոնց կազմում պետք է լինեին ունեցվածքի հարցերով զբաղվող երկու և ֆինանսական հարցերով պատասխանատու մեկ պաշտոնյա: Երբ թեման քննարկվում էր խորհրդարանում, երիտթուրքական կուսակցության հայտնի անդամներից Ահմեդ Ռըզան հայտարարել է, որ այդ ունեցվածքների լքված լինելու վերաբերյալ տեղեկությունը հակասում է օրենքին, որովհետև հայերը իրենց ունեցվածքները կամովին չեն լքել, այլ ստիպված են գնացել այդ քայլին: Սակայն այդ առարկությունը անարձագանք է մնացել: Որոշման համաձայն, հիշյալ հանձնաժողովները հայերի տարհանումից հետո լքված տները կընքելու էին և դրանցում եղած իրերի հետ միասին գնահատումներ իրականացնելուց հետո վերցնելու էին հաշվառման: Մնացած շարժական գույքը և անասունները, գյուղատնտեսական մթերքները, փչացող ապրանքները աճուրդով վաճառվելու էին և ստացված գումարները տերերի անուններից մուտքագրվելու էին «ունեցվածքի դրամարկղեր»: Եկեղեցիներում գտնվող իրերն ու նկարազարդ Սուրբ գրքերը արձանագրությամբ հաստատվելու էին և տեղում իրականացվելու էր դրանց պահպանումը: Այսպիսով, թղթի վրա եղած որոշումները բավական հրապուրիչ էին, բայց ինչպիսի՞ն էր դրանց իրականացումը:

Լքված ունեցվածքները

Մինչև 1916 թվականը 33 «լքված ունեցվածքների ազատման» հանձնախմբեր ստեղծվեցին: Նրանք, ովքեր պնդում էին, թե պարտատեր են, պետք է անձամբ իրենք, կամ էլ իրենց լիազորված անձանց միջոցով երկու ամսվա ընթացքում դիմեին այդ հանձնախմբերին: Երկրից դուրս գտնվողների համար ժամանակահատվածը չորս ամիս էր: Դիմումի տերերը ծանուցման կամ հայտարարություն կատարելու համար մշտական բնակության որևէ հասցե էին ներկայացնելու այն թաղամասերում, որտեղ գտնվում էին հանձնաժողովները: Պարտատերը իրավունք ուներ հանձնախմբի հաստատած գումարը 15 օրվա ընթացքում բողոքարկելու, որի առաջին փուլը կարող էր Իրավարար դատարանում իրականացվել, բայց դատարանի որոշումը վերջնական էր և դրա բեկանումը հնարավոր չէր:

Նախ և առաջ գուշակ լինելու անհրաժեշտություն չկա, ենթադրելու համար, որ նրանք, ովքեր Դեր Զորի անապատներն էին աքսորվել, այս գործողություններն իրականացնելու հնարավորությունից զրկված էին: Ըստ էության, այլ աղբյուրներից էլ գիտենք, որ հայերի բռնագրավված ունեցվածքների մի մասը տեղական թուրք, քուրդ և չերքեզ ազդեցիկ մարդիկ են կողոպտել, մի մասն էլ Բալկաններից եկած փախստականներին է բաժին ընկել: Որոշ մասն էլ «մուսուլման-թուրքերին» կապիտալիստ դարձնելու համար բաժանվել է նրանց երբեմն նույնիսկ առանց որևէ վճարի կամ շատ ցածր արժեքով: Երբեմն բանակին են տրվել որոշ շենքերի, ինչպես նաև դաշտերի, խաղողի և տարբեր այգիների բերքից ստացված ողջ եկամուտները: Որոշ շենքեր էլ օգտագործվել են որպես բանտ, դպրոց, հիվանդանոց և ոստիկանական պահակակետ: Մնացած փողն էլ օգտագործվել է հայերի աքսորի ծախսերի և որոշ շրջան-

ներում հայերի կոտորածները կազմակերպող խմբավորումների ծախսերի համար: Արդյունքում հայերին փոխհատուցելու փող չէր էլ մնացել:

Երիտթուրքական ռեֆլեքս

1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարից հետո Օսմանյան պետությունը պարտությամբ դուրս եկավ պատերազմից և Դաշնակից պետությունները այս խնդրի շուրջ կայացրեցին մի վճիռ, բայց երկրում տիրող պայմանների պատճառով հնարավոր չեղավ իրականացնել:

Սակայն ազգային պայքարի ներկայացուցիչները, ովքեր ջանասիրաբար ընդգծում էին, թե իրենք Օսմանյան պետության շարունակությունը չեն, ի՞նչ արեցին այս խնդրի առնչությամբ: Խորհրդարանի՝ 1921 թվականի հունվարի 22-ի գաղտնի նիստի ժամանակ, պաշտպանության նախարար Ֆեվզին, նշելով, որ դեռևս երկրի մեծ մասում հատկապես Սևծովյան տարածաշրջանում, մոտ 800 հազար քրիստոնյա է բնակվում, ասաց, թե մտահոգված է այն իրողությամբ, որ ոչ մուսուլմանները տնտեսական կյանքում պահպանում են իրենց դիրքերը: Ըստ գեներալի, անհրաժեշտ է քրիստոնյաներին որպես աշխատուժ օգտագործել արտադրության մեջ, ճանապարհների, կամուրջների, թունելների բարեկարգման աշխատանքներում: Ֆեվզիի այս առաջարկը Մալաթիայի պատգամավորը ողջունել էր բղավելով. «Կեցցե՛ս, պարոն Ֆեվզի» և ասել. «Պարոնա՛յք, հայերի անազնվությունն ու դավաճանությունը հայտնի է»: Նա նաև պահանջել էր, որ հայերից, հույներից և հրեաներից 500 լիրա կանխիկ գումար գանձվեր և բոլորը՝ Էրզրումի, Սեբաստիայի ճանապարհային աշխատանքներում ընդ-

գրկվեին: Այնուհետև ավելացրել էր. «Նպատակս այն է, որ նրանք ճնշման ենթարկվեն»: Այս առաջարկների և երիտթուրքականների կողմից 1914 թվականին հայերին «բանվորական գումարտակների» մեջ ընդգրկելու, հետո էլ կոտորելու միջև նմանությունը ապշեցուցիչ էր:

Ազգային նահատակներ

1921 թվականի օգոստոսի 7-ին Մուսաֆա Քեմալը, «գլխավոր հրամանատարության» օրենքի առնչությամբ խորհրդարանի բոլոր լիազորությունները իր վրա վերցնելով, թշնամու դեմ պատերազմը ֆինանսավորելու համար ընդունել է «Ազգային պաշտպանության» հրամաններ: Օրենքում եղած 10 հրամանից 6-րդն ասում էր. «Երկիրը լքածների՝ պետական գանձարանին անցած ունեցվածքներից բռնագրավվելու է այն, ինչը բանակին անհրաժեշտ է ու նպաստ է բերելու»: Սակայն հիշատակման արժանի է նաև այն, որ 1921 թվականի դեկտեմբերի 25-ին Ստամբուլի Ռազմական ատյանի դատարանում աքսորի ժամանակ կոտորածների պատասխանատվությունը ստանձնելու համար մեղավոր ճանաչված ու մահապատժի ենթարկված Ուրֆայի (Եդեսիա) նահանգապետ Նուսրեթին և 1922 թվականի հոկտեմբերին 14-ին նույն դատարանում մեղավոր ճանաչված և մահապատժի ենթարկված Բողազլըյանի գավառապետ Քեմալին, նախ հռչակեցին «ազգային նահատակներ», հետո էլ նրանց ընտանիքներին տրամադրեցին թոշակ՝ «լքված ունեցվածքներից»:

Այսպես օրինակ՝ քեմալիստները Լոզանի խաղաղության բանակցությունների ընթացքում չհամաձայնվեցին հայերի ունեցվածքները ետ վերադարձնել, չնայած, որ Օսմանյան կայսրության այլ պարտքերի համար պատասխանատվու-

թյուն էին ստանձնել: Լոզանում Թուրքիայի ստանձնած պարտքերի մեջ՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ոչ մուսուլմանների բռնագրավված ունեցվածքներն էլ էին ընդգրկված, սակայն, երբ համաձայնագիրը ստորագրվեց, թուրքերը անմիջապես սկսեցին պարտքից ազատվելու մասին մտահոգվել: Նախ 1923 թվականի սեպտեմբերին Կիլիկիայից և Արևելյան Անատոլիայից պատերազմի ժամանակ փախուստի դիմած հայերի հետ վերադարձն արգելող մի որոշում կայացվեց: 1924 թվականի ապրիլի 3-ին «հաշվառման գլխավոր օրենքի» 2-րդ հոդվածում փոփոխություն իրականացնելով՝ ապահովեցին ոչ մուսուլմանների բռնագրավված ունեցվածքների հատուցման ձախողումը: 1927 թվականի մայիսին հայտարարվեց մի վճռի մասին, ըստ որի Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո երկրից դուրս գտնվողները զրկվելու էին թուրքական քաղաքացիությունից: 1927 թվականի փետրվարի 2-ին ընունված որոշման համաձայն, ավելի վաղ «ազգային նահատակ» հայտարարված Բողազլըյանի գավառապետ Քեմալի կնոջն ու երեխաներին Ստամբուլում հայերից մնացած 20 հազար լիրա արժողությամբ անշարժ գույք հանձնվեց: 1927 թվականի դեկտեմբերին էլ աքսորի պատասխանատուներից մեկին՝ Ուրֆայի նահանգապետ Նուսրեթի ընտանիքին հայերից մնացած ունեցվածքներ հատկացվեցին: Հատկացումներն այսքանով չավարտվեցին, աքսորի ժամանակ ամենաարյունալի դեպքերին մասնակցություն ունեցած և «Հատուկ կազմակերպության» առաջնորդներից Բահաէդդին Շաքիրի, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդի և Թիֆլիսում Ջեմալ փաշայի հետ մահափորձի ենթարկված համհարզ Նուսրեթի ընտանիքներին հայերի գույքից մաս հատկացվեց: Բայց սարսափե-

լին այն է, որ հանրապետության խորհրդանիշ շենքերից մեկը համարվող Չանքայա նախագահական պալատը բռնագրավված հայկական հողատարածքում կառուցվեց:

Ընդհանուր բանակը՝ պետական գաղտնիքը

Չգիտենք, թե հայերից հետո ի՞նչ քանակությամբ անշարժ գույք է մնացել, որովհետև այդ ժամանակահատվածի անշարժ գույքի կադաստրի գրանցումները հասու չեն ուսումնասիրողներին: Եվ որպես հիշեցում նշեմ, որ 2005 թվականին անշարժ գույքի կադաստրի տնօրինության՝ սեփական արխիվում գտնվող Օսմանյան շրջանին պատկանող գրանցման փաստաթղթերը «Անշարժ գույքի արխիվ» անվամբ նախագծի շրջանակում ժամանակակից թուրքերենի վերածելու, համացանցում տեղադրելու և պետական արխիվների տնօրինությանը հանձնելու պահանջը Ազգային անվտանգության խորհրդի կողմից չընդունեց, ավելին՝ հայտարարվեց, որ այդպիսի նախաձեռնությունը հակասում է երկրի շահերին: Եվ քանի որ մեր երկրում եղած աղբյուրներից տեղեկատվություն չենք կարողանում ձեռք բերել, ստիպված ենք լինում օտարների ասածներին ուշադրություն դարձնել: Այս ուսումնասիրության աղբյուրներից մեկը Անգլիայի արտաքին գործերի արխիվն է: Այստեղ եղած մի փաստաթղթի համաձայն, 1918 թվականին Անգլիայի նախկին վարչապետ Ջեյմս Բալդվինը և տեղակալ Հերբերթ Ասքուիթը, նոր վարչապետ Ռամսեյ Դոնալդին ներկայացրած իրենց զեկույցներում, որտեղ նշվում է, թե ինչո՞ւ պետք է Օսմանյան կայսրությունում ապրող հայերին նյութական աջակցություն տրամադրվի, ասում են հետևյալը. «Ընդհանուր 5 մլն թուրքական ֆունտը (որը մոտավորապես 33 տոննա ոսկու է համարժեք) թուրքական կառավարության կողմից 1916

թվականին դրվել է Բեռլինի Reichs բանկում: Այս գումարի մեծ մասը հայերին է պատկանում: Իսկ Deutche բանկում դրված և առասպել դարձած հայերի ոսկիների քանակը անհայտ է»:

«Հայոց ազգային խորհուրդ» անվամբ մի հայկական կազմակերպության՝ 1919 թվականին Փարիզում ներկայացրած զեկույցի համաձայն, 1915-17թթ. աքսորի ժամանակ բռնագրավված ունեցվածքների մոտավոր արժեքը 19 մլրդ ֆրանսիական ֆրանկի է հասնում (1914 թվականից մինչև 1915 թվականի վերջը մեկ օսմանյան լիրան 22,8 ֆրանսիական ֆրանկ էր): Համաձայն նույն կազմակերպության հայտարարության, օսմանյան և եվրոպական բանկերում եղած հայերի դրամները բռնագրավվել են: 1925 թվականին ԱՄՆ-ի Սենատում անցկացված քննարկումների ընթացքում ենթադրվում է, որ հայերի գույքի արժեքը մոտ 40 մլն դոլար է: Մեր օրերում որոշ հայ հետազոտողներ պնդում են, որ աքսորից հետո հայերի բռնագրավված ունեցվածքը 14,5 մլրդ ֆրանկի (այսօրվա փոխով 100 մլրդ դոլարի) է համարժեք: Նկատենք, որ ժամանակին Թալեաթ փաշան պահանջել էր իրենց հանձնել ամերիկյան ապահովագրական կազմակերպություններում եղած հայերի դրամները և ամերիկյան արտակարգ ու լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուն հիշում է Թալեաթի խոսքերը. «Երանի ամերիկյան կյանքի ապահովագրական կազմակերպություններին դիմեիք, նաև հայոց մուրհակի տերերի ամբողջական ցուցակը մեզ ուղարկեիք, ամեն դեպքում բոլորը մահացած են հիմա, դրամը ստացող ժառանգորդներ էլ չկան: Իհարկե, այս ամբողջը պետությանը կմնա: Այժմ կառավարությունը որպես օրինական ժառանգորդ է հանդես գալիս»:

Ո՞վ կենթարկվի Լոզանին

1914 թվականին հաստատված գրանցումների համաձայն Օսմանյան կայսրությունում հայ համայնքին պատկանող 2538 եկեղեցի, 451 վանք և 2000 դպրոցներ կային: Աքսորից հետո հայկական գյուղերում և քաղաքներում բնակություն հաստատած մուսուլմանների առաջին գործը կենտրոնական ու գեղեցիկ եկեղեցիները մզկիթի վերածելն էր: Մնացածն էլ որպես պահեստ, կաթսայատուն է օգտագործվել: Խորհրդարանի ռասիստ-թուրք ազգայնամոլ թևի ներկայացուցիչ Ռըզա Նուրը 1921 թվականի մայիսի 25-ին Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քազըմ Քարաբեքիրին ուղարկած նամակում ասում էր. «Եթե հաջողվի Անի քաղաքի հետքերը երկրագնդից վերացնել, դա Թուրքիայի համար մեծ ծառայություն կլինի»: Խոսքը միջնադարում հայոց թագավորության մայրաքաղաքի մասին էր: Քարաբեքիրը իր հուշերում գրել էր, որ Ռըզա Նուրի առաջարկը մերժել է, որովհետև Անիի մնացորդները Ստամբուլի պարիսպների նման տարածք են զբաղեցնում և դժվար էր այս տեսակ աշխատանք իրականացնելը, ավելին, այսպիսի նախաձեռնությունը մնացած հայերին կանհանգստացներ: Բայց հետագայում Ռըզա Նուրի մտադրությունը հաղթեց և Անին բախտի քմահաճույքին հանձնվեց: Թեպետ 1924 թվականի Լոզանի խաղաղության պայմանագրի 42-րդ հոդվածը նշում էր, որ թուրքական կառավարությունը երաշխավորելու է եկեղեցիների, սինագոգների, գերեզմանների և այլ կրոնական կառույցների ամբողջական պահպանումը, բայց համաձայն UNESCO-ի 1974 թվականի զեկույցի, այդ ժամանակ մնացել էր միայն 913 եկեղեցի ու վանք: Դրանից հետո էլ եկեղեցիներից 464-ը հիմնովին քանդվեցին, 252-ն էլ թողնվեցին բախտի քմահաճույքին, իսկ 197-ն էլ լուրջ վերակառուցման կարիք ունեն:

Թուրքական պաշտոնական թեզի հիմքն է կազմում այն, որ հայերի աքսորի պատճառը նրանց դավաճանությունն էր: Լավ, այդ դեպքում ինչո՞ւ այն ժամանակ երիտթուրքերը հայերի ունեցվածքը բացեիբաց չեն բռնագրավել: Ներկայումս Կանադայում ապրող Քասաբյան ընտանիքից ճարտարապետ Էդուարդ Չուհաջըն կարծում է, որ Չանքայա պալատը Քասաբյան ընտանիքը ոչ ոքի էլ չի վաճառել: Ժամանակի կառավարությունը միայն այդ պալատը չէ, ամբողջ ունեցվածքն ու գույքը իրենց ձեռքից խլելով՝ 1915 թվականի օգոստոսին ողջ ընտանիքին աքսորել է: Չուհաջն ասում է. «Իմ հայրը ծնունդով Անկարայից է, այդ տարիներին օտարերկրյա մի կազմակերպության պատկանող երկաթգծում աշխատելու պատրվակով ընտանիքին Անկարայից Ստամբուլ է փախցրել: Բացի այդ, Քասաբյան ընտանիքին պատկանող գույքի մեջ էր նաև Քեչիորենի ամառանոցը, բայց նրան Վեհբի Քոչի ընտանիքն է տիրացել: 15 կամ էլ ավելի տարիներ առաջ Ստամբուլի թերթերից մեկում այս ամառանոցի նկարն էր տպագրվել. Վեհբին այն թանգարան էր դարձրել: Մայրս հանգուցյալ Վեհբիին նամակ էր գրել և նա էլ մորս ամառանոցի գունագեղ նկարներից էր ուղարկել: Անկարայում պապիկիս ընտանիքը և եղբայրները սեփական միջոցներով նաև մի եկեղեցի են կառուցել, որը ևս քանդվել է»:

*Թուրքերենից թարգմանությունը՝ (**Սուսաննա Գալստյանի**)*

1915 ԹՎԱԿԱՆԻ ՋՈՀԵՐԸ ԵՎ ԱՌԳՐԱՎՎԱԾ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[12]

Այշե Գյունայսու[13]

Վերջին շրջանում մամուլում քննարկվում է 1915-1916 թվականների զանգվածաբար ոչնչացված հայերի կյանքի ապահովագրության և ապահովագրական ընկերություններից փոխհատուցում ստանալու հարցը: Իրականում այն, որ այդ տարիներին Անատոլիայում կյանքի ապահովագրություն պատվիրողներ են եղել, այսօրվա Թուրքիայի բնակիչներին անհավատալի, մի քիչ անիրական է թվում: Պատճառը շատ պարզ է: Այսօր Թուրքիայի խոշոր քաղաքներում ապրողների համար իրականում էլ դժվար է պատկերացնել, որ նրանց աչքում գավառական, հիմնականում գյուղական համարվող շրջաններում գտնվող քաղաքները և գյուղաքաղաքները մի ժամանակ՝ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին հարուստ, զարգացած քաղաքներ են եղել և որ արևմտյան ապահովագրական ընկերությունների ամենուր տարածված գործակալությունները ջանադրաբար աշխատելով տասնյակ հազարավոր մարդկանց կյանքի ապահովագրության վկայականներ են վաճառել: Բայց և այնպես, այսօրվա Թուրքիայի 70 միլիոնը գերազանցող բնակչության գրեթե մեծամասնությունը անտեղյակ է ոչ

---

[12] Taraf, 14, 09, 2009.

[13] Թուրք վերլուծաբան-հրապարակախոս, հասարակական գործիչ:

միայն դրանից, այլև նրանից, որ անցյալ հարյուրամյակի սկզբում Անատոլիայում ապրող հինգ հոգուց մեկը ոչ մուսուլման է եղել: Դրանցից անտեղյակը ո՞րտեղից իմանա կամ ենթադրի, որ Թուրքիայում նույնիսկ այսօր լայնորեն չտարածված կյանքի ապահովագրությունը 100 տարի առաջվա Խարբերդում, Կեսարիայում հաջողություն ունեցած տնտեսական միջոց է եղել: Ամեն դեպքում իրավիճակը պարզ է. այն տարիներին նոր-նոր զարգացող առևտրական բուրժուազիայի շարժիչ ուժերը՝ հայ և հույն մասնագետները, իրենց ընտանիքները, հարազատները, կյանքի ապահովագրության այդ միտքը լավ յուրացրել են, արդյունքում արևմտյան ապահովագրական ընկերությունները տասնյակ հազարավոր ոչ մուսուլմանի կյանքի ապահովագրության վկայական են վաճառել: Վկայականների արժեքը 1915 թվականի գումարով գերազանցում է 20 միլիոն ԱՄՆ դոլարը:

Պետությունն աչք դրեց այն քաղաքացիների փողերին, որոնց ինքը ոչնչացրել էր

Հենց որ 1914 թ. պայթեց Առաջին համաշխարհայինը և օսմանցիները մտան այդ պատերազմի մեջ և հատկապես, երբ երկրի այն տարածքները, որոնց բնակչությունը հիմնականում կազմված էր հայերից և հույներից, այլևս դադարեցին անվտանգ լինելուց, ապահովագրական ընկերությունները սկսեցին կասեցնել իրենց աշխատանքները: Իրոք մեծ իրարանցում բարձրացավ և հույների ու հայերի զանգվածային ոչնչացման (որն ավելի ուշ ցեղասպանություն էր որակվելու) ընթացքում Օսմանյան պետությունն իր աչքը դրեց կյանքի ապահովագրությունների վրա, որոնց արժեքը շատ մեծ չափերի էր հասել և որպեսզի այդ գումարները

պետությանը վճարվեն, տարբեր մակարդակներում քաղաքական գործունեություն ծավալեց: Այդ սարսռեցնող իրականությանն առաջին անգամ հանդիպեցինք այդ ժամանակ Ստամբուլում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուի հուշագրություններում: Մորգենթաուն իր և Թալեաթ փաշայի միջև տեղի ունեցած խոսակցությունն այսպես է պատմում. «Մի օր Թալեաթը ապշեցուցիչ խնդրանքով դիմեց ինձ: Գործունեությունը, որ տարիներ շարունակ հայերի մեջ իրականացրել էին The New York Life Insurance ընկերությունը և Equitable Life of New York-ը, բավականին մեծ ծավալի էր հասել: Այն, որ այդքան շատ մարդ իր համար կյանքի ապահովագրություն էր պատվիրել, ևս մեկ նշան է, որ այդ մարդիկ գումարի կառավարման հարցում հաջողություններ են ունեցել: «Երանի,– ասաց Թալեաթը,– կյանքի ապահովագրության ամերիկյան ընկերություններին կարողանաք համոզել, որ հայկական վկայականների տերերի ամբողջական ցուցակը մեզ ուղարկեն: Քանի որ գրեթե բոլոր այդ մարդիկ արդեն մահացած են և ժառանգորդներ էլ չեն մնացել, անհրաժեշտ է, որ դրանք պետությանը փոխանցվեն: Ներկա պահին պետությունը օրինական տիրոջ կարգավիճակում է: Կարո՞ղ եք դա անել մեզ համար»: Այդքանը չափազանց էր: Ափերիցս դուրս եկա: «Ինձանից ոչ մի դեպքում նման ցուցակ չեք ստանա»,– ասելով ոտքի կանգնեցի և լքեցի սենյակը»:

1918 թվականից ի վեր մարդիկ կային, որ գիտեին Թալեաթ փաշայի և Մորգենթաուի միջև տեղի ունեցած այդ խոսակցության մասին, բայց անհրաժեշտ էր սպասել մինչև 1990 թվականը, որ բացահայտվեին հարցի մանրամասները:

Այն, ինչ մեզ համար բացահայտեցին 75 տարի գաղտնի պահված արխիվները.

Ամերիկյան Ազգային Արխիվներն այդ հարցին առնչվող գործերի վրա դրված գաղտնիության սահմանափակումը 1990 թվականին վերացրին: Երբ 75 տարի գաղտնի պահված այդ գրառումները հետազոտելու համար թույլտվություն տրվեց, շատ հետաքրքիր փաստաթղթեր ի հայտ եկան: Շատ ավելի վաղ անցկացված հետազոտության ժամանակ նամակներից, որ գրել էին New York Life Insurance և ֆրանսիական La Compagnie Lunion ընկերությունները իրենց երկրների արտաքին գործերի նախարարություններին 1922 թ., երբ Լոզանում շարունակվում էին հաշտության բանակցություններն Անտանտի տերությունների և Թուրքիայի միջև, պարզ դարձավ, որ մահվան դեպքերը հետևանք են Օսմանյան կայսրությունում իրականացրած զանգվածային ջարդերի, որոնց համար պատասխանատու է Օսմանյան կայսրությունը: Բացահայտվեցին նամակներ, որ պահանջում էին Լոզանի պայմանագրին միացնել մի պայման, ըստ որի փոխհատուցումները Թուրքիային են վճարվելու: Բայց ինչն է ամենակարևորը, բացահայտվեցին 1916 թվականին՝ երբ շարունակվում էին հայերի գաղթն ու ջարդերը, Օսմանյան կառավարության նամակները, որոնցում ԱՄՆ կառավարությունից և արևմտյան ապահովագրական ընկերություններից պաշտոնապես պահանջվում էին անունների ցուցակները՝ նպատակ ունենալով իրականացնել ծրագիրը, որ վկայականի տերերի մահվան փոխհատուցումները վճարվեն Օսմանյան պետությանը: Բացահայտվեցին նաև փաստեր, որոնք հաստատում էին այն, ինչ գրել էր Մորգենթաուն. պետությունը, որն իր քաղաքացիներին մահվան էր ուղարկել և պատասխանատու էր նրանց մահվան համար, մի կողմից պնդելով,

թե նրանց ընդամենը տեղափոխում է կայսրության այլ նահանգ, մյուս կողմից պնդում էր, որ անհրաժեշտ է նրանց և նույնիսկ նրանց ժառանգներին համարել մահացած ու այդ պատճառաբանությամբ էլ ցանկանում էր ձեռք գցել այդ մարդկանց հասանելիք ֆինանսական փոխհատուցումները:

Փաստաթու՞ղթ է պահանջվում: Ահա այն. Ամերիկյան Ազգային Արխիվ, RG 84, գործ համար 850.6, շվեյցարական La Federale Insurance Company անունը կրող ապահովագրական ընկերության ներքին նամակագրությունը: Ընկերության Ստամբուլում գտնվող ներկայացուցիչն ընկերության կենտրոն ուղարկած օգնություն հայցող իր նամակի մեջ կցում է Օսմանյան կայսրության Առևտրի և գյուղատնտեսության նախարարության անունից խորհրդական Մուսթաֆայի կողմից իրենց ուղարկված 1916 թ. մարտի 10-ին թվագրված մի նամակ: Ֆրանսերենից անգլերեն թարգմանված նամակում պահանջվում է, որ նշված վայրերում հայերին պատկանող հաշիվների ցուցակը ներկայացվի ներքին գործերի և առևտրի ու գյուղատնտեսության նախարարություններին: Նամակում վայրերը, որտեղ գտնվում էին կյանքի ապահովագրություն ունեցող հայերը, այսպես են դասակարգվում. Ռոդոստո (Թեքիրդաղ), Ադանա, Օսմանիե, Քոզան, Յոզղաթ, Անկարա, Էրզրում, Բիթլիս, Հալեպ, Անթալիա, Գեմլիք, Բիլեջիք, Սեբաստիա, Մերզիֆոն, Թոքաթ, Սամսուն, Օրդու, Տրապիզոն, Քոնիա, Մամուրաթ-ուլ Ազիզ (Խարբերդ), Իզմիթ, Ադափազարը, Սիվրիհիսար, Էսքիշեհիր, Կեսարիա, Դևելի, Նիղդե, Աֆյոնքարահիսար, Ուրֆա: Նշված վայրերի անունները, աշխարհագրական տեղավորվածությունը ամենախոսուն ապացույցն են, թե ինչքան ընդարձակ շրջանում են տարածված եղել ապահովագրական վկայականի հայ տերերը, որոնց օսմանյան ղեկավարները մահացած էին համարում: Նամակում պա-

հանջվում էր, որ այդ ցուցակները հիշատակված վայրերում գտնվող ապահովագրական կազմակերպության կառավարիչների միջոցով փոխանցվեն տվյալ բնակավայրի տեղահանման հանձնաժողովներին, իսկ դրանց բացակայության դեպքում անմիջականորեն առևտրի և գյուղատնտեսության նախարարությանը: Նույն այդ ժամանակ նմանատիպ նամակներ են ուղարկվում նաև The New York Life Insurance-ին, Equitable Life of New York-ին, որոնցում պահանջվում է հայերի ցուցակները, որոնց հաշիվները գտնվում էին այդ ապահովագրական ընկերություններում:

Ինչ վերաբերում է ապահովագրական ընկերություններին, ապա այն, որ շատ կարճ ժամանակամիջոցում՝ մի քանի ամսում, հազարավոր ապահովագրատերեր սպանվեցին և նրանց հասանելիք փոխհատուցումները անհավանական չափերի էին հասել, դրդում էին նրանց խուճապի մատնվել: Մեկը դիմում է խուսափողական մարտավարության, մյուսն առաջ է քաշում անհրաժեշտությունը, որ ֆինանսական պատասխանատվությունը Օսմանյան պետությունն իր վրա վերցնի, որոշ ապահովագրական ընկերություններ էլ, ինչպես New York Life Insurance-ը, փոխհատուցումը վճարելու համար ժառանգների առջև պայման են դնում, որ իրենց մտերիմների մահվան վկայականները վերցնեն և ներկայացնեն: Մահվան վկայականներն ո՞վ պետք է տա: Պետության կողմից լիազորված ներկայացուցիչները, նրանց մահվան ուղարկողները և մարդիկ, ովքեր պնդում են, թե նրանց ուղարկել են ոչ թե մահվան, այլ բնակեցման նոր վայրեր: Ասես չար կատակ լինի, այնպես չէ՞: Մեկ այլ դեպքում էլ ընկերությունները փոխհատուցումը չվճարելու համար դիմում են այնպիսի հիմնավորումների, ինչպես այն, որ մինչև 1915 թվականի ապրիլը սիստեմատիկորեն վճարվող ապահովագրական գումարները հան-

կարծ սկսել են չվճարվել, ինչի պատճառով էլ վկայակաները կորցրել են իրենց ուժը: Դա այն դեպքում, երբ ակնհայտ է, թե ինչու ապահովագրական գումարները չեն վճարվել:

Հետազոտած փաստաթղթերից պարզ է դառնում, որ Ստամբուլում ԱՄՆ դեսպանատան, Անատոլիայում գտնըվող հյուպատոսարանի պաշտոնյաների և միսիոներների օգնությամբ փոքր թվով հայ ժառանգներ ապահովագրական ընկերություններից 1919-1921 թթ. ստացել են ցեղասպանության ժամանակ կորցրածները:

Ինչպես կյանքն է ցույց տալիս, մարդ տեսնում և իմանում է այն, ինչ ուզում է: Հետաքրքրվողների համար իրականում ոչինչ էլ անհասանելի չէ: Հետաքրքրվելու համար էլ խղճի և արդարության զգացում է անհրաժեշտ: Իմացությունը հետո է գալիս:

Թուրքերենից թարգմանությունը՝ (***Եպրաքսյա Միքայելյանի***)

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԲՈԼՈՐՆ ԷԼ ԻԹԹԻՀԱԹԱԿԱՆՆԵՐ ԷԻՆ[14]

(Հարցազրույց թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլի հետ)

Նեշե Դյուզել – Մենք՝ թուրքերս Անատոլիան պատկերացնում ենք որպես հայրենիք: Սակայն հազար տարի էլ չի անցել, որ եկել ենք այստեղ: Մեր գալու ժամանակ ովքե՞ր էին ապրում Անատոլիայում:

Սելիմ Դերինգիլ – Ապրում էին Բյուզանդական կայսրության հպատակները՝ շատ մեծ թվով հայեր, հույներ, կային նաև քրդեր, արաբներ, ասորիներ, քաղդեացիներ, նեստորականներ, հրեաներ... Հույները, հայերը, քրդերը ամենուր էին: Հույները հատկապես Ստամբուլում, Սև և Էգեյան ծովերի ափամերձ տարածքներում էին, իսկ հայերը ավելի շատ էին Արևելյան Անատոլիայում:

Նեշե Դյուզել – Ինչպե՞ս են թուրքերն իրենց իշխանության և ազդեցության տակ վերցրել Անատոլիայում ապրող այլ ժողովուրդներին:

Սելիմ Դերինգիլ – Դա երկար և խճճված մի պատմություն է: Բայց կասեմ հետևյալը. Միջին Ասիայից եկածների

---

[14] **Taraf**, 30, 03, 2010.

իրական ժառանգների թվաքանակը ներկայիս թուրք բնակչության մեջ ամեն դեպքում շատ ցածր է:

Նեշե Դյուզել – Չհասկացա: Թուրքական արմատներ ունեցող բնակիչնե՞րն են քիչ:

Սելիմ Դերինգիլ – Այո՛: Այսօր Թուրքիայում իրենց թուրք կոչող բնակիչները ասում են, որ Միջին Ասիայից են եկել: Գենետիկական հետազոտությունների հիման վրա պարզ է դարձել, որ այսօր այն մարդկանց թիվը, ում երակներում Միջին Ասիայից եկածների արյունն է հոսում, կազմում են Թուրքիայի Հանրապետության բնակչության մեկ երրորդը: Միջին Ասիայից եկածները խառնվեցին Անատոլիայի տեղի բնակիչների հետ, որոնք ժամանակի ընթացքում իսլամացվեցին: Այսինքն՝ այժմյան Անատոլիայի բնակչությունը ձևավորվել է շատ երկար մի գործընթացքի հետևանքում: Օսմանյան կայսրությունում իսլամացման գործընթացը ընդհանուր առմամբ աստիճանական և շարունակական եղավ: Իրականում իսլամացումը ամենաարագ տեմպերով տեղի է ունեցել 19-րդ և 20-րդ դարերում: Աբդուլ Համիդի ժամանակաշրջանում իրականացված 1895-1896 թթ. կոտորածների ընթացքում հայ ժողովուրդի մեծաքանակ մի զանգված բռնի իսլամացվեց:

Նեշե Դյուզել – Աբդուլ Համիդի ժամանակաշրջանում ինչպիսի՞ն էին հարաբերությունները հայերի հետ:

Սելիմ Դերինգիլ – Հայկական հեղափոխական կազմակերպությունների՝ հնչակյանների ու դաշնակցականների պայքարը Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ազգային վերջին պայքարն էր: Բալկաններում ամեն բան արդեն ավարտվել էր և Բալկանների մեծ մասը կորուսված էր:

Հնչակյաններն ու դաշնակցականները հետևում էին, թե ինչպես են նմանատիպ գործողություններն իրականացվում Բուլղարիայում և Մակեդոնիայում. նախ առաջամարտիկները սկսում են ընդվզումը, գրավում են արտաքին ուժերի ուշադրությունը, արտաքին ուժերը միջամտում են և դրան էլ հետևում է ինքնավարությունը, իսկ վերջնական արդյունքում ձեռք է բերվում անկախություն: Հնչակյանների ու դաշնակցականների նպատակը սա էր, սակայն այդ մոդելը Անատոլիայում չաշխատեց: Եթե անդրադառնանք աբդուլհամիդյան ժամանակաշրջանին, ապա հայկական կազմակերպությունները արևմտյան տերությունների ուշադրությունը գրավելու համար Ստամբուլում սկսել էին ազգային պայքար, ցույցեր և 1896 թ. օգոստոսի 26-ին տեղի ունեցավ Օսմանյան բանկի (Բանկ Օտտոման) վրա հարձակումը: Աբդուլ Համիդն օգտագործեց ամեն հնարավորություն վերացնելու այդ վտանգը: Նա հիմնեց քուրդ ցեղախմբերից կազմված «համիդիյե» գնդեր, որոնց Համիդն ասում էր. «Կոտորեք հայերին որքան կուզեք և յուրացրեք նրանց ունեցվածքը»: «Համիդիյե» գնդերը 1915 թ. տեղահանումներից առաջ էլ շատ մեծ թվով հայեր են կոտորել:

Նեշե Դյուզել – Անատոլիայում իթթիհաթականներից առա՞ջ էլ է հայերի կոտորած կազմակերպվել:

Սելիմ Դերինգիլ – Այո՛: Միայն թե Աբդուլ Համիդի տարբերությունը իթթիհաթականներից հետևյալն էր. իթթիհաթականները նպատակ ունեին ամբողջությամբ ոչնչացնել հայ բնակչությանը, իսկ Աբդուլ Համիդը ցանկանում էր հայ բնակչության թիվը նվազեցնել մի որոշակի չափի, նրանց տնտեսական ազդեցությունը քչացնել և այդպիսով Անատոլիայում հայերի փոխարեն մուսուլմանական գավառական բուրժուազիա հիմնել:

Նեշե Դյուզել – Աբդուլհամիդյան ժամանակաշրջանում ո՞ր վայրերում է տեղի ունեցել հայերի կոտորած:

Սելիմ Դերինգիլ – Անատոլիայում բոլոր այն վայրերում, որտեղ կար քաղաքային բնակչություն, կային նաև հայեր: Օրդուում, Թոքաթում, Տրապիզոնում, Ամասիայում, Ուրֆայում, Սեբաստիայում, ամենուր... Կոտորածները տեղի են ունեցել Անատոլիայի տարբեր շրջաններում: Այսօր պաշտոնական պատմությունն ասում է, որ այդ շրջաններում եղել են հայերի ապստամբություններ, սակայն այդ բոլորին «հայերի ապստամբություն» անվանելը շատ դժվար է:

Նեշե Դյուզել – Դրանք ապստամբությու՞ն չէին:

Սելիմ Դերինգիլ – Ո՛չ: Շատ իրադարձություններ, որոնց պաշտոնական պատմագրությունը անվանում է ապստամբություն իրականում ոչ մի ապստամբություն էլ չէին: 15-20 մարդ կար: Նրանք կորցրել էին ամեն ինչ և ոտքի էին ելել: Պետության զինված ուժերին կազմակերպված և հաջող դիմադրություն միայն Զեյթունում էր լինում, քանի որ քիչ էին այն վայրերը, որտեղ հայերը այնքան մեծաքանակ և զինված լինեին, որ կարողանային ապստամբել: Օրինակ՝ Ուրֆայում ոչ մի հնչակյան, դաշնակցական կազմակերպություն չկար, սակայն այնտեղ տեղի ունեցավ հայերի շատ մեծ կոտորած: Առաջին և ամենախոշոր կոտորածներից մեկը տեղի ունեցավ 1895 թ. Դիարբեքիրում:

Նեշե Դյուզել – Դիարբեքիրում հայկական կոտորա՞ծ է իրականացվել:

Սելիմ Դերինգիլ – Իհարկե, այն էլ սաստիկ կոտորած, որն իրականացնում էին «համիդիյե» գնդերն ու բնակիչ-

ները: Այդ սպանությունների ժամանակ շատ էին նաև ունեցվածքի, աղջիկների գողության դեպքերը: Քրդերը մշտապես փախցնում էին հայ կանանց և ամուսնանում:

Նեշե Դյուզել – Աբդուլհամիդյան ժամանակաշրջանում որքա՞ն հայ է կոտորվել:

Սելիմ Դերինգիլ – Պատրիարքարանի տված թվերի համաձայն 1894-1896 թթ. ընթացքում 300 հազար հայ է սպանվել: Պատրիարքարանի թվերը կարող են չափազանցված լինել, սակայն ճշմարիտ է, որ աբդուլհամիդյան ժամանակաշրջանում շատ մեծ թվով հայեր են սպանվել: Այդ տարիներին նահանգներ էին ուղարկվում մի խումբ «կրոնի մարդիկ» և շրջիկ մոլլաներ: Ուրբաթօրյա աղոթքի ժամանակ այդ ուղարկված անձինք գրգռում էին հասարակությանը: Ըստ էության կոտորածների մեծ մասը կատարվել է ուրբաթ օրերին: Իսկ մեր պաշտոնական դասագրքերում ասվում է. «Մզկիթում մուսուլմանների աղոթելու ժամանակ հայերը հարձակվել են»: Դիարբեքիրի նման վայրում, ուր հայերը փոքրամասնություն էին, հնարավո՞ր է, որ հայ բնակիչները հարձակվեն մուսուլմանների վրա այն էլ ուրբաթօրյա աղոթքի ժամանակ:

Նեշե Դյուզել – Կոտորածներից փրկվելու համար կայի՞ն արդյոք հայեր, որոնք իսլամ էին ընդունում:

Սելիմ Դերինգիլ – Անշուշտ կային: Օրինակ՝ Ուրֆայում կոտորածների ընթացքում որոշ տների կտուրին սպիտակ դրոշակներ բարձրացնելով, մարդիկ գոռում էին, թե «Ցանկանում ենք մուսուլման դառնալ»: Սրանք չէին սպանվում: Անշուշտ, նաև կային մարդիկ, ովքեր թեկուզ և ցանկանում էին դառնալ մուսուլման, սակայն սպանվում էին:

Նեշե Դյուզել – Պատմաբաններն ինչո՞ւ չեն ուսումնասիրել մեր ոչ վաղ անցյալի պատմությունն ու այդ դեպքերը:

Սելիմ Դերինգիլ – Պատմաբաններն ի՞նչ են անում: Նրանք զբաղված են պետության պաշտոնական թեզերի ապացուցմամբ: Փորձում են ապացուցել, թե հայերի պընդումներն որքան անհիմն են:

Նեշե Դյուզել – Իսկ 1915 թ. տեղի ունեցածը կարո՞ղ է լինել փոխադարձ կոտորած:

Սելիմ Դերինգիլ – Այդպես լինելու համար անհրաժեշտ է, որ կողմերը գոնե հավասար լինեն, իսկ այդ ժամանակաշրջանի Անատոլիայում իրավիճակը այդպես չէր:

Նեշե Դյուզել – Որքա՞ն է տարագրության ընթացքում սպանված հայերի թիվը:

Սելիմ Դերինգիլ – Սա շատ քաղաքականացված հարց է: Հայկական սփյուռքն ու Հայաստանը ասում են, որ այդ թիվը 1,5 միլիոն է: Մեր պաշտոնական պատմության մեջ ամեն տեսակ կարծիք կա: Յուսուֆ Հալաչօղլուն ասում է 50-60 հազար: Քյամուրան Գյուրունը ժամանակին ասում էր 200-300 հազար: Ազգերի լիգան սպանվածների թիվը նշում է 800 հազար: Ըստ իս 800 հազար է՝ ներառյալ ճանապարհին հիվանդություններից մահացածներին:

Նեշե Դյուզել – Տեղահանման ժամանակ Օսմանյան կայսրությունը գտնվում էր գերմանական ազդեցության տակ: Օսմանյան բանակն էլ ղեկավարում էին գերմանացի գեներալներ: Եթե գերմանացիները դեմ լինեին, հնարավո՞ր էր դադարեցնել հայերի տեղահանությունը:

Սելիմ Դերինգիլ – Գերմանացիները ինքնին դեմ չէին աքսորին: «Սա ռազմական մարտավարություն է: Իրավունք ունեք դա անել»,– ասում էին նրանք: Սակայն տեսնելով, որ գործն արդեն ընդունել է բավականաչափ համակարգված բնույթ և ամբողջ բնակչությունը ոչնչացվում է, գերմանացիները սկսեցին դեմ դուրս գալ սրան: Ասում էին, թե «Առնվազն բողոքականներին և կաթոլիկներին պաշտպանենք» և ճնշում էին գործադրում օսմանյան իշխանությունների վրա: Այս պատճառով Թալեաթը հեռագիր-հրաման է ուղարկում նահանգներ, որտեղ ասված էր «Այդ գոտու բողոքականներին և կաթոլիկներին չտեղահանել»: Այդ հեռագիրը նա ցույց էր տալիս գերմանացիներին, իսկ դրանից անմիջապես հետո պատրաստում էր մի այլ հրաման, որով չեղյալ էր հայտարարում իր արձակած նախորդ հրամանը:

Նեշե Դյուզել – Ոչ հեռավոր անցյալի մեր պատմությունը ինչո՞ւ լավ չգիտենք:

Սելիմ Դերինգիլ – Կա մի քանի պատճառ: Առաջինը՝ որպես պետություն չենք ուզում մտնել այդ թեմաների մեջ: Երկրորդը՝ որոշ փաստաթղթեր իսկապես որ վերացվել են: Օրինակ՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության, «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթը Մահսուսիի») արխիվները վառվել են: Այս վերջին կառույցը հիմնվել էր որպես հետախուզական ծառայություն, սակայն հայերի տեղահանման ժամանակ վերածվել էր կոտորածն իրականացնող հրոսակախմբերի: Դատարկում էին բանտերը, դատապարտյալներին ստիպում էին սպանություններ գործել: Նրանց օգտագործում էին որպես վարձու մարդասպաններ: Երիտթուրքերն արտասահման փախչելուց առաջ փաստաթղթերի մեծ մասը ոչնչացրել են:

Նեշե Դյուզել – Երիտթուրքերի դատավարության ժամանակ ովքե՞ր դատապարտվեցին հայերի կոտորածների և տեղահանման համար:

Սելիմ Դերինգիլ – Մեր պաշտոնական պատմաբանները ճիշտը չեն, երբ ասում են, թե «Օսմանյան կայսրությունը օտարների ճնշմամբ դատարան հիմնեց և դատապարտեց»: Իրականում սա ճշմարիտ չէ: Այդ ժամանակ կառավարական օղակներում կային խղճի տեր ու «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը չսիրող մարդիկ, ովքեր հավատում էին, որ այս գործը իսկապես մի չարիք է և անպայմանորեն անհրաժեշտ է պատժել: Դատի ընթացքում կային անգամ մեղադրյալներ, ովքեր խոստովանում էին, որ իրենք հանցանք են կատարել և հայտարարում էին «Անիծյալ լինենք»: Սակայն մեղադրյալների մեջ կային նաև Բողազլըյանի գավառապետ Քեմալի նման մարդիկ, ովքեր ասում էին. «Այո, արել եմ և եթե պետք լինի վաղը նորից կանեմ»:

Նեշե Դյուզել – Պաշտոնական պատմություն կոչվածը Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների և ղեկավարների գրած պատմությունն է: Որպես պատմաբան ինչպե՞ս եք մեկնաբանում այն, որ հանրապետության հիմնադիրներն ու ղեկավարները նման մեծ եռանդով ուզում են տեր կանգնել երիտթուրքերի մեղքին:

Սելիմ Դերինգիլ – Ժամանակին Մուսթաֆա Քեմալը հայկական կոտորածները որակել էր որպես «ամոթալի արարք», սակայն իր պաշտոնական ելույթներում ընդհանրապես չի խոսում հայերի կոտորածից: Ըստ երևույթին ամբողջ հարցն էլ այստեղից է ծագում: Հանրապետության կերտողները հազարավոր մարդիկ չէին: Դրանք մի քանի հարյուրի հասնող մարդիկ էին, որոնք բոլորն էլ 1915 թ.

հայերի տեղահանության ժամանակ այս կամ այն պաշտոնն են զբաղեցրել: Նրանք կամ իմացել են դեպքերի մասին կամ էլ անմիջականորեն մասնակցել են դրանց:

Նեշե Դյուզել – Փաստորեն հայերի տեղահանության պատասխանատուները միևնույն ժամանակ Թուրքիայի Հանրապետության հիմնադիրնե՞րն են:

Սելիմ Դերինգիլ – Մեծ հաշվով նույն մարդիկ էին: Ասվում է. «Տեղահանությունը, կոտորածը, ցեղասպանություն կամ ինչ էլ որ լինի, այն իրականացրել են երիտթուրքերը»: Շատ լավ, իսկ ովքե՞ր են այդ երիտթուրքերը: Հանրապետության հիմնադիրները բոլորն էլ իթթիհաթականներ էին: Իհարկե չեմ ասում, թե յուրաքանչյուր իթթիհաթական մարդասպան է: Մուսթաֆա Քեմալն էլ իթթիհատական էր:

Շատ սխալ է նաև այն, որ ամերիկացի պատմաբաններին գումար են տալիս, որոնք էլ արտասահմանում մեզ համար քարոզչություն են անում: Նրանք հայտարարում են. «Դա ցեղասպանություն չէ: Հայերն են թուրքերին սպանել: Ինչո՞ւ չի խոսվում Բալկաններում թուրքերի դեմ իրականացվածից»: Ճիշտ է, որ Բալկաններում մուսուլմանները շատ արհավիրքներ, աքսոր, և կոտորած են տեսել: Սակայն հայերի տեղահանությունը արդարացնելու համար ճիշտ չէ օգտագործել Բալկանները, որտեղ տեղի ունեցածը նույն մասշտաբով նախապես ծրագրված և սառնասիրտ կերպով իրականացված թուրքերի կոտորած չէր:

*Թուրքերենից թարգմանությունը՝ (**Վարուժան Գեղամյանի**)*

«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ» (ԹԵՇՔԻԼԱԹԸ ՄԱՀՍՈՒՍԱ) ՔԵՄԱԼԱԿԱՆ ՌԵԺԻՄ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ[15]

Սայիթ Չեթինօղլու[16]

«Հատուկ կազմակերպությունը» լինելով «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնաքարը, իր 30 հազար անդամներով կարևոր հանձնարարություններ է իրականացրել, որոնցից է Հայոց ցեղասպանությունը: Կազմակերպության նպատակներից էր. «Ապահովել ներքին անվտանգությունը և թույլ չտալ, որ Օսմանյան պետությունը այլևս տարածք կորցնի»: «Հատուկ կազմակերպությունը» գործուն էր Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև վերջը: Նրա գործունեության ոլորտը գաղտնի էր, ներառում էր հակառակորդի շրջանում քայքայիչ, պարտիզանական գործողություններ, հակահետախուզություն, ինչպես նաև կայսրության հույն և հայ քաղաքացիների ձեռքում եղած առևտրի ու արդյունաբերության բռնի թուրքացում: Օրինակ՝ Ձելալ Բայարը, լինելով «Հատուկ կազմակերպության» Իզմիրի բաժանմունքի պատասխանատու, բավական ակտիվ էր այդ ասպարեզում: Այս կառույցը իր հիմնական նշանակությամբ «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կուսակցության «գործիքն» էր և

---

[15] http://www.hyetert.com/yazi3.asp?s=0&Id=252&DilId=1

[16] Թուրք հետազոտող-վերլուծաբան:

նրա գործունեությունն այն աստիճանի գաղտնի էր, որ հաճախ կառավարության անդամներն անգամ չգիտեին այդ մասին: Պետության ներսում մի պետության նման գործող այս կազմակերպությունն ուներ սեփական հատուկ ծածկագրերը, համազգեստները և այլն:

Երբ նայում ենք էթնիկ զտման ամենակարևոր նախաձեռնող կազմակերպության անձնակազմին, մեր առջև են հառնում քաջ ծանոթ դեմքեր: Թվարկենք դրանցից մի քանիսին. «Հատուկ կազմակերպության» լեգենդար ղեկավար Քուշչուբաշը Էշրեֆը, նրա եղբայրը՝ Քուշչուբաշը Սելիմ Էթհեմը, Ազգային ազատագրական պայքարի առաջնորդներից Արևելյան ռազմաճակատի հրամանատար, Առաջադիմական հանրապետական կուսակցության հիմնադիր, մեջլիսի նախագահ Քյազըմ Քարաբեքիրը, համիդիեական հերոս, լրտես Բահրիյեն, վարչապետ Հուսեին Ռաուֆ Օրբայը, Հայոց ցեղասպանության մեջ կարևոր դերեր ստանձնած, Իսմեթ Ինենյուի խորհրդական, Մուսթաֆա Քեմալի օգնական և նվիրյալ Աթըֆ Քամզըլը: Ազգային ազատագրական պայքարում կարևոր պաշտոններ ստանձնած Սափանջալը Հաքքը, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից և Շևքեթ Սուրեյյա Այդեմիրի խոսքով, մեկ միլիոն մարդ սպանելով փառաբանված՝ Իթթիհաթի ահաբեկչական թևի ղեկավար դոկտոր Նազըմը, Ազգային պայքարի և ոստիկանական միավորման կարևոր անուններից՝ տրապիզոնցի Ոըզան, ով կարևոր դեր է կատարել հայերի տեղահանության ժամանակ, ազգային ուժերի Իզմիթի շրջանի պատասխանատու կապիտան Յահյան, Տրապիզոնի նավավարների ղեկավար և Մուսթաֆա Սուբհիին սպանող Յահյա Քահյան ու եղբայրը՝ Օսման Քահյան, կազմակերպության վերջին նախագահ և ազգային պայքարում կարևոր հետախուզական գործեր վարած Հուսա-

մեթին էրթյուրքը, քեմալական ռեժիմի Անկարայի առաջին քաղաքապետը՝ Աբդուլքադիրը, բանաստեղծներ Մեհմեդ Աքիֆը և Մեհմեդ էմին Յուրդաքուլը, արձակագիր Օմեր Սեյֆեթթինը, Սաիդ Նուրսին: Կարող ենք ներկայացնել մի մեծ ցանկ ևս այն մարդկանց, ովքեր քեմալական ռեժիմում «Հատուկ կազմակերպության» անդամից բարձրացել են մինչև նախարարի, վարչապետի, նախագահի պաշտոնի: «Միություն և առաջադիմություն» կուսակցության Իզմիրի պատասխանատու քարտուղար Գալիփը դարձավ պատգամավոր, «Հատուկ կազմակերպության» կարևոր անդամներից մեկը Մահմուդ Ձելալ Բայարը դարձավ պատգամավոր այնուհետև Թուրքիայի երրորդ նախագահը, բարձր պաշտոնների հասան Հայոց ցեղասպանության ժամանակ գաղթի ընդհանուր ղեկավար Շուքրու Քայան, Թալեաթի քենակալ Մուսթաֆա Աբդուլ-Հալիք Ռենդան: «Հատուկ կազմակերպության» հայտնի մարտիկներից Շևքեթ Էսենդալը դարձավ Թուրքիայի Հանրապետության էկոնոմիկայի նախարար:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության իսլամիստական ճյուղին հարող Շեմսեթթին Գյունալթայը և Մեհմեդ Շյուքրու Սարաջողլուն քեմալական ռեժիմում հասան մինչև վարչապետի պաշտոնը: Հենց վարչապետ Սարաջողլուի կառավարման օրոք ոչ մուսուլման փոքրամասնությունների նկատմամբ կիրառվեց հարկային խոշոր տուգանքներ, որի նպատակը երիտթուրքերի վաղեմի երազանքներից մեկի իրականացումն էր՝ թուրք-մուսուլմանական կապիտալի ընդլայնումը:

Ավելորդ չէ նկատել, որ 1938 թ. հանրապետության ղեկավար ընտրվելուց հետո Իսմեթ Ինենյուի առաջին գործն եղավ երիտթուրքական կուսակցության նախկին անդամներին տարբեր պաշտոնների նշանակելը, իսկ 1943 թ. ֆա-

շիստական Գերմանիայի հետ ձեռք բերած համաձայնության արդյունքում Թուրքիա տեղափոխեց Թալեաթ փաշայի աճյունը:

1943-1946 թթ. Ստամբուլի համալսարանի ռեկտորի պաշտոնը զբաղեցրած դոկտոր, պրոֆեսոր Թևֆիք Սալիմ Սաղլամը 1915 թ. աքսորի ժամանակ ռազմական բժիշկ էր: 1919 թ. «Ալեմդար» թերթում տպագրված մի նամակի համաձայն՝ նա օսմանյան բանակի հայ զինվորներին տիֆի միկրոբ ներարկելով՝ բժիշկ Մենգելի նման փորձարկումներ էր արել և այսօր էլ նրա անունը կրող մի կլինիկա գոյություն ունի համալսարանում:

Թուրքերենից թարգմանությունը՝ (Շուշան Խաչատրյանի)

ՄԱԼԹԱՅԻ ԱՔՍՈՐՅԱԼՆԵՐԸ[17]

Այշե Հյուր

Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած Օսմանյան պետության կողմից 1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո Դաշնակից պետությունների գլխավոր խնդիրը Առաջին համաշխարհայինի և 1915 թվականի աքսորի մեղավորներին դատարանի առջև կանգնեցնելն էր: Այս ամենը ցանկանում էին ոչ միայն դաշնակից ուժերը, այլև օսմանյան կառավարական որոշ շրջանակներ ևս: Անգլիայի արտգործնախարարության Ստամբուլի ներկայացուցիչը օսմանյան իշխանություններից պաշտոնապես պահանջեց, որպեսզի նաև Հայոց պատրիարքության աջակցությամբ կազմված ցուցակում տեղ գտած պատերազմի ու աքսորի մեղավորները հանձնվեն անգլիացիներին: Կառավարությունը ճնշումներին չկարողացավ դիմադրել և 1919 թվականի հունվարի վերջից սկսած 112 կասկածյալ տեղափոխվեցին ժամանակի հայտնի "Bekir Ağa Koğuş" բանտը:

Իրականացված հետաքննություններից հետո 1 միլիոն հայի և 550 հազար հույնի սպանվելու, բանակում ոչ մուսուլմաններից կազմված բանվորական գումարտակներում 250 հազար մարդկանց սովի ու չքավորության պատճառով

[17] **Taraf**, 28, 02, 2010.

մահանալու փաստերի հիմնավորմամբ՝ Ռազմական ատյանում 1919 թ. փետրվարի 5-ին սկսվեց պատերազմի ու աքսորի մեղավորների դատապարտման գործընթացը: Առաջինը պատիժը ստացավ Բողազլոյանի գավառապետ՝ ավելի ուշ Յոզղաթի նահանգապետի պաշտոնակատար Քեմալը: 1919 թվականի ապրիլի 10-ին Ստամբուլում Քեմալին մահապատժի ենթարկեցին, որը երիտթուրքական մեծ բողոքի ալիքի պատճառ դարձավ: Սա ազդեց նաև կառավարության դիրքորոշման վրա և, երբ 1919 թվականի մայիսի 15-ին հույները գրավեցին Իզմիրը հոգեբանական առավելությունն ամբողջությամբ թեքվեց երիտթուրքերի կողմը: Դամադ Ֆերիթ փաշայի կառավարությունը ժողովրդին հանգստացնելու համար ազատեց "Bekir Ağa Koğuş" բանտում պահվող 41 կալանավորի: Այս ամենից անհանգստացած անգլիացիները 1919 թվականի մայիսի 28-ին բանտում գտնվող 67 բանտարկյալի նկատմամբ հսկողություն հաստատեցին և սեպտեմբեր ամսվա կեսերին նրանցից 12-ին տեղափոխեցին Մուդրոս, մնացածին էլ՝ Մալթա:

Անկարա-Ստամբուլ բախումը

Այս ընթացքում ևս անգլիացիները շարունակում էին ցուցակ կազմել: 1920 թ. հունվարին Բարձրագույն կոմիսարի ներկայացրած ցուցակում տեղ գտած 173 անձանցից 80-ին նույն թվականի մարտին անգլիացիները ձերբակալեցին: Այս անձանց մեջ Անկարայի մարդիկ էլ կային: Ստամբուլի Ռազմական ատյանի դատարանի կողմից Մուսթաֆա Քեմալի և ազգային պայքարի շուրջ հարյուր ներկայացուցիչների նկատմամբ մահապատժի որոշումները պատճառ դարձան Անկարայի կոշտ պահվածքի: Արդեն օգոստոսի 11-ին Մուսթաֆա Քեմալը հայտարարեց, որ եթե օգոստոսի 12-ին աքսորի մեղադրանքի պատճառով

հայրենիքի զավակները մահապատժի ենթարկվեն, ապա իրենք կախաղան կբարձրացնեն անգլիացի փոխգնդապետ Ռաուլինսոնին ու անգլիացի այլ գերիների: Ռաուլինսոնը Արևելյան Անատոլիայում և Կովկասում զինադադարի հաստատման պատասխանատուն էր ու ձերբակալվել էր անձամբ Քազըմ Քարաբեքիրի կողմից և պահվում էր որպես պատանդ: Սպառնալիքներն ունեցան իրենց ազդեցությունը և սկսած այդ ժամանակվանից Ստամբուլում նոր ձերբակալություններ չեղան, իսկ Ռազմական ատյանում մահապատժի նոր վճիռ չկայացվեց:

Կոլեկտիվ հանցանք, կոլեկտիվ հանցագործ

Անգլիացիները հասկացել էին, որ եթե նույնիսկ Մալթայում գտնվողներին դատապարտեին, միևնույն է, պատիժների իրագործումը հնարավոր չէր: Նախ և առաջ երիտթուրքական կուսակցությունը 1915 թվականի աքսորը իրականացնելիս և՛ լայն ժողովրդական զանգվածներին, և՛ օսմանյան պետության քաղաքական, վարչական ու զինվորական կադրերի մեծ մասին հանցակից էր դարձրել: Այսինքն՝ կար կոլեկտիվ իրականացված հանցանք: Այնուամենայնիվ Մալթայում ձերբակալվածներին իրենց գործած հանցանքների համար հնարավոր էր դատապարտել, սակայն դրա համար անհրաժեշտ էր թուրքական կողմից ակտիվ համագործակցություն: Մինչդեռ ո՛չ անգլիացիների մոտ նրանց ստիպելու ուժ և ցանկություն կար, ո՛չ էլ թուրքական կողմն աջակցելու մտադրություն ուներ: 1920 թվականի հուլիսին Ստամբուլի Բարձրագույն կոմիսարիատում ծառայող Հարի Հ. Լամբը իր զեկույցում հակիրճ ներկայացրել էր հանցանքն ապացուցող փաստաթղթերի վերհանման հետ կապված դժվարությունները: Անգլիացիները

վերջին հույսով դիմեցին ԱՄՆ-ին, որովհետև նրանց ձեռքում էր գտնվում կարևոր արխիվ, բայց այնտեղից էլ դրական պատասխան չստացվեց, քանի որ ամերիկացիներն էլ քեմալական ուժերի հետ բախվելու մտադրություն չունեին:

Փոխանակման համաձայնագիր է ստորագրվում

Հետո անգլիացիները սկսեցին ուղիներ փնտրել Մալթայում պահվող 150 ձերբակալվածներից 64-ին քեմալիստական ուժերի ձեռքում գտնվող 29 անգլիացի գերիների հետ փոխանակման համար: Լոնդոնյան հանդիպումների ընթացքում 1921 թ. մարտի 16-ին անգլիացիներն ու Անկարայի արտգործնախարար Բեքիր Սամին (Քունդահ) փոխանակման համաձայնագիր ստորագրեցին, ըստ որի Մալթայից ազատ արձակված մարդկանց դատավարությունը տեղի է ունենալու Անկարայում: Անգլիացիները 1921 թվականի ապրիլի 29-ին չորս թուրք ձերբակալվածի ազատեցին, որոնք մեկնեցին Սիցիլիա: Հաջորդ օրը 33 թուրք ձերբակալվածներ անգլիական նավով տեղափոխվեցին Տորոնտո: Հերթը հասել էր անգլիացի գերիներին ազատ արձակելուն, բայց 1921 թվականի մայիսի 8-ին Բեքիր Սամին հեռացվեց պաշտոնից և անգլիացիները մնացին առանց գործընկերոջ: Ավելին մայիսի 26-ին անգլիական հպատակ հնդիկ Մուսթաֆա Սագիրը մահապատժի ենթարկվեց Մուսթաֆա Քեմալի դեմ մահափորձ կազմակերպելու պատճառով. այնինչ նա նույնպես պետք է ներառնված լիներ փոխանակման ցուցակում և վերադարձվեր անգլիացիներին: Այս ամենի պատճառով էլ անգլիական կողմը հայտարարեց, որ Մալթայում կպահի 24 գերիների, որոնք պետք է վերադարձվեին Անկարային:

Հունիսի վերջերին Անկարայից եկած նամակում հըստակ տեղեկացվում էր, որ իրենք չեն ճանաչում Բեքիր Սամիի կնքած համաձայնագիրը և եթե անգլիացիները իրենց մոտ եղած բոլոր գերիներին բաց չթողնեն, ապա անգլիացի գերիներն էլ ազատություն չեն ստանա (մինչ այդ 29 անգլիացի գերիներից միայն հինգին էին բաց թողել): Եվ երբ 1921 թվականի սեպտեմբերի 6-ին 16 թուրք գերիներ կարողացան Մալթայից փախուստի դիմել, անգլիացիները զիջեցին ու համաձայնվեցին փոխանակել բոլոր գերիներին: 1921 թվականի հոկտեմբերի 31-ին թուրք ծերբակալվածներին տեղափոխող Chrysanthemum և Montenol նավերն ու անգլիացի գերիներին տեղափոխող Centuar նավը միևնույն պահին հասան Ինեբոլու և փոխանակումն իրականացվեց:

Մալթայի աքսորյալները մասնակցեցին Ազգային պայքարին ու ինչպես և ենթադրվում էր, երբեք չդատապարտվեցին: Մի անգլիացու զեկույցում եղած հետևյալ նախադասությունները բավական լավ շարադրում են, թե Մալթայում գտնվողներին ինչը փրկեց.

«Այս մարդկանց մասին ինչքան քիչ բան խոսենք, այնքան լավ, բայց ես հնարավորինս կփորձեմ հստակ պարզաբանում ներկայացնել այս նուրբ թեմայի շուրջ, թե արդյոք ինչո՞ւ Մալթայում գտնվող թուրք աքսորյալներին բաց թողեցինք: Կարծում եմ, որ բոլորն էլ ինձ նման կվարվեին: Խորհրդարանի անդամները համոզված էին, որ մեկ անգլիացի գերին թուրքերով լի մի նավի արժեք ունի: Փոխանակումն էլ այս պատճառով իրականացվեց»:

Մալթայի աքսորյալների մեծ մասը Թուրքիայի Հանրապետությունում կարևոր պետական պաշտոնների նշանակ-

վեցին: Նրանց մեծ մասը 1934 թվականին «ազգանվան օրենքի» ժամանակ նոր ազգանուններ են վերցրել և վերացրել իրենց հետքերը: Սակայն այնուամենայնիվ հաջողվել է կազմել Մալթայի աքսորյալների ցուցակը, որոնք հետագայում բարձր պաշտոններ զբաղեցրեցին Թուրքիայի Հանրապետությունում:

Նրանք են՝

Աբդուլ Հալիք Ռենդա – Աքսորի ընթացքում Բիթլիսի ու Հալեպի նահանգապետն էր, Թալեաթ փաշայի աներորդին էր և 1917 թվականին կարճ ժամանակ եղել է Ներքին գործերի նախարարության խորհրդական: Բիթլիսի ու Հալեպի հայերի կոտորածների պատասխանատու Աբդուլ Հալիքը Մալթայից վերադառնալուց հետո Չանքըրըի պատգամավորն էր, հետո էլ Իզմիրի նահանգապետը: 1924-1930թթ. աշխատել է ֆինանսների նախարարությունում, այնուհետ Ծովային նախարարի պաշտոնակատարն էր: 1935 թվականին էլ ընտրվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ և պաշտոնավարում մինչև 1946 թվականը: Հետո Հասան Սաքայի կառավարությունում զբաղեցնում է պետնախարարի պաշտոն:

Շյուքրու Քայա – Աքսորի ժամանակ գաղթականների հարցերի պատասխանատուն էր: Հալեպի ու Ադանայի նահանգներում տեղի ունեցած աքսորի պատասխանատու Շյուքրուն, Մալթայից փախչելուց հետո որոշ ժամանակ մնացել է Իտալիայում և Գերմանիայում: Թուրքիա վերադառնալուց հետո ընդգրկվել է Լոզան մեկնող պատվիրակության մեջ: Այնուհետև Իզմիրի քաղաքապետն էր: 1923 թվականին դարձավ Մուղլայի պատգամավոր: 1924 թվականից մինչև Մուսթաֆա Քեմալի մահը (1938թ.) զբաղեցրել

է գյուղատնտեսության, արտաքին, ներքին գործերի նախարարների պաշտոնները:

Ռեֆեթ Բելե – Սամսունի ու շրջակայքի զինվորական կուսակալն էր և 1916-17 թթ. Սամսունի շրջանում գտնվող հույներին աքսորի ենթարկելու համար ուղարկվել է Մալթա: Հանրապետության շրջանում եղել է ներքին գործերի ու ազգային պաշտպանության նախարար:

Հասան Թահսին Ուզեր – Աքսորի ընթացքում Վանի և Էրզրումի նահանգապետն էր, հայերի կոտորածները ղեկավարելու պատճառով ուղարկվում է Մալթա: Վերադառնալուց հետո ընտրվում է պատգամավոր Իզմիրից, Ադանայից, Էրզրումից և Քոնյայից: 1935 թվականից մինչև մահը՝ 1939 թ. իշխող ժողովրդա-հանրապետական կուսակցության արտակարգ իրավիճակների բաժնի երրորդ գլխավոր վերահսկիչն էր:

Միթհաթ Շյուքրու Բլեդա – Երիտթուրքերի ժամանակ կրթության և լուսավորության նախարարն էր: Բլեդան, ով աքսորի ընթացքում նաև երիտթուրքերի կուսակցության գլխավոր քարտուղարն էր, Մալթայից վերադառնալուց հետո, մերժում է Մուսթաֆա Քեմալի՝ միասին աշխատելու առաջարկը, հաստատվում է Իզմիրում և զբաղվում առևտրով: Իսկ 1926 թվականին «Իզմիրի մահափորձը» անունով հայտնի դատավարության ժամանակ պատժի ենթարկվելուց և այնուհետև արդարացվելուց հետո կրկին Քեմալի առաջարկությամբ պատգամավոր է ընտրվում Սեբաստիայից: Մուսթաֆա Քեմալն անգամ իրեն երաշխիք էր տվել, որ եթե հնարավոր չլինի Սեբաստիայից պատգամավոր ընտրվել, ապա ինքը չեղյալ կհայտարարի ամբողջ

Սեբաստիայի ընտրությունները: Բլեդան մինչև 1950 թվականը 4 շրջան պատգամավոր է ընտրվել:

Հալիլ Մենթեշե – «Միություն և Առաջադիմություն» կուսակցության իշխանության ժամանակ եղել է խորհրդարանի նախագահ, այնուհետև ներքին գործերի, արդարադատության ու արտաքին գործերի նախարար: Հալիլը, ով աքսորի ու պատերազմի ժամանակ գործած մեղքերի պատճառով օսմանյան ղեկավարների կողմից անգլիացիներին էր հանձնվել, 1931 թվականին ընտրվել է պատգամավոր Իզմիրից և այդ գործը շարունակել է մինչև 1948 թվականը:

Ալի Ջենանի – Աքսորի ընթացքում Հալեպի պատգամավորն էր և Այնթափի հազարավոր հայերին աքսորի ենթարկման պատասխանատուն: Նա Մալթայից վերադառնալուց հետո պատգամավոր է եղել, իսկ 1924-26 թթ. աշխատել է առևտրի նախարար:

Ալի Չեթինքայա – «Հատուկ կամակերպության» անդամ, Աֆիոնի պատգամավոր, հանրապետության շրջանում եղել է Գերագույն դատարանի նախագահ և հասարակական հարցերի նախարար:

Աքա Գյունդուզ – Երիտթուրքական կուսակցության անդամ Հուսեյն Էնիս Ավնին հանրապետության շրջանում Աքա Գյունդուզ անունը վերցրեց: Նա 1932-46 թթ. եղել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր:

Սաբիթ Սաղրօղլու – Աքսորի ընթացքում Խարբերդի նահանգապետն էր և Դերսիմի շրջանի հայերի կոտորածների պատասխանատվությունը ստանձնելու պատճառով աք-

սորվել է Մալթա: Հանրապետական շրջանում եղել է պատգամավոր՝ Երզնկայի նահանգից:

Սիմեոն Մուամեր Զանքարդեշ – «Միություն և առաջադիմություն» կուսակցության կարկառուն անդամներից էր: Աքսորի ժամանակ Սեբաստիայի և Քոնիայի նահանգապետ Մուամերը արդեն հանրապետական իշխանությունների կողմից նախ նշանակվում է Սեբաստիայի նահանգապետ, իսկ այնուհետև ընտրվում նույն շրջանի պատգամավոր:

Ալի Մյունիֆ Եղենա – 1913-15 թթ. եղել է Օսմանյան կայսրության հասարակական հարցերի նախարար, 1915-16 թթ. Լիբանանի նահանգապետ, իսկ 1918 թ.՝ երիտթուրքական կուսակցության կոմիտեի անդամ: Մյունիֆը, ով Լիբանանում հայերի ու քրիստոնյաների դեմ իրականացված ոճրագործությունների համար աքսորվել էր Մալթա, հանրապետության հիմնադրումից հետո, սկզբում նշանակվում է Սեյհանի քաղաքապետ, իսկ հետո ընտրվում պատգամավոր՝ Սեյհանից և Մերսինից:

Մուսթաֆա Ռեշաթ Միմարօղլու – 1915 թվականին Ստամբուլի քաղաքական ոստիկանության տնօրենն էր, 1917-18 թթ. Զանքըրի և Բոլուի նահանգապետը: Ռեշաթը վերադառնալով Մալթայից հանրապետական Թուրքիայում նշանակվում է Թոքաթի նահանգապետ, այնուհետև Ադանայի նահանգապետ, հետագայում ընտրվում է պատգամավոր՝ Իզմիրից: Զբաղեցնում է նաև իշխող ժողովրդահանրապետական կուսակցության Ստամբուլի նահանգային կառույցի ղեկավարի պաշտոնը:

Ալի Իհսան Սաբիս – Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան բանակի կորպուսի հրամանատար. Մալթա է աքսորվել Վանի, Մոսուլի և Ուրմիայի կոտորածները փաստացի կազմակերպելու համար: Աքսորից վերադառնալուց հետո նշանակվում է արևմտյան ռազմաճակատի առաջին բանակի հրամանատար:

Սուլեյման Նեջմի Սելման – Աքսորի ժամանակ Սամսունի նահանգապետն էր և որպես այդ նահանգի հայերի կոտորածի պատասխանատու ուղարկվել է Մալթա: Թուրքիայի Հանրապետությունում ընտրվել է սկզբից Քասթամոնուի, իսկ հետո Սամսունի պատգամավոր:

Զուլֆու Թիգրալ – Օսմանյան շրջանում Դիարբեքիրի պատգամավորն ու տեղի հայերի զանգվածային կոտորածների կազմակերպման կարևոր դերակատարներից էր: Հանրապետական շրջանում շարունակում է զբաղեցնել Դիարբեքիրի պատգամավորի պաշտոնը: Ընդգրկված է եղել Լոզան գնացած պատվիրակության մեջ, որպես «քուրդ ներկայացուցիչ»:

Արիֆ Ֆեվզի Փիրինչչիօղլու – Արիֆը Օսմանյան շրջանում Դիարբեքիրի պատգամավորն էր և իր այդ պաշտոնը շարունակեց նաև հանրապետական շրջանում:

Քարա Վասըֆ – Երիտթուրքական կուսակցության նշանավոր անդամներից, որը հետագայում մասնակցում է Մուսթաֆա Քեմալի գլխավորած ազգային շարժմանը, իսկ հետո դառնում Սեբաստիայի պատգամավոր: Սակայն 1926 թ. Մուսթաֆա Քեմալին դեմ մահափորձ կազմակեր-

պելու մեղադրանքով դատապարտվում և ենթարկվում է մահապատժի:

Իսմայիլ Ջանբուլաթ – Երիտթուրքերի շրջանում եղել է անվտանգության գլխավոր տնօրեն, այնուհետև քաղաքային ոստիկանության պետ, ներքին գործերի նախարար: Մալթայից հետո Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր էր, սակայն կրկին 1926 թ. «Իզմիրի մահափորձի» գործի շրջանակներում ձերբակալվում է և ենթարկվում մահապատժի:

Ֆազըլ Բերքի Թումթուրք – Հայերի տեղահանման ժամանակ Չանքրըրի պատգամավորն էր և որպես Սեբաստիայի նահանգապետի տեղակալ կարևոր դեր է խաղացել հայերի կոտորածի ժամանակ, ինչի պատճառով էլ ուղարկվել է Մալթա: Արդեն հանրապետական շրջանում «Կարմիր կիսալուսնի» կազմակերպության ղեկավարման խորհրդի անդամ էր:

Մուսա Հիլմի Դեմոքան – Աքսորի ժամանակ եղել է Քըրշեհիրի նահանգապետ և հայերի նկատմամբ իրականացրած հանցանքների պատճառով աքսորվել է Մալթա: Հենց Մալթայի աքսորավայրում գտնվելու ժամանակ էլ Մուսա Հիլմին ընտրվում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր:

Իլյաս Սամի – Օսմանյան շրջանում Մուշի պատգամավոր Հաջի Իլյաս Սամին Մալթայից վերադառնալուց հետո կրկին ընտրվում է Մուշի և Բիթլիսի պատգամավոր:

Վելի Նեջդեթ Սյունքըթայ – Դիարբեքիրի հայերի դեմ իրականացված ոճրագործությունների պատասխանատ-

վությունը ստանձնած և Մալթա ուղարկված Վելին այն եզակի գործիչներից էր, ով վերադառնալուց հետո պետական պաշտոնի չնշանակվեց: Նա զբաղվում էր առևտրային հարցերով և 1937 թ. դառնում է Անկարայի Առևտրային պալատի նախագահ:

Մեհմեթ էջզաջըբաշը – Երզնկայի հայտնի ընտանիքներից մեկի ներկայացուցիչ, երիտթուրքական կուսակցության անդամ, մայոր Մեհմեթը՝ որպես Երզնկայի հայերի աքսորի և սպանությունների պատասխանատու ուղարկվել է Մալթա: Հանրապետության շրջանում հիմնել է շատ հայտնի «էջզաջըբաշը» ֆիրման:

Քարա Քեմալ – Երիտթուրքական կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ, պարենամթերքի ու արդյունաբերության նախարար Քեմալը, Մալթայից վերադառնալուց հետո փորձում է «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը նոր շունչ հաղորդել: 1926 թ. «Իզմիրի մահափորձի» դատի ժամանակ հեռակա դատապարտվում է մահապատժի: Հասկանալով, որ ձերբակալվելու է՝ ինքնասպան է լինում կամ սպանվում է:

Չմոռանանք նաև, որ Մալթայի աքսորյալների մեջ գտնըվող Յաքուբ Շեֆքի (Սուբաշը), Ջեմալ (Մերսինլի) փաշայի, Ջեվաթ (Չոբանլը) փաշայի, Էսաթ (Ըշըք) փաշայի, Զիա Գյոքալփի, Հուսեյն Ջահիդի (Յալչըն), Ալի Ֆեթհիի (Օքյար), Հուսեյն Ռաուֆի (Օրբայ), Ահմեդ Ագաևի (Աղա Օղլու) նման «Միություն և առաջադիմություն» կուսակցության կարկառուն ներկայացուցիչներին Թուրքիայի Հանրապետությունում շնորհվել է նախարարի, պատգամավորի, վարչապետի, գեներալի պաշտոններ: Անշուշտ կային նաև հայերի

աքսորի ու պատերազմի հարյուրավոր այլ մեղավորներ, ովքեր Մալթա չէին աքսորվել: Նրանք էլ չդատապարտվեցին և Թուրքիայի Հանրապետությունում կարևոր պաշտոններ զբաղեցրին: Ժամանակի ընթացքում այս անձանց երեխաներից, թոռներից շատերն էլ պետական կարևոր պաշտոններ զբաղեցրին:

Երիտթուրքերի գաղափարախոսությունը հասել է մինչև մեր օրերը: Ահա այս շարունակականության, որը կարող ենք կոչել հանցակցություն, պատճառով չնայած ուղիղ 95 տարի է անցել, բայց հնարավորություն չի ստեղծվում բացահայտել 1915 թվականի հայերի աքսորի (որն էլ կարող եք ցեղասպանություն որակել) իրականությունը:

*Թուրքերենից թարգմանությունը՝ (**Սուսաննա Գալստյանի**)*

ՄԻ՞ԹԵ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԻԹԹԻՀԱԹԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[18]

Ումիթ Քարդաշ[19]

Լեհաստանաբնակ հրեա փաստաբան Ռաֆայել Լեմկինը 1948 թ. ՄԱԿ-ի Ցեղասպանության (որը որակվեց որպես մարդկության դեմ հանցագործություն) կանխման և դատապարտման համաձայնագիրն առաջարկող և այս հարցում ակտիվ նախաձեռնություններ իրականացնող փաստաբան էր: Հայ երիտասարդի կողմից Բեռլինում՝ 1921թ. Թալեաթ փաշայի սպանության հայցով հետաքրքրվող Լեմկինն անմիջապես սկսել էր այդ դատական գործից կազմել փաստաթուղթ՝ Օսմանյան կայսրությունում բնակվողների վերաբերյալ: Լեմկինին խորապես ցնցել էր այն, որ հայցը քննարկելու ընթացքում տեղեկացել էր, որ չկա որևէ միջազգային իրավական օրենք, որի հիման վրա հնարավոր կլիներ մեղադրանք առաջարկել Թալեաթ փաշային իր գործողությունների համար: 1843-1915 թվականների ընթացքում Օսմանյան կառավարության կողմից հայերի նկատմամբ իրականացված ճնշումների շղթան ազդեցություն ունեցավ Լեմկինի՝ բարբարոսական մեղք անվանած ցեղասպանություն հասկացության սահմանման համար:

---

[18] **Zaman**, 27, 04, 2010.

[19] Թուրք հետազոտող, հասարակական գործիչ:

1843-1908 թթ.

1843 թ. Բեդիրհան բեյը ղեկավարում էր քրդերին, որոնց հանձնարարված էր սպանդի ենթարկել Հաքյարի նահանգում բնակվող հայերին ու նեստորականներին, որոնք ավելի հոծ թիվ էին կազմում: Բեդիրհանը համոզելով լեռներ փախած հայերին ու նեստորականներին՝ հավաքում է նրանց մոտ եղած զենքերն ու կոտորում վերջիններիս: Մեծ թվով կանայք ու երեխաներ վաճառվում են որպես ստրուկ: Հայտնի է, որ այս կոտորածի ժամանակ ամենաքիչը 10.000 հայ և նեստորական է սպանվել: 1877 թվականին ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Հայաստանը կրկին վերածվում է ռազմադաշտի: Այդ ժամանակ Բայազեթում օսմանյան զինվորները, քրդերն ու չերքեզները, որոնք կոչ էին անում. «կոտորել անհավատներին», սրի քաշեցին 165 քրիստոնյա ընտանիքների՝ այդ թվում նաև կանանց ու երեխաների: 1892 թվականին սուլթան Աբդուլ Համիդը Ստամբուլ է կանչում քրդական ցեղախմբերի ղեկավարներին և տալով զինվորական տիտղոս, համազգեստ ու զենք՝ ստեղծում է «Համիդիե» հեծելազորային գնդերը: Այսպիսով, Աբդուլ Համիդը կայսրությունում բնակվող մի էթնիկ-կրոնական խմբին լարում է մեկ այլ էթնիկ-կրոնական խմբի դեմ՝ ըստ կրոնական պատկանելության: 1894 թ. սեպտեմբերին Սասունի կոտորածով հայերի նկատմամբ իրականացված բռնություններն իրենց գագաթնակետին հասան: Աբդուլ Համիդը խռովարար հայտարարեց այն հայերին, որոնք սկսել էին դիմադրել և հրամայեց ոչնչացնել նրանց:

1908-1914 թթ.

Եվրոպան և Ամերիկան ամեն տեսակ աջակցություն էին ցույց տալիս սահմանադրության ձգտող երիտթուրքերին: Հայերն էլ, աջակցելով և ուրախությամբ դիմավորելով «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավորած կառավարությանը՝ հավատացին հավասարության, ազատության և եղբայրության լոզունգներին: Երկրորդ Սահմանադրությունը դիտվում էր որպես հավասարություն ստեղծելու երաշխիք՝ ամեն ռասայի ու կրոնի ժողովուրդների միջև: Սակայն 1909 թվականի ապրիլին կրկին մուսուլմանների կողմից քրիստոնյաների կոտորած է սկսվում: 1909 թ. Ադանայի կոտորածից հետո մինչև 1913 թ. համարվում է լավ ժամանակաշրջան. «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հարաբերություններ էր զարգացնում «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության հետ: Առաջին Բալկանյան պատերազմում կրած պարտությունից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը սկսեց իրականացնել բնակչության ոչնչացման և տեղահանման քաղաքականություն՝ ծրագրված էթնիկ զտման ճանապարհով:

1915-1916 թթ.-ի տեղահանումներ

1915 թվականին սկսած տեղահանումները նախկինում իրականացվածներից շատ տարբեր էին. ծրագիրը տարածվում էր ոչ միայն հայերի, այլև Արևելյան Անատոլիայի բոլոր քրիստոնյաների վրա: Իշխանությունները լրջորեն չէին մտածել տեղահանվածների վերաբնակեցման մասին, որովհետև նախ բնակեցնելու պայմանները բավարար չէին և նախատեսված վայրեր հասնողների թիվն էր քիչ: Տեղահանվածներց շատերը սպանվել էին իրենց բնակավայ-

ներում կամ էլ անմիջապես աքսորի ճանապարհներին: Քանի որ սպանվածների մեծամասնությունը տղամարդիկ էին, ուստի տարագրվում էին հիմնականում կանայք ու երեխաները: Աքսորյալների քարավանները շարունակ հարձակումների էին ենթարկվում, կանանց հանդեպ կիրառվում էին բռնություններ, իսկ երեխաներին փախցնում էին: Նահանգների ղեկավարները ոչ մի միջոց չէին ձեռնարկել աքսորվածներին սննդով, ջրով և կացարանով ապահովելու համար: Հակառակը՝ բարձրաստիճան պաշտոնյաներն ու տեղական գործիչները կազմակերպում էին հատուկ ջոկատներ, որոնք թալանում էին աքսորյալների ունեցվածքը: Քանի որ հայերը բարձր մշակույթի և քաղաքակրթության կրող էին, ուստի նրանց նկատմամբ իրականացված այս բռնությունը աշխարհի աչքին էլ ավելի սարսափելի էր դարձել:

Եզրակացություն և առաջարկներ

Վերը նշվածներն անկասկած չեն կարող արտահայտել տեղի ունեցածների ամբողջ ծավալն ու ծանրությունը: Այդ ամենը ապացուցող տվյալներ են պահպանվել ժամանակի եվրոպական մամուլում, Օսմանյան կայսրության դաշնակիցների՝ Գերմանիայի ու Ավստրիայի, ինչպես նաև Անգլիայի պաշտոնական փաստաթղթերում, Օսմանյան Գերագույն դատարանի արձանագրություններում, դիվանագետների և միսիոներների զեկույցներում, վերապրողների հուշերում: Չնայած, որ հայերի տարբեր խմբեր հանուն իրավական պահանջների կամ արտաքին ուժերի հետ համագործակցաբար ապստամբում էին, սակայն ոչինչ չի կարող արդարացնել այս մարդկային ողբերգությունը: Բռնությունն ու կոտորածը անհամատեղելի են մարդկության հետ:

Իրականությունը թաքցնելու և մերժելու մոլուցքը հիվանդացնում և փչացնում է պետությանն ու հասարակությանը: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որպեսզի Թուրքիայի քաղաքական գործիչները, գիտնականները, լրագրողները առերեսվեն իրականության հետ: Առերեսումն իրականության հետ նշանակում է ազատ լինել: Մեզ պատիվ չի բերում որպես մեր նախնիներ ընդունել և պաշտպանել այն մարդկանց ովքեր մարդկային տառապանքների պատճառ են եղել: Աբդուլ Համիդի, երիտթուրք առաջնորդների ու նրանց հետ կապված խմբերի, զինյալների և ավազակների գործողությունները հովանավորելն ու պաշտպանելը ո՛չ մարդկային է, և ո՛չ էլ բարոյական: Թուրքիան պետք է հայտարարի ողջ աշխարհին, որ ընդունում է ճնշումների և սպանություններ փաստը, պաշտպանում է ամենաբարձր մարդկային արժեքները՝ ճշտարտությունն ու արդարությունը և դատապարտում է անցյալում այս ամենը իրականացնողների մտայնությունն ու գործողությունները: Հայաստանի հետ սահմանը պետք է բացվի առանց որևէ նախապայմանի: Նվազեցնելով հայերի ցավերը և ազատվելով սեփական վախից, կոմպլեքսավորվածությունից ու մտահոգություններից՝ Թուրքիան ավելի անկախ է դառնալու:

Թուրքերենից թարգմանությունը՝ (Ամալյա Պետրոսյանի)

ԱՆԱՏՈԼԻԱՅՈՒՄ ՄԻ ՈՒՐՎԱԿԱՆ Է ՊՏՏՎՈՒՄ[20]

Թոլգա Էրեն[21]

Բոլոր նրանց, ովքեր հարց են տալիս
«ինչո՞ւ ենք մենք ներողություն խնդրում»:
Բավական չէ, որ ներողություն խնդրեք,
պետք է ծնկաչոք լացեք...

Մենք դեռ փոքր էինք, երբ հայրս ընտանեկան հավաքույթներին բոլորին հավաքում էր իր շուրջը և պատմում: Ուրվականների պատմություն էր դա: Հայրս որպես սպա առաջին անգամ նշանակվել էր Յոզղաթի Բողազլըյան գավառակում: Պատմում էր, որ ինքը ծառայում էր կառավարական տանը և գիշերներն էլ մեն մենակ հերթապահում էր այդ հին ու տխուր շենքում: Հենց առաջին օրերից ականջին զանազան պատմություններ և ասեկոսեներ էին հասել: Սկզբում կասկած է առաջացել, որ զինվորները այս ամենը իրեն վախեցնելու նպատակով են պատմում: Իբր թե, իրենից առաջ այստեղ ծառայող սպան կորցրել էր իր հոգեկան հավասարակշռությունը: Հայրս հետևյալ կերպ էր պատմում իր ապրածները: Բոլորին հայտնի էր, որ այնտեղ

---

[20] http://www.hyetert.com/yazi3.asp?Id=371&DilId=1

[21] Հոդվածի հեղինակը՝ Թոլգա Էրենը, երիտասարդ թուրք մտավորական է: Նա ծնվել է զինվորականի ընտանիքում: Պապը, ինչպես նաև հայրը եղել են թուրքական բանակի սպաներ:

1915 թվականին հայերի մեծ կոտորած էր իրականացվել: Կառավարական շենքի նկուղը ամբողջությամբ հողով էր լցված և ըստ պատմածների, սպանված հայերը իբր թե այստեղ էին թաղված: Եվ պատմածների համաձայն այդ շենքում տարօրինակ բաներ էին կատարվում: Օրինակ, մի սենյակ, որտեղ սեղանն ու աթոռները գիշերը դասավորված էին թողնում, առավոտյան գտնում էին ցաք ու ցրիվ վիճակում: Կամ էլ շենքի երկաթե դուռը, որ 10 զինվորներ միասին դժվարությամբ էին բացում ու փակում, գիշերվա ընթացքում մեծ աղմուկով ինքնուրույն բացվում ու փակվում էր: Հայրս, երբ մի գիշեր իր սենյակում մենակ նստած է եղել, լսել է, թե ինչպես են ինչ որ մարդիկ մեծ աղմուկով իջնում ու բարձրանում իր սենյակ տանող աստիճաններով: Վերցրել է ատրճանակը, հասել դռան մոտ և հարցրել. «Ո՞վ կա այնտեղ»: Ըստ ձայների, աստիճաններով բարձրացողը պետք է անմիջապես դռան ետևում գտնվեր: Ատրճանակը ձեռքին, հայրս լուռ լսել է, սակայն երբ դուռը բացել է, այնտեղ ոչ ոք չի եղել:

Ահա այսպիսի պատմություններ էր պատմում մեզ: Այսքանն եմ հիշում: Ասում են, որ այն շենքի տեղը այսօր զբոսայգի է: Հիշում եմ, թե ինչպես էի այն ժամանակ վախենում: Ովքե՞ր էին այս հայերը: Ուրվակա՞ն էին, ի՞նչ էին: Շատ խորհրդավոր մի վերաբերմունք էր ստեղծվել նրանց հանդեպ: Երբ խոսք էր բացվում նրանց մասին, տարօրինակ մի մթնոլորտ էր ձևավորվում: Կարծես, պատմության հերոսներ լինեին, երևակայական էակներ, կար ժամանակ, երբ գտնվում էին այստեղ, իսկ այժմ չկային, արդյոք իսկապես ուրվակա՞ն էին կամ այլմոլորակայի՞ններ: Հայերի կոտորածի վերաբերյալ առաջին անգամ այսպես էի լսել և անցած տարիներին այս խնդրի շուրջ զարգացող հետաքրքրությունս այսպես էր սկսվել: Վերստին հիշեցի այդ պատմությունը, երբ Թուրքիայի վարչապետ Չիլլերը հայ-

տարարեց. «Բոլորս էլ Բողազլըյանի գավառապետ Քեմալ բեյ ենք»: Մեկ էլ, երբ էրգենեքոնի անդամները, որոնք հետագայում ձերբակալվեցին «Քեմալ բեյի քայլարշավներ» էին կազմակերպում: Այո, «ես անմեղ եմ» ասում էր Քեմալ բեյը: Նա իսկապես էլ որոշ տեսանկյունից անմեղ էր, քանի որ ընդամենը կատարել էր կենտրոնից եկած հրամանները: Սակայն հայտնի են նաև գավառապետեր, որոնք՝ մերժելով կատարել նման հրամանները՝ հատուցել են իրենց կյանքով:

Հետաքրքիրն այն է, որ ամեն տեղ էլ բանավոր նման պատմություններ են պտտվում: Մարդիկ հիշում են, թե ինչեր են կատարվել, հասարակության ենթագիտակցությունը գիտի տեղի ունեցածների մասին: Հայերին մորթել ու այս չորացած գետի հունն են գցել, կամ էլ հայերին այս քարանձավում են խեղդել, կամ էլ հայերին այս հորի մեջ են լցրել և նման անթիվ պատմություններ: Իրականում, երբ հարց տրվի, անգամ սարերն ու ձորերն են աղաղակելու այս կոտորածի մասին: Այո, Անատոլիայում մի ուրվական է պտտվում: Եվ այս ուրվականը ամեն տեղ իրեն զգացնել է տալիս: Յոզղաթից Մարաշ, Ուրֆայից Թոքաթ, Դիարբեքիրից Տրապիզոն, Ադանայից Բիթլիս, Մուշից Էրզրում, Սեբաստիայից Սամսուն ամենուրեք և ամեն տեղ իրեն զգացնել է տալիս:

Այս տխուր ներուժը, կոտորված մարդկանց ներկայությունը ամեն տեղ կարող եք զգալ: Ամայացած մի գյուղում, ավերակ մի եկեղեցում, քարի վրայի մի փորագրությունում, կոտրված մի խաչքարի բեկորում: Անատոլիայի հարազատ զավակների նախկինում ապրած այս հողերում ձեր ականջին մի եղանակ է գալիս, մի պահ լսում եք նրանց զվարթ քրքիջը, տեսնում դաշտերում նրանց աշխատանքը, եկեղեցի են գնում, հարսանիք են անում, ձեր ականջին է հասնում նորածնի լացը, այնպես պարզ. մեզ նման մի ժողովուրդ է

ապրում ձեր առջև, շնչում է, թուխ, սևուկ, կարճլիկ, մեզ նման, քեզ նման, ինձ նման, իր բոլոր հոգսերով, մտահոգություններով, ցավերով, տխրությունով, ուրախությունով, վշտով, ձայները հնչում են երկնակամարում, հետքերը չեն ջնջվում, որքան էլ որ փորձ արվի ջնջել, չի վերանում:

Սա Անատոլիայի արյունահոսող վերքն է: Եվ արդեն ուշացել ենք այս վերքի արյունահոսությունը կանգնեցնելու գործում: Մեր մտավորականները շատ պատվավոր մի գործ ձեռնարկեցին, երբ սկսեցին «ներողություն ենք խնդրում հայերից» ակցիան: Պատմությունը նրանց հիշելու է գնահատանքով և երախտագիտությամբ: Եվ այս ներողության արշավը միգուցե այդ անհանգիստ հոգիներին մի քիչ հանգիստ կպարգևի: Անկասկած, Անատոլիայում միայն հայերը չեն ենթարկվել ցեղասպանության: Չի կարելի մոռանալ նաեւ պոնտացի հույներին, էգեականի հույներին, ասորիներին, եզդիներին և քրդերին: Իրականում, բնաջնջվածները Անատոլիայի բնիկ ժողովուրդներն են, ջնջվածը Անատոլիայի հազարամյակների մշակույթն է: Այսինքն, դեռ այնքան շատ բան կա, որի համար այս պետությունը պետք է ներողություն խնդրի: Հայկական, պոնտական, ասորական կոտորածներից հետո Քոչգիրի, Զիլանի, Դերսիմի կոտորածներից մինչև ունեցվածքի հարկը և 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերը, Քահրամանմարաշը, սեպտեմբերի 12-ի հեղաշրջումը, Դիարբեքիրի բանտի անմարդկային իրողությունները և Սեբաստիան...

Իհարկե, այս ներողություն խնդրելու արշավը անմիջապես ուժեղ հակազդեցություն առաջացրեց: Ասում են, որ այս մտավորականները «սուտ մտավորականներ» են և կարող են վնասել Թուրքիային: Այո, իրականում իրենց միակ վախը և միակ մտահոգությունը սա է, որովհետև իրականությունը նրանց մազաչափ էլ չի հետաքրքրում: Մինչդեռ մտավորականը հասարակության խիղճն է և խիղ-

ձը հակված է նախ և առաջ ինքն իրեն հարցաքննելու: Մտավորականի միակ հետաքրքրությունը իրականությունն է: Սակայն մյուսներին հետաքրքրող միակ բանը այն է, թե արդյո՞ք որևէ վնաս չի հասցվի իրենց շահերին:

Ի՞նչ կլինի, եթե հատուցում պահանջեն: Ընկերներ, մի՞թե դուք չեք, որ հաճախ օգտագործում եք «արդարության կտրած մատը չի ցավի» արտահայտությունը: Եթե դու մի ժողովրդի հասցրել ես բնաջնջման աստիճանի, հափշտակել նրա ողջ ունեցվածքը և այդ միջոցով ստեղծել քո ազգային բուրժուազիան, իհարկե դրան որևէ հատուցում պիտի լինի: Անշուշտ դու պարտավոր ես այն վճարելու: Այս մեղքից մաքրվելու, մարդկային ցեղի ընտանիքում պատվավոր տեղ գրավելու համար անշուշտ պիտի դա անես: Գերմանիան էլ չարե՞ց: Ուրիշ բազմաթիվ երկրներ էլ չարեցի՞ն: Իրենց մեղքը չխոստովանեցի՞ն: Ներողություն չխնդրեցի՞ն: Հատուցում չվճարեցի՞ն:

Իսկ եթե հող պահանջե՞ն: Ահա և ամենամեծ վախը, ֆոբիան: Մենք մեզ այնպիսի թաբուների ենք դատապարտել, որ ազատ միտքը երբեք չի ծաղկելու այս երկրում: Ասենք թե պարզապես խորհրդանշական առումով Անին կամ Արարատը տաս, ի՞նչ ես կորցնելու: Դու չե՞ս կարող այդ բանը անել որպես ժեստ: Այդքա՜ն էլ ինքնավստահություն չունե՞ս: Ո՛չ, երբ նրանք Արարատ սարից մի հատիկ քար են խնդրում՝ էջմիածնի տաճարի հիմքում զետեղելու համար, դա չափազանց շատ ես համարում, վա-խենում ես նույնիսկ մի հատիկ քար տալուց: Խաղաղության համար մի քարի կտորը չափազանց շա՞տ է: Ո՛չ, խաղաղության համար կարելի է ամեն ինչ անել, իսկ դու այդ բանը չկարողացար հասկանալ, քանի որ խաղաղության մշակույթը քո մեջ երբեք տեղ չէր ունեցել: Դու միշտ օրհնեցիր, վեհացրիր պատերազմը: Հողը պատերազմով են վերցնում: Ճիշտ է, քանի որ, դու երբեք չունեցար որևէ

մի հող, որը առանց պատերազմի վերցրած լինեիր: Երբևիցե չունեցար գեթ մի քաղաք, որը դո՛ւ հիմնած լինեիր: Միգուցե հայերին մեղադրում ես, որ իրենց հայրենիքը չկարողացան բավականաչափ պաշտպանել: Միգուցե չինացիների նման մի մեծ պատ պետք է կառուցեին: Դու Քրիստոսի ուսմունքն էլ երբեք չլսեցիր: Եթե քո քրիստոնյա եղբայրներիդ հարցնեիր, նրանք քեզ կասեին: Դու Մկլանայի՞ն էլ երբեք չես լսել, ափսոս:

Ասում են, թե ինչի՞ մենք ներողություն խնդրենք, թող նրանք ներողություն խնդրեն: Խիղճ ունեցեք: Ահագին մի ժողովրդի եք ոչնչացրել, հայրենիքից քշել եք, ներողություն խնդրելը բավական չէ. դուք պետք է ծնկի գաք ու լացեք: Ճիշտ այնպես, ինչպես դա արեց Գերմանիայի կանցլերը Աուշվիցում: Մեծը դուք եք, ուժեղը դուք եք, վնաս տվողն էլ եք դուք: Սակայն տուժածի դեր խաղալն էլ բոլորից լավ դուք գիտեք: Լինելով հսկա մի կայսրություն, դարեր շարունակ տարբեր ժողովրդներ ձեր լծի տակ պահելով հանդերձ, չգիտես ինչպես որպես տուժած կողմ միշտ էլ դուք հանդիսացաք և 80 տարի շարունակ այս պատմությունով սնվեցիք: Չե՞ք հասկանում, որ մեծահոգություն անող, ժեստ անող, առաջին քայլը նետող կողմը դուք պիտի լինեք: Իսկ ի՞նչ արժեք կունենար ուրիշ մոտեցումը: Սա ձեզ համար էլ մի քիչ անհեթեթ չի՞ թվում: Մի կողմից ուժաբեկված, նեղացած մանուկի պես պահվածքով, զգացական առումով կործանված, անգամ հոգեկան հավասարակշռությունը կորցրած, պատմության մեջ խրված, իր հազարամյա հայրենիքի կորուստի հետ դեռ չհաշտված, աշխարհի չորս կողմը ցրված, տրավմայի ենթարկված մի ժողովուրդ, իսկ մյուս կողմում ուժեղ, հարուստ, բարգավաճ մի Թուրքիա, եղբայր, ո՞վ պիտի առաջին քայլը անի: Ո՞վ: Ո՞վ է այս ցավը տանում և հավիտյան պիտի տանի, դո՞ւք թե նրանք:

Ասում են, հայերը հայրենիքին դավաճանել էին և նրանց տեղահանելը ճիշտ էր: Նախ պետք է հարցնել, թե ո՞ր հայրենիքին: Ոչ մեկը պարտավոր չէր ապրել Օսմանյան տիրապետության ներքո, նամանավանդ փտած, նեխած մի կայսրության տիրապետության ներքո: Միթե կարելի՞ է ազգային կամ քաղաքական պայքարի մեջ գտնվող խմբերը պատրվակ համարելով՝ արդարացնել մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը:

Ցույցեր, բողոքներ, կարճ ասած ազգի պայքարը հանուն իր իրավունքների մի՞թե բավական պատճառ է նրան ամբողջությամբ ոչնչացնելու համար: Սա նման է այն բանին, որ այսօր Քրդական բանվորական կուսակցության պատրվակով փորձում են ամբողջ քուրդ ժողովուրդին վերացնել: Սակայն ոչ մի բան էլ չի փոխվում, չէ՞: Այսօր նույն կերպ քրդերի ազգային, մշակութային պահանջները փորձում են ճնշել ուժի միջոցով, միլիոնավոր մարդկանց և միլիարդներով դոլարների գնով: Եվ ես շատ լավ գիտեմ, որ կան բազմաթիվ մարդիկ, որոնց մտքով առանց վարանելու անցնում է՝ քրդերին էլ տեղահանել, եթե այն ժամանակվա պայմանները լինեին և հաղորդակցությունը այսօր այսքան զարգացած չլիներ:

Ընբոստների՝ հարկ չվճարելու կամ բանակում չծառայելու (քանզի ծառայողների գլխին եկածները հայտնի են բոլորիս) և նման զանազան ընբոստության դեպքերը ինչպե՞ս կարելի է համեմատել պետության կողմից պետական ուժերի և հնարավորությունների միջոցով իրականացրած մի ցեղասպանության հետ, որը կատարվեց իր իսկ քաղաքացու դեմ:

Այստեղ տեղի է ունենում շատ էական մի խաբեություն: Իբր թե հայերը 1890-ականներին, հիմնելով Դաշնակցություն և Հնչակյան հեղափոխական կազմակերպությունները՝ երկրով մեկ ահաբեկչություն են կազմակերպել և

անգամ մահափորձ են իրականացրել սուլթանի դեմ: Թուրքական թեզերում այդ փաստարկը հաճախակի է օգտագործվում: Սա իրականության խեղաթյուրում է: Այդ օրերին, ո՞ր կազմակերպությունը Աբդուլ Համիդի դեմ չէր պայքարում, այդ թվում երիտթուրքերը: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը չէ՞ր, որ էնվեր փաշայի գլխավորությամբ ընբոստանալով, լեռներում ապաստանած, մեկը մյուսի ետևից օսմանյան փաշաներին էր սպանում: Եվ նույնիսկ դաշինք չէի՞ն կնքել դաշնակների հետ: Այժմ կարելի է հարց տալ, եթե երիտթուրքերը դաշնակների հետ դաշինք էին կնքել, ինչո՞ւ տեղի ունեցավ այս ցեղասպանությունը: Այդ բանը պետք է «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության թուրք-թուրանական գաղափարախոսներին հարցնել: Նախ և առաջ դա շահադիտական համագործակցություն էր: Երիտթուրքերը շատ լավ օգտվեցին այն հանգամանքից, որ դաշնակները համարյա բոլոր քաղաքներում արտակարգ կազմակերպված էին: Երիտթուրքերն իրենց իսկական նպատակն արդեն ցուցադրել էին 1909 թվականի Ադանայի դեպքերի ժամանակ: Հակառակ բազմաթիվ իրադարձությունների, որոնք կարող էին հարաբերությունների խզման պատճառ հանդիսանալ, դաշնակները դեռ իրենց հույսը չէին կտրել: Սակայն Բալկանների կորստից հետո Անատոլիան թուրքերի համար հայրենիք դարձնելու, թուրքերի համար տեղ բացելու ծրագիրը վաղուց օրակարգում էր: Այս ծրագրի մեջ Անատոլիայի քրիստոնյաները չէին կարող տեղ ունենալ, այս վնասակար մակաբույծները պետք է որ արանքից մաքրվեին ու Միջին Ասիայի կապը ամբողջանար: Միայն թուրքերից և մուսուլմաններից կազմված մի կայսրություն:

Այլ կերպ չէ՞ր կարելի այս հարցը լուծել: Չէ՞ր կարելի հայերի հետ բանակցությունների սեղան նստել, ինքնա-

վարություն տալ: Ի՞նչ կլիներ, եթե մի ժեստ արվեր ու այդ տարածքը ամրագրվեր որպես պատմական Հայաստան: Եվ կլինեի՞ն այս բոլոր կոտորածները: Ի՞նչ կլիներ, եթե «Արմենիա» կոչվող այս տարածքում հայերը, թուրքերը և քրդերը շարունակեին խաղաղ ապրել: Մի՞թե մուսուլմանները չէին ունենալու իրենց բոլոր իրավունքները, անշուշտ՝ ունենալու էին: Ո՛չ, սա ուժի և իշխանության կռիվ էր, իսկ ուժն ու իշխանությունը երբեք չէր կարելի քրիստոնյաներին զիջել: Թուրքերի մոտ միշտ էլ եղել է այսպիսի մի տրամաբանություն, եթե ցանկանում ես, ուրեմն արյունով պետք է վերցնես: «Երկիրը հայրենիք է այն դեպքում, եթե հանուն նրա մահացող կա»: Ահա ձեզ արյուն և արցունք:

Ասում են, թե պատերազմում նույնչափ էլ թուրք է մահացել, իսկ նրանց համար ո՞վ է ներողություն խնդրելու: Նախ, պետք չէ մոռանալ, որ պատերազմ սկսող կողմը Թուրքիան էր և պատերազմի մտավ հանուն իր ծավալապաշտական նկրտումների, հարձակվելով ուղղակի Ռուսաստանի վրա: Այսինքն, մի՞թե Գերմանիայի ներողության համար արգելք հանդիսացան Գերմանիայի բոլոր քաղաքների ռմբակոծումը, որի արդյունքում քաղաքացիական բնակչությունը կորուստ կրեց, գերմանացի փոքրամասնության կրած տանջանքները Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, նրանց՝ որպես համագործակիցների կոտորածի ենթարկելը, կանանց բռնաբարությունը ռուս զինվորների կողմից երբ գերմանացիները նահանջեցին այդ տարածքներից:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ կան հայեր, որոնք լի են ատելությամբ, կամ եթե կարողանային մի հնար գտնել, ապա կօգտագործեին բոլոր թուրքերին վերացնելու համար: Էականը պարզելն է, թե ինչպե՞ս է նման ատելությունը առաջանում: Եվ եթե վաղուց ներողություն խնդրեինք, այս ատելությունը կհասնե՞ր նման ծավալների:

Կարծում եմ, որ չէր հասնի: Վստահ եմ, որ եթե դու քո գիրկդ բացելով ներողություն խնդրեիր, հակառակ այդ չափ ատելության, նրանք մեղմանալու էին և մի քայլ էին անելու դեպի քեզ, որովհետեւ սա է թելադրում մարդկային բնությունը: Նրանց այս ատելությունը սնվում է այն նախապաշարումից, թե թուրքերը մարդ չեն դառնա: Մտածում են, որ թուրքերը գոռոզ, համառ, իրենց միշտ իրավացի համարող և ամեն ինչում իրավունք պահանջող, ծավալապաշտ, բռնացող և հալածող մի ժողովուրդ են, որի պատճառով բոլորովին կորցրել են հույսը նրանց նկատմամբ:

Փաստարկներից մեկն էլ այն է, որ քրիստոնյա փոքրամասնությունները Թուրքիայի գրավման ժամանակ թշնամիներին գրկաբաց են ընդունել, նրանց ծաղիկներով են դիմավորել: Իսկ ինչո՞ւ ոչ: Քրիստոնյա եղբայրները եկել էին ազատագրելու նրանց: Իսկ ի՞նչ պետք է անեին: Ապա մի մտածեք, թե ինչպե՞ս կդիմավորեին Կոսովոյում թուրքական ազատարար բանակին: Կամ էլ, թուրքմենները ինչպե՞ս կդիմավորեին թուրքական բանակը, եթե վերջինս քերկուկ մտներ: Ինչո՞ւ ենք միշտ միակողմանի դատում:

Ոչ մի քրիստոնյա ազգ չի ցանկանա որևէ մուսուլման պետության լծի տակ ապրել: Ինչ եք կարծում, կկատարվե՞ր այս ամենը, եթե այս երկիրը 1908-ի հեղափոխությունից հետո ժողովրդավարական դառնար: Մուսուլմանները երբեք չհրաժարվեցին իշխող դասակարգ լինելու հավակնությունից: Պարտավորված մի շարք բարեփոխումներ կրում էին ցուցադրական բնույթ: Ադանայի մեծ կոտորածը ինչո՞ւ եղավ, ձեր կարծիքով: Կարծում եք, մուսուլմանները մարսեցի՞ն այն, որ քրիստոնյաները իրենց հետ նույն իրավունքներն են ունենալու և գլուխները բարձր քայլելու են: Բայց չէ՞ որ դուք հետամնացության դեմ պայքարող աշխարհիկներ էիք: Ինչո՞ւ եք այդքան անընկալունակ Անատոլիայի այս պահպանողական, հետամնաց,

բռնակալ կառույցի հանդեպ, երբ խնդրո առարկան հայերն են դառնում: Դո՛ւք չէիք, որ աղմուկ էիք բարձրացնում «թաղային ճնշումների» դեմ: Ապա մի մտածեք, ինչ է նշանակում լինել հայ Անատոլիայում: Մտածեք գյավուրի անվան տակ ստորացված լինելու մասին:

Այսինքն եթե Աթաթյուրքն է այս համակարգը քանդում, ապա հերոս է դառնում, հեղափոխական է դառնում, իսկ երբ հայերն են ընբոստանում այս կարգերի դեմ, սեփական ուղին հարթում, ձգտում ձերբազատվել օսմանցու հետամնացությունից և ցանկանում ազատվել այն կարգերից, որոնք հենց իրենց հետամնացության պատճառն են հանդիսանում, կարճ ասած՝ հեղափոխական հայերը, որոնք Անատոլիայի արևմտամետ դեմքն են ներկայացնում, երբ ընբոստության դրոշն են պարզում օսմանցու դեմ, վա՞տն են դառնում: Նորից երկակի չափանիշներ: Ի վերջո քրիստոնյաներն ու մուսուլմանները երբեք էլ հավասար չեղան այս երկրում: Անատոլիայում կատարվող անիրավությունը, անարդարությունը երբեք չվերացավ: Աղաների ու փաշաների իշխանությունը, բռնապետությունը երբեք վերջ չգտավ: Ճնշիր քրիստոնյային, վերցրու նրա ունեցվածքը, շորթի, ձայն չի հանի, անգամ չի կարողանա քեզ դատի տալ: Դուք տեղյա՞կ էիք, որ եթե մուսուլմանը ապրանք էր գնում հայից, ապրանքի արժեքը վճարում էր ըստ ցանկության. եթե չէր ցանկանում՝ չէր վճարում: Կարծում եք, ամեն ինչ վարդաստանի նմա՞ն էր: Կարծում եք ինչի՞ համար ծայր առավ հայկական ազգային շարժումը: Այն ծնվեց որպես կեղեքվող ազգի պայքար այն պայմաններում, երբ դատարանում հայերի վկայությունն անգամ չէր ընդունվում, նրանց արգելված էր զենք կրել և ձի հեծնել: Իսկ չէ՞ որ բարեփոխումներին խոչընդոտեց պանիսլամիստ Աբդուլ Համիդի հալածանքի համակարգը: Չէ՞ որ գյուղերը սկսեցին կեղեքել անսանձ համիդիե գնդերը, ունեցվածքը բռնա-

գրավվեց, կանայք ու աղջիկներ առևանգվեցին: Չէ՞ որ 1890-ականներին 300 հազար հայ կոտորվեց: Չէ՞ որ 1908-ի հեղաշրջումը մնաց ընդամենը որպես աչքակապություն: Չէ՞ որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն իր ցուցադրական խոստումները շարունակ ծգծգեց: Այդ ո՞ր մի ազգը կարող էր այս ամենի նկատմամբ լուռ մնալ: Անգամ եթե ոչ մի բան պատահած չլիներ, ազգերն ունեն ինքնորոշման իրավունք, անպես չէ՞: Երբևիցե հարցրե՞լ ենք նրանց, հարգվեցի՞ն արդյոք իրենց ժողովրդավարական իրավունքները: Երբևիցե լիիրավ հավասարություն եղա՞վ: Մի երկրում, որտեղ սուլթանը մուսուլման է և մուսուլմանները իշխող դասակարգ են կազմում, մի՞թե կարելի է հավասարությունից խոսել: Բազմամշակութային աշխարհագրական տարածքում կարո՞ղ էր որևէ քրիստոնյա վարչապետ կամ էլ նախագահ դառնալ: Սուլթան ընդհանրապես չէին կարող դառնալ:

Իսկ դուք գիտեի՞ք, որ բյուզանդական գահին բազմած հայ կայսրեր են եղել: Թուրքական տեսակետները պաշտպանողների գլխավոր թեզերից մեկն այն է, որ հայերը բյուզանդական իշխանության ներքո էին ապրում, երբ թուրքերը մտան Անատոլիա: Եվ իրականում հայկական հողերը գրավել են բյուզանդացիներից: Բացի այդ, պնդում են, որ հայերը բյուզանդացիների կողմից միշտ դավանանքային ճնշման տակ են եղել և իբր թուրքերին հայերը ընկալել են որպես ազատագրող: Այսպիսով հայերը չպետք է խոսեն այն մասին, որ թուրքերը գրավել են իրենց հողերը և չպետք է պայքարեն թուրքերի դեմ իրենց անկախության համար: Նրանք միշտ ստրուկ են եղել և այդպես էլ պետք է մնային:

Մի՞թե հնարավոր է նման բան: Նույնիսկ եթե որևէ ազգ 1000 տարի գերության մեջ ապրի, մի՞թե չի կարող պայքարել այդ լծի դեմ: Մի՞թե թուրքերը նույնը չէին անի: Դուք, որ շատ լավ գիտեք, թե ի՞նչ է նշանակում ազգային ան-

կախություն, ինչի՞ ընբռնումով չեք մոտենում հայերի ազգային պայքարին: Ո՞ւր է ձեր ազգային պայքարը, ու՞ր են ձեր անկախության արժեքները, ուրիշը եթե դա ցանկանա, ուրեմն սխա՞լ է: Ո՞ւր է ձեր «ազատություն կամ մահ» լոզունգը: Ո՞ւր է ազգերի ինքնորոշման իրավունքը: Ի՞նչ երկակի չափորոշիչ է սա: Թիկունքից խփող արաբները դավաճան են, բուլղարները դավաճան են, հույները դավաճան են, սերբերը, ռումինները, ալբանացիները դավաճան են, հայերը դավաճան են, քրդերը դավաճան են: Ձեզ չի թվո՞ւմ, որ մի սխալ կա այստեղ:

Հայերն ապրել են համեմատաբար հանգիստ, հարստացել են: Մի՞թե նրանց մեղքն է, որ սպասարկման ոլորտում, արհեստներում հաջող են, շնորհալի: Իրենց մե՞ղքն է, որ թուրքերը նախընտրում էին պաշտոնյա կամ ղեկավար լինել: Վերջ ի վերջո ամեն ինչ չվերցրեցի՞ք նրանց ձեռքից: Կարծում եք, թե նրանք չգիտեի՞ն, թե որքան անկայուն է իրենց վիճակը, որ մի օր իրենց ամբողջ ձեռք բերածը տալու են՝ հանուն ազատության, որովհետեւ ոչ մի հարստություն ազատության արժեքը չունի: Պատկերացրեք, եթե թուրքերը հազար տարի էլ անգլիական մանդատի տակ և համեմատաբար խաղաղ ապրեին, մի գեղեցիկ օր իրենց անկախության համար չէի՞ն պատերազմելու, նման պահանջներ չէի՞ն ունենալու: Այսքան անկարո՞ղ եք դիմացինին հասկանալու հարցում:

Բացի այդ, մի բան կա, որ մոռացվում է: Անգամ բյուզանդական ժամանակ Արևելյան Անատոլիայի տարածքը կոչվում էր «Արմենիա» և հայկական թագավորությունները կամ իշխանությունները միշտ էլ մի տեսակ անկախություն էին վայելում բյուզանդական տիրապետության ներքո: Այսինքն՝ հայոց թագավորները միշտ էլ եղել են բյուզանդական հովանու ներքո: Արդեն հռոմեական ժամանակ-

ներից սկսած Հայաստանը Հռոմի նահանգի կարգավիճակ է ունեցել: Այսինքն՝ ինչքան էլ կրոնական առճակատումներ տեղի ունենային, Հայաստանը մնացել է Հայաստան: Օրինակ՝ Վասպուրականի հայոց թագավոր Սենեքերիմը աճող մուսուլմանական հարձակումների հետևանքով բյուզանդական կայսեր թույլտվությամբ փոխադրվել է Սեբաստիա: Երբ սելջուկները Անիում քարը քարի վրա չթողեցին, այդ քաղաքը հանդիսանում էր հայկական քաղաք: Կամ էլ, երբ Մալաթիայի բերդն էին գրավում, դա հայերի կողմից պաշտպանվող բերդ էր, Մալաթիայի ժողովուրդը հայ էր, այսինքն՝ այդ տարածքը հայկական էր: Այդ հողեր դեռևս հռոմեական ժամանակներից ճանաչվում էր որպես Արմենիա: Պարսկական գրավման ժամանակ էլ այդպես էր ճանաչված, իսկ արաբական արշավանքների ժամանակ այս տարածքը կոչվել է էրմենիյե: Ապա նայեք, երբ Ք. Ա. 66 թվականին մեծն Տիգրանը պաշտպանում էր Տիգրանակերտ ամրոցը հռոմեացիներից, գոյություն ուներ Արմենիա երկիրը և այդ ժամանակաշրջանում ոչ անգլիացիները, ոչ գերմանացիները, ոչ ֆրանսացիներ և ոչ էլ թուրքերը չկային պատմության բեմահարթակում: Այսինքն՝ նման հին անցյալ ունեցող ժողովրդի ազգային պահանջների նկատմամբ անզգա մնացողները մեծ սխալ են գործում, իսկ իրենց կեցվածքը երկերեսանիություն է: Այս ազգին կարելի էր սիրաշահել, պատվելով նրան, եթե այն «հավատարիմ ազգ» էր և իսկապես որ այդպես էր: Իրենց ժողովրդավարական պահանջները բավարարելով շատ լավ կարելի էր նրանց շահել, բայց այս մոտեցումով չառաջնորդվեցիք:

Ինչո՞ւ: Օսմանցին, որը Քուրդիստանը ճանաչեց որպես Քուրդիստան, իսկ Լազիստանը որպես Լազիստան, ինչո՞ւ երբ խնդիրը հասավ քրիստոնյաներին, նրանց հայրենիքը չհաստատեց: Նշանակում է, որ «հավատարմություն» ասե-

լով ստրկություն են ի նկատի ունեցել, միշտ որպես ստրուկ և ծառա են համարել նրանց:

Հայերն իրենք իրենց անվանում են «հայ», իսկ իրենց երկիրը կոչում են «Հայաստան»: Իրականում Արմենիա նշանակում է բարձր երկիր և առաջացել է ասորերեն Ուրարտու, եբրայերեն Արարատ, արամեերեն Հարմինյաբ կամ Հարմենի տերմիններից և ոչ մի անպատեհություն չկա այն որպես տարածքային անուն օգտագործելու մեջ: Այսօր ունենք մի տարածք, որ կոչվում է Թրակիա: Իսկ դուք գիտե՞ք, թե այդ անունը որտեղից է ծագում՝ մի հին ժողովրդից, որը կոչվել է թրակ: Պատճառը, որ մենք այսօր այդ տարածքը հանգիստ կարող ենք Թրակիա կոչել այն է, որ թրակներն այլևս գոյություն չունեն և չեն կարող մեզանից հող պահանջել: Միակ պատճառը, որ ողջ պատմության ընթացքում Արմենիա կոչվող մեր այսօրվա Արևելյան Անատոլիայի տարածքը չենք կարողանում Արմենիա անվանել, սա է: Այս բանից ենք վախենում և խրտնում: Սակայն Իրանը այսօր չի խրտնում այն բանից, որ ունի Արևմտյան Ազերբեյջան կոչվող մի նահանգ:

Իսկ Թուրքական Պատմական ընկերությունն ինչո՞ւ է փորձում Անի քաղաքի հիմնադիր հայկական իշխանական Կամսարական տոհմը կապել իբր օղուզ-թուրք Կեմեր-Սակա տոհմին, չնայած, որ սակաների թուրքական ծագում ունենալն անգամ շատ վիճելի է: Ինչո՞ւ են փորձում Անին դարձնել Անը: Մի՞թէ դա անկարողության նշան չէ: Մի՞թե բարդույթ ունեն, որ թուրքերը եկվոր են Անատոլիայում: Ինչո՞ւ են ասում, որ հայկական եկեղեցիները կառուցվել են քրիստոնյա թուրքերի կողմից: Աթաթյուրքը ինչո՞ւ էր ասել, որ «Անատոլիան պատմության ընթացքում թուրքական էր, ուրեմն հիմա էլ թուրքական է և միշտ էլ թուրքական է մնալու» և փորձել պատմությունն ուղղակիորեն խեղա-

թյուրել, Հունաստանի և Եգիպտոսի մշակույթի ու անգամ աշխարհի բոլոր ազգերի լեզուների արմատները կապելով թուրքերի հետ: Կցելու այս արհեստական ջանքերը ինչպե՞ս կարող են հարգանք առաջացնել մեր պատմական թեզերի հանդեպ, դրանք կարող են միայն ծիծաղ առաջացնել: Այսինքն՝ մենք ինչպե՞ս կարող ենք թուրքերի պատմության թեզերի նկատմամբ հարգանք ունենալ նման ձևափոխությունից և խեղաթյուրումից հետո: Ինչպե՞ս կարող ենք նրանց հավատալ: Կարճ ասած, ինչպե՞ս կարող ենք պատմությունը թողնել պատմաբաններին:

Աթաթյուրքը Ադանայում մի բանախոսության ընթացքում ինչո՞ւ էր ասել «հայերը ոչ մի իրավունք չունեն այս հայրենիքում»: Ինչպե՞ս կարող են այս հողերը տանել այսքան սուտ: Մի տեղից էլ պոռթկալու է, չէ՞: Դուք կարո՞ղ եք իրականությունը սքողել: Որքա՞ն ժամանակ կարող է ապրել մի երկիր, որը հիմնված է ստի վրա, ինչպես կարող է երկիրը իր գոյությունը շարունակել, հիմնված լինելով մեծագույն անիրավության վրա: Եթե չլինի այս մեղքերի թողության խնդրանքը, ինչպե՞ս կարող է այս երկիրը մաքրվի, շիտակ ուղի գտնի: Ինչպե՞ս կարելի է այս խելագարությունից, այս հոգեկան հիվանդությունից ձերբազատվել: Պատասխանեմ. «չի՛ կարելի»: Այսպիսի մի խոսք կա. «երբ սկսում ես ինքդ քեզ խաբել, բացում ես խելագարության դռները»:

Ահա սա է մեր ապրած խելագարությունը: Սա է այս երկրի վիճակը, որը 80 տարի է, ինչ հայտնվել է պարանոիկ-շիզոֆրեն վիճակի մեջ, բոլորին կասկածանքով է նայում, իրեն չորս կողմից շրջապատված է զգում, բոլորին ընդունում է որպես թշնամի, ինքնիրեն մենակության է մատնել, մեկուսացրել է աշխարհից ու չի կարողանում մարդկության ընտանիքի մաս կազմել: Այս բոլորի պատ-

ճառը մարդկության դեմ գործած հանցանքն է, որը բույն է դրել մեր ենթագիտակցության մեջ և որի հետ չենք կարողանում առերեսվել, խուսափում ենք առերեսվելուց և ավելի խորքերն ենք այն քշում: Գողի ենք նման, որը վախենում է, որ մի օր իր գողացած ապրանքները իր ձեռքից խլելու են: Ճիշտ նույնը եղավ Թուրքիայի Հանրապետության հիմնադրման ժամանակ: Այս թալանի մեջ բաժին ունեցող բոլոր մեծանունները, աղաները, փաշաները ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները, վախենալով դատից՝ մասնակցեցին Անատոլիական պայքարին և տեղ գտան հանրապետության գործիչների առաջին կազմում: Այս մեղքին էլ այսպես տեր կանգնեցին: Այսինքն՝ ինչո՞ւ Աթաթյուրքը հայկական ցեղասպանության մեղավորների ընտանիքներին թոշակ նշանակեց, ինչո՞ւ նրանց հատկացրեց հայերից մնացած տները:

Այսօր պետական-պաշտոնական թեզերի պաշտպանները միշտ այն փաստարկից են կառչում, որ հայերը փոքրամասնություն էին կազմում, իսկ ես ասում եմ «ոչ, փոքրամասնություն չէին կազմում»: Նույնիսկ քրդերին հայկական հողերում տարածելուց հետո էլ նրանք փոքրամասնություն չէին կազմում: Ուրեմն այսպես: Ասում են Առաջին աշխարհամարտի սկզբին Անատոլիայի բնակչությունը կազմում էր 10 միլիոն: Եթե ընդունենք, որ դրա 1,5 միլիոնը հայեր էին, չնայած, որ ամբողջ կայսրության տարածքում հայերի թիվը կազմում էր 2 միլիոն, էգեյական մասում 1,5 միլիոն, իսկ Սև ծովի տարածքում համարյա 1 միլիոն հույն կար, իսկ ասորիների վերաբերյալ հաղորդում են, որ նրանց թիվը տատանվում էր 500.000 – 700.000-ի միջև, ուրեմն քրիստոնյաների ընդհանուր թիվը հասնում էր 5 միլիոնի: Այսինքն Անատոլիայի բնակչության մոտ կեսը: Լավ, ի՞նչ էր լինելու

այս մարդկանց հետ: Հեշտ ու հանգիստ կարելի էր նրանց մի շարք ազգային իրավունքներ տալ ու հավաքել մի տեղում: Օրինակ, կարելի էր հայերին արևելքում մի տեսակ ինքնավարություն տալ և այդ տարածքի հույն, ասորի ու մյուս քրիստոնյա տարրերին հավաքելով՝ չկորցնել այս ազգերին: Կամ էլ ստեղծել բազմամշակութային ժողովրդավարական մի հավաքականություն: Այսինքն՝ իրականում ամեն ինչ կարելի էր լուծել երկխոսության միջոցով: Ուժի կիրառման ճանապարհին երկխոսության քանի՞ առիթներ ձերքից բաց թողնվեց, արդյո՞ք մտածեցիք այս ամենի մասին: Անելիքը իրականում հենց սա էր: Մյուս ընտրությունը բնական ընտրություն չէր և հնարավոր չէր խուսափել սարսափելի արդյունքներից, որովհետև դուք քանդում եք Անատոլիայի հյուսվածքը. այս աստիճանի արհեստական մի մոտեցում միայն ցեղասպանությունով էր հնարավոր իրականացնել, ուրիշ կերպ հնարավոր չէր:

Պետության կողմից մանրակրկիտ ծրագրված և իրագործած մի ցեղասպանություն: Պատերազմի պատրվակով, տեղահանության քողի տակ կազմակերպած մի հանցանք մարդկության հանդեպ: Այն էլ ռազմաճակատի հետ ոչ մի կապ չունեցող էդիրնե, Թեքիրդաղ, Չանաքքալե, Իզմիթ, Քյութահիա, Էսքիշեհիր, Իզմիր և նմանատիպ տարածքների հայերին էլ ներգրաված մի ծրագիր: Իսկ ի՞նչ կատարվեց լեռներում թաքնվող ավազակախմբերի հետ: Ոչինչ: Ո՞վ պատժվեց, ո՞ւմ աքսորեցին՝ կանանց, երեխաներին, ծերերին: Իսկ ինչի՞ համար: Եթե նրանք մնային իրենց տներում, ի՞նչ կլիներ: Ոչինչ: Նպատակը ուրիշ էր և ըստ ծրագրի, նրանք այլևս չէին վերադառնալու: Նրանց տներում անմիջապես տեղավորում էին ուրիշ գաղթականներին: Բեհաեդդին Շաքիրը Անատոլիան քայլ առ քայլ շրջում

էր, ստուգում տեղահանության գործընթացը և հրամաններ արձակում: Այն պատվարժան մարդկանց, ովքեր չէին ուզում մասնակից դառնալ մարդկության դեմ իրագործվող հանցանքին, սպանում էին: Արդեն նախօրոք հայտարարվել էր, որ հայերին պաշտպանողները կախաղան են բարձրացվելու իրենց դռան առջև: Դրանից բացի, ֆեթվաներ էին արձակում, որպեսզի գռգռեին ժողովրդին:

«Հատուկ կազմակերպության» գաղտնի միավորումները տեղաբաշխվել էին ճանապարհներին և փորձում էին տպավորություն ստեղծել, թե քարավանների վրա ավազակներ են հարձակվել: Ժանդարմերիան չէր միջամտում: Այս գործի համար բանտերից ազատ էին արձակվել բոլոր մարդասպաններն ու բռնաբարության համար դատապարտվածները, որոնք համալրեցին «Հատուկ կազմակերպության» շարքերը: Գետերի հուները, անդունդները, քարանձավները, հորերը լցվել էին անմեղների դիակներով: Ժողովուրդը՝ լավ իմանալով, որ այս խմբերը գնում են դեպի մահ, հարձակվում էին մարդկանց վրա, ինչպես ճանճերն են հարձակվում մեղրի վրա և փորձում էին ամեն ինչ խլել նրանցից, սկսած իրենց վրա կարած ոսկիներից, մի քանի գրոշներից, մի կտոր չոր հացից, վերջացրած շորերով ու կոշիկներով: Անգամ մի կտոր չոր հացին արժանի չէին նրանք: Իսկ երեխանե՞րը: Մեղք էր, ափսոս էր, նրանք աշխատուժ էին, դրամագլուխ էին: Նրանց վերցրեցին, իրար մեջ բաժանեցին: Իսկ գեղեցիկ կանա՞յք: Նրանք առավել ևս ափսոս էին: Նրանց չէին կարողանում կիսել: Ինչ էլ սազում էին նրանք իրենց փոքր հարեմների համար:

Իսկական խելագարություն էին ապրում բոլորը՝ հարձակվելով այս ավարի վրա: Խորտակված նավի ապրանքն էր: Ով ձեռքը երկարեր՝ նրանն էր: Կա՞ արդյոք ավելի մեծ

ողբերգություն որևէ ազգի համար: Կարո՞ղ է պատահել, որ այս ամենից հետո ժողովուրդը չունենա վրեժխնդրության զգացմունք: Այն էլ հավիտյանս: Իրականում, միշտ էլ ասում եմ, որ միայն ներողությունը չի բավականացնի: Շատ ավելին, շատ ավելին: Այն, ինչ կարողանում ենք անել: Ինչ-որ մեր ձեռքից գալիս է: Եթե պետք է, մեր գլխի վրա պիտի պահենք: Սակայն նախ մեզ դնենք նրանց տեղը: Մենք այդ երբեք չապրեցինք, չենք իմանում, մենք քոչվոր ցեղ էինք, մենք չենք իմանում, թե ի՞նչ է նշանակում 3000 տարի նույն տեղում ապրել: Ահա սա է մեր խնդիրը: Ամեն ինչ կվերջանա այն ժամանակ, երբ այս բանը հասկանանք, այսինքն երբ կարողանանք հասկանալ, թե մի ժողովրդի համար ի՞նչ է նշանակում հեռվից նայել իր պաշտամունքին՝ Արարատին, հասկանալ այս հողերից բացի ուրիշ հայրենիք չիմացող մի ազգի ապրումները, որը նա ունեցավ իր հողերից վտարվելու արդյունքում:

Իրականում, մոտ 500 տարի անցնելուց հետո արդեն կարող եք դա հասկանալ: Օրինակ՝ պատկերացրեք, որ ձեզ ազգովի քշել են Ստամբուլից և դուք սփռվել եք աշխարհի չորս կողմերում: Այլևս գոյություն չունեն ոչ Բոսֆորի հիասքանչ տեսարանը, ոչ Բեբեք, ոչ Էմիրգյան, ոչ Թաքսիմ, Քադըքյոյ, Բեշիքթաշ, Ուսքյուդար թաղամասերը: Այլևս միայն ձեր երազներում կարող եք Բոսֆորի երկու ափը շրջագայող նավերը նստել ու ճայերին հաց գցել: Իշխանաց կղզիները, Աղջկա աշտարակը, Բոսֆորի ափին նստելով օդի խմելը, Էմինոնյուի հրապարակում աղավնիներին կերակրած օրերը, Փակ շուկան, Սուլթանահմեդի մզկիթը, Թոփքափը պալատը, Մեջիդիյեքյոյում ձեր հիմնած առաջին աշխատատեղը, Աքսարայում ձեր առաջին տունը, որտեղ բնակվեցիք, այն զբոսայգին, ուր ձեր երեխաներին

զբոսնելու էիք տանում, ձեր դպրոցը, Չամլըջայի բարձունքը, որտեղ առաջին անգամ ձեր սիրած աղջկա ձեռքն էիք բռնել, այս ամենն այլևս չկա: Ստամբուլը չկա: Եվ դուք, ձեր այս հիշողություններով հանդերձ անվերադարձ աշխարհի մյուս ծայրն եք մեկնում, իսկ ձեր սիրտը այստեղ է մնում, ձեր սիրած աղջիկը մի ուրիշի կինն է դառնում, մտածում եք, լացում և լացում ու այս ցավով և կարոտով եք մեռնում: Այս բանը մտածեք մի անգամ, զգացեք: Երբ որ զգաք, ահա այն ժամանակ ասելու եք «վերցրեք, ամեն ինչ ձերը լինի, որովհետև դուք ավելի շատ եք դրան արժանի, քան մենք», սակայն երբ դուք այդ բանը ասեք, նրանք չեն ասելու «այո, դուք չքվեք, ամեն ինչ մերը պիտի լինի», երբ դուք այդ բանը ասեք, նրանք էլ ասելու են «ոչ, մի՛ գնացեք, բոլորս միասին ապրենք խաղաղության մեջ»: Միշտ ասել եմ, խնդիրը միայն ցեղասպանության մեջ չէ, այլ հայրենի հողերը կորցնելու ցավն է: Եվ, բարեկամներ, այս վերքը ոչ մի կերպ չի կարելի ապաքինել:

Այո, ես ներողություն եմ խնդրում, այն էլ մինչև հոգուս խորքը ներողություն եմ խնդրում: Իմ քոչվոր նախնիների համար, որոնք Կովկասից այս տարածքներ եկան, բնակվեցին նրանց գյուղերում, լուռ մնացին նրանց տարհանման նկատմամբ, տիրացան նրանց ունեցվածքին: Նրա համար, որ սարից իջնելով ձորում ապրողին քշել ենք: Այն բանի համար, որ նրանց մեկնելուց հետո այս հողերը իրենց հոգին կորցրեցին և գնալով ավելի անբերրի դարձան: Այս տարածաշրջանի վրա մեր հաստատած թույլ ու անարմատ մշակույթի համար: Այն բանի համար, որ քանդել ենք նրանց եկեղեցիները, պայթեցրել վանքերը, փորձել ենք ջնջել նրանց բոլոր հետքերը, չեմ իմացել նրանցից մնացած գյուղերի, գյուղաքաղաքների, քաղաքների, լեռների, գետե-

րի, ծորերի, գետակների անունները, տեղյակ չեմ եղել մեր լեզվի մեջ թափանցած հայերեն բառերից, մեր մշակույթի մեջ տեղ գտած հայկական ճաշերից, հայկական սովորույթներից, այս հողերին այսքան օտար եմ եղել: Ամաչում եմ, որ հայերեն, քրդերեն, հունարեն երկու բառ անգամ չգիտեմ, ամաչում եմ, որ այս պահին Թուրքիայում ոչ մի հայկական գյուղ գոյություն չունի (Վաքըֆլը գյուղը հաշվից դուրս է, քանի որ մինչև 1939թ. Թուրքիայի սահմանների մեջ չէր գտնվում): Այսօր Եգիպտոսի բնակչության 10 տոկոսը քրիստոնյա է, իսկ սա նշանակում է 7,5 միլիոն մարդ, Սիրիայում նորից 10 տոկոսը քրիստոնյա է, սա էլ 2 միլիոն մարդ է անում, իսկ Թուրքիայում քրիստոնյաները կազմում են ընդամենը 0,01 տոկոս. սրա համար ներողություն եմ խնդրում:

Ահա Անատոլիայում մի ուրվական է պտտվում և դա ցեղասպանության ենթարկված անմեղների ուրվականն է, Անատոլիայի անձայն մեծամասնության ճիչն է դա: Նրանք միայն Հայաստանում ապրող հայերի նախնիները չեն: Հույնը, քուրդը, ասորին, քելդանին, նեստորականը, եզդին, քըզըլբաշը նրանք բոլորը այս հողի մարդիկ էին, նրանք են իրականում Անատոլիան: Եվ ես նրանց հոգիների հանգըստության համար ծունկի եմ գալիս: Ներողություն եմ խնդրում, որ այս հողերի վրայի անեծքը վերանա, ներողություն եմ խնդրում, որ այս հողերին անդորր իջնի և խաղաղություն տիրի: Դեռ ներողություն խնդրելով էլ չեմ բավարարվում, այսօր աշխարհի չորս կողմերում ցրված, սակայն Անատոլիայից բացի ուրիշ հայրենիք չունեցող Անատոլիայի հարազատ զավակների՝ հայերի, հույների, ասորիների առջև իմ գիրկն եմ բացում և նրանց հրավիրում եմ իրենց հայրենիք: «Հրամեցեք եկեք» ասում եմ, «բարով

եկաք ձեր հայրենիք», հետ վերադարձեք այս դատարկ, անբերրի, անպտղաբեր, անիծված, ուրվականներով բնակեցված հողերը, որպեսզի այս հողերի արյունն ու հոգին էլ հետ վերադառնան, ոգին հետ վերադառնա: Այս բանը ես անում եմ հանուն մարդասիրության: Սա իմ խղճի պարտքն է, որովհետև ներողություն խնդրելուց շա՜տ ավելին է հարկավոր...

*Թուրքերենից թարգմանությունը՝ (**Տիրան Լոքմագյոզյանի**)*

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՕՍՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ «ԱԼԵՄԴԱՐ» ՕՐԱԹԵՐԹԻ[22]

---

[22] Հավելվածում ներկայացվող արժեքավոր նյութը ամբողջությամբ վերցված է թուրքագետ Մելինե Անումյանի՝ «Երիտթուրքերի 1919-1921թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» բարձրարժեք մենագրությունից (էջ 143-281): Մ. Անումյանի գրքում առաջին անգամ օսմաներենից թարգմանաբար ներկայացված են 1912-1921թթ. Ստամբուլում հրատարակվող օսմանյան «Ալեմդար» օրաթերթում տեղ գտած Յոզղաթի, Տրապիզոնի, Խարբերդի (Մամուրեթ-ուլ Ազիզ) և Բյույուք Դերեի (Բողազիչի) դատավարությունների նիստերի սղագրությունները: Նյութը սիրահոժար մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում հեղինակ Մելինե Անումյանին և «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի» տնօրեն Հայկազուն Ալվրցյանին:

ՅՈԶՂԱՏԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ

ԵՐԵԿ ՍԿՍՎԵՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմական արտակարգ ատյանը, որը լիազորված է քննելու տեղահանության և կոտորածների պատճառով [հայերի] կրած վնասները, երեկ կեսօրից առաջ՝ ժամը 10-ին, նիստ գումարեց և սկսեց դատավարությունը: Դատարանի կազմը բաղկացած էր ներքոհիշյալ անձանցից. նախագահ՝ Հայրեթ փաշա, անդամներ՝ Մուստաֆա և Նաղիր փաշաներ, Շևքեթ և Արքին էֆենդիներ: Մեղադրող կողմը ներկայացնում էր դատախազ Սամի բեյը:

Ինչպես որ մեղադրյալներից Բողազլյանի կայմակամ (գավառապետ) ու Յոզղատի մութասարրիֆի տեղակալ (սանջակի փոխկառավարիչ) Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի գումարտակի հրամանատար Թևֆիկը և Յոզղատի վաքֆային վարչության նախկին պաշտոնյա Ֆեյյազ Ալին ներկա էին անձնապես, այնպես էլ իրենց տեղերում էին դատապաշտպաններ Սաղեդդին Ֆերիդ, Սալահադդին, Հալիթ, Հայրի, Մահիր ու Հասան Բասրի բեյերը:

Նախագահի հրամանով ընթերցվեց հետաքննիչ հանձնաժողովի մանրամասն որոշումը, այնուհետև ունկնդրության արժանացավ դատախազ Սամի բեյի որոշումը, ապա լսվեց նաև քաղհայցվորի կարգավիճակով հանդես եկող դատապաշտպան Լևոն Ռեմզի էֆենդու՝ տեղահանության ու կոտորածների ողբերգություննե-

ին վերաբերող հայտարարությունը: Վերոհիշյալ Լևոն Ռեմզի էֆենդին հետևյալն ասաց. «Տառացիորեն կիսում եմ դատախազ Սամի բեյի հիմնավորված և արդար հայտարարությունը»:

Դատապաշտպանները հայտարարեցին՝ քանի որ Լևոն Ռեմզի էֆենդին[23] ունի քաղհայցվորի կարգավիճակ, նախ և առաջ պետք է ապացուցի իր ժառանգականությունը և ներկայացնի իր լիազորված լինելու մասին հավատարմագիրը: Լևոն Ռեմզի էֆենդին հանդես եկավ այդ հայտարարությունը ժխտելուն ուղղված մեկնաբանություններով, որից հետո հայտարարվեց, թե դատախազը հարմար է գտել, որ Լևոն էֆենդին հանդես գա ոչ թե որպես քաղհայցվոր, այլ՝ գանգատավոր: Դատարանի կազմն ընդունեց այդ առաջարկը:

Այնուհետև մեղադրյալները հայտարարեցին, թե այս դատարանն իրավասու չէ քննելու իրենց գործը, իսկ դատապաշտպանները հանդես եկան դա հաստատող հայտարարությամբ, բայց դատախազը ապացույցներով հիմնավորեց, որ տվյալ դատարանի կողմից մեղադրյալների դատաքննության իրականացումը համապատասխանում է օրենքին:

Նիստն ընդմիջվեց մինչև ետկեսօր՝ դատապաշտպանների պահանջով, ովքեր ցանկանում էին ծանոթանալ փաստաթղթերին:

Կեսօրից հետո՝ ժամը 13:40-ին, նիստը վերսկսվեց, և վերոնշյալ դատարանի կազմը պատրաստ վիճակում սկսեց դատավարությունը: Դատապաշտպանները նորից հայտարարեցին, թե իրենց պաշտպանյալները ստամբուլաբնակ չեն, և այդ դատարանը՝ իր յուրահատկությամբ, իրավասու չէ իրականացնելու նրանց դատաքննությունը, դատախազ Սամի բեյն էլ պնդեց, թե իրավասու է, որից հետո՝ ժամը 14:10-ին, դատարանի կազմը նորից հեռացավ խորհրդակցական սենյակ:

---

[23] Լևոն Ռեմզին դատարանում ներկայացնում էր իր 115 սպանված ազգականների շահերը:

Ժամը 14:55-ին դատարանի կազմը վերսկսեց նիստը, որի ժամանակ ընթերցվեց դատարանի՝ մեղադրյալների գործը քննելու իրավասության մասին որոշումը:

Դատապաշտպաններն ասացին, թե պաշտպանյալներից Քեմալը տեղահանության և կոտորածների խնդրի կապակցությամբ նախկինում դատաքննվել և արդարացվել է Յոզղատի բողոքարկման դատարանի կողմից, և որ օրենքին հակասում է նրա՝ միևնույն հարցով վերստին դատվելը:

Դատախազը սույն հարցի առնչությամբ հանդես եկավ որոշ դատողություններով, որից հետո Քեմալ բեյից պահանջեցին, որպեսզի պատասխանի որոշ հարցերի: Նախագահն այդ հարցով դիմեց Քեմալ բեյին, որին ի պատասխան՝ վերջինս հայտնեց, թե ինքը նախկինում դատվել է տեղահանության և կոտորածների մեղադրանքով: Քեմալը բացասական պատասխան տվեց դատարանի նախագահի հետևյալ հարցին. «Ձեզ դատելու համար կալանավորե՞լ են»: Քեմալի բացասական պատասխանը ծիծաղ հարուցեց ունկնդիրների շարքերում, ապա նախագահը հայտարարեց. «Քանի որ օրենքին հակասում է, որ սպանության գործով դատվող որևէ անձ ձերբակալված չլինի, ապա կարելի է ենթադրել, թե այդ դատաքննությունը որևէ կապ չի ունեցել սպանության հարցի հետ»:

Դատապաշտպանները վերոհիշյալ գործի մասին դարձյալ հանդես եկան հայտարարությամբ, իսկ դատախազը հիմնավորումներ բերեց՝ ի պաշտպանություն մեղադրյալի դատաքննության: Այնուհետև դատարանի կազմը նորից քննարկեց այդ հարցը և որոշեց այդ հանգամանքի մասին հեռագրով հարցում անել Յոզղատ և դատը հետաձգել մինչև փետրվարի 8-ը՝ ժամը 13:00:

6-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ կեսօրից հետո՝ ժամը 14:15-ին, սկսվեց Բողազլըյանի կայմակամ Քեմալի, Յոզղատի ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկի և վաքըֆային վարչության պաշտոնյա Ֆեյյազի դատավարությունը, որոնց դատաքննությունը շարունակվում է՝ տեղահանության և կոտորածների մեղադրանքով:

Դատարանի կազմի և դատախազի պաշտոնները զբաղեցնում էին այն անձինք, որոնց անունները հիշատակել էինք անցած նիստի մասին հոդվածում, միայն դատապաշտպանների թիվը, արդեն չափազանցության հասնելով, ավելացել էր ևս մեկով. դատապաշտպաններին էր միացել նաև փաստաբան Հյուսնյու բեյը:

Քաղհայցվորի կարգավիճակով հանդես էին գալիս փաստաբան Հմայակ Խոսրովյանը, Հակոբ Բահրին և Սուրենյան էֆենդին: Նիստի սկզբում [մեղադրյալների] դատապաշտպաններից Հալիդ բեյը, երկու կողմերի կազմավորման մասին իր առարկությունն արտահայտելով, հայտարարեց, թե որպես քաղհայցվոր դատարանին դիմած Կարապետ Քյուրքչյանի որդին և Հայկ Խանջյանը, ըստ օրենքի, նախ և առաջ պետք է ներկայացնեն իրենց ժառանգականության մասին փաստաթղթերը: Դատախազը պահանջեց, որ նրանց դիմումներն ընդունվեն ոչ թե որպես ժառանգորդ, այլ՝ քաղհայցվոր: Դատարանը ներկայացրեց դրա մասին որոշումը, որից հետո որպես քաղհայցվոր հանդես եկող Հմայակ Խոսրովյանը հայտարարեց, թե անցած նիստի ժամանակ Վանի իրադարձությունների մասին դատախազի արած մեկնաբանությունները[24], որոնք նպատակ ունեին որպես մեղմացուցիչ հանգամանք ներկայացվել՝ ի նպաստ Յոզղատի ողբերգությունների հեղինակ հանցագործների, այն ակնարկը, թե հայերը գոր-

---

[24] Դատախազ Սամի բեյը Յոզղատի դատավարության հենց առաջին նիստում՝ 1919 թ. փետրվարի 5-ին, իր ճառում փորձել էր պնդել, թե հայերն ապստամբական շարժումների պատճառով առիթ էին տվել կոտորածների համար:

ծիք են եղել արտասահմանցիների համար, անհամատեղելի են արտակարգ ատյանի կազմվելու նպատակի հետ, քանի որ այս դատարանում քննվելու են բացառապես կոտորածներին ու տեղահանությանն առնչվող խնդիրներ, և հակառակ կողմի նկատմամբ գործադրվելու է արդարադատությունը: Ըստ Հմայակ Խոսրովյանի՝ դատախազը վերոհիշյալ մեկնաբանություններով խախտել է մեղադրող կողմի չեզոքությունը: Խոսրովյանը պահանջեց դատախազի պաշտոնից հեռացնել նրան և հայտարարեց, թե անընդունելի են հայերին ուղղված զրպարտությունները: Քաղհայցվորներից Սուրենյան էֆենդին, այդ կապակցությամբ իր առարկությունը ևս հայտնելով, լքեց դատարանի դահլիճը:

Դատախազ Սամի բեյը նշեց, թե Վանի դեպքերի մասին խոսելու անհրաժեշտությունը բխել է ի պաշտոնե տեղահանությանը և կոտորածներին առնչվող խնդիրների էությունը բացահայտելուն ուղղված համակողմանի հետաքննության արդյունքում ձեռք բերված տեղեկություններից, և որ ինքը, ելնելով իր պաշտոնից, հարկադրված է եղել մեկնաբանել այդ իրադարձությունները: Դատախազը հայտնեց նաև, թե հիմնական անդամի մերժումը չի կարող կիրառվել դատախազների առնչությամբ:

Քաղհայցվորների լիազորները հանդես եկան երկար-բարակ պարզաբանումներով: Այնուհետև ներկայացվեց Յոզղատում Քեմալի՝ գույքի հափշտակման մեղադրանքով քրեական դատարանում մեղադրյալի բացակայությամբ կայացված դատավճիռը, ըստ որի՝ Քեմալը դատապարտվել էր երեք ամսվա ազատազրկման: Քեմալի առարկություններից պարզվեց, որ վերոհիշյալ դատաքննությունն իրականացվել է իր ներկայությամբ, որի արդյունքում արդարացվել է:

Ապա դատարանի նախագահը հարցաքննեց Թևֆիկ, Քեմալ ու Ֆեյյազ բեյերին:

Երբ ժամը հասավ 16:30-ը, նախագահը հաղորդեց, որ նիստն ավարտվում է, և կշարունակվի առաջիկա երկուշաբթի օրը՝ կեսօրվա ժամը 13:00-ին:

9-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նիստ երրորդ

Երրորդ նիստի առաջին մասը. Երեկ՝ երկուշաբթի օրը, տեղի ունեցավ Բողազլըյանի տեղահանության ու կոտորածներին վերաբերող դատական գործի երրորդ նիստը: Նախագահը նիստի սկիզբն ազդարարելուց հետո մեղադրյալներին հայտնեց, որ վերջիններիս հարցաքննությունն ավարտված է, և այժմ ընթերցվելու են փաստաթղթերը:

Քաղհայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդ էֆենդին, նախագահից խոսքի իրավունք ստանալով, խնդրեց, որ նախքան մեղադրյալների փաստաթղթերի քննարկումը՝ ընթերցվեն երկու կողմերի դիմումները, որոնք հանձնվել են դատարանին: Ընթերցվեց Սիրքեջիի[25] բնակիչ, յոզղատցի Կարապետ էֆենդու միջնորդությունը, որն անդրադառնում էր Բողազլըյանի տեղահանության ու կոտորածների փուլերին:

Դատախազն ասաց, թե անհրաժեշտ է Կարապետ էֆենդուն ընդունել որպես քաղհայցվոր:

Որպես դատապաշտպան ներկա էր Հյուսեին Հյուսնու էֆենդին: Դատախազ Սամի բեյը, այդ միջնորդությանն անդրադառնալով, նշեց, թե այստեղ այլ կասկածյալներ էլ են հանդիպում, և որ վերջիններիս նկատմամբ նույնպես հետաքննություն է կատարվելու: Դատարանի կազմը Կարապետ էֆենդուն որպես քաղհայցվոր ընդունելու մասին հարցը քննարկելու նպատակով հեռացավ խորհրդակցական սենյակ:

Երրորդ նիստի երկրորդ մասը. Երեք քառորդ ժամ տևած քննարկումից հետո դատարանի կազմը վերադարձավ դատական դահլիճ: Որոշման մեջ նշվում էր, թե մյուս մեղսակիցների դատա-

---

[25] Թաղամաս Ստամբուլի Ֆաթիհ շրջանում:

վարությունն արագացնելու նպատակով որոշում է կայացվել Կարապետ էֆենդուն քաղհայցվորի կարգավիճակ տալու մասին ծանուցագիր ուղարկել նրան:

Քաղհայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդ էֆենդին խոսեց այն մասին, թե այն դեպքում, երբ կենտրոնից հրաման էր ստացվել, ըստ որի՝ հայ զինվորականների ընտանիքները ենթակա չեն տեղահանությանը, ու չնայած այդ կապակցությամբ ստացված բազմաթիվ հրամաններին՝ նման բազում ընտանիքներ են տարագրվել: Լևոն Ֆերիդ էֆենդին ասաց, որ թեև Մեհաբեթ Կարապետ էֆենդին հայտնելով, թե բանակում իր որդիներից մեկը՝ կրտսեր, մյուսն էլ՝ ավագ լեյտենանտ է, իսկ ամենափոքրն էլ Ստամբուլում պատկանում է զինվորական դասին, խնդրել է, որ իր ընտանիքը նույնպես օգտվի այդ կապակցությամբ բացառություն անելու մասին կենտրոնի հրամանից, սակայն Քեմալը պատասխանել է, թե հարկադրված է տեղահանության մասին օրենքը գործադրել նաև Կարապետ էֆենդու հանդեպ և չի կատարել վերջինիս խնդրանքը:

Այնուհետև Լևոն Ֆերիդ էֆենդին, անդրադառնալով Քեմալի՝ գաղթականների նկատմամբ ցուցաբերած անարդարություններին, ասաց, թե խոսքը վերաբերում է Կարապետ էֆենդու ընտանիքի անդամներին, որոնց մատները պոկել են, և որ դրա դրդապատճառն է եղել անձնական շահը:

Լևոն էֆենդին նշեց, որ Քեմալն այդ հանցագործությունը կատարել է կանխամտածված կերպով, քանի որ վերջինս հրամայել էր մատից դուրս չեկող մատանու համար կտրել մատը:

Այնուհետև մանրամասներ ներկայացվեցին Մեհաբեթ էֆենդու ընտանիքի՝ Քեմալի դաժանությունների հետևանքով կրած նյութական վնասի մասին, որը կազմեց 1800 հատ հարյուրանոց կանխիկ դրամ, որին գումարվում էին նաև վստահորդ Մարիայի վրա գտնվող թանկարժեք զարդերը և կանխիկ դրամը:

Մեղադրյալներից մութասարրիֆի տեղակալ Քեմալը հայոց ողբերգության թատերաբեմերից Գյուլլեր նահիեում (գավառա-

կում) կատարված կոտորածի առնչությամբ ասել էր. «Գնում ենք թատրոն դիտելու»: Մեղադրյալը, Գյուլլերի մահմեդական բնակչության ֆանատիկ զգացմունքները գրգռող ելույթ ունենալով, ապահովել էր ողբերգություններին նաև տեղի բնակչության մասնակցությունը: Քեմալը, տառապող ժողովրդի հեծեծանքներին և տանջանքներին հետևելով, նարգիլե էր ծխել, իսկ ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկը, ելույթ ունենալով, խրախուսել էր բնակչության մասնակցությունը կոտորածին և իր հրացանով անձամբ սպանել երեք հոգու:

Լևոն Ֆերիդ էֆենդին նշեց, թե Ֆեյյազ Ալի բեյի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության համախոհը լինելու մասին ենթադրությունը շատ հեշտ է ապացուցել՝ վերոնշյալ ընկերության թղթապանակների միջոցով, և որ թե՛ նրա ընտանիքի անդամներից ու թե՛ ընկերներից շատերը կհաստատեն, որ նա եղել է տվյալ կուսակցության անդամ: Հայտնեց նաև, որ Ֆեյյազ Ալին նույնիսկ շատ ակտիվ դերակատարություն է ունեցել [Յոզղատի] նախկին մութասարրիֆ Ջեմալ բեյի պաշտոնազրկման մեջ[26], և որ մեղադրյալն իր ղեկավարության տակ գտնվող Յոզղատի ակումբ էր գնացել նվագախմբով:

Լևոն Ֆերիդ էֆենդին իր եզրակացության մեջ նորից մանրամասնում էր, որ այդ երեք հանցակիցները՝ Ֆեյյազ, Թևֆիկ ու Քեմալ բեյերը, տեղահանության ժամանակ Կարապետի ընտանիքից կողոպտել են 1800 լիրա կանխիկ դրամ, 3620 լիրա արժողությամբ մի գորգ, 13 սենյակի բոլոր իրերը, 1000 լիրա արժողությամբ կանացի զարդեղենը, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր 8000 լիրա:

---

[26] Միություն և առաջադիմություն կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղար (պատվիրակ) Նեջաթին, 1915 թ. հուլիսի 20-ին գալով Յոզղատ, հաղորդել էր հայերին կոտորելու հրամանը, սակայն Յոզղատի մութասարրիֆ Ջեմալը հրաժարվել էր գործադրել այդ հրամանը, որի պատճառով էլ պաշտոնանկ էր արվել Նեջաթիի կողմից:

Դատախազը հարցրեց, թե մեղադրյալներին վերագրվող սպանությունները միայն այդ երե՞քն են եղել, թե ոչ, և խնդրեց հայտնել զոհերի անունները:

Լևոն էֆենդին նշեց, թե սպանված բազմաթիվ անձանցից ինքն առանձնացրել է երեք հոգու, որոնցից մեկի անունը եղել է Ալթինօղլու Միքե, իսկ մյուսների անունները չգիտի:

Մեղադրյալ Քեմալ բեյն ըմբոստանալով պատասխանեց, թե իր դեմ ուղղված տեղեկությունները և Լևոն էֆենդու մեկնաբանություններն ամբողջությամբ զրպարտություն են և հավելեց. «Ո՛չ Գյուլլեր եմ գնացել, ո՛չ եղել եմ այնտեղ, ո՛չ այդ մարդկանց եմ ճանաչում, ո՛չ էլ մատ կտրելով՝ մատանի եմ վերցրել: Նման որևէ պաշտոնյա չկա, որ այդ աստիճան անբարո կողոպուտ իրականացնի՝ հասարակ զգացմունքով ներշնչված»:

Ապա ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկ բեյն ըմբոստանալով ասաց, թե ինքը միայն երկու անգամ է մասնակցել տեղահանության գործողություններին. առաջինը եղել է Սվասում, երկրորդը՝ Կայսերի-Հալեպ ճանապարհի վրա, իսկ մեկ այլ անգամ լիազորված է եղել ճնշելու հայ ավազակներին:

Նախագահ – Երբ Դուք այնտեղի հրամանատարն էիք, այդ երկու քարավանից բացի՝ այլ քարավան չի՞ ուղարկվել:

Թևֆիկ բեյ – Գուցե և ուղարկվել է իմ իշխանության կողմից:

Նախագահը շեշտելով, թե քանի որ հրամանատարը եղել է Թևֆիկ բեյը, պետք է որ տեղյակ լիներ բոլոր փաստաթղթերի մասին, հարցրեց տեղահանությանը վերաբերող անդորրագրերի մասին: Թևֆիկ բեյը պատասխանեց, թե անդորրագրերն ուղարկվել են գերագույն իշխանություններին: Նախագահը տեղեկություններ պահանջեց դրանց մասին, Թևֆիկը նախագահից խնդրեց չորս ժամ ժամանակ, որպեսզի տեղեկանա իշխանություններից: Երբ ասաց, որ տեղյակ չէ, թե իր բացակայության ժամանակ ով է իրեն փոխարինել, ստացավ հետևյալ պատասխանը. «Պետք է որ իմանաք, թե ով է Ձեզ փոխարինել»:

Թևֆիկը հայտնեց, որ հիմնականում որպես փոխարինող է թողել գումարտակի քարտուղարին:

Այնուհետև դատախազը, խոսքի իրավունք ստանալով, խնդրեց հարցնել, թե եթե այդ տեղահանությունը կատարվել է կառավարությունից ստացված հրամանների և օրենքի հիման վրա, ապա մութասարրիֆի տեղակալ Քեմալ բեյը պետք է, ինչպես հարկն է, հասկանար դրանք ուսումնասիրելու անհրաժեշտությունը, և արդյոք Քեմալ բեյը զգացե՞լ է, թե՞ ոչ, թե ինչպիսի վնասներ կարող էին հասցվել [հայերին] տեղահանության ժամանակ: Քեմալը պատասխանեց, թե որևէ բան ուսումնասիրելու համար պետք է իրազեկվել դրա մասին, և հավաստիացրեց, թե նրանք [հայերը] անվտանգ կերպով տեղ են հասել:

Դատախազ – Այսինքն՝ լքված իրերը ոչ մի հարձակման չեն ենթարկվել:

Քեմալ բեյ – Ո՛չ:

Լևոն Ֆերիդ Էֆենդի – Կոտորածի թատերաբեմ դարձած Գյուլլեր գյուղում 6000 հոգու սպանությունը հայտնի է այն դիակների շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրի մարմնի անդամները կտրատված են որևէ կողմից: Դա հայտնաբերվել է բժշկական հանձնաժողովի կողմից կատարված բժշկական զննումների շնորհիվ:

Նախագահ – Նման մասշտաբի դեպք է պատահում, իսկ մութասարրիֆը տեղյակ չէ՞:

Քեմալ – Տեղյակ չեմ, փաշա՛, տեղյակ չեմ:

Քեմալի այս խոսքերն աղմկոտ ծաղրանք հարուցեցին ունկնդիրների շարքերում:

Դատապաշտպան Հալիդ բեյ (Ոտքի է կանգնում և ունկնդիրներին մատնացույց անելով՝ ասում) – Հարգելի՛ փաշա, խախտվում է դատարանի վեհությունը: Նորին մեծություն փադիշահի անունից արդարադատությունն իրականացնող դատարանի ուշադրությանն եմ հրավիրում:

Այս խոսքերի վրա ունկնդիրները լռեցին:

Քաղհայցվոր Հայկ էֆենդին, Քեմալ բեյի ժխտողական խոսքերից հետո խոսելու թույլտվություն ստանալով, հայտնեց, որ երբ իր մայրը Քեմալ բեյին ասել է, թե ինքը բողոքական է, և խնդրել տեղահանության չենթարկել իրեն, Քեմալը պատասխանել է, թե իր կարծիքով բոլորը մեկ են՝ բողոքական, թե կաթոլիկ. բոլորը հայ են և հեռանալու են:

Նախագահը հարցրեց դատախազի կարծիքը: Վերջինս ասաց հետևյալը.

– Նրանց ցուցմունքներում հակասություն չկա: Միաբերան մերժում են:

Նախագահի պատվերով ներկայացվեցին համապատասխանաբար Քեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ Ալի բեյերի նախկին ցուցմունքները:

Քեմալ բեյը, առարկություններ հայտնելով նախկինում արձանագրված իր ցուցմունքում տեղ գտած այն խոսքերի առնչությամբ, որոնք վերաբերում էին Միություն և առաջադիմություն կուսակցությանը, նշեց, որ ինքը տեղյակ չէ, թե վերոհիշյալ կուսակցությունը ումից է բաղկացած եղել, և որ ինքը Յոզղատում չի եղել այն ժամանակ, երբ այդտեղ է այցելել վերոնշյալ կազմակերպության պատվիրակ Նեջաթի բեյը, որի ցուցմունքը հակասում է իր ցուցմունքին:

Թևֆիկ բեյի ցուցմունքների ընթերցումից հետո վերոհիշյալը նաև ասաց, թե ինքը տեղյակ չի եղել հին քարավանի տեղահանության մասին, որը կատարվել է իր պաշտոնավարության ժամանակ:

Դատարանի կազմը քննարկում արեց, որից հետո Քեմալ բեյին հիշեցրեց, որ ինքը նախկինում ասել էր, թե այրված փաստաթղթերը վերաբերել են տեղահանությանը: Քեմալը հայտնեց, որ այդ փաստաթղթերը գոյություն ունեն, և որ ինքը, թերևս, սխալմամբ է նման բան ասել:

Լևոն էֆենդին նշեց, թե ինքը տեղյակ է, որ այրված փաստաթղթերը վերաբերել են հայերի բնաջնջմանը և պարզաբանում-

ներ պահանջեց՝ այդ հրամանների բովանդակության և հրապարակման վայրի առնչությամբ: Քեմալը համառորեն կրկնեց իր վերոնշյալ ցուցմունքը ասելով, թե տեղահանության մասին հրամանները չեն այրվել:

Այնուհետև անդրադարձ եղավ Թևֆիկ բեյի ցուցմունքին, որը վերաբերում էր հողատարածքի հարցին: Թևֆիկը հայտնեց, որ այդ ագարակը հայերին չի պատկանել. այն եղել է էմիրության հողատարածքը, և որ դա կարող է հաստատվել Յոզղատի գրանցամատյաններով: Այդ տան մասին Թևֆիկ բեյի տված տեղեկություններից հետո վերջինս մի փաստաթուղթ ներկայացրեց դատարանին ասելով. «Ես իմ այդ տունը վարձակալության եմ տվել՝ ըստ այս փաստաթղթերի, շարժական գույքը գրանցված է այս մատյանում, որի համաձայն՝ շարժական գույքը հանձնել եմ Լքյալ գույքի հանձնաժողովին»:

Թևֆիկն այնուհետև, Ռեյհանների խնդրին անդրադառնալով, պնդեց, թե դա զրպարտություն է:

Դատախազն ասաց, թե հարցերի ժամանակ հիշատակված տեսուչ Նեղիմ բեյն Իզմիթից ուղարկված հեռագրում հայտնել է, թե ինքը չի կարող գալ Ստամբուլ, և իր ցուցմունքները տալու է Իզմիթի դատարաններին, մինչդեռ տվյալ անձնավորության ցուցմունքներն անչափ կարևոր են, և դատարանի նախագահին խնդրեց միջոցներ ձեռնարկել այդ ցուցմունքները Ներքին գործերի նախարարությունից ստանալու համար: Դատախազը հավելեց նաև, որ եթե մեղադրյալները վկաներ ունենան՝ ի պաշտպանություն իրենց, ապա նրանց պետք է ժամ առաջ ծանուցագրեր ուղարկել և ապահովել դատավարության ընթացքն արագացնելու մասին գերագույն խորհրդի կարգադրության իրականացումը:

Նախագահը հայտարարեց, որ որոշվել է դատը շարունակել հաջորդ օրը՝ ժամը 13:00-ին:

10-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նիստ առաջին

Ռազմական արտակարգ ատյանը երեկ իր հատուկ գրասենյակում նիստ գումարեց եվրոպական ժամով ժամը 13:00-ին: Քանի որ այս նիստում նախատեսվածէր վկաների հարցաքննությունը, [դատարանի] նախագահ Հայրեթ փաշայի ձեռքի տակ գտնվող գրության համաձայն՝ համապատասխանաբար դատարան կանչվեցին տեսուչ Նեդիմ բեյը, Յոզղատի նախկին պատգամավոր Շաքիր բեյը, Սարգիս էֆենդու դուստրը՝ Ալիսը, Յոզղատի նախկին մութասարրիֆ Ջեմալ բեյը, Ռիֆաթ էֆենդին և Օհաննես էֆենդու որդի Ստեփանը:

Ի վերջո՝ ցուցմունք տալու համար որպես վկա ամբիոն հրավիրվեց դատարանում ներկա գտնվող 17 տարեկան մի պատանի՝ Արթին անունով: Վերջինս հայտնեց, որ ճանաչում է վկաներին:

Արթին էֆենդին վկայեց նաև, որ զրկանքի ժամանակ Քուրբան բայրամ տոնի հինգշաբթի օրը ձերբակալվել է Յոզղատի ժանդարմերիայի զինվորների կողմից, հայերին ութ-ութ կապել են իրար և Յոզղատից դուրս տարել, խլել են հայերի մոտ գտնվող թանկարժեք իրերը, կանխիկ դրամը, կողոպտիչները կանանց հարբեցրել են Օսման փաշա դերվիշների մենաստանի մոտակայքում, Յոզղատի մութասարրիֆի տեղակալ, Բողազլըյանի կայմակամ Քեմալ բեյը 500 հեծյալ ավազակախմբով եկել է Գյուլլեր գյուղ, հայերին գերի են վերցրել գիշերվա ժամը 12-ից հետո, քանի որ նրանց ժամկետը լրացել էր, քահանային հիշեցրել են կրոնական արարողություն կատարելու անհրաժեշտության մասին, մահապատժի են ենթարկել նախ՝ քահանայի փոքրիկ երեխային, ապա՝ կնոջը և այնուհետև՝ քահանային, որից հետո Քեմալը, դուդուկ նվագելով, քաջալերել է մարդասպաններին՝ ասելով՝ «Դուք չգիտեք՝ ինչպես կոտորել»: Չեթեները (հրոսակախմբերը) Քեմալ բեյի այս խոսքերից հետո սկսել են ամենայն դաժանությամբ կո-

տորել ամեն պատահողի: Արթինը զգալով, որ մայրն էլ է սպանվելու, փախել-գնացել է Կայսերի:

Այս ցուցմունքները լսելուց հետո դատարանի նախագահը հրամայեց ընթերցել Հանցագործությունները հետաքննող լուծարված հանձնաժողովի կողմից նախկինում արձանագրված նույն վկայի ցուցմունքները: Վկան իր նախկին ցուցմունքում հայտնում էր, թե Գյուլլերի կոտորածի ժամանակ ինքն էլ էր ոտքից վիրավորվել: Այն դեպքում, երբ Հանցագործությունները հետաքննող հանձնաժողովին ներկայացրած ցուցմունքում ասել էր, թե ուշաթափվել էր՝ մեռածի պես, դատարանում տված վկայության ժամանակ նշում էր, թե կոտորածի ժամանակ փախուստի էր դիմել:

Դատախազ Սամի բեյ (դիմում է նախագահին) – Ես հակասություն եմ տեսնում այս ցուցմունքում: Մի անգամ ասած է եղել, թե ես՝ Արթինս, ավագանու որդու վրա կատարված հարձակումից անմիջապես հետո փախել եմ, իսկ հիմա ասում է, թե վիրավորվել է: Ինչպե՞ս կարող է այդպես լինել: Հետո, մեկ-երկու հոգու սպանությունը տեսնելով, անհետացել է, իբրև թե նորից եկել է Հատուկ կազմակերպության տեղը և իբրև թե այնտեղ զինվորների միջից գտել է կայմակամին ու զեկուցել վերջինիս, և իբրև թե կայմակամն էլ իրեն ճնշել է: Տասներկու տարեկան մեկն այդ ինչպե՞ս կարողացավ նման բանի խիզախել:

Վկան, դատախազի խոսքերին ի պատասխան, ասաց, թե դեպքերն ընթացել են հենց այնպես, ինչպես ինքն է պատմել. քանի որ այնտեղ դեպի Կեսարիա տանող ճանապարհն էր, ինքն էլ այդ ճանապարհով է գնացել:

Նախագահն այնուհետև մեղադրյալներին հարցրեց, թե վերջիններս ասելիք ունե՞ն, թե՞ ոչ: Քեմալ բեյը, ոտքի կանգնելով, ընդգծեց, որ պատանու ցուցմունքներում տեղ գտած հակասությունն ակնհայտ է, և որ քարավաններից մեկն ուղարկվել է Հալեպ, իսկ մյուսը՝ Սվաս, ինքը Քուրբան բայրամի ժամանակ գտնվել է Յոզղատում և Գյուլլեր չի գնացել ու հավելեց.

– Այդ ամենը զրպարտություն է, որը ամբողջությամբ հակասում է իրականությանը:

Ապա Քեմալ բեյը պահանջեց, որ եթե Արթին բեյն իբրև թե տեսել է իրեն կոտորածի վայր դարձած Գյուլլեր գյուղում, թող հայտնի, թե ինչ տեսք ու հագուստ է ինքն ունեցել այդ պահին:

Վկան նշեց, որ պահանջվող պարզաբանումները չի կարող տալ, քանի որ շատ ժամանակ անցած լինելու պատճառով այդ հանգամանքները չի հիշում:

Քեմալ բեյը, դիմելով նախագահին, ասաց.

– Այդ դեպքում ինչպե՞ս է ինձ ճանաչում:

Նախագահ – Ամեն պահի գլխում չի մնա: Նույնիսկ ես որոշ ժամանակ հետո չեմ կարողանա Ձեզ հիշել:

Արված հրավերից հետո եկավ Յոզղատի նախկին պատգամավոր Շաքիր բեյը և երդվեց՝ ըստ ընդունված կարգի:

Շաքիր բեյը ենթադրեց, թե իր արձակուրդի ընթացքում, երբ վերադարձել է Յոզղատ, պետք է որ այնտեղ գտնվեր տեղահանության ժամանակ: Տեղահանվածների մեկ ուրիշ քարավան ուղարկվել էր նախկին մութասարրիֆի կողմից: Շաքիր բեյը հայտնեց նաև, որ հայ տղամարդիկ առաջին անգամ աքսորվել են կոմիտեջիության հետ կապ ունենալու պատճառով, որոշ քարավաններ ուղարկվել են ընտանյոք հանդերձ: Նա նշեց նաև, թե ինքն անձամբ չի տեսել մութասարրիֆի սկսած տեղահանությունը, ինչպես նաև՝ Քեմալ բեյի՝ ավարտին հասցրած ողբերգություններից որևէ պատառիկ: Վերոհիշյալը հավելեց նաև, որ երբ վերադարձել է Ստամբուլ, ըստ իր լսածի տեղեկացած իրադարձությունների վրա է հրավիրել համապատասխան մարմինների ուշադրությունը, սակայն իր այդ նախաձեռնությունը, դժբախտաբար, ոչ մի արդյունքի չի հանգեցրել: Շաքիր բեյը կրկնելով, թե ոչ մեկին չի կարող որպես հանցագործ մեղադրել, առաջ քաշեց այն միտքը, թե մեղադրյալը [Քեմալը] ի պաշտոնե կկարողանար արգելք լինել այդ ողբերգությանը:

Նախագահ Հայրեթ փաշա – Դուք այն ժամանակ պատգամավոր էիք. կայմակամին չնախազգուշացրեցի՞ք՝ որպես պատգամավոր:

Վերոհիշյալն ի պատասխան ասաց, թե նախազգուշացրել է, բայց՝ ապարդյուն: Նախագահ Հայրեթ փաշան հարցրեց, թե այդ հանգամանքների մասին հեռագրով նահանգապետարան և նախարարություն հաղորդե՞լ է, թե՞ ոչ: Շաքիր բեյը պատասխանեց, որ դրան խոչընդոտ է եղել գրաքննությունը:

Նախագահի՝ «Ինչու՞ այդ խնդիրների մասին չխոսեցիք խորհրդարանում» հարցին ի պատասխան՝ Շաքիր բեյը նշեց, թե այս հարցը քննարկել է իր ընկերոջ՝ Քասըմ էֆենդու հետ, և քանի որ պատգամավորները պատասխանատու չեն որոշ օրենքների համար, ինքն այլևս չի զբաղվել այդ հարցով:

Երբ նախագահը պարզաբանումներ պահանջեց այդ կապակցությամբ, դատախազ Սամի բեյը, խոսելու իրավունք ստանալով, ասաց.

– Փաշա՛, վկայի պաշտոնն իրոք որ բարձր է: Վկայի գործողությունների համար իրեն քննադատելը տեղին չէ: Բնական է, որ որպես պատգամավոր՝ նա պատասխանատու չէ այս հարցում:

Ապա դատախազը խնդրեց նախագահին, որ վերջինս վկային հարցաքննի Ջեմալ բեյի պաշտոնազրկման և Քեմալ բեյի՝ այդ պաշտոնում նշանակման առնչությամբ: Շաքիր բեյը նշեց, որ բնակչությունը և երկիրը այդ մարդուց փրկելու համար իր գրասենյակում դիմել է նահանգապետին, իսկ Ջեմալ բեյը, ըստ խոսակցությունների, հեռացվել է թուլության պատճառով:

[Դատարանի] անդամներից Արթին էֆենդին նույնպես պահանջեց, որ Շաքիր բեյը հայտնի, թե որն էր Ջեմալ բեյին հասցեագրված թուլության բնույթը, պատմի Յոզղատի հարցերին պատասխանատու ներկայացուցչի մասնակցության մասին, նշի, թե ումից էր բաղկացած Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կազմը: Շաքիր բեյը պատասխանեց, թե տեղյակ չէ:

Այդ պահին քաղհայցվորի ներկայացուցիչ Լևոն Ֆերիդ Էֆենդին խնդրեց հարցնել, թե արդյոք Շաքիր բեյը տեղեկություններ ունի՞ Թալեաթ փաշայի՝ ոչ մահմեդական ընդհանուր բնակչության բնաջնջմանն ուղղված հրամանի մասին: Շաքիր բեյը պատասխանեց, թե բացարձակապես տեղյակ չի եղել նման հրամանի մասին:

Այնուհետև դատարան հրավիրվեց երրորդ վկան, որի անունազգանունն էր Մկրտիչ Սերքիսյան: Նա ևս հայտնեց, թե ճանաչում է միայն Քեմալ բեյին, ապա պատմեց այն ամենը, ինչ տեսել էր այդ դեպքի ժամանակ: Նրա ցուցմունքը շատ տպավորիչ էր: Ասաց, որ վերջին դեպքերին ականատես էր եղել անձամբ:

Դատախազի ուշադրությունը ևս գրավեց այն, որ վերոհիշյալ վկայի ցուցմունքը շատ կազմակերպված էր և շղթայական: Դատախազը, դիմելով նախագահին, ասաց.

– Նա մեր վկան է: Միգուցե կասեն, թե իր ցուցմունքները հորինված են: Ես չէի ասի, թե սուտ է խոսում, միայն թե կխնդրեի այդ դեպքի առնչությամբ կատարել հարցաքննություն:

Վկան ասաց.

– Հորինված չէ. ասում եմ այն, ինչին ականատես եմ եղել: Ըստ էության՝ ես միջնակարգ դպրոց եմ ավարտել:

Ապա դատապաշտպան Հալիդ բեյն ասաց, թե փաստաբանները, իրենց մասնագիտության անհրաժեշտությունից ելնելով, լեզվական հմտություններին տիրապետելու դեպքում անգամ չեն կարողացել այդչափ անթերի ցուցմունքներ տալ և հոդված հրապարակել, որում գրանցված են տեղի ունեցած դեպքերի անգամ օրն ու ժամը:

Թեև դատարանում գտնվող վկաների շարքում ներկա էին նաև կանայք, սակայն ժամանակի սղության պատճառով որոշվեց դատը շարունակել չորեքշաբթի օրը՝ ժամը 13:00-ին, իսկ Նեղիմ բեյին Իզմիթից դատարան կանչելու համար ծանուցագիր ուղարկել նրան: Նիստն ավարտվեց ժամը 16:00-ին:

12-ը փետրվարի, 1919, «Այենդար»

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատն սկսվեց ժամը 13:30-ին՝ Հայրեք փաշայի նախագահությամբ: Նախորդ արձանագրության ընթերցումից հետո, անցած նիստում ընդունված որոշման համաձայն, դատարանի ունկնդրությանն արժանացավ յոզղատցի օրիորդ Օժեն Ղազարոսը, որն ասելով, թե մեղադրյալներին ճանաչում է, հայտնեց.

– Ռամազանի տոնին զենքեր որոտացին: Դրանից երեք-չորս ամիս անց՝ մի առավոտ, ով որ իր խանութը բացելու համար դուրս էր գալիս, անմիջապես ձերբակալվում էր: Քեռիս ինքն էր հանձնվել: Մեկ ամիս հետո մունետիկը դիոլով դուրս եկավ փողոց և կանանց դիմելով՝ հայտարարեց. «Դուք էլ եք տղամարդկանց հետևից հերթով ուղարկվելու. ուրբաթ օրը տեղահանվելու եք», մինչդեռ այն օրը գաղթի մասին իրենք էին շտապ որոշում ընդունել, սայլ էին նստեցնում վերմակից ու անկողնուց բացի այլ բան չվերցրած մեր մարդկանց, մեր փեշերի տակ կար 70 լիրայի չափով գումար: Այդպես բերվեցինք Օսման փաշա դերվիշների մենաստան, այնտեղ էր գտնվում նաև յոզղատցի ոստիկան Նուման էֆենդին[27], և ահա այստեղ գտնվող Ֆեյյազ բեյն ու Նուման էֆենդին վերցրեցին մեզ մոտ գտնվող դրամները և հրամայեցին մեզ ուղարկել Ֆեներ, գիշերն ինձ և ևս մեկ-երկու աղջկա ասացին. «Ձեզ մուսուլման ենք դարձնելու. մնացե՛ք այստեղ», և պահեցին: Մյուսներին մոտ 50-60 սայլերով տարան: Այդ օրն այնտեղ էր նաև մեղադրյալ Քեմալ բեյը: Ձեռքին թուր՝ եկավ մեզ մոտ և իր մարդկանց հետևյալն ասաց. «Եթե դուք սրանց բոլորին էլ, ինչպես որ հարկն է, չսպանեք, ե՛ս ձեզ կսպանեմ: Մի՞թե մեր մայրերն այսօրվա համար չեն մեզ ծնել: Դեհ, ի՞նչ եք կանգնել, գնացե՛ք, կոտոր-

[27] Ոստիկանապետ, որի վրա էր դրվել Սորգուն գյուղի հայերին կոտորելու պարտականությունը:

ռեք: Վեց տարեկանից մինչև յոթանասուն տարեկան՝ բոլորի՛ն կոտորեք»:

Այնտեղ հենց իմ աչքի առաջ կոտորեցին բոլոր մարդկանց՝ ցորեն հնձելու պես, ինձ էլ մորս գրկից խլեցին՝ սպանելու համար, խփեցին գլխիս: Սպանվածների գրպանները դատարկեցին, երեկոյին մոտ մեզ ուղիղ տարան կայմակամություն: Այդ կայմակամ Քեմալ բեյն այնտեղ մեկ անգամ ևս ծեծեց ինձ և սեփական ձեռքերով խլեց զգեստիս տակ գտնվող մեկ լիրայի չափ գումարը, ապա ուղեկցորդին հրամայեց սպանել ինձ, սակայն ուղեկցորդներն ինձ փախցրեցին ու տարան Փուլ գյուղ[28], որտեղ Աղըգյուզել անվամբ մի ժանդարմ, ինձ իր հետ վերցնելով, տարավ Ինջիրլի գյուղ[29], որտեղ տասնապետ Ահմեդն ինձ 6 ամիս պահեց իր տանը, ապա ես փախա այն ախոռից, որտեղ ինձ փակել էին:

Այն հարցին, թե արդյոք Քեմալ բեյն անձամբ մարդ սպանե՞լ է, թե՞ ոչ, Օժենը պատասխանեց, թե չի տեսել Քեմալի՝ մարդ կոտորելը, բայց նկատել է, թե ինչպես է, թուրը ձեռքին այս ու այն կողմ գնալով, դրամ բաժանում:

Քեմալը հայտարարեց, թե իրեն ուղղված մեղադրանքները սուտ են: Օժենը հավելեց նաև, որ Թևֆիկ էֆենդուն առնչվող որևէ բան չի տեսել, սակայն ականատես է եղել, որ Քեմալն այդ հրամանը տվել է հենց կառավարության շենքի առաջ:

Դատախազի այն հարցմանը, թե Օժենն ինչպես է փրկվել կոտորածից, վերջինս պատասխանեց, թե իսլամ է ընդունել և այդպիսով ազատվել մահից:

Նախագահը հարցրեց, թե ո՞վ է եղել այդ ավազակախմբի պետը: Օժենը հայտնեց, որ նրանց մեջ եղել են Թոփալ Շյուքրյուն, Մահմուդ, Բոզքեփելի, Մեհմեդ ու Համդի էֆենդիները, իսկ նրանց գլխավորել է Ֆեյյազ բեյը:

---

[28] Փուլ գյուղը ներկայում գտնվում է Էլազիգ նահանգի Աղըն գավառում:

[29] Ինջիրլի գյուղը ներկայում գտնվում է Բուրսա նահանգի Յենիշեհիր գավառում:

Դատապաշտպաններից մեկը քննարկման առարկա դարձրեց այն հարցը, ըստ որի՝ օրիորդ Օժենը եղել է տասնութ տարեկան, և քանի որ տվյալ ավազակախումբը բացահայտ չի գործել, ապա անհրաժեշտ է այդ խնդիրը հաստատել: Խնդիրը կարևորվում է վկայության տեսանկյունից: Դատախազը նույնպես նմանատիպ կարծիք արտահայտեց: Այդ հանգամանքը քննարկվեց. որոշվեց համապատասխան վայրից պարզել, թե աղջիկը երբ է ծնվել, և ստանալ բժշկի զննումը:

Այնուհետև վկաներից ունկնդրության արժանացավ Ազնիվը[30]: Նա ասաց, թե ուրբաթ օրը՝ առավոտյան, բոլոր հայերը՝ ձեռքերը կապած, հանվել են տներից, այն օրը, երբ ինքը գնացել է իր ձերբակալված ազգականներին տեսնելու, Ֆեյյազ բեյն այնտեղ է եղել, Ֆեյյազն իր մատից խլել է իր մատանին: Իր գլխին սպառնալիքներ են տեղացել, որպեսզի հայտնի, թե որտեղ է թաքնվել իր հայրը, որի պատճառով էլ վախից նրանց ասել է հոր թաքստոցի մասին: Հորը ծեծելով տարել են: Մոտ 860 տուն ոչ մահմեդական բնակչություն է բռնագաղթեցվել, ինքն էլ է եղել նրանց մեջ, մի մասն ուղարկվել է Թաշփընար[31], նրանք այստեղ կոտորվել են, իսկ ներկա գտնվող Քեմալ բեյին կոչել են «մսագործ կայմակամ»:

Դատախազը հարցեր ուղղեց վկային՝ որոշ կետերի առնչությամբ, որոնց ի պատասխան՝ Ազնիվը հայտնեց, թե գեղեցիկներին և երիտասարդներին առանձնացնում էին, իսկ տղամարդկանց բոլորին՝ կոտորում:

Ֆեյյազ բեյը նշեց, թե վերոհիշյալ մատանին ինքը գնել է 26 լիրայով երկուս ու կես տարի հետո՝ Լուծարման հանձնաժողովից:

Այնուհետև հարցաքննվեց զինվորական բժիշկ Հայկ էֆենդին: Վերոհիշյալն ասելով, թե ճանաչում է բոլոր երեք մեղադրյալներին

---

[30] Ազնիվ Իբրանոսյանը ցեղասպանությունից վերապրած վկա էր:

[31] Գյուղաքաղաք, որը ներկայում գտնվում է Աքսարայ նահանգի հարավային հատվածում:

էլ, հայտնեց, որ Քեմալը սպանել է տվել 93 հոգու: Վկան ահագին պարզաբանումներ արեց Քեմալ բեյի ավազակախմբի կազմավորման ու տեղահանության գործողությունների վերաբերյալ:

Վկաներից չէին ներկայացել Հալիլ Ռեջայի բեյը, Մարտիրոսը, Վերոնիկան, Ռըֆաթը, Ստեփանը, Թերզին և Արիսը:

Յոզղատում գտնվող վկաների առնչությամբ, քաղհայցվոր Լևոն Ռեմզիի և դատապաշտպան Սադեդդին բեյի տված ցուցմունքների հիման վրա, որոշվեց վկաների մի մասին ծանուցագիր ուղարկել և նրանց ծախսերը հոգալ մեղադրյալների գրպանից, իսկ դատը հետաձգել մինչև փետրվարի 15-ը:

13-ը փետրվարի, 1919 թ., «Ալեմդար»

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայերի տեղահանության և կոտորածների կապակցությամբ Ռազմական արտակարգ ատյանում ընթացող Քեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեյերի դատաքննությունները շարունակվեցին երեկ՝ ժամը 13:00-ին, ինչպես որ նախապես որոշվել էր:

Իրենց համար նախատեսված տեղերում էին գտնվում դատարանի կազմը, դատախազը, դատապաշտպանները, քաղհայցվորների ներկայացուցիչներ Լևոն Ռեմզի և Հայկ էֆենդիները: Նիստի բացումից հետո, երբ պարզվեց, որ վկաներից Ալիսը չի եկել, ինչպես պահանջում էր օրենքը՝ ստուգվեց հաջորդ վկայի՝ Ստեփանի որդի Օհաննեսի ինքնությունը[32], որից հետո վկան երդվեց և հարցաքննվեց կոտորածի առնչությամբ:

Օհաննեսը մանրամասն պատմեց իր իմացածն ու տեսածը[33]: Նա անվճռական պատասխաններ տվեց մեղադրյալների և դատախազի հարցերին: Ի վերջո՝ Սադդեդդին Ֆերիդ բեյն սկսեց նախագահի միջոցով հարցեր ուղղել վկային՝ որոշ հանգամանքներ պարզելու նպատակով: Վկան կակազեց: Սադդեդդին բեյը պնդեց, որ պատասխանի: Դատախազը պահանջեց, թե քանի որ վկայի նախկին գրավոր ցուցմունքի և դատարանում արած հայտարարության միջև ընդգծված հակասություն է նկատվում, ապա թող վկան իր այդ ցուցմունքները համապատասխանեցնի իրար:

---

[32] Վկայի ճիշտ անունն իրականում Օհաննեսի որդի Ստեփան է: Թեև «Ալեմդար» օրաթերթը 1919 թ. փետրվարի 11-ին կայացած Յոզգատի դատավարության չորրորդ նիստի մասին հրապարակման մեջ ճիշտ է նշում սույն վկայի անունը, սակայն այս նիստում լրագրողը սխալ է հայտնում այն:

[33] Ըստ «Մեմլեքեթ» օրաթերթի 1919 թ. փետրվարի 16-ի համարի՝ Ստեփանը ցուցմունքներ էր տվել առ այն, որ նախ՝ Գյուլլեր, ապա՝ Էլեքչիլեր աքսորված հայերը կացիններով, քլունգներով և գերանդիներով սպանվել էին տեղի գյուղացիների կողմից: Վկան հայտնել էր, որ ջարդին ներկա էին եղել նաև ամբաստանյալները, և որ կոտորվել էր իրենց ողջ գյուղը:

Այնուհետև վկային սկսեց հարցեր տալ Թևֆիկ բեյի դատապաշտպան Համի բեյը: Վկան շփոթվեց, իրեն կորցրեց ու չկարողացավ պարզաբանումներ անել:

Դատախազն ասաց, թե թող վկան կշռադատելով պարզաբանի իր ցուցմունքը՝ գիտակցելով իր տված վկայության լրջությունը: Վկան դարձյալ հանդես եկավ անվճռական ցուցմունքներով[34]: Նրա վկայությունը բավարար համարվեց դատարանի կողմից, և Ստեփանը լքեց դահլիճը:

Այնուհետև վկաներից դատարան կանչվեցին Արշալույսի[35] որդին՝ Մարտիրոսը[36], և գնդապետ Հալիլ Ռեջայի բեյը[37]. պարզվեց, որ վերջիններս չեն եկել, որից հետո դատարան հրավիրվեց Վերոնիկա անվամբ մի կին, որը երդվելուց հետո հարցաքննվեց: Սակայն նրա ձայնը չէր լսվում. դատական կատարածուն պատվիրեց բարձր խոսել: Վկան հայտնեց, որ չգիտի, թե Քեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեյերը կոտորածին մասնակցել են, թե ոչ: Դատախազը նշեց, որ համապատասխանություն չկա նաև այս վկայի՝ նախկինում արձանագրված ցուցմունքի և այժմյան խոսքերի միջև: Քեմալը նույնպես հանդես եկավ վկային ուղղված որոշ հարցերով: Այդ կերպ լիովին բացահայտվեց վկայի ցուցմունքներում տեղ գտած հակասությունը, և այս վկան էլ հեռացավ: Ապա առանց դատարանի հրավերի ներս մտավ Բեատրիս անվամբ մի աղջիկ[38], որի անունը նշված չէր դատախազության կողմից հանձնված գրության մեջ: Մեկ ուրիշ աղջիկ էլ օգնություն և աջակցություն խնդրեց դրսից: Այդ պահին դատապաշտպանները առարկեցին,

---

[34] Դատարանում որպես վկա հանդես եկած անձինք ահաբեկումների էին ենթարկվում երիտթուրքերի կողմից: Ակնհայտ է, որ այս վկայի վրա էլ է ճնշում գործադրվել: Այդ պատճառով էլ նրա ցուցմունքների միջև որոշ հակասություններ կան:

[35] Թաշչյան Արշալույսը ցեղասպանությունից վերապրած էր:

[36] Մարտիրոս Թաշչյան:

[37] Մանասքերցի գնդապետ Հալիլ Ռեջային եղել էր Անկարայի հինգերորդ զորաբանակի հրամանատարը:

[38] Բեատրիս Վառվառյանը ցեղասպանության ականատեսներից էր:

թե խախտվում է օրենքը: Դատարանը, չնայած դատապաշտպանների օրինական առարկություններին, հարցաքննեց նաև այդ աղջկան: Քաղհայցվորներից Հայկը, ոտքի կանգնելով, ասաց, թե այդ վկաները դատարան են հրավիրվել՝ իր կողմից նախապես ներկայացված ցուցակում նշված անունների համաձայն, և քանի որ ինքը վերջերս հայտարարությամբ է հանդես եկել իր ժառանգների անունից, հիմա էլ իրավիճակի մասին կհաղորդի հենց իր անունից:

Դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ անհրաժեշտ համարելով քննարկել այդ խնդիրը: Երեք քառորդ ժամ տևած քննարկումից հետո բացվեց երկրորդ նիստը: Ընթերցվեց այն որոշումը, ըստ որի, զինվորական քրեական օրենքի համաձայն՝ մեղադրող կողմի բոլոր վկաների հարցաքննությունից հետո կհարցաքննվեն նաև պաշտպանող կողմի վկաները, իսկ առայժմ ծանուցագրեր կուղարկվեն Ստամբուլում գտնվող վկաներին:

Դատն ավարտվեց ժամը 16:30-ին[39]: Հայտարարվեց, որ այն կշարունակվի երեքշաբթի օրը՝ ժամը 13:00-ին:

16-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

---

[39] 1919 թ. փետրվարի 15-ին կայացած նիստում հայերի կոտորածների փաստը հաստատող վկայություններ է տվել նաև տիկին Աննիկը, որը նշել է, թե առաջին և երկրորդ քարավաններից առանձնացվել են տղամարդիկ, իսկ երրորդից՝ գեղեցիկ կանայք, իսկ մնացած հայերը՝ կոտորվել, տե՛ս Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 16 Şubat 1919.

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղահանության և կոտորածների խնդիրները դատաքննելու լիազորված ռազմական ատյանը, երեկ Արդարադատության նախարարությունում գտնվող քրեական դատարանի սրահում նիստ գումարելով, շարունակեց դատավարությունը: Դատն սկսվեց 13-ն անց 13-ին: Դատարանի կազմը չէր փոխվել, և դատախազ Սամի բեյը, դատապաշտպաններ Սաղեդդին Ֆերիդ, Հայրի, Հյուսնյու Սալահադդինն ու Համիդ բեյերը, ինչպես նաև՝ քաղհայցվոր պատանիներ Արթին Քյուրքչյանը և Հայկն ու լիազոր ներկայացուցիչ Լևոն Ռեմզի էֆենդին գտնվում էին իրենց հատկացված տեղերում: Որպես մեղադրող կողմի վկա դատարան ներկայացած Անկարայի հինգերորդ զորաբանակի հրամանատար, գնդապետ Հալիլ Ռեջայի բեյը երդվելուց հետո հանդես եկավ տեղեկություններով: Վկան հայտնեց, որ կայմակամ Շահաբ բեյից ստացված ծածկագիր-հեռագրից հետո Բողազլըյանում բնաջնջվել են 2-ից 3 հարյուր հայեր: Գնդապետ Հալիլ Ռեջայի բեյը տեղեկություններ տվեց տեղահանության և կոտորածների մասին: Դատախազ Սամի բեյը հարցեր ուղղեց վկային, իսկ դատապաշտպաններից Սաղեդդին բեյն առարկեց վկայի ասածներին: Վկան պատասխանեց նրանց, որից հետո նրա վկայությունները բավարար համարվեցին, և նա դուրս եկավ դատարանի դահլիճից: Այնուհետև վկաներից դատարան հրավիրվեց դերձակ Ալիսը. պարզվեց, որ չի եկել: Ապա դատարանի դահլիճ կանչվեց երկաթուղային ծառայող Հրիստաքի Փանդալիդի էֆենդին[40], որը երդվելուց հետո ցուցմունքներ ու տեղեկություններ տվեց[41]: Այս անձնավորությունը, իր

---

[40] Ըստ «Մեմլեքեթ» օրաթերթի՝ սույն վկայի անունն էր Հրիսթաքի Անդրեյադիս:

[41] Ազգությամբ հույն վկա Հրիսթաքին դատարանին հայտնել է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության պատվիրակ Նեջաթին բանավոր հրամաններ էր տվել հայերին բնաջնջելու վերաբերյալ: Հայերին զույգ-զույգ տարել էին Բաղլըջայի

ցուցմունքները սկսելով ժամը 13:15-ին, դրանք ավարտեց ժամը 15-ին քառորդ պակաս: Մեղադրյալներ Քեմալը, Թևֆիկը և Ֆեյյազը նրա դեմ հանդես եկան բավականին մանրամասն հայտարարությամբ: Վերջապես դատապաշտպաններից Հայրի բեյը նախագահին խնդրեց Հրիստաքի էֆենդուց հարցնել, թե երբևէ որևէ ռազմական ատյանի կողմից հրավիրված եղել է, թե ոչ, և եթե եղել է, ապա որ խնդրի առնչությամբ: Նախագահը տվեց դատապաշտպանի առաջարկած հարցը: Հրիստաքի էֆենդին տվեց ոչ հստակ պատասխան: Պարզվեց, որ ինքը իսլամին և կառավարությանն ուղղված վիրավորանքներով հանդես եկած լինելու պատճառով Քեմալ բեյի կողմից ուղարկվել է Կայսերիի ռազմական ատյան:

Այնուհետև վկաներից հարցաքննվեց Սիմոն էֆենդին[42], որի խոսքը բավականին հակիրճ եղավ: Վկան նշեց, որ ինքը միայն այդքան տեղեկություններ ունի: Լևոն Ռեմզի էֆենդու պնդումից հետո ցանկացավ խոսել դեպքերի մասին, բայց չկարողացավ:

Վկաներից եկել էին նաև Սարգիսը[43] և մեկ ուրիշ անձ ևս: Վկա Գեղամը, տեղահանության մասին խոսելով, առանձնապես չանդրադարձավ կոտորածներին[44]: Վերջինս մեղադրող կողմի և ան-

---

և Բեզլիհանի կողմերը, լցրել մի փարախ մեջ, որտեղից երեք-երեք կամ հինգ-հինգ հանելով՝ սպանել: Փախած-թաքնվածներին էլ բացահայտելու նպատակով ասել էին, թե իսլամ ընդունածները փրկվելու են, սակայն երբ փախածները դուրս էին եկել իրենց թաքստոցներից, նրանց էլ էին կոտորել, տե՛ս Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 19 Şubat 1919.

[42] Վկաներից խարբերդցի Սիմոն Թադեոսն իրավաբանություն էր ուսանել Ստամբուլում, որտեղից 29 տարեկան հասակում աքսորվել էր Յոզգատ: Նա ռազմական ատյանին վկայել է. «Յոզգատում տեղահանություն և կոտորած բառերն ընկալվել են որպես հոմանիշներ», տե՛ս Գրիկէր, Եոզգատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 265:

[43] Սարգիս Վառվառյան:

[44] Ըստ «Մեմլեքեթ» օրաթերթի՝ Գեղամը դատարանին հայտնել էր, որ հայերին բնաջնջել էին Յոզգատի ժանդարմները, տե՛ս Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 19 Şubat 1919.

դամներից Մուսթաֆա փաշայի հարցերին պատասխանելուց հետո հեռացավ:

Ապա ընթերցվեցին Յոզղատի մյուֆթի Աբդուլլահ էֆենդու այն ցուցմունքները, որոնք նա հայտնել էր դատարանին: Այդ ցուցմունքները Քեմալի դեմ էին ուղղված: Վերջինս բազմաթիվ կետերի առնչությամբ հայտնեց իր առարկությունը և համոզիչ կերպով ապացուցեց հակառակը:

Այնուհետև դատարանի կազմն ունկնդրեց մեղադրող կողմի այն հայտարարությունը, որը վերաբերում էր դատարանի հրավերին չարձագանքած վկաներին, որից հետո դատարանի կազմը հեռացավ քննարկումների: Կես ժամ տևած քննարկումներից հետո հաղորդվեց, որ հրավիրված վկաները պետք է ժամանեն Իզմիրից և այլ վայրերից ու արդեն ճամփա են ընկել, իսկ մյուս վկաներին դարձյալ ծանուցագիր, մի քանիսին էլ՝ հրավեր կուղարկվի: Դատարանի կազմը հայտնեց նաև, որ որոշվել է, որպես վկա, ծանուցագիր ուղարկել նաև կայմակամ Շահաբ բեյին: Հայտարարվեց, որ նիստն ավարտվեց, և կշարունակվի հինգշաբթի օրը՝ ժամը 13:00-ին:

19-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեղահանության և կոտորածներին վերաբերող խնդիրները դատաքննելու լիազորված ռազմական արտակարգ ատյանը երեկ՝ ցերեկվա ժամը 13 անց 24-ին, քրեական դատարանի դահլիճում շարունակեց Քեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեյերի դատը: Քանի որ վկաներից Ռըֆաթ էֆենդին և դերձակ Ալիսը, որոնց անցյալ նիստում որոշել էին կանչել ու հարցաքննել, չէին եկել, դատարան հրավիրվեց գնդապետ Շահաբ բեյը, որը հանդես եկավ տեղեկություններով: Շահաբ բեյը հայտնելով, որ Բողազլըյանի հայերի տեղահանության մասին ոչ մի պաշտոնական տեղեկություն չի ստացվել, ասաց նաև, թե Յոզղատի հետախուզությունը բարեխիղճ չի աշխատել, իսկ այն հեռագրերը, որոնց առնչությամբ ասվել էր, թե կորպուս էին հղվել, հավանաբար կարող էին, առանց խորանալու, նույնությամբ հաղորդված լինել. դրանք ստացվել էին կրտսեր հրամանատարից:

Դատախազ Սամի բեյը համառոտ կերպով ներկայացրեց առկա հեռագրերի բովանդակությունը:

Շահաբ բեյն ասաց. «Դա ես չեմ գրել: Նա գրել է այն, ինչ ես ստացել եմ իմ ենթակայից: Բացի այդ՝ այն օրերից մոտ չորս ու կես-հինգ տարի է անցել: Լավ չեմ կարողանում մտաբերել»:

Դատախազ Սամի բեյը, դարձյալ բազմաթիվ հարցեր ուղղելով, տեղեկություններ պահանջեց Շահաբ բեյից, սակայն վերջինս համառորեն կրկնեց իր նախկին խոսքերը և նշեց. «Ես չեմ կարող տալ այնպիսի տեղեկություններ, որոնք հիմնված են զգացմունքների ու խոսակցությունների վրա»:

Դատարանի կազմի անդամներից Նադիր և Մուսթաֆա փաշաները նույնպես որոշ հարցեր տվեցին, բայց Շահաբ բեյը հայտնեց, թե ինքն այլ տեղեկությունների չի տիրապետում, որից հետո դատախազ Սամի բեյն ասաց.

– Քանի որ Շահաբ բեյը Հետաքննիչ հանձնաժողովում ցուցմունքներ տալու ընթացքում ևս նույն կերպ համառել է, ոստիկանական վարչությունը առգրավել է նրա մոտ գտնվող ճանապարհորդական փաստաթղթերը և թույլ չի տվել վերադառնալ Իզմիր: Թեև անվիճելի փաստ է, որ Շահաբ բեյն արդարամիտ ու պատվավոր անձնավորություն է, սակայն վերոնշյալ հանգամանքը մի քիչ կասկածի տեղիք է տալիս:

Շահաբ բեյը պատասխանեց.

– Կառավարությունը կարող է անհրաժեշտ համարել թույլ չտալ ինձ ճանապարհորդել ու Ստամբուլից դուրս գալ, սակայն տարօրինակ է, որ մեղադրող կողմը որևէ կապ է տեսնում այդ հանգամանքի և իմ վկայության միջև:

Այնուհետև անդամներից Արթին Մոսթիջյան էֆենդին սկսեց հարցերի տարափ տեղալ և Շահաբ բեյից ստացած պատասխաններից հետո ասաց. «Կարծում եմ, որ եթե հեռագրերն ընթերցվեն, մի փոքր նեղվելու եք»:

Շահաբ բեյը նշեց. «Եթե իմանայի, որ Ձեր հարցերի տեղատարափի տակ եմ ընկնելու, հետս մի ծոցատետր կվերցնեի»:

Երբ դատարանի կազմը տեսավ, որ Շահաբ բեյը քիչ էր մնում՝ ուշաթափվեր կա՛մ մեղադրող կողմի արած վերջին հայտարարությունից, կա՛մ էլ Արթին էֆենդու՝ այդ ոգով ասած խոսքերից հուզվելով, վկային անմիջապես աթոռին նստեցրին: Նա մի քանի րոպե նստած հանգստացավ, ապա թույլ տվեցին, որ վկան դուրս գա դատական դահլիճից՝ մի քիչ մաքուր օդ շնչելու:

Ապա դատական դահլիճ բերվեց վկա Ժամկոչի որդի Արթինը, որին որոշել էին կալանաբերմամբ կանչել: Դատարանի կազմի անդամները նրա անձը տեսնելուն պես ասացին, թե նա ներկայացել է նաև նախկին նիստերից մեկին և հանդես է եկել վկայությամբ: Քաղհայցվորի լիազոր Լևոն Ռեմզի էֆենդին խնդրեց նորից հարցաքննել այդ վկային, սակայն նրա խնդրանքը մերժվեց:

Վկաներից Փանդելիդիսը չէր ներկայացել: Քանի որ պարզվեց, թե Արշալույսը գնացել է Յոզղատ, դատախազության պա-

հանջով ընթերցվեց այդ կապակցությամբ վերոհիշյալի՝ Հետաքննիչ հանձնաժողովի կողմից արձանագրված ցուցմունքը, որն ուղղված էր Քեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեյերի դեմ:

Դատապաշտպան Հայրի բեյը, անմիջապես ոտքի կանգնելով, ասաց. «Հետաքննիչ հանձնաժողովը նման իրավասություն չունի. այդ մարդը կա՛մ պետք է անձամբ ներկայանա, կա՛մ էլ ենթարկվի դատական հարցաքննության»:

21-ը փետրվարի, 1919, «Ալեմդար»

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎԵՑ

Երեկ՝ ժամը մեկն անց հիսունհինգից սկսած, շարունակվեց Յոզղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմը բաղկացած էր ներքոհիշյալ անձանցից. նախագահ՝ Մուսթաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ Զեքի Մուսթաֆա փաշա, Ալի Նազըմ փաշա և գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ: Դատախազի պաշտոնում հանդես էին գալիս Հարալամբո էֆենդին և նրա տեղակալը: Դատարանի կազմի՝ դատական դահլիճ մտնելուց հետո նախագահի հրամանով Թևֆիկ և Ֆեյյազ բեյերը դահլիճից դուրս եկան: Ներս բերվեց Քեմալ բեյը, և հարցաքննությունն սկսվեց.

Նախագահ – Ի՞նչ ձևով եք տեղահանության վերաբերյալ հրաման ստացել՝ բանավո՞ր, թե՞ գրավոր, անուղղակի՞ կերպով, թե՞ ուղղակի:

Քեմալ բեյ – Տեղահանության ընթացքում եղել եմ Բողազլյանի կայմակամը: Հայերին տեղահանելու հրաման եմ ստացել, որն էլ հաղորդել եմ ժանդարմերիայի հրամանատարին: Կազայի (գավառի) կենտրոնում տեղահանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով, իսկ կազայից դուրս բնակվողները ուղարկվում էին նահիեի կառավարչի կողմից:

Նախագահ – Ու՞մ էր վերաբերում տեղահանությունը: Արդյո՞ք բացառություններ արվում էին:

Քեմալ բեյ – Տեղահանությունը վերաբերում էր հայերին: Բացառություններ կատարելու վերաբերյալ շատ հրամաններ եմ ստացել: Դրանց տարաբնույթ լինելու պատճառով չեմ կարողանում մտաբերել: Բացառիկ դեպք էին համարվում բողոքականները և զինվորական տարիքում գտնվողները: Տեղահանության հրամանը հասել է հուլիսի 21-ին, սակայն չեմ հիշում, թե երբվանից է սկսել գործադրվել: Օգոստոսի 6-ին Յոզղատ էի գնացել: Կարծեմ՝ վերադարձիս արդեն ավարտվել էր:

Նախագահ – Քանի՞ ընտանիքից և առավելագույնը՝ քանի՞ բնակչից էին բաղկացած լինում տեղահանվածների քարավանները:

Քեմալ բեյ – Չգիտեմ, թե քարավանները քանի հոգուց են բաղկացած եղել: Ցուցակները կազմվում էին ժանդարմի կողմից:

Նախագահ – Պետք է որ իմանաք, թե քանի ընտանիք է ուղարկվել:

Քեմալ բեյ – Ժանդարմն էր կազմում: Ձեր խոնարհ ծառան տեղյակ չէ:

Նախագահ – Ո՞ր ճանապարհներով էիք ուղարկում: Այսինքն՝ ոստիկանին հրահանգում էիք՝ «Սրանց տվյալ ճանապարհով տվյալ վայրը հասցրեք»:

Քեմալ բեյ – Այդ հարցը կարգավորվում էր կառավարության կողմից, իսկ ժանդարմի կողմից՝ հսկվում:

Նախագահ – Ձեզ էր վստահված ամբողջ բնակչության հողատարածքը, տունը և պատիվը՝ առանց սեռի և հավատքի խտրականության: Տեղահանության ընթացքում այդ ուղղությամբ ի՞նչ նախազգուշական միջոցներ ձեռնարկեցիք:

Քեմալ բեյ – Նրանց, ամենայն հավանականությամբ, անվտանգ կերպով են տեղափոխել, էֆենդի՛:

Նախագահ – Տեղահանության գործին յոզղատցի որոշ անձանց մասնակից դարձրե՞լ եք: Եվ եթե դարձրել եք՝ առանձին-առանձի՞ն, թե՞ միասին:

Քեմալ բեյ – Այո՛, փաշա՛, մի անգամ 3 հոգու ընդգրկել եմ: Պատճառն էլ բռնություններից զերծ պահելն էր:

Դատախազ – Աբդուլլահ անունը կրող մեկին ճանաչու՞մ եք:

Քեմալ բեյ – Ձերբակալվածներից է, չէ՞, ճանաչում եմ:

Դատախազ – Քարավանը հսկողներից է եղել:

Քեմալ բեյ – Այո՛:

Նախագահ – Առանձին-առանձի՞ն, թե՞ միասին են հսկել:

Քեմալ բեյ – Միասին են ուղարկվել, էֆենդի՛:

Դատախազ – Նրան ինչու՞ են այդ գործի մեջ ներգրավել, եթե կառավարությունը կարգուկանոնն ապահովել էր:

Քեմալ բեյ – Անտեղի երևույթներից խուսափելու համար:

Դատախազ – Պետական պաշտոնյաների առկայության պայմաններում նրանց ևս ուղարկելը հատուկ նպատա՞կ էր հետապնդում:

Քեմալ բեյ – Ոչ մի հատուկ նպատակ չկա:

Նախագահ – Դե լավ, ասել էիք, թե [քարավանների] պաշտպանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով:

Քեմալ բեյ – Բավականաչափ ժամանակ է անցել. չեմ կարողանում մտաբերել, թե ի՞նչ անհրաժեշտության հիման վրա էր:

Դատախազ – Երբ Քեմալ բեյը Յոզղատում էր գտնվում, 331թ. (1915) օգոստոսի 16-ի ամսաթվով մի նամակ է կնքում և ծրարի վրա նշում. «Հույժ կարևոր է: Տվյալ նամակը պետք է արձանագրվի, ժամն ու րոպեն նշվի Բաթթալ գյուղում՝ Բաքըրջը Մահմուդի և նրա ընկերների կողմից, ապա՝ պետք է բացվի և համատեղ ընթերցվի: Անհրաժեշտ է գործել՝ [նամակում] նշված հայրենասիրական մղումներին համապատասխան»: Նամակում հրահանգվում է հայերի գույքը պահել Օսման փաշա դերվիշների մենաստանում և դուռը կնքել:

Քեմալ բեյ – Ձեր խոնարհ ծառայի գրությունը չէ: Բնականաբար, չէի էլ գրի նման բան:

Նախագահ – Իսկ վրայի կնի՞քը:

Քեմալ բեյ – Իմը չէ: Չկարողացա նույնիսկ հասկանալ, թե որ գրասենյակի կնիքն է:

Նախագահ – Այս կապակցությամբ ի պաշտպանություն Ձեզ ի՞նչ կարող եք ասել:

Քեմալ բեյ – Իմ գրած փաստաթղթում, ընդհակառակը, դրանք պահպանելու հրահանգ էի տվել:

Նախագահ – Ժանդարմերիայի սերժանտ Շյուքրուին Ձեր ստորագրությամբ մի գրություն է ուղարկվել, որում գրել եք, որ նե-

ցուկ լինեն պատասխանատու քարտուղարներին: Նման իրավասություն ունե՞ք:

Քեմալ բեյ – Չեմ կարողանում հիշել, թե ի՞նչ անհրաժեշտության հիման վրա է եղել:

Նախագահ – Այդ մարդիկ որևէ առնչություն ունեցե՞լ են Լքված գույքի հանձնաժողովի հետ:

Քեմալ բեյ – Հավանաբար:

Նախագահ- Ծանոթացե՞լ եք այդ անձանց բնութագրին:

Քեմալ բեյ – Ո՛չ:

Նախագահ – Ինչպե՞ս եք պաշտոնում նշանակել այն անձանց, որոնց բնութագրերին ծանոթ չեք եղել:

Քեմալ բեյ – Հավանաբար նրանց համար երաշխավորել էին:

Նախագահ – Հետաքննիչ հանձնաժողովին Ձեր տված ցուցմունքների համաձայն՝ տեղահանության վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման է եղել, իսկ մնացա՞ծը որտեղ է:

Քեմալ բեյ – Բոլորն էլ պահպանվել են, էֆենդի՛: Ճիշտն ասած՝ այդ օրը շատ հոգնած էի, [ճանապարհին] ութսուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քունս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

Դատախազ – Ես, Հետաքննիչ հանձնաժողովի անդամ լինելով, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը. 3-4 ժամ մտածել է, հետո՝ գրել:

Քեմալ բեյ – Դուք այնտեղ չէիք, էֆենդի՛: Իմիջիայլոց, կառավարությունը տեղահանության հրամանը նույն կերպ էր հայտնել Օսմանյան կայսրության բոլոր քասաբաներին (գյուղաքաղաքներին) և վիլայեթներին (նահանգներին): Եթե նման հրահանգ ստացված լիներ, մյուս շրջաններում ևս կարելի էր այդ ուղղությամբ հետաքննություն կատարել, սակայն նման հրահանգ ո՛չ եղել է, ո՛չ էլ ստացել եմ:

Նախագահ – Յոզղատի մյուֆթին Ձեզ խրատել է, իսկ դուք նրան ասել եք. «Դու կառավարությունից բարեգու՞թ ես»:

Քեմալ բեյ – Դա եղել է ոչ թե Յոզղատի, այլ՝ Բողազլըյանի մյուֆթին: Մենք միասին էինք զինկոմիսարիատում: Նման բան չի եղել, այնտեղ, մեզնից բացի, այլ անձինք էլ էին ներկա:

Նախագահ – Ի՞նչ եք արել տեղահանության համար:

Քեմալ բեյ – Ոչինչ էլ չեմ արել:

Նախագահ (դատական կատարածուին) – Քեմալ բեյին տարե՛ք, թող գա Թևֆիկ բեյը:

Նախագահ (Թևֆիկ բեյին) – Տեղահանությանը ենթակա անձանց տարագրելու հանգամանքների վերաբերյալ որևէ հրաման ստացե՞լ ես և եթե ստացել ես, ապա այն բանավո՞ր էեղել, թե՞ գրավոր:

Թևֆիկ բեյ – Տեղահանության մասին հրամանը տվել է կառավարությունը, ինձ գրանցամատյաններ են տվել: Ուղարկել եմ երկու քարավան. մեկը՝ Սվաս, մյուսը՝ Հալեպ: Հրամանները ստացել եմ գրավոր:

Նախագահ – Տեղահանվածներին առանձի՞ն քարավաններով էիք ուղարկում, թե՞ միասին: Անվտանգության համար քարավաններին քանի՞ ժանդարմ էիք կցում: Դուք նրանց հե՞տ եք եղել: Ի՞նչ եք ձեռնարկել սննդի ուղղությամբ: Ի՞նչ քանակությամբ իրեր էիք թույլ տալիս, որ իրենց հետ վերցնեն:

Թևֆիկ բեյ – Ուղարկել եմ քարավան առ քարավան, նրանց անվտանգության համար ժանդարմ եմ նշանակել՝ ըստ տարագրվածների քանակի: Ուղեկցել եմ Սվաս գնացող քարավանը: Կենտրոնից 4 ժամ հեռանալուց հետո մութասարրիֆ Ջեմալ բեյից վերադարձի և քարավանը Ջևադ բեյին հանձնելու հրահանգ եմ ստացել, որի հիման վրա կես ճանապարհից վերադարձել եմ: Ապահովել եմ նրանց հանգիստը՝ բոլոր առումներով:

Նախագահ – Քեմալ բեյն ասում է, թե տեղահանության ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրով զբաղվում էր ժանդարմերիայի հրամանատարը: Ի՞նչ կասեք:

Թևֆիկ բեյ – Ինչպե՞ս: Եթե կառավարությունը միջոցներ չէր տրամադրում, ես ի՞նչ կարող էի ձեռնարկել, իմ գրպանի՞ց միջոցներ հատկացնեի: Դրա մասին պետք է կառավարությունը հոգար:

Նախագահ – Դուք պետական պաշտոնյա չե՞ք:

Թևֆիկ բեյ – Իհարկե պետական պաշտոնյա եմ:

Նախագահ – Տեղյակ չէի՞ք, որ բնակչության շարքերում չունևորներ կային:

Թևֆիկ բեյ – Ի՞նչ իմանամ, էֆենդի՛: Մարդկային պարտքս կատարելով՝ ստիպված էի նրանց կերակրել, այդպես էլ վարվեցի:

Նախագահ – Եթե մարդկային պարտքը կատարելու փոխարեն Ձեր պաշտոնական պարտականությունները կատարեիք, ավելի լավ չէ՞ր լինի:

Թևֆիկ բեյ – Մտքովս չանցավ դրամ պահանջել:

Նախագահ –Ճանապարհին քարավանը լեյտենանտին հանձնելիս վկայագիր վերցրե՞լ եք:

Թևֆիկ բեյ – **Չեմ մտաբերում, թերևս վերցրել եմ:**

Նախագահ – **Ձեր կողմից մինչև Թաշփընար ուղարկված քարավանում որևէ դեպք արձանագրվե՞լ է:**

Թևֆիկ բեյ – Ո՛չ, էֆենդի՛, չի արձանագրվել:

Այս ցուցմունքները տալուց հետո Թևֆիկ բեյը դուրս տարվեց. բերվեց Ֆեյյազ բեյը:

Նախագահ (Ֆեյյազ բեյին) – Յոզղատում, վաքըֆների վարիչից բացի, այլ պաշտոն ունեցե՞լ ես:

Ֆեյյազ բեյ – Ո՛չ:

Նախագահ – Ձեզ նշանակե՞լ են տեղահանության առնչվող գործերով զբաղվելու:

Ֆեյյազ բեյ – Ո՛չ:

Նախագահ – Ասում են, թե նախագահել ես Յոզղատին վերաբերող գործերը. ի՞նչ բնույթի էին դրանք:

Ֆեյյազ բեյ – Ձեր խոնարհ ծառան այդ կազմակերպության հետ առնչություն չի ունեցել:

Նախագահ – Կարո՞ղ ես ներկայացնել դա հաստատող վկաներ:

Ֆեյյազ բեյ – Այո՛, էֆենդի՛: (Մի քանի անձանց անուններ է տալիս):

Նախագահ – Ասում են նաև, թե այն մատանին, որն այժմ կրում ես, ձեռք ես բերել տեղահանության ժամանակ:

Ֆեյյազ բեյ – Այն գնել եմ աճուրդում 2600 ղուրուշով: Դա հաստատող վկաներ էլ կարող եմ բերել:

Նախագահ – Ընդգրկված եղե՞լ ես Լքված գույքի հանձնաժողովի կազմում:

Ֆեյյազ բեյ – Այո՛, այնտեղ վճարովի աշխատել եմ:

Այդ պահին բերվեցին նաև Թևֆիկ և Քեմալ բեյերը:

Նախագահ (Քեմալ բեյին) – Տեղահանության խնդիրը վերաբերում էր ժանդարմերիայի հրամանատարությանը: Թևֆիկ բեյը հայտնեց, թե վկայագիր է վերցրել:

Քեմալ բեյ – Ո՛չ, ես տալիս էի ստացված հրամանը, իսկ նրանք՝ կատարում: (Ընթերցվեցին հարցաքննության ընթացքում Քեմալ բեյին տրված այն հարցերը, որոնց նա պատասխանել էր առանձին):

Դատախազը, երկու կողմերի ձևավորմանը վերաբերող քննարկումները ներկայացնելով, հայտնեց, որ զինվորական-քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ քաղհայցվորները չեն կարող դատարանում ներկա գտնվել: Քաղհայցվորը, խնդիրը երկար քննարկելուց հետո, փորձեց հիմնավորել բոլոր դեպքերում իր ներկայության անհրաժեշտությունը և կոչ արեց չխախտել նախկին ռազմական ատյանի որոշումը:

Այնժամ դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ խնդիրը քննարկելու նպատակով: 1 ժամ, 10 րոպե տևողությամբ քննարկումից հետո դատարանի կազմը վերադարձավ դահլիճ: Ընդունված վճռի կարճ բովանդակությունը կայանում էր հետևյալում. ձայների մեծամասնությամբ կայացված որոշման համաձայն՝ հասարակական հայցվորը չպետք է ներկա գտնվի դատաքննությանը:

Քաղհայցվոր Լևոն Ռեմզի էֆենդին լքեց դահլիճը:

Այնուհետև կրկին դատարան կանչվեց Օժենի անունը կրող վկան, որին նախագահը խնդրեց կրկնել նախկին ռազմական

ատյանին տված իր ցուցմունքները: Օժենին իր վկայությունները կրկնելիս հայտարարեց. «Այս անգամ ավելի մանրամասն եմ ներկայացնելու, քանի որ նախկին դատարանում արդարադատություն չէի տեսնում»: Վկան ցուցմունքներ տվեց առ այն, որ առավոտյան, երբ ոստիկանը վկայություն տալու համար իրեն դատարանի ծանուցագիր էր բերել, չափազանց գեղեցիկ է համարել իր խոսվածքը և հանդես է եկել իրեն մի մահմեդականի տալու առաջարկով:

Դատախազը նրան հարցրեց վերոհիշյալ ոստիկանի համարը: Պարզվեց, որ 2021 համարովն է եղել:

Ֆեյյազ բեյը, Օժենիի ցուցմունքը բացարձակ զրպարտություն համարելով, հանդես եկավ նրա նախկին ցուցմունքն ընթերցելու պահանջով: Այն ընթերցվեց:

Նախագահ (Թևֆիկ բեյին) – Տեղահանվածների ձեռքերը կապու՞մ էիք:

Թևֆիկ բեյ – Այո՛, Ջեմալ բեյի պաշտոնավարման ժամանակ ապահովության համար մինչև քասաբայից (գյուղաքաղաքից) դուրս գալը կապած էինք տանում:

Դատախազ – Հարկադրված եմ հերքել Ջեմալ բեյի պես պատվարժան մի պետական պաշտոնյայի վերագրվող հանցանքը:

Այնուհետև ընթերցվեց Մարի անունը կրող մի կնոջ՝ Կայսերիի դատախազության կողմից կատարված հետաքննության ընթացքում տված ցուցմունքը, որն ուղղված էր մեղադրյալների դեմ: Նիստի ավարտին Ջեմալ, Թևֆիկ և Ֆեյյազ բեյերը հերքեցին վկայությունը՝ նամակի բովանդակությունը ամբողջությամբ զրպարտություն համարելով:

Քանի որ արդեն ժամը 17-ն անց էր 30 րոպե, որոշվեց դատը շարունակել առաջիկա չորեքշաբթի օրը՝ ժամը 10-ին: Դատարանի կազմը լքեց դահլիճը:

25-ը մարտի, 1919, «Ալեմդար»

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՅՈԶԳԱՏ

Երեկ ժամը 13:50-ին ռազմական արտակարգ ատյանում սկսվեց Յոզգատի տեղահանության և կոտորածներին վերաբերող դատական նիստը: Դատարանի կազմում ընդգրկված էին հայտնի անձինք: Մեղադրյալներ Թևֆիկ և Ֆեյյազ բեյերը կրկին դուրս բերվեցին, և դահլիճում մնաց Քեմալ բեյը: Սկսվեց հետևյալ հարցաքննությունը.

Նախագահ – Բոզազլըյանի կազայի (գավառի) տեղահանությունը Դու՞ք եք կատարել, թե՞ կատարել եք տվել:

Քեմալ բեյ – Տեղահանությունը ես չեմ կատարել. այն ղեկավարվում էր ժանդարմերիայի հրամանատարության կողմից:

Նախագահ – Ո՞վ էր ժանդարմերիայի հրամանատարը:

Քեմալ բեյ – Լեյտենանտ Հուլուսի բեյը:

Նախագահ – Մինչդեռ Դուք ամբողջ կազայի ղեկավարն էիք: Ինչու՞ է նահիեի տեղահանության գործը հանձնարարվել նահիեի ղեկավարությանը:

Քեմալ բեյ – Ես հրամանը ստանում էի կենտրոնից և նույնությամբ հաղորդում ենթականերիս:

Նախագահ – Նահիեի տեղահանության համար ուղարկել էիք անգրագետ մի սերժանտի: Ինչպե՞ս կարող էր այդքան կարևոր առաջադրանքը վստահվել նման մեկին:

Քեմալ բեյ – Հավանաբար նահիեի կառավարչի հետ միասին են կատարել, էֆենդի՛:

Նախագահ – Ի՞նչ միջոցներ եք ձեռնարկել տեղահանվածներին խաղաղ կերպով տեղափոխելու ուղղությամբ:

Քեմալ բեյ – Այդ կապակցությամբ ձեռնարկված որևէ միջոցառում չի եղել:

Նախագահ – Ինչու՞ էին տեղահանվածների ձեռքերը կապված. նրանց չե՞ք տեսել:

Քեմալ բեյ – Կապված լինել-չլինելու մասին տեղյակ չեմ եղել և չեմ տեսել:

Նախագահ – Լքված գույքի վերաբերյալ ընդունված օրենքում լքված իրերը խուզարկելու մասին որևէ հոդված եղե՞լ է:

Քեմալ բեյ – Չեմ հիշում: Ես գործել եմ կառավարության կողմից տրված հրամանին համապատասխան:

Դատախազ – Բաթթալ գյուղում լքված իրերը խուզարկելու հրաման տրվե՞լ է:

Քեմալ բեյ – Ո՛չ, էֆենդի՛, Ձեր խոնարհ ծառան նման հրաման չի արձակել:

Նախագահ – Ի՞նչ ձեռնարկեցիք տեղահանության ընթացքում կատարված որոշ անօրինականությունների դեմ:

Քեմալ բեյ – Հանցագործներին իսկույն հանձնեցի ռազմական ատյանին:

Նախագահ – Քարավանները մաս-մաս ուղարկելով՝ ինչու՞ ոչինչ չձեռնարկեցիք, որպեսզի նրանք թշվառության չենթարկվեն և անվտանգ կերպով տեղ հասնեն:

Քեմալ բեյ – Արվել է հնարավոր ամեն ինչ, սակայն բոլոր քարավաններին փոխադրամիջոցներ տրամադրելն անիրական էր:

(Այնուհետև Քեմալ բեյը դահլիճից դուրս եկավ. ներս բերվեց Թևֆիկ բեյը):

Նախագահ (Թևֆիկ բեյին) – Գաղթականների ձեռքերը կապվա՞ծ էին, թե՞ ոչ: Այդ ուղղությամբ հետաքննություն չե՞ք կատարել:

Թևֆիկ բեյ – Քանի որ մութասարրիֆն այնտեղ էր, հետաքննությունն անհրաժեշտ չհամարեցի:

Նախագահ – Չե՞ք նկատել, որ բռնագաղթեցվածների քարավանները ճանապարհին վտանգների ենթարկվեն:

Թևֆիկ բեյ – Փոխադրման ընթացքում չարաշահումներ կատարած զինվորներին պատժել եմ՝ յուրաքանչյուրին գավազանի 40 հարվածով և հանձնել ռազմական ատյանին:

Նախագահ – Այդ ընթացքում պատվիրակ Նեջաթի բեյը բնակվում էր Յոզղատու՞մ, թե՞ չէր այցելում կենտրոնին ենթակա գավառները: Կամ տեղահանության ընթացքում այնտեղ գտնվե՞լ է: Դուք Նեջաթի բեյի հետ հաղորդակցության մեջ եղե՞լ եք:

Թևֆիկ բեյ – Նեջաթի բեյն Անկարայի լիազոր ներկայացուցիչն էր: Այստեղ մեկ անգամ է եկել, վալիի հետ: Նրան «Բարի գալուստ» մաղթեցի:

Նախագահ – Սուլեյմանիում[45] ագարակ եք գնել: Ինչպե՞ս ունեցաք նման հնարավորություն: Գուցե ժառանգությա՞մբ ստացված հարստություն ունեիք:

Թևֆիկ բեյ – Ծննդավայրս Բոայաբաթն[46] է: Այդ կողմերում հորիցս մնացած մեծաքանակ անշարժ գույք ունեմ: Հետևաբար՝ դրա կարիքը չունեի:

(Թևֆիկ բեյը դուրս է տարվում, բերվում է Ֆեյյազ բեյը):

Նախագահ (Ֆեյյազ բեյին) – Չնայած պետական պաշտոնյաների կողմից լքված գույքը չյուրացնելուն վերաբերող Ներքին գործերի նախարարության կողմից տարածած շրջաբերականին՝ Դուք հակառակ կերպ գործեցիք: Ինչու՞:

Ֆեյյազ բեյ – Նման շրջաբերականի մասին տեղյակ չէի:

Նախագահ – Պատվիրակ Նեջաթի բեյին ճանաչու՞մ եք, նրա հետ առնչություն ունե՞ք:

Ֆեյյազ բեյ – Նրան գիտեմ, սակայն չեմ առնչվում:

Նախագահ – Տեսե՞լ եք, որ գաղթականների ձեռքերը կապված լինեն:

Ֆեյյազ բեյ – Ո՛չ, չեմ տեսել:

(Թևֆիկ և Քեմալ բեյերը կրկին դահլիճ բերվեցին): Նախագահի՝ դատական կատարածուին տված հրամանով վկաներից դահլիճ բերվեց Հալիլ Ռեջայի բեյը: Նախագահը նրանից պահանջեց

---

[45] Սուլեյմանիե գյուղը գտնվում է ներկայիս Բուրսա նահանգի Յենիշեհիր գավառում:

[46] Գավառ Սինոպ նահանգում:

կրկնել նախկին ցուցմունքը: Վերոհիշյալի վկայություններից հետո դատարանի դահլիճ հրավիրվեց մադմուազել Օժենիի զարմուհին՝ մադմուազել Բեատրիսը: Նախագահը վերջինիս դիմեց հետևյալ խոսքերով.

– Ձեզ այստեղ ենք կանչել՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Մեզ նորից պատմեք այն ամենը, ինչ ասել եք օրիորդ Օժենիին:

Բեատրիսը հանդես եկավ Ֆեյյազ բեյին ուղղված որոշ ցուցմունքներով: Ֆեյյազ բեյը փորձեց հերքել այդ վկայությունները: Այնուհետև նախագահը դատական կատարածուին հանձնարարեց առերեսում կատարել Օժենիի և 2021 համարով ոստիկանի միջև:

Դատն ավարտվեց ժամը 12:30-ին: Շարունակվելու է հաջորդ օրը ժամը 14:00-ին:

27-ը մարտի, 1919, «Ալեմդար»

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ կեսօրից հետո՝ ժամը 14:25-ից սկսած, Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Յոզղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատախազի պաշտոնում էր տեղակալներից Քուդրեթուլլահ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո Ֆեյյազ և Թևֆիկ բեյերը նախկինի պես դուրս տարվեցին. սկսվեց Քեմալ բեյի առանձին հարցաքննությունը:

Նախագահ – Ո՞վ էր Յոզղատի բաժանմունքի ղեկավարը:

Քեմալ բեյ – Ձեր խոնարհ ծառայի օրոք Մուստաֆա և Սելամի բեյերն էին:

Նախագահ – Ճի՛շտն ասա՝ հայերին բնաջնջելու մտադրությունները անձնակա՞ն, թե՞ մեկ այլ դրդապատճառ ունեին:

Քեմալ բեյ – Քա՛վ լիցի, փաշա՛, հայերին բնաջնջելու հրահանգ երբեք չեմ տվել:

Նախագահ – Մի՞թե Յոզղատը գործողությունների թատերաբեմից դուրս էր:

Քեմալ բեյ – Ո՛չ, էֆենդի՛:

Նախագահ – Ինչու՞ մի խումբ աքսորյալներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրամիջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:

Քեմալ բեյ – Միջոցներ չկային, էֆենդի՛, ես կատարել եմ կառավարության կողմից ստացված հրամանը: Մահմեդական փախստականներն անգամ միևնույն պայմաններում էին:

Նախագահ – Ըստ Ձեզ՝ ոչ մի չարագործություն չի՞ եղել:

Քեմալ բեյ – Ո՛չ, ըստ իս՝ բացարձակապես չի եղել:

Նախագահ – Այդքան վկաների ցուցմունքները, նույնիսկ մութասարրիֆ Ջեմալ բեյի՝ Ձեզ վերաբերող վկայությունը խաբեությո՞ւն է:

Քեմալ բեյ – Էֆենդի՛, վկաների բոլոր ցուցմունքներն էլ սուտ են: Մութասարրիֆ Ջեմալ բեյն էլ, կարծեմ, ասում էր, որ լսել է և ոչ թե տեսել:

Նախագահ – Ջեմալ բեյը Ձեզնից նեղսրտելու առիթ երբևէ ունեցե՞լ է:

Քեմալ բեյ – Այո՛, Էֆենդի՛: Մի արձանագրության կապակցությամբ մեր միջև մի փոքր գժտություն եղավ: Նա մի բան էր առաջարկել, որը ես համարեցի Պետական խորհրդի որոշմանը հակասող և արձանագրությունը չստորագրեցի:

Քեմալ բեյը դուրս եկավ, ներս բերվեց Թևֆիկ բեյը: Կրկին ընթերցվեց լուծարված ռազմական ատյանին նրա ներկայացրած զեկուցագիրը, որում նկարագրվում էին հայ ավազակների կողմից կատարված մի շարք չարագործություններ:

Նախագահ – Ձեզ հայերին արմատախիլ անելու հրամա՞ն է տրվել: Ձեր զեկուցագրում նման բան էր գրված:

Թևֆիկ բեյ – Ո՛չ, էֆենդի՛, դա ոչ թե հայերին արմատախիլ անելու համար էր, այլ՝ չարագործություններ կատարած ավազակներին պատժելու:

Նախագահ – Քանի՞ հոգի էին այդ ավազակները, ումի՞ց էին բաղկացած ավազակախմբերը, և որքա՞ն էր ձեր թիվը:

Թևֆիկ բեյ – Այդ ավազակները տարբեր թվով էին, մոտավորապես 300-800 հոգի: Կազմված էին նահանգներում ապրող հայերից: Այդ ավազակները շարունակում են գոյություն ունենալ 330 թվականից (1914) առ այսօր: Մեր ուժերը բավականին մեծաթիվ էին, քանի որ մեզ զորք էր տրամադրվել մյուս կազաներից (գավառներից):

Նախագահ – Ձեր զեկուցագրում նշել էիք, թե չարագործությունների հեղինակ ավազակները նույնիսկ թնդանոթ են ունեցել: Դուք տեսե՞լ եք, թե ինչ չափսի էր այն:

Թևֆիկ բեյ – Էֆենդի՛, զեկուցագրում նշված «թնդանոթը» թերևս վրիպակ է: Պետք է գրվեր «գնդացիր»: Թնդանոթին առնչվող խնդիրը տեղի է ունեցել տեղահանությունից առաջ Թերզիլիում:

Թևֆիկ բեյը մի քանի հարցերի էլ պատասխանեց, որից հետո դահլիճ բերվեցին նաև Քեմալ և Ֆեյյազ բեյերը: Ճշմարտությունը բացահայտելու նպատակով դատարան կանչվեց անգլոհպատակ գնդապետ Մեհմեդ բեյը՝ վկայություն տալու համար: Անձնական տվյալները ներկայացնելուց հետո նրան դիմեցին Յոզղատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող հարցերով: Վերոհիշյալի կողմից տրված ցուցմունքների շնորհիվ պարզվեց, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպես են կացիններով և դաշույններով հայերին կոտորում, սակայն այդ պահին, ըստ նրա վկայության, մեղադրյալները ներկա չեն եղել[47]: Այդ ժամանակ Քեմալ բեյը որոշ առարկություններ հայտնեց Մեհմեդ բեյի վկայությունների առնչությամբ: Մասնավորապես նշեց, թե բացարձակապես սխալ է տեղահանության՝ փետրվարին իրականացված լինելու մասին ցուցմունքը: Այնուհետև, առաջին անգամ ի նպաստ մեղադրյալների ցուցմունք տալու նպատակով, դատարան կանչվեց Սկյուտարի մութասարրիֆ Մեհմեդ Ալի բեյը, որը երդվելուց հետո հանդես եկավ մի շարք տեղեկություններով: Վերոհիշյալը հայտնեց, որ թեև ինքը տեղահանությունից մեկ ու կես տարի հետո է մեծարգո նախագահության հետ Յոզղատ գնացել, սակայն երբեք չի լսել, թե Ֆեյյազ բեյը որևէ առնչություն ունեցած լինի տեղահանությանը: Նա, ըստ վկայի ցուցմունքի, բարեխիղճ մի մարդ էր և չէր կարող նման բան անել, Ֆեյյազ բեյը երբեք հարբեցող չի եղել և չի հանդիսացել Միություն և առաջադիմություն կուսակցության համախոհներից: Այս ցուցմունքներից հետո նախագահը նրան հարցեր տվեց Քեմալ բեյի, ինչպես նաև՝ տեղահանության իրականացման հանգամանքների վերաբերյալ: Մեհմեդ Ալի բեյը հայտնեց, թե իրականում Գյուլլեր կոչվող վայրում գաղթականներից շատ քչերն են ոչնչացվել, սակայն դրան պաշտոնյաները և

---

[47] Ըստ «Մեմլեքեթ» օրաթերթի՝ գնդապետ Մեհմեդը վկայել է, թե հայերին կոտորել են Քարաքուշ լեռնահովտում, տե՛ս Katl ve Tehcîr Da'vâsı, "Memleket", 28 Mart 1919.

տեղի բնակչությունը չէին կարող մասնակցած լինել, ծայրահեղ դեպքում դա կարող էր պատահել կառավարության գաղտնի հրամանի հիման վրա: Այս ցուցմունքները տալուց հետո Մեհմեդ Ալի բեյը դուրս եկավ: Դահլիճ մտավ Անդրանիկը, որը հանդես եկավ մեղադրյալների դեմ ուղղված որոշ ցուցմունքներով, որից հետո Քեմալ, բեյը ոտքի կանգնելով, ասաց. «Մեծարգո՛ փաշա, Ձեր խոնարհ ծառան բացատրություն պահանջելու միջոցով կապացուցի, որ մինչ այժմ վկայություն տալու նպատակով եկած հայերի խոսքերը ամբողջովին զրպարտություններ են և հորինված են»: Այս խոսքերից հետո Քեմալ բեյը մի քանի հարց տվեց Անդրանիկին, վերջինս տվեց հակընդդեմ պատասխաններ: Այնուհետև դատապաշտպան Սալահեդդին բեյը որոշ հարցեր տվեց սպանությունների մասին, որից հետո դատարան կանչվեց վկաներից Ազնիվը: Նրա վկայությունները ևս ամբողջովին ուղղված էին մեղադրյալների դեմ և առավել սուր բնույթ էին կրում: Վկաների ցուցմունքներից հետո մեղադրյալներն աշխատեցին հերքել վկաների խոսքերը՝ նախկինում արդեն իսկ արված որոշ հայտարարություններով և վկաների դեմ բացարկ հայտնեցին: Այնուհետև վկայության համար ներկայացավ Յոզղատի հաշվապահ Վեհբի բեյը: Վերջինիս հարցեր տվեցին նրա պաշտոնական պարտականությունների վերաբերյալ՝ ի նկատի ունենալով ժամանակին նրա՝ Լքված գույքի հանձնաժողովի անդամ լինելու հանգամանքը: Հաքի բեյը պատասխանեց՝ ներկայացնելով որոշ փաստաթղթեր: Դատապաշտպան Հյուսեին Համի բեյի պահանջի հիման վրա առերեսում կատարվեց նախապես հեռացված վկա Ազնիվի և Վեհբի բեյի միջև: Ժամանակի սղության պատճառով նիստն ավարտվեց: Շարունակվելու է շաբաթ օրը:

28-ը մարտի, 1919, «Ալեհոյար»

ՅՈԶՂԱՏԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՎԱ ՆԻՍՏԸ

Երեկ Յոզղատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող դատական նիստն սկսվեց ժամը 14:00-ին: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո դատարան կանչվեց վկաներից Յոզղատի նախկին հաշվապահ Վեհբի բեյը, որի ցուցմունքները հինգշաբթի օրն անավարտ էին մնացել՝ ժամանակի սղության պատճառով: Դատապաշտպաններից Հայրի բեյը բացատրություններ պահանջեց՝ աճուրդի միջոցով Ֆեյյազ բեյի՝ Լքված գույքին պատկանած մատանին գնած լինելու հարցի առնչությամբ: Վեհբի բեյը հայտնեց, որ մատանու արժեքը եղել է 25 լիրա, իսկ գաղթականներից վերցված դրամը՝ մետաղյա: Այնուհետև վկայի կարգավիճակով դատարան կանչվեց Շյուքրյու Չաուշը: Ի պատասխան նախագահի այն հարցին, թե ինքը մեղադրյալների հետ որևէ համագործակցության մեջ եղել է, թե ոչ, Շյուքրյու Չաուշը բացասական պատասխան տվեց: Այնժամ նախագահն ասաց. «Այդ դեպքում քեզ չենք կարող մյուս ընկերներիդ հետ դատել»: Շյուքրյու Չաուշին դուրս տարան:

Այնուհետև Քեմալ բեյը, ոտքի կանգնելով, մանրամասն կերպով ընթերցեց մի խնդրագիր՝ իրեն պաշտպանելու նպատակով հանդես եկող բոլոր վկաների՝ կանոնավոր կերպով խոսք ասելու վերաբերյալ, և այդ խնդրագիրը հանձնեց նախագահին: Իսկ Քեմալ բեյի դատապաշտպան Սալահեդդին բեյը միջնորդեց հետաձգել այդ խնդրագրի քննարկումը՝ մինչև պաշտպանող կողմի՝ այդ կապակցությամբ հանդես գալը, և արդարադատ դատարանից խնդրեց սրա հետ միասին ուշադրության արժանացնել նաև Քեմալ բեյի՝ նախկին ռազմական ատյանին ներկայացրած խնդրագիրը: Հյուսեին Համի բեյն էլ նշեց, որ թեև դատախազի ներկայացրած վկաներից մի քանիսը շարժվում են վրեժխնդրության, թշնամության և ազգայնամոլության զգացմունքներով, բայց և այնպես Քեմալ բեյը որևէ ասելիք չի կարող ունենալ Յոզղատի

մյուֆթիի և նախկին մութասարրիֆ Ջեմալ բեյի տված ցուցմունքների դեմ, և որ ինքն էլ Քեմալ բեյին լավ է ճանաչում, տեղյակ է, որ նա լավ կրթություն և դաստիարակություն է ստացել, վշտանում է, երբ տեսնում է, որ վերջինս, դժբախտաբար, այստեղ է գտնվում մեղադրյալի կարգավիճակով, և սակայն հանցավոր եղող մեկի օգտին եթե հազարավոր վկաներ էլ ունկնդրության արժանացվեն, միևնույն է՝ դրանից ոչ մի օգուտ չի լինի, այդ պատճառով էլ պահանջեց, որ այդ վկաներին չհարցաքննեն: Քեմալի դատապաշտպանները երկար-բարակ պաշտպանական խոսք ասելուց հետո հանդես եկան պաշտպան վկաներին հարցաքննելու պահանջով: Այդ ընթացքում Քեմալ բեյն աշխատեց հերքել դատախազի տեղակալի կողմից ներկայացված՝ Յոզղատի նախկին մութասարրիֆ Ջեմալ բեյի վերաբերյալ ցուցմունքը: Դատախազի տեղակալը ոտքի ելավ և, մանրամասն հայտարարություններով հանդես գալով, կրկին պահանջեց չհարցաքննել պաշտպանող կողմի ներկայացրած վկաներին: Դատապաշտպան Հյուսեին բեյը, դարձյալ որոշ ազդեցիկ բաներ ասելով, խնդրեց վերոհիշյալ վկաների հարցաքննությունը: Ժամը 15:00-ին դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ սույն հարցը քննարկելու նպատակով: Մի քանի ժամ տևած քննարկումներից հետո դատարանի կազմը վերադարձավ դատական դահլիճ: Դատական նիստի քարտուղարն ընթերցեց միաձայն ընդունված որոշումը, ըստ որի՝ չնայած նախկին՝ լուծարված ռազմական ատյանի այդ կապակցությամբ ընդունված որոշմանը՝ մեղադրյալները դեռևս չեն հոգացել վկաների ճանապարհային ծախսերը, որի պատճառով դատարանը վճռում է հրաժարվել Ստամբուլում չբնակվող վկաներին դատակոչելուց, և որ վկայության համար դատարան են հրավիրվելու միայն Ստամբուլի բնակիչները:

Նիստը հետաձգվեց մինչ երկուշաբթի՝ ժամը 10:00-ը:

30-ը մարտի, 1919, «Ալեմդար»

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅՈԶՂԱՏԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՎԱ ՆԻՍՏԸ

Երեկ՝ ժամը 11:15-ին, Նազըմ փաշայի նախագահությամբ վերսկսվեց Յոզղատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող դատավարությունը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո նախագահի հրամանով Ֆեյյազ և Քեմալ բեյերը դուրս եկան, մնաց միայն Թևֆիկ բեյը:

Նախագահ – Տեղահանության ժամանակ քանի ժանդարմ կար Յոզղատի ռազմական բրիգադի մեջ:

Թևֆիկ բեյ – Գումարտակի անունով կար 191 հոգի:

Նախագահ – Ե՞րբ է սկսվել տեղահանությունը:

Թևֆիկ բեյ – 331 (1915) թվականին:

Նախագահ – Տեղահանությունն իրականացնելու նպատակով ժանդարմ ավելացրե՞լ եք:

Թևֆիկ բեյ – Ո՛չ, էֆենդի՛:

Այդ պահին դահլիճ բերվեցին նաև Քեմալ և Ֆեյյազ բեյերը:

Նախագահ (Քեմալ բեյին) – Երբ իշխանության եկաք, որքա՞ն էր ժանդարմների թիվը ռազմական բրիգադում:

Քեմալ բեյ – Չգիտեմ:

Նախագահ – Միլիս անունով գումարտակ եղե՞լ է:

Քեմալ բեյ – Հավանաբար եղել է, չգիտեմ:

Այնուհետև դատարան կանչվեցին պաշտպանող կողմի ներկայացրած վկաները: Ոչ մի վկա չէր ներկայացել՝ Թևֆիկ բեյին պաշտպանելու նպատակով եկած Բահրի բեյ անվամբ մի առևտրականից բացի: Բահրի բեյը երդվելուց հետո հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. իրեն հայտնել են, թե տեղահանության ընթացքում սպանության դեպքեր էլ են գրանցվել, ըստ խոսակցությունների՝ տեղահանությունն իրականացվում էր մե՛րթ ոստիկանության, մե՛րթ ժանդարմերիայի կողմից:

Նախագահը վկային հարցրեց, թե արդյո՞ք նա որևէ տեղեկություն ունի Ֆեյյազ բեյի մասին: Վկան հայտնեց իր վստահությունը՝ Ֆեյյազ բեյի պատվարժան անձնավորություն լինելու հանդեպ: Ըստ վկայի՝ Ֆեյյազ բեյը չէր կարող մասնակից լինել նմանատիպ գործերի: Քեմալ բեյը, ոտքի ելնելով, նախագահին դիմեց հետևյալ խոսքերով.

– Մեծարգո՛ փաշա, թեև Բահրի բեյը իմ վկան չէ, այնուամենայնիվ կխնդրեի նրան հարցնել, թե իրեն որևէ խոսակցություն հասե՞լ է առ այն, թե ես Գյուլլերում եմ եղել:

Վկան հայտնեց, թե իրեն նման լուրեր չեն հասել:

Դատապաշտպան Սաադեդդին Ֆերիդ բեյ – Էֆենդի՛, իմ պաշտպանյալ Ֆեյյազ բեյը եղե՞լ է արդյոք Միություն և առաջադիմություն կուսակցության համախոհներից:

Վկա – 328 թ. (1912) անդամագրվել է, սակայն հետագայում՝ նախքան տեղահանությունը, վերոհիշյալը խզել է իր կապերը:

Նախագահ- Ինչու՞ եք վկայից հարցնում Միություն և առաջադիմություն կուսակցությանն անդամագրվելու մասին:

Սաադեդդին ֆերիդ բեյ – Այստեղ հրավիրված բոլոր վկաները հայտնել էին, թե իմ պաշտպանյալը եղել է Միություն և առաջադիմություն կուսակցության անդամներից,և որ ակտիվորեն մասնակցել է բոլոր գործերին: Այդ պատճառով անհրաժեշտ համարեցինք նման հարց ուղղել:

Այդ պահին նախագահը հայտնեց, թե ռազմական ատյանի հարցաքննությունն ավարտվել է: Պաշտպան փաստաբանը հիշեցրեց ցուցակն ուսումնասիրելու խնդրանքի մասին:

Նախագահ – Մենք դրանք արդեն ուսումնասիրել և կարծիք ենք կազմել: Դատավճռում կնշենք դրանց մասին:

Այդ պահին դահլիճից դուրս զենքի պայթյուն լսվեց, որը համընդհանուր իրարանցման պատճառ եղավ, թեև ունկնդիրների մեծ մասն արդեն պատրաստվում էր դուրս գալ: Երբ պարզվեց, որ պայթյունը միտումնավոր չէր և առաջացել էր մաուզերի ձգանը բաց թողնված լինելու հետևանքով, [դահլիճի] խաղաղությունը վերականգնվեց, և նիստը շարունակվեց: Քանի որ դատապաշտպանների կողմից որոշ առարկություններ եղան, դատարանի

կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ: Կես ժամ տևած քննարկումներից հետո դատարանի կազմը վերադարձավ դահլիճ:

Դատական նիստի քարտուղարն ընթերցեց հետևյալ որոշումը. «Ուսումնասիրված փաստաթղթերը դատապաշտպաններին ևս հաղորդվել են՝ զուտ նրանց կողմից ի նկատի առնվելու նպատակով, իսկ Ֆեյյազ բեյի գործը պիտի քննվի Յոզղատի տեղահանության և կոտորածներին մասնակից մյուս հանցակիցների հետ միասին»:

Որոշման ընթերցումից հետո Ֆեյյազ բեյը և դատապաշտպանները դուրս եկան դահլիճից. ներս բերվեցին Թևֆիկ և Քեմալ բեյերը: Դատախազի տեղակալը, ոտքի կանգնելով, ասաց. «Պահանջում եմ մեղադրյալներին դատել 56-րդ հոդվածի համաձայն»:

Քաղաքացիական-քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Եթե Օսմանյան Կայսրության բնակիչներից որևէ մեկը զինված հարձակում է կատարում մեկ ուրիշի դեմ, կամ հրահրում, կամ էլ համարձակվում է որևէ շրջանում գրավման, կողոպուտի, ոչնչացման կամ սպանության գործողություններ կատարել, ինչպես նաև՝ եթե անկարգություններ է հրահրում կամ նման օրինակ է ցույց տալիս մյուսներին, ենթարկվում է մահապատժի»:

Հոդվածի ընթերցումից հետո դատապաշտպանները անհրաժեշտ ժամանակ խնդրեցին՝ պաշտպանական խոսքը նախապատրաստելու համար, որին ի պատասխան՝ նախագահն ասաց. «Դատարանի կազմը համակողմանիորեն ուսումնասիրել է այս խնդիրները: Այնուամենայնիվ, որպեսզի չպատճառաբանեք, թե մենք որոշումներ ենք կայացնում՝ առանց ձեր պաշտպանական խոսքն ունկնդրելու, դատաքննությունը հետաձգում ենք մինչև չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ը: Կարծում եմ՝ այս ժամանակամիջոցը բավարար կհամարեք»:

Նիստն ավարտվեց ժամը 12:30-ին:

1-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՅՈԶԳԱՏԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Յոզգատի նախկին մութասարրիֆ Քեմալ բեյի տկարության պատճառով մի քանի օր հետաձգված դատը երեկ վերսկսվեց՝ իր իսկ պահանջով և բժիշկների թույլտվությամբ, որոնք նրա առողջության մեջ նախորդ օրերի համեմատ բարելավում էին արձանագրել:

Թևֆիկ և Քեմալ բեյերի՝ դահլիճ մտնելուց հետո՝ ժամը 15:00-ին, դատարան մտավ Նազըմ փաշայի նախագահության տակ գտնվող ռազմական արտակարգ ատյանի կազմը՝ դատապաշտպանների պաշտպանական խոսքն ունկնդրելու համար: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ռեշադ բեյը: Նախ պաշտպանական խոսք ասաց Քեմալի դատապաշտպան Սալահեդդին բեյը: Հայերի և թուրքերի միջև եղած հարաբերությունների մասին երկար նախաբանից հետո, խոսելով Սահմանադրության հռչակման, այն ժամանակվա հարաբերությունների, պատերազմին Օսմանյան Կայսրության ունեցած մասնակցության, պատերազմից բխած անհրաժեշտության հիման վրա կատարված տեղահանության, Օսմանյան Կայսրության՝ պատերազմից պարտված դուրս գալու, նախ և առաջ ժողովրդի ցանկությամբ խորը հետաքննություն կատարելու, այս խնդրի հետ առնչություն ունեցած անձանցից հարյուրից ընդամենը մեկի ձերբակալման, ի վերջո՝ ռազմական արտակարգ ատյանի դատավորների՝ անաչառ դատավճիռ ընդունելու հանդեպ իր վստահության, ինչպես նաև՝ բոլոր դատարաններում դատապաշտպաններին խոսքի հնարավորություն տալու մասին (որից ինքը ևս օգտվում է), անցավ հիմնական պաշտպանական խոսքին: Դատապաշտպանը հայտնեց, թե մեղադրող կողմից առավել մանրամասն և մանրազնին խոսքի էր սպասում, այդ պատճառով խորությամբ չէր ուսումնասիրել հե-

տաքննության շնորհիվ ձեռք բերված նյութերը: 56-րդ հոդվածի մասին տեղեկանալով՝ խիստ զարմացել էր: Դատապաշտպանի համոզմունքով՝ անհրաժեշտ էր փոփոխություն կատարել, չէ՞ որ (56-րդ հոդվածն առնչվում էր) հաշտարար դատարանների՝ նման մեղադրյալների վերաբերյալ որոշում ընդունելուն կամ մեղադրանք հարուցելուն, իսկ տվյալ հանցագործությունները նման բնույթ չեն կրում: 56-րդ հոդվածի ընթերցումից հետո պարզվեց, որ ամբաստանյալները մեղադրվում են քաղաքական հանցագործություն կատարելու մեջ, մինչդեռ, ըստ դատապաշտպանի, նրանց արարքը քաղաքական հանցագործություն չի եղել, այն կապված է եղել տեղահանության ժամանակ դրամի նկատմամբ ունեցած ագահությունից բխած անփութության հետ: Դատապաշտպանը 56-րդ հոդվածն ընթերցելուց հետո մանրամասն կերպով պարզաբանեց այն: Դատապաշտպանն ընդգծեց, որ թե՛ Քեմալ և թե՛ Թևֆիկ բեյերը կոտորածներին երբեք անձամբ չեն մասնակցել, հետևաբար՝ այդ հոդվածով, ըստ դատապաշտպանի, չեն կարող դատվել, դատապաշտպանի համոզմունքով՝ պետք էր սահմանափակվել 55-րդ, 57-րդ և 58-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ կատարման մեջ մասնակիորեն են մեղավոր: Դատապաշտպանի կարծիքով՝ 56-րդ հոդվածի կիրառումն անթույլատրելի է, քանի որ մեղադրյալներն, ըստ էության, մասնակի կերպով են մասնակցություն ունեցել: Դատապաշտպանի խոսքերով՝ այդ հոդվածը չի կարելի կիրառել նույնիսկ մահմեդական բնակչությանը կոտորած հայերի հանդեպ, որովհետև դեպքերը կատարվել են համանման պայմաններում: Դատապաշտպանը նշեց նաև այն, որ թեև սկզբում վճռված էր մեղադրյալներին հանձնել ոչ թե ռազմական, այլ՝ ուրիշ դատական ատյանների, սակայն դատաքննության արագ իրականացումն ապահովելու նպատակով գործի ուսումնասիրումը հանձնարարվեց ռազմական ատյաններին:

Այնուհետև դատապաշտպանն ընդգծեց մեղադրյալների՝ հանցագործությունն անձամբ կատարած չլինելու հանգամանքը: Ըստ նրա՝ իրականությանը չեն համապատասխանում իր պաշտ-

պանյալ Քեմալ բեյի՝ հանցագործությունն անձամբ կատարած լինելու մասին վկայությունները: Ապա սկսեց վերլուծել վկաների ցուցմունքները: Նշեց, թե այդ վկայությունները չեն կարող արժանահավատ լինել: Թեև փաստ է, որ Յոզղատի շրջակայքում հայեր են կոտորվել, ամենայն հավանականությամբ այդ կողմերում նման բաներ եղել են, սակայն մեղադրյալներին որպես հանցագործ ներկայացնելն անօգուտ է: Ինչպես կարելի է եզրակացնել ոչ միայն թուրքերի, այլ նույնիսկ արտասահմանցիների ներկայացրած զեկուցագրերից, հայերը կոտորել են մահմեդականների և գործողություններ են կատարել՝ թուրքական բանակի նահանջի գիծը փակելու ուղղությամբ: Ի հետևանք այս գործողությունների՝ կառավարությունն անհրաժեշտություն է համարել տեղահանությունը, հետևաբար՝ Քեմալ բեյին պատժելը օրենքից չի բխում և անօրինական է: Այնուհետև դատապաշտպանն անդրադարձավ իրավագիտության ֆակուլտետի դասախոս և հայցվորի կարգավիճակ ունեցող մի հայի ցուցմունքներին, նշեց, որ թեև կառավարության կամքով բռնագաղթեցված հայերը ենթարկվել են գործողությունների, սակայն չպետք է համանման վերաբերմունք դրսևորեին (մահմեդականների հանդեպ), հետևաբար՝ արդարության աջը պետք է տարածվի նաև հայերի վրա:

Տեղահանությանը և կոտորածներին առնչվող իրադարձություններին անդրադառնալով՝ դատապաշտպանն ընդգծեց, թե հանցագործությունը կազմակերպելը այլ բան է, այն իրականացնելը՝ մեկ այլ, իսկ այդ իրադարձությունների մասին տեղեկանալուց հետո անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելը՝ բոլորովին ուրիշ:

Այնուհետև դատապաշտպանն սկսեց ներկայացնել իր պաշտպանյալ Քեմալ բեյի անձին վերաբերող տվյալները: Նշեց, որ Քեմալը ծնվել է 300 թ. (1884) Բեյրութում, որտեղ և ստացել է տարրական կրթությունը, միջնակարգն ավարտել է Իզմիրում, որից հետո Բեյրութում ընդունվել է Վարչական պաշտոնյաների բարձրագույն դպրոց, որն ավարտել է փայլուն կերպով: Ապա զբաղեցրել է տարբեր պաշտոններ: Երբեք իր պաշտոնը չի չարաշահել. հարստություն չի դիզել: Դատապաշտպանը նշեց, որ իր կողմից

նշված հանգամանքների ընդգծումը պայմանավորված է քրեական օրենսգրքով նախատեսված նորմերով. իր պաշտոնը չչարաշահած, հարստություն չդիզած պաշտոնյան հայերի կոտորածներում ոչ մի շահագրգռվածություն չէր կարող ունենալ: Դատապաշտպանն ավելացրեց նաև, որ իր պաշտպանյալի՝ դեպքերին մասնակից լինելու ենթադրության դեպքում անգամ նրա հանդեպ պետք է գործադրվեն 45-րդ և 170-րդ հոդվածները: Դատապաշտպանն իր խոսքն ավարտեց «Դա եմ խնդրում և դատարանի արդարադատության հանդեպ իմ վստահությունն արտահայտելուց բացի այլ բան չեմ կարող ավելացնել» նախադասությամբ:

Սալահեդդին բեյն իր խոսքն ավարտեց ժամը 16:30-ին: Այնուհետև ընթերցվեց Թևֆիկ բեյի դատապաշտպան Համի բեյի պաշտպանական խոսքը, որն իր հիմնական բովանդակությամբ հար և նման էր մյուսին: Պաշտպանական խոսքի ընթերցումից հետո նախագահը դիմեց մեղադրյալներին.

– Որպես վերջին խոսք որևէ ասելիք ունե՞ք:

Քեմալ բեյը հանդես եկավ մանրամասն խոսքով՝ ի պաշտպանություն իրեն: Ապա դատարանից խնդրեց բարեգթություն և արդարադատություն:

Այնուհետև Թևֆիկ բեյը որոշ տեղեկություններ տվեց իր անձի և ապստամբներին հետևելու ընթացքում կատարվածի վերաբերյալ:

Նիստի վերջում նախագահը մեղադրյալներին դիմեց հետևյալ խոսքերով. «Կարող եք լիովին վստահ լինել դատարանի արդարադատության հանդեպ: Դատարանի կազմը մի քանի օրից ձեզ կհաղորդի իր խղճից թելադրված որոշումը»:

Նիստն ավարտվեց ժամը 18:45-ին՝ ժամանակի սղության պատճառով:

8-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՔԵՄԱԼ ԲԵՅԸ ԵՆԹԱՐԿՎԵՑ ՄԱՀԱՊԱՏԺԻ

Յոզղատի տեղահանության և կոտորածների հանցագործներից Յոզղատի նախկին փոխգավառապետ Քեմալ բեյը, որի՝ ռազմական արտակարգ ատյանի կողմից կատարվող դատաքննությունը երեկ ավարտվեց, վերոնշյալ դատարանի կողմից դատապարտվել է մահվան, և այդ կապակցությամբ կայացած դատավճիռը ներկայացվել է նորին մեծություն փադիշահի սուլթանական հրամանին՝ վերոհիշյալ պատժի գործադրման համար:

Երեկ երեկոյան՝ ժամը 19:20-ին, մահապատժի որոշումը գործադրվել է Բայազետ հրապարակում՝ Ռազմական նախարարությունից դուրս գտնվող տեղում, շեհրէմինի[48], Ստամբուլի պարետի, գլխավոր ոստիկանապետի, դատախազի և այլ պաշտոնյաների ու զինվորականների ներկայությամբ, որոնց՝ մահապատժի արարողությանը մասնակցելը պարտադիր էր:

Դարձյալ վերոհիշյալ տեղահանության կատարողներից Յոզղատի ժանդարմերիայի հրամանատար, հարյուրապետ Թևֆիկ բեյը դատապարտվել է 15 տարվա թիապարտության:

11-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

---

[48] Օսմանյան ժամանակաշրջանում Ստամբուլում գտնվող պալատների և պետությանը պատկանող կառույցների խնամքով, վերանորոգմամբ և առուծախի հարցերով զբաղվող պաշտոնյա:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ՝ ժամը 14:30-ին, սկսվեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Մեղադրյալի աթոռին էին 7 հոգի՝ Մուսթաֆա Նուրին, Մեհմեդ Ալին, Յուսուֆ Ռըզան, կայմակամ Թալեաթը, Ալի Սայիբ, Նիազի և Նուրի բեյերը: Քանի որ մեղադրյալներից Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմի բեյը փախուստի մեջ էր գտնվում, դատարանը նրան հեռակա կարգով դատելու որոշում էր կայացրել: Դատապաշտպանների կարգավիճակով հանդես էին գալիս վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Օսմանը, ինչպես նաև՝ Շեֆքեթ, Քյուրդուսի, Սալահեդդին և Իբրահիմ բեյերը:

Նախ՝ ներկայացվեցին գործակալ Մուսթաֆա Նուրի էֆենդու անձնական տվյալները: Նշվեց, որ վերոհիշյալը ծագումով տրապիզոնցի է, միջին եկամուտների տեր և ամուսնացած: Ապա միևնույն հարցերն ուղղվեցին նաև մյուս մեղադրյալներին, որոնք հերթով պատասխանեցին դրանց: Պարզվեց, որ նրանցից ոչ մեկը նախկինում դատված չի եղել: Այնուհետև ընթերցվեցին նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումները, որից հետո դատախազը, իթթիհադականների կողմից բռնագաղթեցվածների նկատմամբ կատարված արկածախնդիր և ամոթալի արարքների մասին երկար ու ազդեցիկ ճառով հանդես գալուց հետո, պահան-

ջեց ամբաստանյալներին մեղավոր ճանաչել նրանց մեղսագրվող արարքներում և դատապարտել: Դատախազի խոսքից հետո մեղադրյալներին դուրս տարան. դահլիճում մնաց միայն գործակալ Մուսթաֆա Նուրի բեյը: Նրան հարցեր տվեցին տեղահանության վերաբերյալ: Վերոհիշյալը որոշ հայտարարություններ անելուց հետո նշեց, թե ինքը հայերին ոչ թե ոչնչացրել է, այլ՝ պաշտպանել, նրանցից շատերին անգամ իր տանը թաքցրել: Նախագահը տարբեր հարցեր տվեց տեղահանության վերաբերյալ, որոնց պատասխանելուց հետո մեղադրյալը հայտնեց, թե ինքն այս «փորձանքի» մեջ ընկավ «Թուրքիյանիք» թերթում տպված և իր դեմ ուղղված որոշ հրապարակումներից հետո: Նշված հրապարակումների կապակցությամբ ինքը դիմել է քրեական գործերով դատարան:

Այս ցուցմունքները տալուց հետո Մուսթաֆա Նուրի բեյը դուրս տարվեց. դահլիճ բերվեց մաքսային վարչության պետ Մեհմեդ Ալի բեյը: Վերջինիս հարցրեցին, թե ինչ տեղեկություններ ունի տեղահանության վերաբերյալ: Մեղադրյալը համառորեն պնդում էր, թե ոչ մի բան ո՛չ լսել է, ո՛չ տեսել, ո՛չ էլ իմացել: Այնժամ ընթերցվեց նրա նախկին ցուցմունքը, և պարզվեց, որ նրա նախկին և ներկայիս ցուցմունքների միջև տարբերություններ են նկատվում: Մեհմեդ Ալի բեյը փորձեց արդարանալ, թե ինքն այդ պահին խիստ հուզված վիճակում է եղել, և իր արագ խոսելու պատճառով թերևս իրեն սխալ են հասկացել:

Նախագահ – Մենք տեղեկություններ ունենք առ այն, որ Դուք ևս մասնակից եք եղել կոտորածներին, տեղահանությանը և կողոպուտին: Ի՞նչ կասեք այդ կապակցությամբ:

Մեհմեդ Ալի – Բոլորովի՛ն: Ես, ըստ էության, մաքսային պաշտոնյա եմ: Ինչպե՞ս կարող էի նման գործերի խառնվել:

Նախագահ – Հետաքննության ընթացքում ազգությամբ հայ մի քանի հոգի վկայել են, որ Դուք առնչություն եք ունեցել տեղահանությանը:

Մեհմեդ Ալի – Երբեք նման գործերով չեմ զբաղվել: Այդ հայերից մեկի հետ ծանոթ եմ, մյուսներն ինձ չեն ճանաչում, ես էլ՝ նրանց:

Մեհմեդ Ալին որոշ տեղեկություններ էլ տվեց Տրապիզոնի Կարմիր մահիկ հիվանդանոցի մասին և դուրս տարվեց:

Հարցաքննության համար դատական դահլիճ հրավիրվեց ալյուրի վաճառական Նիազի էֆենդին: Նախագահը նրան տարբեր հարցեր տվեց տեղահանության, կոտորածների և կողոպուտի վերաբերյալ: Նիազի էֆենդին հայտնեց, թե ինքը տեղեկություններ չունի, այդ ընթացքում գտնվել է Ստամբուլում և միայն ժամանակ առ ժամանակ է Տրապիզոն գնացել:

Անհամապատասխանություն բացահայտվեց նրա կողմից տրված նախկին և ներկայիս ցուցմունքներում նշված ամսաթվերի միջև, և ընթերցվեցին նրա նախկին ցուցմունքները:

Նախագահն ընդգծեց, թե քանի որ Նիազի էֆենդին այդ ընթացքում Տրապիզոնում հյուրանոցատեր է եղել, ապա պետք է որ տեղյակ լիներ տեղահանությանն առնչված երևույթներին: Այնժամ Նիազի էֆենդին հայտնեց, թե ինքը ոչ թե հյուրանոցատեր է եղել, այլ այդ տունը վարձակալության է տվել՝ Տրապիզոնում առևտուրն ընդարձակելու նպատակով: Ապա Նիազի էֆենդին հայտարարեց. «Եթե իմ դեմ եղած բոլոր զրպարտանքներից գեթ մեկը հաստատվի, ես ինքս էլ կպահանջեմ պատիժս ծանրացնել՝ իմ կրելիք պատժաչափերի հանրագումարով: Հետաքննության շնորհիվ պարզվել է, թե բռնագաղթը կատարվել է ժանդարմների միջոցով: Քանի որ ժողովրդի ահն ու մահը հակառակ էր թե՛ խղճիս և թե՛ բնույթիս, նրանց վռնդեցի իմ տնից: Գյուղաքաղաքում կոտորած ընդհանրապես չի եղել: Ձեզ ավելի հարմար է բոլոր գավառներում մեկական հետաքննիչ հանձնաժողով կազմել և մեզ պես անմեղների դատել, այն դեպքում, երբ հազարավոր մարդասպաններ ամենուր ազատ թրև են գալիս»:

Դատախազ – Ճիշտ կաներ, եթե մեզ հայտներ ազատ թրև եկող այդ մարդասպանների անունները:

Դատախազի հարցին ի պատասխան՝ Նիազի էֆենդին հայտնեց, թե ինքն անձամբ ճանաչում է [այդ մարդասպանների] մեծ մասին, սակայն՝ ոչ անուններով: Այնուամենայնիվ մեղադրյալը նշեց մեկ-երկու անուն: Մի քանի այլ հարցերի ևս պատասխանելուց հետո Նիազի էֆենդին դուրս եկավ դատական դահլիճից:

Ներս բերվեց ժանդարմերիայի տեսուչ Թալեաթ բեյը: Իր մյուս ընկերների նման տեղահանության իրականացման հանգամանքների վերաբերյալ որոշ տեղեկություններով հանդես գալուց հետո ընդգծեց, թե ինքը բացարձակապես ոչ մի կապ չի ունեցել տեղահանության հետ: Նախագահության կողմից տրված հարցերին անհրաժեշտ պատասխանները տալուց հետո նշեց, թե ինքը ոչ մի շփում չի ունեցել ժանդարմերիայի հետ, այլ եղել է Ռազմական հարկերի հանձնաժողովի անդամ և մշտապես այնտեղ է գտնվել:

Այս ցուցմունքները տալուց հետո Թալեաթ բեյը դուրս տարվեց. դատական դահլիճ բերվեց առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյը, որին դիմեցին տեղահանությանը և կոտորածներին վերաբերող հարցերով: Մեղադրյալը հայտնեց, թե ինքը իթթիհադականների հետ ոչ մի կապ չի ունեցել, Սահմանադրության հռչակումից հետո, երբ վերադարձել է աքսորից, «Հուքուք-ու ումումի» թերթին արած իր խոստովանությունները թիրախ են դարձրել, որի հետևանքով իրեն ձերբակալել են: Ապա մեղադրյալն սկսեց պատմել իր հետ պատահած մի քանի արկածի մասին:

Նիստն ավարտվեց: Շարունակվելու է շաբաթ օրը՝ ժամը 14:00-ին:

27-ը մարտի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆ – ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեկ՝ ժամը 11:00-ին, հայտնի անձանցից բաղկացած ռազմական արտակարգ ատյանը Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը:

Վկաներից թեև հրավիրվել էին Նեմլիզադե Աքըֆ Քափքանը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսին բեյը, ռուսահպատակ Սամսոն Վալիդ Թեոդորովիչը և Տրապիզոնի զինկոմիսարիատի նախկին նախագահ, մայոր Նեջմեդդին բեյը, սակայն չէին ներկայացել:

Դատական նիստի քարտուղարն ընթերցեց երրորդ բանակի նախկին հրամանատար Վեհիբ փաշայի գրավոր ցուցմունքը, որի համառոտ բովանդակությունը հետևյալն էր. «Արևելյան վիլայեթների մահմեդականները մի շարք վայրենությունների և բռնությունների են ենթարկվել, այդ թվում՝ բազմաթիվ մահմեդականներ են սպանվել հայ ավազակախմբերի կողմից, չսպանվածներն էլ քշվել են մինչև Ռուսաստանի խորքերը, ոտնակոխ են արվել երիտասարդ աղջիկների պատիվն ու անարատությունը, բանականության և տրամաբանության կողմից անընդունելի դեռ շատ բռնություններ և ստորություններ էլ են կատարվել. սպանվել են հազարավոր, հատկապես՝ երիտասարդ մահմեդականներ, որոնց ոսկորները ջրհորներն են նետել»: Քաղաքակիրթ պատմության վրա ստվեր նետած և բոլորի հանդեպ կատարված այդ դեպքերը վշտացած կերպով պատմելով՝ Վեհիբ փաշան պահանջում էր դատական պատասխանատվության ենթարկել բանակի գործողություններին արգելք հանդիսացած, ռազմական գործողությունների դեմ բազմաթիվ բռնությունների, ողբերգությունների և ստորությունների միջոցով խաղաղ բնակչության հանգիստը խաթարած Դաշնակցություն կոմիտեի անդամներին, ինչպես նաև՝ որոշ՝ կարեկցության արժանի իրադարձությունների տեղիք տված

Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավար դիրքերում գտնվող անձանց և հատկապես՝ Բեհաեդդին Շաքիր բեյին:

Նախագահը բոլոր մեղադրյալներին դիմեց հետևյալ հարցով. «Այս մեղադրանքներին ի պատասխան որևէ ասելիք ունե՞ք»:

Թեև մեղադրյալները հայտնեցին, թե ասելիք չունեն, սակայն նրանցից կենտրոնական կոմիտեի անդամ Ռըզա բեյը ոտքի կանգնեց և փորձեց պաշտպանվել հետևյալ կերպ. «Ես կարող եմ ապացույցներով հերքել մեծարգո Վեհիբ փաշայի մեղադրանքները՝ ուղղված Բեհաեդդին Շաքիր բեյին: Միություն և առաջադիմություն կուսակցությունը չէր կարող նման մեծաթիվ հանցագործություններ կատարել: Լուր էր ստացվել, ըստ որի՝ մեր ընկերներից մի քանիսը կուսակցության անունով յուրացրել են գերագույն կառավարության կողմից անհրաժեշտ համարված վայրեր տեղափոխված հայերի կողմից լքված գույքի մի մասը: Ակներև է, որ մինչ այժմ բարձր ու հոգևոր նպատակներ հետապնդող Միություն և առաջադիմություն կուսակցությունը չէր զարդարվի սրա-նրա իրերով: Այսօր պատմական իրադարձություններ ենք ապրում: Մենք թեև համոզված էինք, որ մեր կենտրոնական կոմիտեն նմանատիպ գործողությունների չի մասնակցել, բայց և այնպես տեղին համարեցինք լքված գույքից մեկ անգամ իրեր վերցրած անձանց նախազգուշացնել և 331 թ. (1915) սեպտեմբերի 14-ին մի հեռագիր ուղարկեցինք Բուրսայի կենտրոնական կոմիտեին: Միություն և առաջադիմություն կուսակցությունը գուցե և սխալներ թույլ տվել է իր համոզմունքների մեջ, սակայն միշտ էլ գործել է արժանապատվորեն»:

Այնժամ դատարանի կազմի անդամներից Մուսթաֆա փաշան հանդես եկավ հետևյալ հարցով. «Այսինքն՝ կուսակցության որոշ կենտրոններ լքված գույքից իրեր յուրացնելու փո՞րձ են կատարել, իսկ ո՞ր նահանգների»:

Ռըզա բեյը պատասխանեց. «Այո՛, Բուրսայում, Սվասում, Մամուրեթ-ուլ Ազիզում (Խարբերդ) նման դեպքեր գրանցվել են»:

Նախագահ – Արդյո՞ք Բուրսայի պատասխանատու քարտուղար Իբրահիմ բեյը, պահանջելով լքված գույքն օրինականորեն և հրապարակայնորեն աճուրդի հանել, փորձել է այդ գործը կոծկել:

Ռըզա բեյ – Այդ ուղղությամբ հանգամանալից հետաքննություն չեմ կատարել: Ինձ այնտեղ էին ուղարկել որպես կազմակերպության պաշտոնյա: Հետաքննություն կատարեցի՝ պաշտոնիցս բխած ողջ պատասխանատվությամբ, և փորձեցի այդ գույքը վերադարձնել:

Զեքի փաշա (դատարանի կազմի անդամներից) – Կարծում եք՝ Բեհաեդդին Շաքիրը կենտրոնական կոմիտեի կողմից պաշտոնապես չի ուղարկվել Բուրսա, սակայն այնտեղ հանդես է եկել ինքնագլուխ գործողություններո՞վ:

Ռըզա բեյ – Ընկերներիս ճանաչում եմ որպես պատվարժան անձնավորությունների: Համագործակցել եմ նրանց հետ: Բեհաեդդին Շաքիր բեյը մի շարք վիլայեթներ է գնացել՝ անձնական և պաշտոնական դրդապատճառներից ելնելով: Իմ վերջնական կարծիքն այն է, որ կենտրոնական կոմիտեն իր պաշտոնյային չէր ուղարկի նման ամոթալի արարքի համար:

Նախագահ – Կենտրոնական կոմիտեին բավարարե՞ց Բուրսայում Ձեր կատարած հետաքննությունը:

Ռըզա բեյ – Բավարար համարվեց, էֆենդի՛:

Նախագահ – Ի՞նչ կերպով կատարվեց այդ անշարժ գույքերի վերադարձը:

Ռըզա բեյ – Այդ մասին որևէ տեղեկություն չունեմ:

Նիստն ավարտվեց ժամը 12:15-ին:

30-ը մարտի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ

Նիստ առաջին

Նազըմ փաշայի նախագահության տակ գտնվող ռազմական արտակարգ ատյանը երեկ ժամը 10:15-ին սկսեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատաքննության երրորդ նիստը: Դատախազի աթոռին էր տեղակալներից Ռեշադ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուն պես Էրզրումի նախկին նահանգապետ Թահսին բեյը հրավիրվեց վկայություն տալու: Վկան երդվելուց հետո հանդես եկավ տեղահանության մասին տեղեկություններով: Վերոհիշյալն իր իմացածն ասելուց հետո դուրս եկավ, որից հետո ընթերցվեց տիկին Արաբյանի տված ցուցմունքը, որն ուղղված էր մեղադրյալների դեմ:

Այնուհետև դատարան հրավիրվեց ռուսահպատակ Սամսոն Թեոդորովիչը, որը երդվեց ըստ օրենքի: Նախագահը նրան հրամայեց պատմել այն անօրինականությունների մասին, որոնք կատարվել էին Տրապիզոնի տեղահանության ընթացքում:

Մեղադրյալներից գործակալ Մուսթաֆա և Յուսուֆ Ռըզա բեյերը, ինչպես նաև՝ դատապաշտպանները մի շարք հարցեր ուղղեցին Սամսոնին, որից հետո վկայություն տալու համար դատարան բերվեց Նեմլիզադե Աքիֆ Քափքանը: Աքիֆ բեյը նշեց, թե Տրապիզոնում ոչ մի հայ չի սպանվել, և քաղաքում որևէ բռնություն չի կատարվել:

Ապա վկաներից կանչվեց Նևարեթը: Դատապաշտպաններից Օսման բեյի պահանջով Նևարեթը ցուցմունքներ տվեց առանց երդվելու, քանի որ նաև քաղհայցվոր էր: Վկան պատմեց, որ իրենք բավականաչափ դրամ էին վերցրել իրենց հետ, և որ 50 ժանդարմներ ուղեկցորդ էին նշանակվել՝ իրենց պահպանելու նպատակով, սակայն ժանդարմները կոտորել էին անդամալույծներին և ճանապարհին սովից ուժն ու կարողությունը կորցրած և այլևս

քայլել չկարողացող հազարավոր մարդկանց: Ըստ վկայի՝ երեխաներին լցրել էին պարկերը և գետը նետել: Ինքը չորս ամիս, հազարավոր դժվարություններ հաղթահարելով, դիակների միջով գնացել է գյուղից գյուղ և, ի վերջո, կարողացել է հասնել Հալեպ:

Այս վկայից հետո ներս մտավ վկա Տիգրան Նարդինյանը, որը նույնպես ցուցմունքներով հանդես եկավ՝ առանց երդվելու, քանի որ քաղհայցվոր էր. դա պահանջեց դատապաշտպան Քուդդուսի բեյը: Նարդինյանը որոշ բաներ ասաց Ալի Սայիբ բեյի դեմ: Ապա մեղադրյալները, դատապաշտպանները և դատախազի տեղակալը բազմաթիվ հարցեր ուղղեցին վկային և հերքեցին վերջինիս ասածները:

Հետո եկավ վկա Սիրանուշ Մինաքյանը: Նա ևս տեղեկություններ տվեց տեղահանության մասին և որոշ բաներ ասաց մեղադրյալների դեմ, որից հետո դատն ընդմիջվեց մինչև երկրորդ նիստ:

Նիստ երկրորդ

Ժամը 14:00-ին վերսկսվեց Տրապիզոնի տեղահանության դատաքննությունը: Վկաներից դատարան հրավիրվեց Սաքենիկը: Նա նույնպես քաղհայցվոր լինելու պատճառով տեղահանության մասին տեղեկություններ տվեց՝ առանց երդվելու: Սաքենիկի ցուցմունքներն ուղղված են մեղադրյալների դեմ:

Ապա եկավ Արասյան ազգանվամբ վկան, որի ցուցմունքները ևս մեղադրյալների դեմ էին: Բերվեց վկա Ֆլոմենը: Նա ևս հանդես եկավ մեղադրյալների դեմ ուղղված վկայություններով:

Այնուհետև նախագահի հրամանով մյուս մեղադրյալները դուրս տարվեցին. մնաց միայն Սայիբ բեյը:

Նախագահ – Դուք պաշտոն ունեցե՞լ եք Տեղահանության հանձնաժողովում:

Ալի Սայիբ բեյ – Ո՛չ, էֆենդի՛: Դա պետք է որ սխալ լինի:

Նախագահ – Ինչու՞ հեռացվեցիք Քոնիայի բժշկական տնօրենի պաշտոնից, որում նշանակվել էիք Տրապիզոնից հետո և ի՞նչ

գործ արեցիք, ու՞ր գնացիք վերոհիշյալ պաշտոնից ազատվելուց հետո:

Ալի Սայիբ բեյ – Ասացին, որ վարչականորեն են ազատում: Ձեր խոնարհ ծառան էլ դեռևս չի կարողացել իմանալ բուն պատճառը: Աշխատանքից ազատվելուց հետո գնացի Իզմիր և մտքիս դրեցի այլևս երբեք կառավարական պաշտոնյա չլինել: Մինչև ձերբակալվելս Իզմիրում զբաղվել եմ առևտրով և նման այլ գործերով:

Նախագահ – Կարմիր մահիկ հիվանդանոցում Ձեր զբաղեցրած պաշտոնը պետակա՞ն էր:

Ալի Սայիբ բեյ – Ո՛չ, ես այնտեղ պետական պաշտոն չեմ ունեցել: Միայն վերստուգում էի: Ո՛չ կառավարմանն էի միջամտում, ո՛չ էլ պրակտիկ բժշկությամբ զբաղվում այնտեղ:

Նախագահ – Հիվանդանոց բերված հայերից ոչ ոք չի՞ մահացել:

Ալի Սայիբ բեյ – Ո՛չ, չգիտեմ: Ձեր խոնարհ ծառան վեց ամիսը մեկ վիճակագրական տեղեկագիր էր վերցնում:

Նախագահի հրամանով արձանագրող քարտուղարն ընթերցեց այդ խնդրի մասին զեկուցումը:

Զեկույցի համառոտ բովանդակությունը հետևյալն էր. Ալի Սայիբ բեյը թույն ներարկելու միջոցով հայերի է սպանել հիվանդանոցում և եղել այլ ողբերգությունների հեղինակ:

Զեկուցման ընթերցումից հետո Ալի Սայիբ բեյը նախագահին ներկայացրեց հայերեն և ֆրանսերեն թերթերից թարգմանված որոշ փաստաթղթերի բնագրեր և պատմեց, թե թերթերում ինչեր են գրվել իր դեմ, և թե ինչպես է ինքը այդ պատճառով ձերբակալվել:

Սայիբ բեյը նախագահին հայտնեց, որ եթե չամաչի խոսքը երկարացնելուց, ապա պաշտոնական փաստաթղթերով կապացուցի, որ հայերեն ու ֆրանսերեն թերթերում հրատարակված և բերնեբերան տարածվող բոլոր խոսակցությունները զրպարտություն են: Մեղադրյալը երկար-բարակ իրեն պաշտպանելով՝ ասաց, թե

մի շարք վկաներ է ներկայացնելու, որպեսզի ապացուցի թե՛ այդ փաստաթղթերով հաստատվող հանգամանքների իսկությունը և թե՛ Տրապիզոնի տեղահանությանն իր առնչված չլինելը, ու գրել տվեց որոշ վկաների անուններ, որոնց մեծ մասը հայկական էր: Իր ցուցմունքի վերջում ասաց, որ Տրապիզոնի Թեջեդդյուդ[49] կուսակցության պատասխանատու քարտուղար Սադրեդդին բեյի՝ այնտեղից հեռանալուց հետո ամեն ինչ իր դեմ ուղղվեց: Այս ցուցմունքից հետո Սայիբ բեյը դուրս բերվեց. կանչվեց գործակալ Մուստաֆա Նուրի էֆենդին:

Նախագահ – Զինվոր եղած ժամանակ դեռևս Տրապիզոնում գործակա՞լ էիր:

Մուստաֆա էֆենդի – Այո՛, պարո՛ն: Չէի ազատվել: Զինվորական ծառայությունս էլ էի այնտեղ կատարում: Առանց այդ էլ այն ժամանակ փոստ չկար:

Նախագահ – Ծովով աքսորվողնե՞րն էլ էին առանց իրերի գնում, ինչպես ցամաքով գաղթեցվողները:

Մուստաֆա էֆենդի – Այո՛, առանց իրերի էին գնում:

Մուստաֆա էֆենդին որոշ հարցերի ևս պատասխանելուց հետո դուրս տարվեց, և ներս բերվեց մաքսատան վարիչ Մեհմեդ Ալի բեյը:

Նախագահ – Տրապիզոնի ռմբակոծության ժամանակ մաքսատան գործերը, բնականաբար, թեթևացան: Այնժամ ի՞նչ պարտավորություններ դրվեցին Ձեզ վրա:

Մեհմեդ Ալի բեյ – Ռազմական հարկերի հանձնաժողովում, ինչպես նաև՝ Կարմիր մահիկ հիվանդանոցում և Ռազմական արդյունաբերության մասնաճյուղի շինարարության հանձնաժողովում զբաղեցրի նախագահի պաշտոնը:

---

[49] Թեջեդդյուդ (Վերածնունդ) կուսակցությունը հիմնվել էր 1918 թ. նոյեմբերի 1-ին կայացած երիտթուրքական կուսակցության համագումարում, որում որոշվել էր լուծարել Միություն և առաջադիմություն կուսակցությունը և վերջինիս ողջ ունեցվածքը հանձնել Թեջեդդյուդին:

Նախագահ – Հատուկ կազմակերպությունում (Թեշքիլյաթ-ը մահսուսա), ինչպես նաև՝ Տեղահանության հանձնաժողովում որևէ պաշտոն ունեցե՞լ եք:

Մեհմեդ Ալի բեյ – Ո՛չ, էֆենդի՛: Իրականում ես չեմ էլ լսել ու ոչինչ չգիտեմ Տեղահանության հանձնաժողով անվան տակ գործող որևէ հանձնաժողովի մասին:

Նախագահ – Ի՞նչ էր լինում աքսորվողների գույքը: Հանձնվում էր հանձնաժողովի՞ն:

Մեհմեդ Ալի բեյ – Հանձնաժողովին էր հանձնվում:

Նախագահ – Երբեմն գնու՞մ էիք Կարմիր մահիկ հիվանդանոց:

Մեհմեդ Ալի բեյ – Այո՛, գնում էի: Ես վարչական պաշտոնյա էի այնտեղ:

Ժամանակը լրանալու պատճառով դատը հետաձգվեց մինչև հինգշաբթի օրը՝ ժամը 10:00-ը: Նիստն ավարտեց ժամը 16-ին:

2-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նիստ առաջին

Երեկ՝ ժամը 13:30-ից, ռազմական արտակարգ ատյանում Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո ընթերցվեց քաղհայցվորներից մեկի ընկերուհու՝ տիկին Սիրանուշի գրավոր ցուցմունքը: Հայցվորը, հայերի հանդեպ կատարված բռնությունների մասին խոսելով, տեղեկացնում էր, թե բռնագաղթից փրկվելու նպատակով որոշ ժամանակով իսլամ է ընդունել, Միություն և առաջադիմություն կուսակցության որոշ անդամներ, որոնց անունները չէր կարողանում մտաբերել, տղամարդկանց բռնագաղթեցնելուց հետո բռնությունների էին ենթարկել նրանց, կանանց տղամարդկանցից առանձնացրել էին, այդ օրվանից ինքը չէր տեսել ո՛չ ամուսնուն, ո՛չ էլ ազգականին: Հայցվորը նաև հայտնում էր, որ վերցրել էին իր մոտ գտնվող մետաղադրամները, և որ կատարված վայրենությունը կրկին վերականգնվում էր իր աչքի առաջ:

Մեղադրյալներից կայմակամ Թալեաթ բեյը, ոտքի ելնելով, հայտարարեց.

– Այդ կինը, որի վկայությունները քիչ առաջ ընթերցվեցին, հայտնում է, թե Տրապիզոնում այսպիսի բան է կատարվել, այնտեղ գտնվող կուսակցությունը այնպիսի որոշում է ընդունել և այլն: Մինչդեռ պետք է նշել, որ այդ գործը խիստ գաղտնի բնույթ էր կրում: Ինչպե՞ս կարող էր այդ կինը տեղյակ լինել նման կարևոր որոշումների մասին:

Թալեաթ բեյի վերոհիշյալ խոսքերից հետո նրան մի քանի հարց տվեցին: Մասնավորապես դատարանի կազմի անդամներից Մուսթաֆա փաշան նրան դիմեց հետևյալ կերպ. «Երկրում տեղահանությունն իրականացնելիս անհրաժեշտ էր, որ կատարեիք թե՛ Ձեր պաշտոնից և թե՛ մարդկային խղճից բխող պարտավորությունները»: Թալեաթ բեյը տվեց հետևյալ պատասխանը. «Ըստ էության՝ ես ժանդարմերիայի տեսուչ եմ: Քանի որ իմ պաշտոնական պարտականությունները բազմաբնույթ են եղել, նման գործերով զբաղվելու ժամանակ չեմ կարողացել գտնել և, բացի այդ, դրանում ես պատասխանատու չեմ ու չեմ էլ կարող լինել»:

Այնուհետև ընթերցվեցին մի հայցվոր կնոջ՝ Հետաքննիչ հանձնաժողովին ներկայացված ցուցմունքները, համաձայն որոնց՝ Ջեմալ Ազմի բեյը, տղամարդկանց հավաքելով, նրանց նավակներով Քումքալե[50] ուղարկելու հրահանգ էր տվել: Տեղափոխության ընթացքում բոլորին ոչնչացրել էին՝ մի մասին գնդակահարելով, մյուսներին՝ ջրախեղդ անելով: Կինը նշել էր նաև, որ Վարդան[51] անունով մեկն իրեն պարզաբանումներ էր արել, հետագայում այս Վարդանին վիրավոր վիճակում հիվանդանոց էին տարել, որտեղ և նրան թունավորել էին: Գաղթականների երեխաների մի մասին ուղարկել էին Դեյիրմենդերեի[52] ուղղությամբ, իսկ մյուս մասին, Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել: Ինքը կարողացել էր մահվանից խուսափել նախ՝ թուրքերի տանը, ապա՝ գերմանական բանկում թաքստոց գտնելու շնորհիվ:

Նախագահ (դիմում է մեղադրյալներին) – Որևէ ասելիք ունե՞ք:

---

[51] Ռուսահպատակ Վարդանին Տրապիզոնում ջուրն էին գցել 40 հայ կուսակցական գործիչների և մտավորականների հետ միասին, սակայն Վարդանը, լինելով շատ ճարպիկ լողորդ, կարողացել էր կապված ձեռքերով լողալով ափ հասնել: Դա այնքան էր զարմացրել հայերի ոչնչացումը հսկող ոստիկաններին, որ վերջիններս որոշել էին չսպանել նրան, այլ տանել Կարմիր մահիկ հիվանդանոց: Սակայն այստեղ Վարդանին թունավորել ու սպանել էր բժիշկ Ալի Սայիբը:

[52] Գետ Տրապիզոնում:

Մուստաֆա բեյ – Էֆենդի՛, ինձ դիմած գաղթականների մեծ մասին փրկել եմ և անթերի կերպով հանձնել ինձ վստահված իրերը:

Նախագահ – Որոշ նահանգներում գործն ուսումնասիրվել է, իսկ ինչու՞ Տրապիզոնում չեն խորացել գործի էության մեջ:

Մուստաֆա բեյ – Ես տեղյակ չեմ՝ մյուս նահանգներում գործն ուսումնասիրվել է, թե ոչ: Ըստ էության՝ դրա համար կարելի՞ է կառավարությանը քննադատել:

Դատախազ – Մենք տեղեկություններ ունենք առ այն, որ Հատուկ կազմակերպության մեջ պահեստային պաշտոնյայի տիպի ծառայություն է եղել:

Մուսթաֆա բեյը, իր պաշտոնավարության վերաբերյալ երկար-բարակ տեղեկություններ տալուց հետո, խոսեց «Թուրքիյանիք» թերթում իր դեմ եղած հրապարակումների մասին:

Դատախազ – Մթերքի և այլ նման բաների համար նահանգապետի նախագահության տակ որևէ հանձնաժողով եղե՞լ է:

Մուստաֆա բեյ – Ո՛չ, էֆենդի՛, նման հանձնաժողով գոյություն չի ունեցել:

Այնժամ դատախազը հայտնեց, որ տրապիզոնցի հարյուրապետ Մեհմեդ Ալի բեյի կողմից մի տեղեկագիր է ստացվել, և այն ներկայացրեց նախագահին:

Նախագահ – Ընթերցված ցուցմունքների դեմ որևէ առարկություն ունե՞ք:

Նիազի բեյ – Հետևյալ կերպ կարող եմ հերքել երեխաներին ջրաղացը նետելու կամ էլ Դեյիրմենդերե ուղարկելուց հետո ոչնչացնելու՝ ինձ ուղղված զրպարտությունները. այդ դեպքերի ընթացքում ես գտնվել եմ Ստամբուլում: Այդ ուղղությամբ հետաքննություն կատարելու դեպքում ճշմարտությունը կբացահայտվի:

Այնուհետև ընթերցվեց Ռազմածովային նախարարությանը ներկայացված տեղեկագրին ի պատասխան բերված տեղեկանքը, ըստ որի՝ Նիազի էֆենդին 330 թ. (1914) մայիսի 25-ին տորպեդայով հասել է Ստամբուլ: Ապա Նիազի բեյը հանդես եկավ մի

շարք մանրամասնություններով, որից հետո նախագահին դիմեց հետևյալ խոսքերով. «Մեծարգո՛ նախագահ, այդ բոլոր մեղադրանքները բացարձակապես չեն համապատասխանում ճշմարտությանը: Խնդրում եմ, որ այդ ուղղությամբ հետաքննություն կատարեք: Եթե այդ մեղադրանքներից գեթ մեկը հաստատվի, բոլորը ճշմարիտ կհամարեմ և ինքս կխնդրեմ իմ պատիժը»:

Այնուհետև ընթերցվեցին Նիազի էֆենդու՝ Հետաքննիչ հանձնաժողովին տված ցուցմունքները: Նիազի բեյը մեկ անգամ ևս - համառորեն ընդգծեց տեղահանության ժամանակ իր՝ Ստամբուլում գտնված լինելու հանգամանքը:

Վկաներից դատարան հրավիրվեց Ավնի բեյը: Երդվելուց հետո նրան դիմեցին բազմազան հարցերով: Վերջինս հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանությունը սկսվել է մի հայտարարության հիման վրա, այն ղեկավարվել է դոկտոր Բեհաեդդին Շաքիր բեյի կողմից, տեղահանության ընթացքում վալիի նախագահության տակ ոչ մի հանձնաժողով չի եղել, բոլոր գործողություններին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել վալին, գաղթականները ուղարկվել են հավաքական կերպով, որոշ խոսակցություններ են եղել նրանց՝ վտանգների ենթարկված լինելու մասին, այդ բոլորի ատյանը եղել է ոչ թե ոստիկանությունը, այլ՝ նահանգապետարանը, ինքը որևէ պաշտոն չի զբաղեցրել Կարմիր մահիկ հիվանդանոցում, այստեղի թունավորման դեպքերի մասին ոչինչ չի լսել, հիվանդանոցում Ալի Սայիբ բեյը վարել է առողջապահության տեսչի պաշտոնը, իսկ հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյն ընդգրկված է եղել Կարմիր մահիկ հիվանդանոցի հանձնաժողովի կազմում և իր պաշտոնական պարտականությունները կատարել է արժանապատվորեն:

Նախագահ – Նշեցիք, որ տեղահանության ժամանակ որոշ չարագործություններ են գրանցվել: Ինչու՞ չմիջամտեցիք՝ կատարելով Ձեր մարդկային պարտքը:

Վկա – Չկարողացա միջամտել, էֆենդի՛:

Նախագահ – Գործակալ Մուսթաֆա բեյն ընկերական կապեր ունեցե՞լ է նահանգապետի հետ:

Վկա – Ընդհանրապես նահանգապետն ամենուր լինում էր և բոլորի հետ հանդիպում:

Առողջապահության տեսուչ Սայիբ բեյ – Ինձ լուրեր են հասել, թե վկան այստեղ տեղափոխվելիս որոշ փաստաթղթեր է բերել. դա համապատասխանու՞մ է իրականությանը: Եվ արդյոք տեղյա՞կ էր, որ այդ փաստաթղթերում եղել է առողջապահության տեսչի ստորագրությունը:

Վկա – Փաստաթղթերի բովանդակությանը չեմ ծանոթացել:

Ժամանակի սղության պատճառով առաջին նիստն ավարտվեց ժամը 12:30-ին: Որոշվեց երկրորդ նիստն սկսել ժամը 14:00-ին:

Նիստ երկրորդ

Երկրորդ նիստն սկսվեց ժամը 14:50-ին: Վկաներից նախ դատարանի դահլիճ հրավիրվեց Աբդուլ Քադիր էֆենդին, որի երդումից հետո սկսվեց հարցաքննությունը: Աբդուլ Քադիր էֆենդին վկայեց, որ տեղահանության ժամանակ ինքը ծառայության մեջ է եղել Կարմիր մահիկ հիվանդանոցում, այդ ընթացքում ուղարկվել է հայերից բաղկացած երեք քարավան, վիրավորներին հիվանդանոցից դուրս են գրել՝ [հայ] գաղթականներին տեղ տալու նպատակով, դեղագործը հայ էր: Վկան նաև նշեց, թե ինքը տեղեկություններ չունի հիվանդանոցում կատարված թունավորման դեպքերի մասին:

Այնուհետև նախագահը հիվանդանոցին վերաբերող մի քանի հարց տվեց Մեհմեդ Ալի բեյին, քանի որ անհամապատասխանություն նկատեց նրա նախկին և ներկայիս ցուցմունքների միջև:

Մեհմեդ Ալի բեյը հայտնեց, որ հիվանդանոցն ազատելու հանգամանքը պայմանավորված էր Գիրեսունում 1-2 հիվանդանոց բացելու և նրանց այնտեղ տեղափոխելու պահանջով:

Այս վկայություններից հետո առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյը քննարկման առարկա դարձրեց որոշ խնդիրներ: Ապա վկային տրվեցին այլ հարցեր: Մասնավորապես՝ դատապաշտպաններից Շևքաթի բեյը վկային հարցրեց, թե նա ճանաչո՞ւմ է արդյոք իր պաշտպանյալները հանդիսացող Ռըզա և Մուստաֆա բեյերին և, վկայի կարծիքով, նրանք տեղահանությանն առնչվել են, թե ոչ: Աբդուլ Քադիր էֆենդին նշեց, թե ինքը մեղադրյալներին ճանաչում է, սակայն նրանք, իր կարծիքով, տեղահանության հետ ոչ մի կապ չեն ունեցել:

Այնուհետև ընթերցվեց հանրային գործերի նախարար Ավնի փաշայի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Սայիբ բեյն իր պաշտոնական պարտականություններից դուրս որևէ այլ գործով չի զբաղվել:

Ապա վկայություն տալու համար դատարան հրավիրվեց երկրորդ դիվիզիոնի նախկին հրամանատար Վասըֆ բեյը: Վկան հայտնեց, թե ինքը տեղահանության ժամանակ եղել է Տրապիզոնի գլխավոր շտաբի պետը, իրենց դիվիզիոնը մասնակցություն չի ունեցել տեղահանության գործողություններին, իսկ տարագրության դեպքերին ինքը ականատես է եղել ճանապարհին՝ հանդիպելով հայերի 2 քարավանի: Վասըֆ բեյի վկայության համաձայն՝ գաղթականները նեղվել են միայն սովից, կոտորածների մասին բազմաթիվ լուրեր էին շրջում, բայց ինքը անձամբ ականատես չի եղել, ճանապարհին ռուսների դեմ պատերազմի ժամանակ զոհված մահմեդականներից բացի՝ ուրիշ ոչ մի մահացածի չի հանդիպել, թեև այդ ժամանակ այնտեղ ռազմական դրություն էր հայտարարված, բայց և այնպես՝ բոլոր պաշտոնները նախկինի պես պատկանում էին նահանգապետարանին, հրամանատարությանը վերաբերող պարտականություններն անգամ իրականացվում էին նահանգապետի կողմից, այդ պատճառով թեև թե՛ ինքը, թե՛ հրամանատարը մի քանի անգամ հրաժարական են տվել, այն չի ընդունվել, իրենց պաշտոնին չդավաճանելու համար ստիպված էին նման բաների դիմանալ: Վկան նշեց, թե ինքը տեղ-

յակ չի եղել տեղահանությանը վերաբերող հրահանգների մասին, տեղահանության գործողություններն իրականացվել են ոչ թե վալիի ստեղծած մի հանձնաժողովի, այլ՝ ընդամենը մի քանի հոգու կողմից: Ապա, Ալի Սայիբ բեյի՝ հիվանդանոցում մի քանի հոգու թունավորման մասին եղած խոսակցություններին անդրադառնալով, Վասըֆ բեյը հայտնեց, թե նման գործողություններ կատարելու համար Ալի Սաիբ բեյը պետք է որ անպատճառ մտերիմ լիներ նահանգապետի հետ, մինչդեռ իրերի դրությունն այդպիսին չէր, քանի որ Ալի Սայիբ բեյը մտերիմ հարաբերությունների մեջ էր նախկին հրամանատար Ավնի փաշայի հետ, հանգամանք, որը հաճո չէր վալիին: Չնայած եղած հակասական լուրերին՝ վկայի համոզմունքով թունավորման խնդրին իրականում իրազեկ էր միայն ռազմական ատյանը:

Այնուհետև վկաներից դատարան հրավիրվեց հարկային տեսուչ Հաքքը բեյը, որի երդումից հետո սկսվեց տեղահանությանը վերաբերող հարցաքննությունը: Վերոհիշյալը հայտնեց, թե տեղահանության ընթացքում այնտեղ չի եղել, հետևաբար՝ տեղեկությունների չի տիրապետում, սակայն իրեն լուրեր են հասել այն մասին, թե Սայիբ բեյը տարաձայնություններ է ունեցել նահանգապետի հետ, որոնց պատճառով դիմել է Ստամբուլի առողջապահության տեսչությանը՝ իրեն դժվարին պարտականություններից ազատելու խնդրանքով:

Այս ցուցմունքներից հետո բոլոր մեղադրյալներին դուրս տարան՝ բացի կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ռըզա բեյից, որը հարցաքննվեց առանց մյուս մեղադրյալների ներկայության:

Նիստն ավարտվեց ժամը 16:40-ին՝ ժամանակի սղության պատճառով: Որոշվեց նիստը շարունակել շաբաթ օրը՝ ժամը 10:00-ին:

4-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեև Նազըմ փաշայի նախագահության տակ գտնվող ռազմական արտակարգ ատյանը որոշել էր Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը շարունակել շաբաթ օրը՝ ժամը 10:00-ին, սակայն երեկ մեղադրյալների՝ ուշ ժամանելու պատճառով դատն սկսվեց հազիվ ժամը 13:30-ին:

Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Քուդրեթուլլահ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո դատարան հրավիրվեց Տրապիզոնի զինկոմիսարիատի նախկին նախագահ, պաշտոնաթող մայոր Նեջմեդդին բեյը, որի երդումից հետո սկսվեց Տրապիզոնի տեղահանությանը վերաբերող հարցաքննությունը: Վերոհիշյալը հայտնեց, որ ինքը որոշ բաներ լսել է [տեղահանության մասին], սակայն անձամբ ոչինչ չի տեսել: Տեղահանության վերաբերյալ որոշ տեղեկություններով հանդես գալուց հետո Նեջմեդդին բեյը դուրս եկավ. ներս բերվեց վկա Թահթաջըյան էֆենդին, որը երդվելուց հետո նշեց, որ թեև ինքը մի քանի տարի պետական պաշտոնյա է եղել, սակայն տեղահանությունից չի կարողացել խուսափել, այդ ընթացքում բազում չարագործությունների է ենթարկվել ժանդարմների կողմից, բազմաթիվ դժվարություններ կրելուց հետո Ալի Սայիբ բեյի շնորհիվ կարողացել է Քոնիա փախչել, որտեղ նույնպես խնդիրներ է ունեցել և դարձյալ Աստծո բարեգթությամբ տեղեկացել է, որ Ալի Սայիբ բեյն այստեղ վարում է առողջապահության տեսչի պաշտոնը,

կրկին նրան է դիմել և Ալի Սայիբ բեյի բարեհաճ վերաբերմունքի շնորհիվ կարողացել է փրկվել:

Թահքաջըյան էֆենդին Տրապիզոնի տեղահանության մասին մի քանի այլ տեղեկություններ ևս տվեց և դուրս եկավ:

Այնուհետև նախագահի հրամանով բոլոր մյուս մեղադրյալները դուրս եկան, դահլիճում մնաց միայն գործակալ Մուսթաֆա բեյը, որին հարցեր ուղղեցին առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյի և Տրապիզոնի քաղաքապետարանի բժիշկ Պետրոս էֆենդու միջև եղած հարաբերությունների, Պետրոս էֆենդու կնոջ և նրա մասին պտտվող որոշ լուրերի մասին: Մուսթաֆա բեյի պատասխանելուց հետո նրան դուրս տարան. ներս բերվեց Ալի Սայիբ բեյը: Վերջինիս հարցրեցին, թե արդյոք ընկերական կապերի մեջ եղե՞լ է Մուսթաֆա էֆենդու հետ: Ալի Սայիբ բեյը հայտնեց, որ ինքը 325 թ. (1909) ամենուր ակումբներ է բացել, որպես իր ուրախության արտահայտություն՝ սկսել է հրապարակել «Հուքուք-ու ումումիյե» անունը կրող մի պարբերական, որի գլխավոր խմբագրի և տնօրենի պատասխանատվությունն է ստանձնել Մնլան Զադե Ռիֆաաթը: Հետագայում «Հուքուք-ու ումումիյե» թերթի հետ այլևս կապ չի ունեցել: Մարտի 31-ի իրադարձություններից հետո գնացել է Սամսուն, որտեղ զբաղվել է բժշկությամբ: Բալկանյան պատերազմն սկսվելուց անմիջապես հետո վերադարձել է և մտել Կարմիր մահիկ հիվանդանոց, հետագայում պաշտոն ստանալու ակնկալիքով դիմել է այն ժամանակվա ներքին գործերի նախարար Ռեշիդ բեյին, սակայն այդ պահին վարչակազմում փոփոխություններ են կատարվել, և իշխանության է եկել Մահմուդ Շևքեթ փաշան: Որոշ ժամանակ անց ինքը նշանակում է ստացել Սվասի առողջապահական տեսչությունում, բայց ընդհանուր լեզու չի կարողացել գտնել վալի Մուամմեր բեյի հետ: Ի վերջո պաշտոն է ստացել Տրապիզոնում, սակայն այնտեղ կրկին խնդիրներ են ծագել: Փորձել է հրաժարական տալ, սակայն իր հրաժարականը չի ընդունվել: Տրապիզոնում իր պաշտոնավարության ընթացքում կատարված դեպքերը մանրամասնորեն նկա-

ռագրելուց հետո Ալի Սայիբ բեյը մի քանի իրադարձություն էլ պատմեց՝ Քոնիայում ունեցած իր պաշտոնի և պաշտոնաթողության առնչությամբ: Իր խոսքերը փորձեց հաստատել որոշ փաստաթղթերով:

Այնժամ նախագահը հանդես եկավ հետևյալ հարցով. «Սայիբ բեյը բարեկամական հարաբերություններ ունեցե՞լ է տիկին Արսլանյանի հետ»: Մեղադրյալը մի քանի հայտարարություններ կատարեց վերջինիս վերաբերյալ:

Նախագահի թույլտվությամբ դատն ավարտվեց ժամը 15:00-ին: Շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

6-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նիստ առաջին

Երեկ՝ ժամը 13:30-ից սկսած, ռազմական արտակարգ ատյանը Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս տեղակալներից Ռեշադ բեյը:

Վկաներից դահլիճ կանչվեց դաղստանցի Աբդուլլահ էֆենդին, որը երդում տալուց հետո հանդես եկավ տեղահանությանը վերաբերող տեղեկություններով: Վկան հայտնեց, որ տեղահանության ժամանակ գտնվել է Տրապիզոնում, սակայն իր ներկայության պահին տեղահանությունն արդեն ավարտին մոտ էր, միայն կանանց և երեխաներին տեղավորում էին Բաբալըք կոչվող դպրոցներում: Վկան նշեց նաև, որ ինքը Արսլանյանին թերևս ճանաչում է, տիկին Արսլանյանը իր մոտ գտնվելիս բոլորովին դուրս չէր գալիս, տիկինը Մուսթաֆա էֆենդու հետ ոչ մի առնչություն չի ունեցել: Աբդուլլահ էֆենդին հայտնեց նաև, թե իրեն տեղեկություններ են հասել, համաձայն որոնց՝ տիկին Արսլանյանի հեռանալուց հետո նրա ընտանիքին ծովն են նետել: Վկան կարծիք հայտնեց, թե այդ գործողությունը հավանաբար կատարվել է մակույկավարների կողմից: Նախագահի հարցին ի պատասխան՝ հայտնեց, թե ինքը գործակալ Մուսթաֆա էֆենդուն գաղթականների հետ չի տեսել:

Մուսթաֆա փաշա – Տեղյա՞կ եք, թե տիկին Արսլանյանն ում կողմից է տարագրվել:

Վկա – Ո՛չ, էֆենդի՛: Կարծում եմ՝ նահանգապետի:

Ռըզա բեյ – Ինձ տեղահանության ժամանակ Տրապիզոնում տեսե՞լ եք, էֆենդի՛:

Վկա – Ո՛չ, տեսել եմ տեղահանությունից մեկ ամիս առաջ:

Վկա Աբդուլլահ էֆենդին հայտնեց նաև, որ Նիազի էֆենդին իր մոտորանավակով ուղարկվել է ռազմական գերատեսչության հրամանով: Նա տեղահանությանը, վկայի համոզմունքով, չէր մասնակցել:

Ապա վկաներից դատարան հրավիրվեց ֆրանսահպատակ մսյո Վիտալին, որը հանդես եկավ տեղահանությանը վերաբերող տեղեկություններով: Մսյո Վիտալին վկայեց, որ տեղահանության ընթացքում գտնվել է Տրապիզոնում: Ծովով կատարվող տարագրությանն անդրադառնալով՝ նշեց, թե ծովից դուրս եկած Վարդանին հիվանդանոց են տարել ոստիկանները: «Գեղեցիկ տիկին» մականվամբ տիկնոջը զոհ են դարձրել դիտավորյալ կերպով: Վկան որոշ ցուցմունքներ տվեց Ալի Սայիբ բեյի դեմ: Հայտնեց նաև, որ տիկին Արսլանյանը բնակվում էր Հեքիմյան էֆենդու տանը: Երբ տիկինը հեռացել էր Աբդուլլահ էֆենդու տնից, իր զարդեղենի մի մասը թողել էր նրա մոտ, իսկ ինքը ոչ մի տեղեկություն չունի Տիկին Արսլանյանի թաղված դրամի և զարդեղենի մասին:

Այնժամ Ալի Սայիբ բեյը ոտքի ելավ և երկար ցուցմունքների միջոցով աշխատեց հերքել վկայի՝ դեպքերի վերաբերյալ կատարած հայտարարությունները:

Դատապաշտպան Սալահեդդին բեյ – Ալի Սայիբ բեյի կողմից թունավորված Վարդանը Կարմիր մահիկ հիվանդանոցի ո՞ր մասնաճյուղում է գտնվել:

Վկան պատասխանեց, թե ինքը տեղյակ չէ, և որ նրա կինն այդ պահին դատարանում է գտնվում. նրանից կարող են ճշտել: Մսյո Վիտալին երդվելով հաստատեց, որ երեխաների վերաբերյալ իր

պատմածները տեսել է սեփական աչքերով, և որ իր ցուցմունքները ճշմարիտ են:

Դատախազ – Նահանգապետի բոլոր խիստ գործողությունները միայն կոմիտեջիների՞ն էին ուղղված:

Վկա (մայոր Վիտալի) – Ո՛չ, բոլոր հայերն էին տարագրվում:

Նախագահ – Կարո՞ղ եք հրապարակել Տրապիզոնից բռնագաղթեցվածների թիվը:

Վկա – Մոտ 18.000 հոգի:

Դատապաշտպան Շևքաթի բեյ – Մեծարգո՛ փաշա, վկան կարո՞ղ է ասել, թե ինչպես է տրամադրված իմ պաշտպանյալ Մուստաֆա բեյի հանդեպ:

Նախագահ – Արդեն իսկ հայտնեց, որ երախտապարտ է նրան:

Այնուհետև վկաներից դահլիճ բերվեց Պետրոս էֆենդին: Հրապարակեցին նրա անձնական տվյալները, որից հետո վկան երդվեց:

Նախագահ (մեղադրյալներին մատնանշելով) – Նրանց մեջ ծանոթներ ունե՞ք:

Վկա (Պետրոս էֆենդին) – Ճանաչում եմ Ալի Սայիբ բեյին:

Նախագահ – Ինչպիսի՞ տպավորություն եք ստացել Ալի Սայիբ բեյից:

Վկա – Ալի Սայիբ բեյը նախքան իր հեռանալը որոշ անձանց աջակցություն է ցուցաբերել, իսկ իր հետագա գործունեության մասին տեղեկություններ չունեմ:

Նիստն ավարտվեց ժամը 12:00-ին, որպեսզի շարունակվի մեկ ժամ ընդմիջումից հետո:

Նիստ երկրորդ

Երկրորդ նիստն սկսվեց ժամը 13:30-ին: Մեղադրյալներին դուրս տարան. դահլիճում մնաց միայն Նիազի էֆենդին:

Նախագահ – Տեղահանությունից հետո և Տրապիզոնի անկումից մեկ ամիս առաջ Դուք Ձեր մոտորանավակով տեղափոխել եք Տրապիզոնի մանուֆակտուրայի խանութներին և Լքված գույքի հանձնաժողովին պատկանող իրերը. ի՞նչ կերպ է կատարվել փոխադրումը:

Նիազի էֆենդի – Տրապիզոնի անկման ժամանակ այստեղի ապրանքները փրկելու նպատակով կնքվել է մի համաձայնագիր, ըստ որի՝ մակույկավարների միջոցով փոխադրված իրերի մի մասը պատկանելու էր ապրանքատիրոջը, իսկ մյուս մասը՝ փոխադրումը կատարած նավի անձնակազմին: Դրանք Լքված գույքի իրերն էին:

Ապա Նիազի էֆենդին որոշ ցուցմունքներ տվեց Տրապիզոնում Լքված գույքի հանձնաժողովի կողմից կատարված վաճառքի հանգամանքների մասին: Մեղադրյալը նշեց նաև, որ լքված գույքից իրեն հասած իրերը ձեռք է բերել հրապարակային աճուրդի ճանապարհով. ինքը դրանք գնել է 200 օսմանյան լիրայով: Իսկ այն լուրերը, թե Ջեմալ Ազմին ոստիկանության միջոցով իրեն հրահանգել է վերոհիշյալ իրերն իր մոտ պահել, իրականությանը չեն համապատասխանում: Մեղադրյալը հայտնեց նաև, թե ինքը տեղյակ չէ Տրապիզոնի տեղահանությունից մեկ ամիս առաջ վալի Ազմի բեյի և նրա աներձագ Ռամիզ էֆենդու կողմից լքված գույքը 42 նավակով տեղափոխելու մասին: Ի պատասխան այն տեղեկությունների, համաձայն որոնց՝ ոստիկան Սալիմ էֆենդին Վարդարյանի խանութից մի քանի գորգ է տեղափոխել Ջեմալ Ազմի բեյի տուն, մեղադրյալը հայտնեց, թե ինքը Սալիմ էֆենդուն չի ճանաչում: Նիազի էֆենդին ոչ ստույգ համարեց Տրապիզոնի բոլոր ծովային միջոցներն իր ձեռքում գտնված լինելու մասին եղած խոսակցությունները:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո Նիազի էֆենդին դուրս տարվեց. դահլիճ բերվեց գործակալ Մուսթաֆա էֆենդին: Նախագահի տված հարցերին ի պատասխան՝ Մուսթաֆա էֆեն-

դին հայտնեց, թե ինքը ոչ մի առնչություն չի ունեցել հասարակական գործերի գլխավոր քարտուղար Հալիմ էֆենդու հետ, Վարդանին պատկանած դրամարկղն իր կողմից վալիին հասցվելու մասին տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Մուսթաֆա էֆենդին նաև նշեց, որ վիլայեթի հացի խնդիրը լուծելու նպատակով վալիից և առևտրականներից բաղկացած մի ընկերություն է կազմավորվել: Մեղադրյալի ցուցմունքների համաձայն՝ ինքը գլխավոր ինժեներ Ֆեհմի բեյին ճանաչում է, սակայն նրա հետ ընկերական հարաբերություններ չի ունեցել:

Մուսթաֆա էֆենդին դուրս տարվեց. ներս բերվեց ոստիկանական տեսուչ Նուրի էֆենդին: Սովորականի նման նրան հարցեր տվեց նախագահը: Նուրի էֆենդին հայտնեց, որ Լքված գույքի հանձնաժողովի կազմում ընդգրկված եղել է, սակայն չի հիշում այնպիսի մի դեպք, երբ 6000 լիրա արժողություն ունեցող իրերը Նիազի էֆենդուն տրվեին 200 լիրա գումարով (թեև գործում նման բան նշված է եղել): Մեղադրյալ Նուրի էֆենդին նաև նշեց, որ վիլայեթում հացի կարիքը թեթևացնելու նպատակով ստեղծվել է մի կազմակերպություն, որը բաղկացած է եղել առևտրականներից և նահանգապետից: Նուրի էֆենդու ցուցմունքների համաձայն՝ տեղահանության ժամանակ ծովային ոստիկանություն չի եղել, իսկ ինքը տեղյակ չէ՝ նավերը և ծովային բոլոր փոխադրամիջոցները ղեկավարվել են Նիազի և Մուսթաֆա էֆենդիների՞ կողմից, թե՞ ոչ: Վերոհիշյալը վկայեց նաև, որ Սալիմ էֆենդին պասիվ և իր պաշտոնից անտեղյակ մի մարդ էր, իսկ գաղթականների անունները որևէ ցուցակում չեն գրանցվել:

Նիստն ավարտվեց ժամը 14:30-ին: Շարունակվելու է հաջորդ օրը՝ ժամը 13:30-ին:

8-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեև Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը պետք է շարունակվեր երեկ ժամը 13:30-ին, սակայն, քանի որ դատարանի կազմն անհրաժեշտ համարեց որոշ խնդիրներ քննարկել, այն սկսվեց հազիվ 15:30-ին: Դատախազի աթոռին էր Ռեշադ բեյը: Քանի որ դատարանի կազմի անդամներից Ռեջեփ Ֆերդի բեյը չէր եկել, նրան ստաժորներից փոխարինում էր գնդապետ Լյութֆի բեյը:

Վկաներից նախ եկավ ֆրանսիացի Փերլորանը. նրա վկայությունները թարգմանեց փաստաբանների կոլեգիայի նախագահ, դատապաշտպան Ջելալեդդին Արիֆ բեյը: Նրանք երկուսն էլ երդվեցին, որից հետո Փերլորանը հանդես եկավ տեղեկություններով: Վկան հայտնեց, թե տեղահանությունը կատարվել է հինգ օրվա ընթացքում և իրականացվել է թաղամաս առ թաղամաս, ըստ խոսակցությունների՝ սահմանից դուրս գալուն պես հայերի իրերը վերցրել են: Վկան հայտնեց, որ ճանաչում է բժիշկ Արսլանյանին, բայց ոչ՝ նրա տիկնոջը, տեղյակ չէ բոլոր հիվանդանոցների թվի մասին, տեղահանության ժամանակ որևէ բան չի լսել կատարված թունավորումների մասին, սակայն տեղահանությունից հետո նման լուրեր իրեն էլ են հասել, տեսել է, որ տեղահանությունն իրականացվել է նավակների միջոցով, լսել է, որ դրանցից մեկը փրկվել է, մեղադրյալներից ճանաչում է միայն Թալեաթ և Մուսթաֆա բեյերին: Նրա վկայությունների համաձայն՝ քանի որ

Մուսթաֆա բեյն է պատճառ եղել, որ ինքն այնտեղ մնա, դրա համար էլ երախտապարտ է նրան: Ըստ վկայի՝ նա զբաղվում էր միայն նավահանգստից դեպի Ստամբուլ կատարվող առաքումներով, սակայն ոչ մի առնչություն չի ունեցել հայերի հետ, նույնիսկ մի օր, երբ ինքը Մուսթաֆա բեյի հետ նավահանգստում ֆրանսերենով զրուցում էր, վերջինս դեմ է արտահայտվել տեղահանությանը՝ ասելով. «Այս ամենից հետո ի՞նչ երեսով եք Եվրոպա գնալու»:

Այնուհետև վկաներից եկավ Ֆինանսների նախարարության եկամտի տնօրեն Լյութֆի բեյը: Ըստ օրենքի երդվելուց հետո վկան տեղեկություններ տվեց տեղահանության մասին: Վերոնշյալ վկան հանդես եկավ մեղադրյալներից մի քանիսի, մասնավորապես՝ Մեհմեդ Ալի ու Նիազի բեյերի դեմ ուղղված ցուցմունքներով: Տեղակալներից Սալահադդին բեյը և մեղադրյալները բազմաթիվ հարցեր տվեցին նրան: Այնուամենայնիվ, ժամանակի սղության պատճառով դատը 17:30-ին ընդմիջվեց: Կշարունակվի այսօր՝ ժամը 10:30-ին, որի ժամանակ դարձյալ ունկնդրության կարժանացվի Լյութֆի բեյի վկայությունը:

9-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ

Նիստ առաջին

Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարությունը երեկ շարունակվեց ժամը 11:15-ին: Դատախազի պաշտոնում էր տեղակալներից Ռեշադ բեյը:

Վկաներից դատարան հրավիրվեց Եկամտի տնօրեն Լյութֆի բեյը: Դատարանի կազմը լսեց երեկ սկսած նրա վկայության շարունակությունը: Լյութֆի բեյը հայտնեց, որ Լքյալ գույքի վերաբերյալ Ֆինանսների նախարարությունից որևէ հրաման չի ստացվել, ծայրահեղ դեպքում նման հրաման կարող էր հրապարակել Ներքին գործերի նախարարությունը: Ըստ Լյութֆի բեյի՝ լքված գույքը հանձնվել է պահեստներ և կնքվել: Երբ ինքը գրավել է հանձնաժողովի նախագահի պաշտոնը, իրեն ոչ մի բան չի հանձնվել: Հանձնվել են միայն պահեստներում գտնվող իրերը: Իրեն որևէ հրահանգ չի հղվել՝ լքված գույքը պահպանելու ուղղությամբ: Լքված գույքի պահպանության համար ոչ մի դիմում որևէ արդյունք չէր կարողանալու ունենալ, որովհետև չէր համապատասխանում այն սկզբունքներին, որոնց հետևում էին այն ժամանակ: Տրապիզոնի անկման ժամանակ կարգավորող հանձնաժողովները հազիվ իրենց պարտականություններն էին կատարում, և ինքը կենտրոնից հեռացել էր Տրապիզոնի անկումից մեկ շաբաթ առաջ: Քարավանները տեղահանության ընթացքում խուզարկվել են, թանկարժեք իրերն ու կանխիկ դրամը վերցրել են հայերի մոտից, սակայն իրենց չեն հանձնվել:

Նախագահը, ոստիկանապետին դիմելով, նշեց, թե քանի որ վերջինս եղել է Խուզարկության հանձնաժողովի անդամ, պետք է որ տեղյակ լիներ լքված գույքի խնդրի մասին: Ոստիկանապետ Նուրի բեյը երկար հայտարարությամբ հանդես գալուց հետո ասաց. «Էֆենդի՛, Տրապիզոնի բնակիչներն ազնիվ են ու բարոյական: Նրանք ոչ մի կողոպուտով էլ չեն զբաղվել: Բացի այդ՝ չեն կարողացել լքված գույքը տեղավորելու ժամանակ ցուցակագրել: Դրանից հետո Ձեր խոնարհ ծառան նամակի միջոցով այս խնդիրը ներկայացրել է նահանգին: Այդ նամակն ուղարկվել էր հանձնաժողովի նախագահությանը»:

Նիազի էֆենդին նախագահին խնդրեց վկային հարցնել, թե տեղահանության ընթացքում իր վրա հատուկ պարտականություն դրված եղե՞լ է, թե՞ ոչ: Վկա Լյութֆի բեյն ասաց, թե նման բան չի լսել Նիազի բեյի առնչությամբ: Վկան նշեց նաև, թե տեղահանությունն իրականացվել է տարբեր միջոցներով:

Նախագահ – Ասում են, թե տեղահանությունից քիչ առաջ մակույկով տեղափոխվել են նահանգապետին և այլոց պատկանող որոշ իրեր. դրա մասին տեղեկություններ ունե՞ք:

Վկա – Նիազի էֆենդին մակույկի տերն էր: Գալիս էր Ստամբուլ, գնում Գիրեսուն: Մի խոսքով՝ մակույկով ճամփորդում էր ամենուր: Սակայն որևէ բան չեմ լսել նման իրերի՝ Գիրեսուն փոխադրելու մասին:

Նախագահ – Արդյոք տեղյա՞կ եք, թե ինչ հիմքի վրա էին ստեղծվել Նիազի էֆենդու և նահանգապետի ընկերական հարաբերությունները:

Վկա – Նիազի էֆենդին մի քանի մոտորանավակ ուներ: Օգտագործում էր դրանք և զբաղվում առաքումներով: Բնականաբար հարստությունն էլ էր դիզել:

Վկայի վերոնշյալ խոսքերից հետո Նիազի էֆենդին, ոտքի կանգնելով ու նահանգապետի և իր միջև եղած բարեկամական հարաբերություններին անդրադառնալով, ասաց, թե քանմեկ նավեր ռմբակոծել էին Տրապիզոնը, որից հետո նավահանգստի մոտակայքում ինքնաշարժ ական էր դրվել, և մի մակույկ, այդ ականներից մեկին դիպչելով, խորտակվել էր: Ինքը, նավապետի ճիչը լսելով, նավակով գնացել էր՝ փրկելու նպատակով: Փրկել էր

նավապետին: Վերջինս դրա, ինչպես նաև՝ հայրենիքին այլ բազմաթիվ ծառայություններ մատուցած լինելու համար իրեն կանչել էր և իր երախտագիտությունը հայտնել: Այդ մտերմությունն էլ առաջացել է միմիայն այդ ծառայությունների արդյունքում, և այսօր ոչ ոք չի կարող իրեն մեղադրել դրամ շորթելու և անօրինականություններ անելու մեջ: Նիազի էֆենդին ի պաշտպանություն իրեն դեռ շատ այլ բաներ ասաց:

Այնուհետև Լյութֆի բեյն աշխատեց հերքել Նիազի էֆենդու խոսքերը և իր պնդումներն ապացուցել՝ որոշ փաստաթղթեր ներկայացնելով: Լյութֆի բեյն ասաց նաև, թե ցավում է, որ կենտրոնական կոմիտեի անդամ Ռըզա բեյին տեսնում է մեղադրյալի աթոռին: Նա նաև նշեց, որ խլիզը տանջող այդ խնդիրների մասին հայտնել է ամիրին: Դրանք ևս ընթերցեց, որից հետո դատարանի կազմի անդամներից Մուստաֆա փաշան որոշ կարևոր հարցեր տվեց վկային: Հենց որ Լյութֆի բեյը պատասխանեց այդ հարցերի մի մասին, Ալի Սայիք բեյը, ոտքի ելնելով, ասաց, թե վկայի խոսքերն արժանահավատ չեն, և որ թեև Մահմուդ Քյամիլ փաշան իրեն կանչել է զինվորական ծառայության, սակայն նահանգապետ Ազմի բեյը չի ուղարկել: Դրա համար անհրաժեշտ էր, որ Լյութֆի բեյը նահանգապետի բարեհաճությունը իրենցից ավելի շատ շահած լիներ:

Առաջին նիստն ավարտվեց ժամը 13:30-ին:

Նիստ երկրորդ

Երկրորդ նիստն սկսվեց ժամը 14:30-ին: Այս անգամ Ռեջեփ Ֆերդի բեյին փոխարինում էր ստաժոր Լյութֆի բեյը: Նախ վկաներից դատարան հրավիրվեց Ավնի բեյը: Նրան տվեցին անցած անգամվա հարցերը, քանի որ նախորդ վկայության ժամանակ պատասխանները ոչ բավարար էին համարվել: Վկան այդ հարցերին պատասխանելուց հետո դուրս եկավ: Այնուհետև նախագահը որոշ հարցեր տվեց մաքսատան տեսուչ Մեհմեդ Ալի բեյին: Երկրորդ նիստն ավարտվեց ժամը 15:05-ին: Դատը շարունակվելու է հինգշաբթի օրը՝ ժամը 10-ին:

10-ը ապրիլի, 1919 թ., «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին նիպ

Երեկ՝ ժամը 11:20-ից, ռազմական արտակարգ ատյանն սկսեց ուսումնասիրել Տրապիզոնի հայերի տեղահանության գործը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս առաջին տեղակալ Թալեաթ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուն պես բոլոր մեղադրյալներին դուրս տարան՝ բացի ոստիկանապետ Նուրի բեյից: Հարցաքննությունն սկսվեց: Նուրի բեյը հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. ինքը լքված գույքը ոստիկանների միջոցով ոչ մի տեղ չի տեղափոխել, հասարակական կարգուկանոնը պահպանելու նպատակով պատժել է փոքրոգություն ցուցաբերած ոստիկաններին, ամերիկյան դպրոցի պահեստը չի դասակարգվել, այնտեղ է գտնվել միայն Թանկարժեք իրերի հանձնաժողովը, որում ընդգրկված են եղել գյուղատնտեսության տեսուչը, Ալի Սայիք բեյը և այլք: Հանձնաժողովի ցուցակները պահպանվում էին կոմիսար Ալի էֆենդու կողմից: Ինքը տեղյակ չէ՝ գույքի մասին տեսչին անդորրագիր տրվել է, թե ոչ, սակայն երբ մի օր այնտեղ է գնացել, հաջորդ օրը նկատել է, որ մեկը յուրացրել է լքված իրերը: Չափազանցված են այն լուրերը, համաձայն որոնց՝ առաջին օրը յուրացվել է 3000 լիրա, 150 մանաթ և 80 կտոր արծաթ, բայց կոնկրետ քանակի մասին տեղեկություն չունի: Նուրի բեյի ցուցմունքների համաձայն՝ վարձակալության տակ գտնվող տունը պատկանում էր ոչ թե հայերին, այլ ոմն Իսմայիլ էֆենդու վարձու տունն էր: Մեղադրյալը նշեց նաև, որ ինքը վերոհիշյալ տունը վարձել էր 3 լիրայով, տարագրված ընտանիքը հեռանալիս անդորրագրով հանձնել էր Իսմայիլ էֆենդուն, իսկ ինքը տունը վարձել էր՝ ներսի

իրերը Իսմայիլ էֆենդուն պատկանելու մասին պաշտոնապես հավաստիանալուց հետո միայն: Տանը միայն խոհանոցային սպասք չի եղել: Բացարձակ սուտ են իրերն իր կողմից յուրացվելու մասին լուրերը: Ըստ մեղադրյալի՝ խաբեություն էին դաղստանցի ոստիկան Նուրի էֆենդու ցուցմունքները: Ինքը եղել է փախստականներից: Իր մասին հայտարարությունը սխալ է: Երկու ոստիկանի կողմից երկու հայ աղջկա նկատմամբ կատարված հարձակման մի դեպք է գրանցվել միայն, աղջիկները հանձնվել են ոչ թե մետրոպոլիտին, այլ՝ Կոստակի էֆենդուն: Մեղադրյալը հայտնեց նաև, որ ինքը հիշում է Վարդանին պատկանած դրամապանակի մասին: Այդ կապակցությամբ գործակալ Մուսթաֆա էֆենդու մոտ հետաքննություն է կատարել, որի արդյունքում Մուսթաֆա էֆենդին հավաստիացրել է իրեն, թե դրամարկղը ինքը վալիին է հանձնել և, քանի որ Մուսթաֆա էֆենդին հայտնի և պատվարժան անձնավորություն էր, ինքը վստահել էր [նրա խոսքերին]: Աղջիկներին ամենամոտ թշնամու[53] հպատակ հանդիսացող Կոստակի էֆենդուն հանձնելու հանգամանքը արժանացել էր նահանգապետի հավանությանը:

Մեղադրյալը վերոհիշյալ ցուցմունքներով հանդես գալուց հետո դուրս եկավ:

Ներս բերվեց Նիազի էֆենդին, որին տրվեցին բազում և տարաբնույթ հարցեր: Նիազի էֆենդին հայտնեց, որ բանակից ստացված 2 խանութի իրերն իրեն են հասել աճուրդի ճանապարհով: Գնումները մանրամասնորեն թվարկելուց հետո (սրանցից մեկը գնվել էր 2500, իսկ մյուսը՝ 400 լիրայով) նշեց, թե ինքն աճուրդին միջնորդադրամ էր վճարել, իսկ մակլերներին ուղարկում էր քաղաքապետարանը: Մեղադրյալի համոզմամբ՝ ճշմարտությանը չեն համապատասխանում աճուրդի ժամանակ իր՝ վճարելու խոսքից հետ կանգնելու և իրերը յուրացնելու մասին տե-

[53] Նկատի ունի՝ հույն:

ղեկությունները. տեղահանության գործին երբևիցե մասնակցություն չի ունեցել, իսկ եթե մասնակցած լիներ և գույքի հափշտակման հետ առնչություն ունեցած լիներ, ապա ցավով կխոստովաներ դրա մասին և կկրեր իրեն հասանելիք պատիժը: Մեղադրյալն ընդգծեց, թե ինքն իր պաշտոնը երբեք չի չարաշահել այնպիսի անպատվաբեր գործի նախաձեռնությամբ, ինչպիսին էր գույքի յուրացումը:

Այնուհետև ընթերցվեց ոստիկան Իսլամ էֆենդու ցուցմունքը: Նիազի էֆենդին մի քանի այլ մեկնաբանություններ ևս կատարեց, որից հետո, ժամանակի սղության պատճառով ժամը 12:30-ին նիստն ավարտվեց. հայտարարվեց ընդմիջում մինչև ժամը 15:00-ն:

ՆԵՎԶԱԹ ԲԵՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ[54]

Ժամը 14:30-ին դատարանի կազմը մտավ դահլիճ, և սկսվեց Նեզաթ բեյի գործի քննությունը: Դատախազի պաշտոնը զբաղեցնում էր Ռեշադ բեյը: Սկզբում, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ կանչված վկան չէր ներկայացել, մեղադրյալին հարցաքննեցին Յակուբ Ջեմիլի խնդրի կապակցությամբ: Այնժամ դատապաշտպան Հայրի բեյը ոտքի ելավ և հայտարարեց, թե դրա մասին մեղադրյալը նախկինում ցուցմունքներ տվել էր, և միևնույն հարցերը տալու անհրաժեշտությունը չկար: Սակայն նրա առարկությունը չընդունվեց նախագահողի կողմից: Ապա դատապաշտպանին հարց տրվեց այն մասին, թե Յակուբ Ջեմիլի խնդրի հետ կապված վերոհիշյալ ռազմական ատյանը ինչ որոշում էր ընդունել: Հայրի բեյը հայտնեց, թե, ռազմական ատյանի որոշման համաձայն, Նեզաթ բեյին աքսորել են Մոսուլ: Այնժամ դատախազի տեղակալը նշեց, թե Բարձր Դռան դեպքերի ընթացքում կատարված Նազըմ փաշայի սպանության հեղինակն է եղել Յակուբ Ջեմիլը, իսկ Նեզաթ բեյը Բարձր Դռան խնդրի հետ առնչվել է Յա-

---

[54] Մոսուլի նախկին գլխավոր հրամանատար Նեզաթ բեյի դատաքննության շրջանակներում վկայություններ են արձանագրվել մեղադրյալի՝ աքսորյալ հայերի մոտից մետաղյա դրամներ խլելու մասին: Մոսուլի քաղաքապետի խորհրդական Չերքեզ Բեքիրի տված ցուցմունքի համաձայն՝ Նեզաթը փակել է տվել հայերի բոլոր խանութները, նրանց աքսորել դեպի անապատները և սպանել տվել: 1919 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած նիստում ընթերցվել է Ստամբուլի մաքսատան վարչության վիճակագրական գրասենյակի քարտուղարներից Ջեմալի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ Մոսուլում «հայ կանայք ծեծի են ենթարկվել ողջ գիշեր»: Քանի որ Նեզաթը 1919 թ. մայիսի 28-ին բրիտանացիների կողմից Մալթա աքսորված մեղադրյալների շարքում է եղել, նրա դատավարությունը հետաձգվել է և այլևս չի շարունակվել: Վերոհիշյալ մեղադրյալը հետագայում՝ 1921 թ. սեպտեմբերի 6-ին, փախել է աքսորավայրից:

կուբ Ջեմիլի հետ համատեղ: Այդ պահին Յակուբ Ջեմիլի գործի քննության հետ կապված որոշ վիճաբանություններ եղան նախագահի, դատախազի և դատապաշտպանի միջև: Նախագահն ընդգծեց ամեն տեսակի հարց տալու իր իրավունքը, իսկ դատախազը պահանջեց, որ դատապաշտպանները ամեն ինչին չառարկեն:

Ապա հարցաքննությունը վերսկսվեց: Նևզաթ բեյը ցուցմունքներ տվեց այն մասին, որ ինքը քաղաքի պարետատանը չի հյուրընկալել Աբդուլ Ռեզաք էֆենդուն, ոչ մի առնչություն չի ունեցել վալիի հետ: Թերևս ինքն առնչվել է Հալիլ բեյի հետ՝ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջինս զինվոր է եղել, իսկ ինքը՝ հրամանատար: Ապա մեղադրյալն ընդգծեց, թե ինքը չի սպանել Աբդուլ Ռեզաք էֆենդուն, առավել ևս չի մասնակցել դիակը վերացնելուն ուղղված գործողություններին: Մեղադրյալի համոզմունքով՝ իրեն վերագրված բոլոր մեղադրանքներն անհիմն են. ինքը պատվախնդիր զինվոր է եղել, վկաների ցուցմունքները սուտ են: Ինքն իր պաշտոնական պարտականությունները կատարել է անթերի, հնարավորության դեպքում կարող է մատնանշել հոգուտ իրեն հանդես եկող վկաների:

Մեղադրյալի կողմից տրված այս ցուցմունքներից հետո, վկաների չժամանելու պատճառով, նիստը հետաձգվեց մինչև չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ը:

Երրորդ նիստ

Տրապիզոնի դատավարության նիստը երեկ վերսկսվեց ժամը 15:38-ին: Մեղադրող կողմը ներկայացնում էր [դատախազի] տեղակալներից Թալեաթ բեյը: Վկաներից նախ դահլիճ հրավիրվեց գլխավոր շտաբի փոխգնդապետ Մուհթար բեյը, որի երդումից հետո հարցաքննությունն սկսվեց: Վկան հայտնեց, որ տեղահանության ժամանակ բացակայել է Տրապիզոնից, սակայն Գիրեսունում կայմակամ Արիֆ բեյից [տեղահանության մասին] տեղեկանալով՝ վերադարձել է Տրապիզոն, որտեղ իջևանել է նահանգապետ Ազմիի մոտ, որն իր վրա էր վերցրել արտահանման հետ կապված բոլոր գործերի պատասխանատվությունը: Ընդ որում՝ նահանգապետն այդ պաշտոնում նշանակվել էր բանակի [հրամանատարության] կողմից: Վկան նաև նշեց, թե [բանակի] հրամանատարության պարտականությունը սահմանափակվում էր միայն ջոկատների և ափերի ղեկավարությամբ: Մուհթար բեյը հայտնեց, որ մեղադրյալների մասին ինքը ոչինչ չի լսել: Միայն տեղյակ է, որ Ռըզա բեյը զբաղվում էր բացառապես Հատուկ կազմակերպության խնդիրներով, իսկ Մուստաֆա էֆենդին՝ տարագրության: Վկայի տեղեկությունների համաձայն՝ բժիշկ Ալի Սայիբ բեյն առողջապահության տեսուչ է եղել ու, թեև ոչ մի հանցագործություն չի կատարել, ամեն դեպքում նրա դեմ ուղղված ցուցմունքներ են գրանցվել: Թալեաթ բեյին նմանապես որպես պատվարժան պաշտոնյայի է ճանաչում, իսկ Նիազի բեյի հետ ծանոթ չի եղել: Վկայի խոսքերով՝ Մուստաֆա բեյը տեղահանությանը չի մասնակցել ո՛չ որպես մատակարար, ո՛չ էլ որպես պաշտոնյա: Մուհթար բեյը տեղեկություններ չուներ Էրզրումի նախկին վալի Թահսին բեյի՝ ճանապարհին հանդիպած քարավանների անվտանգության համար մեկ-երկու ոստիկան առաքված լինելու մասին: Վկան հայտնեց նաև, որ Ալի Սայիբ բեյը հաճախ է խոսել

վալիի անմիտ քայլերի մասին: Վկան նշեց, թե տեղյակ է Կարմիր մահիկ հիվանդանոցի մասին: Այլ ռազմական օթևան-հիվանդանոցները նույնպես պատկանում էին նահանգապետին: Վկայի ցուցմունքների համաձայն՝ Մուսթաֆա էֆենդուն վստահված պաշտոնական պարտականությունների կատարման մեջ հանցագործության ոչ մի դրդապատճառ չի նկատվել:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո վկան դուրս եկավ դահլիճից: Ներս մտավ հարյուրապետ Մեհմեդ Ալի բեյը, որը երդվեց: Նախագահը վկային խնդրեց հայտնել մեղադրյալների մասին իր ունեցած տեղեկությունները: Մեհմեդ Ալի բեյը նշեց, թե հայերի տեղահանության ժամանակ ինքը գտնվել է ռազմաճակատում, իսկ փոխադրման միջոցները պատկանել են մի քանի հոգու: Այս ցուցմունքներով հանդես գալուց հետո վկան դուրս եկավ:

Այնուհետև բոլոր մեղադրյալները դուրս տարվեցին՝ բացի Թալեաթ բեյից: Վերջինս հայտնեց, որ Տրապիզոնի ժանդարմերիայի հրամանատարը եղել է Թևֆիկ բեյը, որը հնարավորինս անթերի է կատարել իր պաշտոնական պարտականությունները: Մեղադրյալի ցուցմունքների համաձայն՝ տեղահանությունն իրականացվում էր զորահավաքի հռչակումից հետո կազմված շարժական ժանդարմերիայի զորքի կողմից: Թալեաթ բեյը նշեց, որ ժանդարմերիայի գումարտակի հրամանատարի պաշտոնը զբաղեցրել են տարբեր անձինք: Մեղադրյալը հավաստիացնում էր, թե լսված դեպքերի առնչությամբ պաշտոնապես քայլեր են ձեռնարկվել: Թալեաթ բեյը հայտնեց նաև, որ ռազմական հարկերի հանձնաժողովը բաղկացած է եղել 6 հոգուց, ինքը միշտ էլ արհեստավարժ աշխատող է եղել և երբեք որևէ կուսակցության չի հարել:

Մեղադրյալի վերոհիշյալ ցուցմունքներից հետո նիստը հետաձգվեց մինչև շաբաթ օրը՝ ժամը 13:00-ը:

11-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ

Տրապիզոնի դատավարությունը երեկ շարունակվեց ժամը 14:30-ին: Դատախազի պաշտոնում էր գլխավոր տեղակալ Թալեաթը: Վկաներից նախ դատարան հրավիրվեց ժանդարմերիայի ավագ լեյտենանտ Մյունիք էֆենդին, որը հարցաքննության ենթարկվեց երդվելուց հետո: Վկան հայտնեց, որ ճանաչում է Նիազի և Թալեաթ բեյերին: Ասաց, թե ինքը տեղահանության ժամանակ եղել է Տրապիզոնում, տեղահանությունն սկսվել է 331 թ. (1915) հունիսին, մանրամասն բացատրեց, թե Տրապիզոնում իր գտնված վայրում ինչպես է կատարվել տեղահանությունը, և մասնավորապես ինքը ինչ պարտականություններ է ունեցել տեղահանության ընթացքում: Մյունիք էֆենդին նշեց, որ երբ մի օր հագուստը փոխելիս է եղել, Տրապիզոնի Պետական պարտքի գրասենյակի պաշտոնյան եկել և հայտնել է, թե հայերին լցրել են բեռնանավերը և ծովը նետելով՝ ոչնչացրել: Մի գիշեր, երբ ինքը անկողնում պառկած է եղել, մի քանի զինված անձինք ջարդել են իր դուռը. նրանց մեջ է եղել նաև քաղին[55]: Նրանք ներս մտնելուն պես մի նամակ են հանձնել իրեն: Նամակում հայերի տեղահանությանը վերաբերող հաղորդագրությամբ նշվում էր, թե ինքը գյուղական վարչական պաշտոնյաներից Օմեր էֆենդու հետ մեկտեղ նշանակվել է տեղահանության համար պատասխանատու հրամանատար: Նամակին կցված է եղել հայերի տարագրվելու կերպի վերաբերյալ մի կանոնադրություն, որը բաղկացած է եղել 25 հոդվածներից: Տեղահանության համար իրեն տրվում էր 5 օր ժամանակ: Վկան պատմեց նաև այդ ընթացքում իր հետ պատահած դեպքերի մասին, որոնց պատճառով հեռացվել է ժանդարմությունից, քանի որ նկատի են առել Տրապիզոնի ժանդարմերիայի հրամանատար Թևֆիկ բեյի չարաշահումները: Վկայի վերոնշյալ

---

[55] Մահմեդական դատավոր:

ցուցմունքներից հետո պարզվեց, որ վկան թե՛ դատախազության պահանջով և թե՛ դատարանի կազմի կամքով չի ներկայացել վկայություն տալու համար: Նրան դուրս տարան, քանի որ երբ, որպես վերջին հարց, նրան հարցրեցին, թե մեղադրյալների մասին որևէ բան լսել է՞, նա հայտնեց, թե ոչինչ չգիտե, և պահանջեց միայն վերոհիշյալ Թևֆիկ բեյի դատապարտումը:

Այնուհետև դատարան հրավիրվեց ներկայում Սննդի նախարարությունում աշխատող Մեհմեդ Ալի բեյը, որը երդվեց ըստ ընդունված կարգի, ապա տեղեկություններ տվեց որոշ մեղադրյալների և տեղահանության ժամանակ կատարված չարագործությունների և սպանությունների վերաբերյալ: Ընթերցվեցին Հետաքննիչ հանձնաժողովին տված նրա ցուցմունքները, որից հետո թե՛ մեղադրյալ Մուսթաֆան և թե՛ դատապաշտպան Շեֆքաթին, ոտքի կանգնելով, ասացին, թե Մեհմեդ Ալի բեյը նախկինում դատված է եղել, և որ Մաքսատան վարչության մատյանից պարզ կդառնա, թե ինչ մարդ է նա իրականում: Ըստ վերոհիշյալների՝ Մեհմեդ Ալի բեյը անամոթաբար է վերաբերվել Տրապիզոնում իսլամացած մեկի հետ, որին զրկել է կուսությունից, ինչպես նաև՝ կողոպտել է հայերի գույքը: Նրանք պահանջեցին Մաքսատան վարչությունից բերել այդ գործի թարգմանությունը:

Նախագահը դարձյալ կանչեց վկա Աբդուլլահ էֆենդուն, որին նկատեց ունկնդիրների շարքերում: Եվ երբ Աբդուլլահ էֆենդին արդեն երկրորդ անգամ պատմեց, թե ինչպես է պաշտպանել տիկին Արսլանյանին, պարզվեց, որ Մեհմեդ Ալի բեյի պատմածները ամբողջությամբ սուտ էին:

Այդ պահին դատախազի տեղակալը, ոտքի կանգնելով՝ պահանջեց, որ Մեհմեդ Ալի բեյը պարզաբանի այն մեծ հակասությունը, որը նկատվեց նրա գրավոր ու բանավոր ցուցմունքների միջև: Դատախազի տեղակալը հարցրեց, թե քանի որ նրա խոսքերը լիովին բացարկվում են, ապա ինչի՞ վրա է հիմնվում նրա հայտարարությունը: Մեհմեդ Ալի բեյը կրկին ինչ-որ խուսափողական բաներ ասաց:

Նախագահը հայտարարեց. «Շա՛տ լավ, բայց ի նկատի ունեցեք, որ երբ որևէ վկայի սուտ խոսելը հաստատվում է, նա պատժվում է ամենայն խոստությամբ»:

Ապա բոլոր մեղադրյալները դուրս տարվեցին՝ բացի Թալեաթ բեյից: Սկսվեց վերջինիս հարցաքննությունը: Նա հայտնեց, թե չէր կարող տեղյակ լինել Ռազմական հարկերի հանձնաժողովից մեղադրյալ Մեհմեդ Ալի բեյի՝ կոնյակ գնելուն վերաբերող որոշ գործերի մասին, անհրաժեշտ կլինի այդ հանգամանքը ճշտել Ռազմական հարկերի հանձնաժողովի թղթապանակներից, և որ ինքը երբեք չէր հանդուրժի Մեհմեդ Ալի բեյի՝ կոնյակի հետ կապված չարաշահումները: Թալեաթն այս ամենն ասելուց հետո դուրս տարվեց: Ներս բերվեց Մեհմեդ Ալին: Վերջինիս հարցրեցին, թե Ռազմական հարկերի հանձնաժողովի անունից որևէ գնում արե՞լ է, թե ոչ: Նա ասաց, թե քանի որ Ռազմական հարկերի հանձնաժողովում ոչ մի պաշտոն չի ունեցել, ապա գնումներ էլ չէր կարող արած լինել: Նրա վերոհիշյալ խոսքերից հետո Թալեաթ բեյը դարձյալ բերվեց դատական դահլիճ, քանի որ հակասություն նկատեցին այս երկուսի ասածների միջև: Շարունակվեց նրանց համատեղ հարցաքննությունը:

Նրանք երկուսն էլ հայտնեցին, թե մեկ-երկու թաղամասում գտնվող տնային ամբարներն այրվել են, պատմեցին իրենց լսածների մասին: Ասացին, որ Մեհմեդ Ալի բեյը դատվել է շաքարի խնդրի կապակցությամբ, դատարանում մենակ է եղել, և Ռազմական ատյան գոյություն չի ունեցել:

Այս ցուցմունքներից հետո նրանք երկուսն էլ դուրս տարվեցին. դատարան կանչվեց բժիշկ Ալի Սայիբ բեյը, որը պատմեց, թե Թանկարժեք իրերի հանձնաժողովում պաշտոնավարել է ընդամենը մեկ օր՝ այն էլ երկու ժամ, և թե ինչպես է ընդունել այդ երկժամանոց պաշտոնը: Գոյություն է ունեցել իրերի ցուցակ: Ինքը չի կարողանում հիշել՝ դպրոցի տնօրենի բացակայության ժամանակ վերոհիշյալ ցուցակի մի քանի էջերը պոկված եղել են, թե ոչ: Նման բան չէր կարող պատահել: Այդ իրերի արժեքը գնահատ-

ված է եղել: Ինքը տեղյակ չէ, թե որքան է եղել դրանց ընդհանուր գումարը: Ինքը երբեք չարաշահումներ չի արել: Այդ գործի պատճառով ոչ ոք չէր արատավորի իր պատիվը: Եթե որևէ մեկը նման բան ասել ցանկանա, ապա անհրաժեշտ կլինի դա ապացուցել դատարանում: Եթե ապացույցներ գտնվեն, ապա ինքն էլ կապացուցի, որ այդ հանձնաժողովում ոչ մի չարաշահում չի արել: Ինքը տեղահանությունից առաջ պատսպարել է մի մահմեդականի, ապա՝ մի հայի, սակայն իր երկրորդ բնակության վայրում երբեք լքված գույք չի եղել: Եթե անգամ նման իրեր լինեին էլ, իր չափ ազնիվ պաշտոնյան նման ստորություն չէր անի: (Այդ պահին ընթերցվեց վկաներից մեկի ցուցմունքը՝ լքված գույքը վերցնելու մասին):

Սայիբ բեյն ասաց, որ անհրաժեշտության դեպքում ինքը կարող է վկաներ ներկայացնել, և դուրս եկավ:

Դատական դահլիճ բերվեց ոստիկանապետ Նուրի էֆենդին: Վերջինս խոսեց այն մասին, որ մինչև տեղահանության վերջը, ռազմական դրությունից բխած անհրաժեշտության համաձայն, ժամը 15:00-ից հետո փողոց դուրս գալը արգելված է եղել: Ինքը տեղյակ չէ, թե որքան է տևել այդ արգելքը, և արդյոք լքված գույքը տեղափոխելու հատուկ նպատակ եղել է, թե ոչ: Ոստիկանապետ Նուրին պատասխանեց նաև այլ հարցերի: Ժամանակի սղության պատճառով ժամը 16:45-ին դատն ավարտվեց: Այն կշարունակվի հինգշաբթի օրը՝ ժամը 13:30-ին:

13-ը ապրիլի, 1919 թ., «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԱՍՏԱՆԱԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Երեկ Ռազմական արտակարգ ատյանը դատարանի նախագահ Մուստաֆա փաշայի նախագահությամբ նիստ հրավիրեց և շարունակեց Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների մասնակցության մեջ մեղադրվողների դատաքննությունը: Ընթերցվեց դատախազի կողմից կազմված ներքոհիշյալ ամբաստանագիրը.

«Տրապիզոնի վիլայեթում Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կառավարության կողմից հայերի տեղահանության վերաբերյալ ընդունված որոշումների գործադրման ընթացքում նախ՝ հայ տղամարդկանց և ապա՝ կանանց ու երեխաներին նշանակված վայրեր տեղափոխելիս նրանց մի մասն անգթաբար սպանվել է Դեյիրմենդերեի կողմերում, իսկ կանայք ու երեխաներն էլ բեռնավորվել են նավակները և ջրախեղդ արվել: Հայերի մի մասին էլ, իբր բուժման նպատակով, թունավորել են տարբեր միջոցներով Կարմիր մահիկ հիվանդանոցում, որից հետո կողոպտվել է նրանց գույքը, դրամը և թանկարժեք իրերը: Ողջ մարդկության կողմից անեծքով ու նողկանքով հիշվելու արժանի նման անամոթ արարքների ու հանցագործությունների հանդգնած և այժմ փախուստի մեջ գտնվող Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլի, ինչպես նաև՝ դատարանում ներկա գտնվող Մեհմեդ Ալիի, Մուսթաֆայի, Նիազիի, Նուրիի և մյուս հանցակիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին հիմք են տալիս պատիժ սահմանելու համար: Նրանց հետաքննությունը, նախ և առաջ, բխում է օրենքի անհրաժեշտությունից: Եվ, ի վերջո, ովքե՞ր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյաներ են, այլ՝ ինը տարի առաջ պետության ղեկը

պատահաբար ձեռք գցած, առանձին կամ խմբակային բռնությունների, կոտորածների, անօրինականությունների, անհատնում չարաշահումների հետևանքով սուլթանական կառավարությանն այսօրվա ողբալի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած Միություն և առաջադիմություն կոչեցյալ ավազակախմբի հանցագործ ներկայացուցիչներն են Տրապիզոնում:

Մեղադրող կողմը վերոնշյալով ներկայացրեց Ջեմալ Ազմիին ու Յենիբահչելի Նայիլին վերաբերող իր տեսակետն ու մեկնաբանությունը: Այսինքն՝ վերոհիշյալ երկուսը գլխավոր հանցագործներն են, գործող անձինք: Բնականաբար միայն Ջեմալ Ազմին ու Նայիլը չէին կարող այդ ահռելի սպանդն իրականացնել: Վերոհիշյալ ավազակախմբի ոճրային մտահղացումները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը և կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեն պրիմիտիվ, սահմանափակ, արագ ազդեցության տակ ընկնող, սեփական ջանքերով առաջընթաց գրանցելուն անկարող մարդիկ: Անկասկած է, որ քիչ թե շատ զարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ոճիրների մասնակիցը դառնալ: Այդ իսկ պատճառով կատարված հետաքննության և դատավարության ընթացքում հարցաքննված վկաների, ինչպես նաև՝ բազմաթիվ այլ անձանց տված հավաստի տեղեկություններից ու Վեհիբ փաշայի փաստաթղթերի մեջ պահպանված զեկուցումներից արված մեր եզրակացության համաձայն, քանի որ Ջեմալ Ազմին ու պատասխանատու քարտուղար Յենիբահչելի Նայիլը տվյալ դեպքերին մասնակցել են միասին, նրանք պետք է պատժվեն ըստ 45-րդ և 170-րդ հոդվածների: Քանի որ Նիազի, Մուստաֆա, Նուրի, Մեհմեդ Ալի և բժիշկ Ալի Սայիբ բեյերը տվյալ հանցագործություններին մասնակցություն են ունեցել մասնակի կերպով, ապա նրանք պետք է պատժվեն 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ՝ 174-րդ հոդվածի համաձայն: Ինչ վերաբերում է Սայիբ բեյին, ապա նա, որպես բժիշկ, հիվանդին թունավո-

ռելու անհրաժեշտությունը չուներ. կարող էր հիվանդներին սպանել՝ դեղերի չափաբաժինը մեծացնելով կամ սխալ բուժելով: Դա անընդունելի է բանականության, տրամաբանության և օրենքի կողմից: Եթե անգամ նրանց մարմինները թաղվել են կրոնական արարողությամբ, պետք է դիակները հանել և տեղում դիազննություն կատարելով՝ պարզել, թե որ թույնն է նրանց մահվան պատճառը դարձել, որից հետո, եթե այդ հանցագործությունը հաստատվի, բժիշկ Ալի Սայիբը կարող է լինել տվյալ հանցագործության կատարողը: Քանի որ այսօր նման հնարավորություն չունենք, պահանջում եմ, որպեսզի վերոնշյալն այդ հարցում արդարացվի և միայն պատժվի երեխաներին մեծ կողովներով տեղափոխողների հանցագործ գործողություններին աջակից լինելու համար: Պահանջում եմ, որ Ալի Սայիբը մյուս հանցագործների հետ միասին պատժվի քրեական օրենսգրքի՝ տվյալ ոճիրներին վերաբերող 45-րդ հոդվածի երկրորդ պարբերության մատնանշմամբ, 174-րդ հոդվածի համաձայն: Քանի որ կայմակամ Թալեաթ բեյի՝ տեղահանությանն ու կոտորածներին, ինչպես նաև՝ Ռազմական հարկերի հանձնաժողովներում տեղի ունեցած չարաշահումներին մասնակցություն ունենալու վերաբերյալ դույզն-ինչ ապացույց և հաստատող վկա անգամ չի գտնվել, պահանջում եմ, որ վերոհիշյալն արդարացվի»:

Ամբաստանագրի ընթերցումից հետո դատարանի նախագահը հաղորդեց, որ դատն ընդմիջվում է մինչև շաբաթ օրը՝ ժամը 9:30-ը, որպեսզի լսվեն դատապաշտպանների պաշտպանական ճառերը, և նիստն ավարտվեց:

16-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ ռազմական արտակարգ ատյանում շարունակվեց Տրապիզոնի տեղահանության դատավարությունը: Նիստն սկսվեց ժամը 14:15-ին: Նախ հարցաքննվեց Գիրեսունի կայմական Արիֆ բեյը: Վերջինս հայտնեց, որ բացի Նիազի բեյից՝ մնացած բոլոր մեղադրյալներին ճանաչում է, իր և նահանգապետի միջև ամեն բան պարզ է եղել, այդ իսկ պատճառով ինքը պաշտոնաթող է եղել, թեև Տրապիզոնում եղած ժամանակ իրեն որոշ խոսակցություններ հասել են առ այն, թե հայերը, իրենց իրերը պահպանության հանձնելուց հետո, հեռացել են, և որ որոշ ողբերգական դեպքեր են պատահել, սակայն դրա մասին իրեն ճշգրիտ ոչինչ հայտնի չէ:

Ապա այդ օրը հրավիրված վկաներից նավահանգստի ղեկավար Ասըմ էֆենդին հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. «Նահանգապետը նավակները մշտապես իր հրամանի տակ չէր պահում. դա կախված էր լինում մեզ մոտ արված փաստաթղթային ձևակերպումներից: Մենք բոլորովին տեղյակ չէինք նավերի միջոցով կատարվող տարագրման մասին, նավաստիներից ևս որևէ բան իմանալն անհնարին էր, որովհետև միայն իրպեսներին և իր գործին ձեռնտու մարդկանց էր ներգրավում: Մյուսները նույնպես ոչինչ չէին կարողանում ասել: Վալիի բռնակալությունը բոլորին այնպես էր ահաբեկել, որ, մեծարգո՛ փաշա, եթե Դուք էլ այնտեղ լինեիք, դարձյալ չէիք կարողանա որևէ բան ասել: Ես վալիին ոչինչ չէի կարող անել՝ պաշտոնս կորցնելու վախի պատճառով: Ես թիկունք չունեցող մարդ էի: Գործակալ Մուսաթաֆա էֆենդին պատվարժան անձնավորություն է, սակայն վալիի ահից հսկում էր նավերը»:

Այնուհետև մեղադրող կողմի պահանջի հիման վրա վկային հարց տվեցին, թե ինչ գիտի Ալի Սայիբ բեյի՝ գիշերով մեծ կողովներով ուղարկված երեխաների մասին, որի առնչությամբ ցուցմունք է տվել վկա Վերժինը՝ գիշերով կատարված տեղահանության կապակցությամբ: Ի պատասխան՝ Ասըմ էֆենդին, իր խոսքը կրկնելով, հայտնեց, թե դա բացարձակ սուտ է, և որ ինքը նույնպես դրա մասին թերթերից է իմացել:

Ասըմ էֆենդուց հետո վկաներից դատական դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի նահանգային վարչության պաշտոնական գրությունների պատասխանատու Ֆուադ բեյը, որի ցուցմունքների համաձայն՝ ինքը տեղյակ չի եղել գաղտնի տեղեկությունների և փաստաթղթերի մասին, վիլայեթում երկու տեսակի գաղտնագիր է եղել, որոնցից մեկից օգտվել է միայն վալին: Հավանական էր, որ տպարանում իր կողմից չնկատված որոշ բաներ տպագրվեին:

Ֆուադ բեյի՝ Թանկարժեք իրերի հետախուզական հանձնաժողովի կազմում ընդգրկված լինելու հանգամանքն ի նկատի ունենալով՝ նրան հարցրեցին վալիի կողմից գործակալ Մուստաֆա էֆենդուն տրված թանկարժեք զարդերով արկղիկի մասին: Վկան պատասխանեց, թե տեղեկություններ չունի:

Ապա որպես վկա հրավիրվեց եկամուտների տեսուչ Լյութֆի բեյը: Պարզվեց, որ Լյութֆի բեյը, Լքված գույքի հանձնաժողովում ընդգրկված լինելով հանդերձ, չի աշխատել Ֆուադ բեյի հետ միասին: Երկուսն էլ տեղեկություններ տվեցին թանկարժեք զարդերով արկղիկի մասին: Լյութֆի բեյն ընդգծեց, թե հանձնման և ընդունման գործողությունները հանձնողների ներկայությամբ չեն կատարվել. դա անհրաժեշտ չեն համարել՝ վստահելով այդ մարդկանց խղճին:

Ալի Սայիբ բեյին տրված հարցին ի պատասխան՝ վերջինս հայտնեց, որ 100.000 լիրայանոց զարդեղեն չի եղել, ինչպես ենթադրվում էր Տրապիզոնում. այն հանձնաժողովին հանձնված զարդեղենը, որում ինքն էլ է ընդգրկված եղել, հազիվ 3-4 հազար

լիրա կարող էր կազմել, իսկ մնացածի մասին ինքը տեղեկություններ չունի:

Նախագահն էլ նշեց, թե այստեղ ուղարկված զարդեղենի ընդհանուր գինը 1000 լիրայից ցածր է եղել, և որ այդ ցուցակներն ինքը ցույց կտա Ֆուադ բեյին, առկա զարդեղենի չարաշահումը լիովին ապացուցվել է. այդ հանգամանքը նույնպես նրանց անփութության ցուցանիշներից է: Ապա վկային հիշեցվեց, որ հաջորդ օրը նույնպես գա՝ ցուցակը տեսնելու նպատակով:

Այնուհետև դահլիճ բերվեց մյուս վկան՝ Լյութֆի բեյը: Թեև Ֆուադ բեյն ասել էր, թե զարդեղենը Տրապիզոնից Ստամբուլ է բերվել վիլայեթի ֆինանսական բաժնի վարիչ Լյութֆի բեյի միջոցով, սակայն ինքը հերքեց դա և հայտնեց, որ նահանգային վարչության պաշտոնական գրությունների պատասխանատուն, սեփական կարծիք ունեցող անձնավորություն չլինելով, ընդամեն վալիի հսկողության տակ գտնվող մի լրագրող է եղել, Տրապիզոնում կատարված չարաշահումներին միայն ինքն է արգելք եղել. եթե ինքն էլ չլիներ, ամեն ինչ կողոպտվելու էր: Բացի այդ, ըստ վկայի ցուցմունքների, զարդեղենի քանակը պետք է որ ավելին լիներ՝ ի նկատի ունենալով լքված գույքի մեծաքանակ լինելու հանգամանքը:

Այս վկայի դուրս գալուց հետո ունկնդրության արժանացվեց տրապիզոնցի Մուրադի հետևյալ ցուցմունքը. կարճ բովանդակությունը. «Ականատես եմ եղել, թե հայերի՝ Տրապիզոնից դուրս գալուց հետո ինչպես են նրանց բազմաքանակ իրերը, կտորներն ու ադամանդները վաճառվել: Ծախված իրերն ընկնում էին Նիազի էֆենդու և նրա ընկերների ձեռքը: Նիազի էֆենդին յուրացրեց իմ մոտորանավակը և այն վաճառեց Սինոպում: Դեֆթերդար բեյը[56] ևս տեղյակ է այդ մասին»:

Ապա դատախազի պահանջով հաղորդվեց, որ Մուրադը դատարան է ներկայացել ոչ թե որպես վկա, այլ՝ հայցվոր, և որ նիստի ավարտից հետո անդրադառնալու են նաև նրա հայցին:

---

[56] Վիլայեթի ֆինանսական բաժնի վարիչը:

Այնուհետև վկայությամբ հանդես եկավ երկրորդ քարավանով Դալթաբան բռնագաղթեցված տիկին Միշտուհին, որից հետո վկաներից հարցաքննվեց տիկին Մանթիկը:

Առաջինի՝ տեղահանության ժամանակ կատարված ողբերգական դեպքերի մանրամասն շարադրանքների և երկրորդի էլ՝ Ալի Սայիբ բեյի՝ հիվանդանոցում կատարած չարագործությունների և մի կնոջ զննության ընթացքում նրան անհանգստացնելու մասին ցուցմունքներին ի պատասխան՝ Ալի Սայիբ բեյը, «Թեև մինչ այժմ անընդհատ ցուցմունքներ էին տալիս Նիազի և Ռըզա բեյերի դեմ, սակայն պարզվեց, որ նրանք տեղահանության ժամանակ ընդհանրապես բացակայել են քաղաքից. հիմա էլ սկսել են իմ նկատմամբ պահանջախնդրություն ունենալ» ասելով, փորձեց հերքել վկաների ցուցմունքները:

Այնուհետև դատարան հրավիրվեց հեռագրատան տեսուչ Ռյուշթյու էֆենդին, որը հայտնեց, թե ինքը, տիկին Արսլանյանին որպես հոգեքույր ընդունելով, փրկել է նրան տարագրությունից, սակայն հաջողություն չի ունեցել երեխաներին ազատելու գործում:

Ռյուշթյու էֆենդին նաև վկայեց, որ տեղահանությունը ղեկավարվել է վալիի և Նայիլ բեյի կողմից, որ ինքը մեղադրյալներից բոլորին էլ ճանաչում է, սակայն տեղեկություններ չունի՝ նրանք տեղահանության գործին մասնակցել են, թե ոչ. նրանց տեսել է միայն իրենց վերաբերող գործերով զբաղվելիս:

Նիստն ընդմիջվեց ժամը 17:30-ին. շարունակվելու է չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

27-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ՝ ժամը 13:45-ին, ռազմական ատյանում Նազըմ փաշան շարունակեց Տրապիզոնի տեղահանության առնչվող դեպքերի դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս տեղակալներից Նաքիբ բեյը:

Նախ դատարան կանչվեց և երդում տվեց վկաներից Վանի նախկին վալի Նազըմ բեյը, որը, իրեն ուղղված հարցերին պատասխանելով, հայտնեց, թե տեղահանության վերաբերյալ իր ունեցած տեղեկությունները հիմնականում հիմնված են խոսակցությունների վրա, Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյի և իր միջև եղած թշնամության պատճառով չի կարող նրա մասին վկայություններ տալ, մեղադրյալներից ճանաչում է Ռըզա և Մուսթաֆա բեյերին, սակայն նրանց՝ այդ գործերով զբաղվելու մասին ոչինչ չի լսել: Լքված գույքի մասին գիտի միայն, որ հայերի գույքը տեղավորել են պահեստներում, դրանք եղել են խառնիխուռն վիճակում, իր եղած նախկին հանձնաժողովում ևս ցուցակները կարգավորված չեն եղել: Ծովում տեղի ունեցած անօրինականությունների մասին շատ բան է լսել, սակայն պատմել չի ցանկանում, քանի որ դրանք բոլորն էլ հիմնված են իրեն հասած խոսակցությունների վրա. ինքը դրանց չի հավատում:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև [Տրապիզոնի] նախկին նահանգապետ Ջեմալ Ազմի բեյի կատարած չարագործությունների և Նուրի ու Մեհմեդ Ալի բեյերի կողմից մի հայ կնոջ և երեխաներին ծովը նետելու մասին:

Այս վկայությունները տալուց հետո Նազըմ բեյը դուրս եկավ:

Դատարանի դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հիլմի բեյը: Վկան հայտնեց, որ ինքն ընդգրկված է եղել տարաբնույթ հանձնաժողովների կազմում, Վաճառքի հանձնաժողովի գործողությունների կանոնակարգումը

կատարվել է գրասենյակում: Հիլմի բեյը նշեց, թե վալին լավ մտադրություններ չի ունեցել. դրանով է պայմանավորված եղել Տեղահանության հանձնաժողովի անկազմակերպ լինելու հանգամանքը:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո վկան նկարագրեց նաև հանձնաժողովում կատարված գործողությունները:

Այնժամ նախագահը հարցրեց. «Նման խճճված գործի մեջ ինչու՞ խառնվեցիք: Չէի՞ք կարող հրաժարական տալ»:

Հիլմի բեյը պատասխանեց, որ թեև հրաժարական տվել է, սակայն այն չի ընդունվել, և որ եթե վալին ցանկանար, կարող էր կանխել այդ բոլոր չարագործությունները: Վկան նաև նկարագրեց Թանկարժեք իրերի հանձնաժողովի գործողությունները և դրանց հանգամանքները, ապա հայտնեց, որ հայերից վերցված զարդեղենը նախ՝ պահպանվել է քաղաքապետարանում, ապա՝ այն լցրել են սնդուկների մեջ:

Հիլմի բեյը նշեց նաև, թե ինքը գանձարկղի մասին տեղեկություններ չունի, իսկ կուտակված զարդեղենի վերջնական արժեքը կարող էր 3-4 հազար լիրա կազմել: Անդրադառնալով Թանկարժեք իրեր հանձնաժողովում կատարված չարաշահումներին՝ վկան հայտնեց, թե ինքը տեղյակ չի եղել դրանց մասին, քանի որ չարաշահումները հայտնի չդարձնելու համար որոշ էջեր պոկված են եղել:

Ապա ընթերցվեց այդ գործի կապակցությամբ հարցաքննված վկա Նազըմ բեյի գրավոր ցուցմունքը, որի առնչությամբ հարցեր տվեցին Հիլմի բեյին: Այնուհետև դահլիճ բերվեց վերոհիշյալ Նազըմ բեյը, որը հայտնեց, թե ճանաչում է Հիլմի բեյին, իսկ վերջինս նշեց, թե մեկ անգամ է տեսել Նազըմին:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև վալիի կողմից արված հայտարարության առնչությամբ և դուրս եկավ:

Վերսկսվեց Հիլմի բեյի առանձին հարցաքննությունը: Կատարված ողբերգական դեպքերին անդրադառնալով՝ նախագահը

շեշտեց Տրապիզոնի դատախազի միջամտության անհրաժեշտությունը: Ի պատասխան՝ Հիլմի բեյը հայտարարեց. «Չմիջամտեց և չէր էլ կարող միջամտել»:

Այնուհետև դատարան կանչվեց առողջապահության տեսուչ Սադրեթթին բեյը: Նրա անձնական տվյալները հրապարակելուց հետո հարցաքննությունն սկսվեց: Սադրեթթին բեյը ցուցմունքներ տվեց առ այն, որ տեղահանության ժամանակ ինքը Տրապիզոնում չի եղել և ոչինչ չի լսել ողբերգական դեպքերի մասին, ծանոթ է եղել Ալի Սայիբ բեյի հետ, սակայն վերջինս, վկայի ցուցմունքների համաձայն, ոչ մի առնչություն չի ունեցել Կարմիր մահիկ հիվանդանոցի հետ: Վկայի վերոհիշյալ ցուցմունքներից հետո մեղադրյալներից Ալի Սայիբ բեյը, ոտքի կանգնելով, հայտարարեց, թե քանի որ վկայի ցուցմունքները ճշմարիտ են, ինքը հավելելու բան չունի, սակայն եթե անգամ բոլոր վկաների ցուցմունքները լիովին ապացուցվեն, միևնույն է՝ տեսչի զեկույցը չի համապատասխանում ճշմարտությանը. թեև Սադրեթթին բեյը նախկինում ասել էր, թե իր կողմից Տրապիզոնում կատարվելիք մանրակրկիտ հետաքննությունը լավ արդյունք չէր կարող տալ, սակայն, ամբաստանյալ Ալի Սայիբ բեյի կարծիքով, Սադրեթթին բեյի այդ խոսքերը բխում էին նրա ունեցած քաղաքական հայացքներից և այդ համոզմունքով էին ասվել:

Դրանից հետո Սադրեթթին բեյը դուրս եկավ:

Ներս բերվեց նավագնացության գործակալության նախկին պաշտոնյա Իթհամ էֆենդին, որը երդում տալուց հետո հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանության ժամանակ ինքը եղել է Ռազմական փախադրումների հանձնաժողովի նախագահը, բանակի հրամանատար Ավնի փաշան այդ գործը հանձնարարել էր վա**լիին, սակա**յն վե**րջինս** առաջադրանքը, ինչպես հարկն է, չէր կարողացել կատարել և այն հանձնարարել էր իրեն: Քանի որ Մուսթաֆա էֆենդին զինվոր էր, մթերք և ռազմամթերք էր առաքում Հատուկ կազմակերպությանը, ինչ վերաբերում է իրեն,

ապա ինքը ղեկավարել է ցամաքային տարածքով կատարվող առաքումները:

Վկան հայտնեց նաև, թե տեղահանության վերաբերյալ ինքը տեղեկություններ չունի, իսկ նավերը հեռացել են խումբ-խումբ:

Դատարանի կազմի կողմից հակասություն նկատվեց Իթհամ էֆենդու նախկին և ներկայիս ցուցմունքների միջև: Քանի որ պարզվեց, որ նա նախկինում հանդես է եկել Ալի Սայիբ բեյի դեմ ուղղված ցուցմունքով, վկան նեղն ընկավ և շփոթվեց, որովհետև ստիպված էր բացատրել այդ հակասությունը:

Այդ պահին ժամանակի սղության պատճառով նիստն ավարտվեց. շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

1-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ՝ ժամը 14:20-ից, շարունակվեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածներին վերաբերող գործի ուսումնասիրությունը:

Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ֆերիդուն բեյը:

Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո վկաներից հարցաքննվեց դատական քննիչ Քենան բեյը: Վերջինս հայտնեց, որ տեղահանության ժամանակ ինքը այնտեղ չի եղել, սակայն հետագայում, նախարարությունից ստացված հրահանգի հիման վրա, զբաղվել է Լազիստանի, Ջանիկի և Տրապիզոնի մերձակա շրջանների հետաքննությամբ: Երբ գնացել է Սամսուն, ռուսների կողմից առաջին ռմբակոծությունն արդեն սկսված է եղել: Քենան բեյը նշեց, թե տեղահանության իրականացման հանգամանքների մասին ինքը տեղեկացել է միայն լսելով, իսկ տեղահանությանն անձամբ ականատես է եղել Սամսունում գտնվելու ժամանակ: Այդ տեղեկությունների համաձայն՝ Ջեմալ Ազմի բեյը բազմաթիվ չարագործությունների հեղինակ է եղել. մասնավորապես՝ հայերին և հույներին նավերն է լցրել և ոչնչացրել՝ ծովում խեղդելով: Ըստ վկայի ցուցմունքների՝ Ազմի բեյը իր յուրաքանչյուր քմահաճույքն իրականացնող մի անձնավորություն էր. երբ ինքը գտնվել է Սամսոնում, տեսել է, թե ինչպես է կատարվում տեղահանությունը: Վկան նաև հայտնեց, որ Բաֆրայի[57] կայմակամը սպանվել է հետաքննչական մարմնում:

Վկան հայտնեց նաև, որ թեև զորակոչին հետևած չարագործությունների կապակցությամբ հետաքննություն կատարելը կամ տեղի դատախազին այդ մասին տեղեկացնելն իր պաշտոնական պարտականությունների շրջանակներից դուրս էին և վերաբերում

---

[57] Գավառ, որը ներկայում գտնվում է Սամսուն նահանգում:

էին բանակի հրամանատարներին, այնուամենայնիվ ինքը կատարված չարագործությունների մասին մի քանի անգամ հայտնել է տեղի դատախազությանը:

Վկան նշեց նաև, որ մեղադրյալներից ճանաչում է միայն Թալեաթ և Մուսթաֆա էֆենդիներին:

Երկրորդ անգամ որպես վկա դատարան հրավիրվեց Ռյուշթյու էֆենդին, որին նախագահը հարց տվեց տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ և հիշեցրեց միայն ճշմարտությունն ասելու պահանջի մասին: Ռյուշթյու էֆենդին պատասխանեց, թե ինքը ոչ մի տեղեկություն չունի տիկին Արսլանյանի դրամի մասին:

Նախագահ – Ասում են, թե այդ դրամը Դուք եք վերցրել:

Ռյուշթյու էֆենդի – Սամսունում նպարեղենի խանութ ունեմ: Կարող են այնտեղի ցուցակները ստուգել: Ես նման բան երբևէ չեմ վերցրել և դրա վերաբերյալ տեղեկություններ չունեմ:

Նախագահ – Ինչու՞ եք համագործակցել Սայիբ բեյի հետ:

Ռյուշթյու էֆենդի – Չեմ համագործակցել: Նա երեխաներին էր զննում:

Այդ պահին Ալի Սայիբ բեյը նույնպես որոշ բաներ ասաց այդ կապակցությամբ: Այնուհետև Ռյուշթյու էֆենդուն բազմաթիվ հարցեր ուղղեցին դրա վերաբերյալ:

Նախագահը նախկինում վկայությամբ հանդես եկած և այդ պահին ունկնդիրների շարքում գտնվող Աբդուլլահ էֆենդուն հարցրեց, թե արդյոք այդպե՞ս է եղել: Վերջինս նշեց, թե որոշ հանգամանքներ ինքը լավ չի մտաբերում: Նախագահը վերոհիշյալին հրավիրեց ամբիոնի մոտ՝ ցուցմունքներ տալու:

Աբդուլլահ էֆենդուն հարցեր տվեցին տիկին Արսլանյանի դրամի մասին, նաև թե՝ ինչու են թաքցնելու պահին նրանից իրեր և դրամ պահաջել:

Վկան պատասխանեց, թե ինքը չի հիշում, որ տիկին Արսլանյանին փրկելու համար համագործակցելու ժամանակ նման նախաձեռնությամբ հանդես եկած լինի:

Նիստն ավարտվեց ժամը 15:30-ին. շարունակվելու է երեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

11-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

Ռազմական արտակարգ ատյանը Մուսթաֆա Նազըմ փաշայի նախագահությամբ երեկ շարունակեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածներին մասնակից լինելու մեջ մեղադրվող անձանց դատաքննությունը:

Վկաներից նախկին հեծելազորային լեյտենանտ Հարուն բեյը հայտնեց, որ տեղահանության ընթացքում ինքը եղել է Շթանգեի[58] համհարզն ու թարգանիչը, լսել է հիվանդանոցում հայերի թունավորման դեպքերի և Սամսունում ու շրջակայքում հայերի ոչնչացման մասին:

Հարուն բեյը վկայեց նաև, որ Ռըզա բեյը ղեկավարել է անկազմակերպ մի ջոկատ: Նմանատիպ զորամասերը, ըստ վկայի, այն ժամանակ «չեթե»[59] էին կոչվում, որոնց ղեկավարում էին հրոսակախմբերի ղեկավարները:

Հարուն բեյից վերոհիշյալ ցուցմունքներն ստանալուց հետո նախագահը հայտարարեց.

– Հարցաքննության գործընթացն ավարտվեց: Մեղադրող և պաշտպանող կողմերի ճառերն ունկնդրելու համար նիստը հետաձգվում է մինչև հինգշաբթի օրը՝ ժամը 13:00-ն:

Դատապաշտպանների առարկության պատճառով որոշվեց հինգշաբթի օրը՝ ժամը 13:00-ին, ունկնդրել մեղադրող կողմի մեղադրական ճառը, իսկ շաբաթ օրը՝ ժամը 9:30-ին՝ դատապաշտպանների պաշտպանական ճառերը:

Այս որոշումն ընդունվելուց հետո նիստն ավարտվեց:

14-ը մայիսի, 1919, «Ալեմդար»

---

[58] Գերմանացի փոխգնդապետ, որը եղել է Հատուկ կազմակերպության ղեկավարներից մեկը:

[59] Ավազակախումբ:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՄԵԾԱՐԳՈ ՆԱԽԱԳԱՀ ՆԱԶԸՄ ՓԱՇԱՅԻՆ

Հարգելի՛ նախագահ,

Միաձայն կերպով կարող ենք հաստատել, որ Դուք հանդիսանում եք արդար և անաչառ մի անձնավորություն, հատկանիշներ, որ ժառանգել եք մեր ժողովրդից:

Այդ իսկ պատճառով կցանկանայի կարճ և անկեղծ մի խոսակցություն ունենալ Ձերդ գերազանցություն հետ: Ես, աքսորված լինելու պատճառով, ականատես եմ եղել Անատոլիայի բազմաթիվ շրջաններում իրականացված տեղահանությանն ու կոտորածներին:

Տեղահանությանն ու կոտորածներին առավել ենթարկված շրջաններն են հանդիսանում Մուշը և Անկարան: Մի շրջան[60] գոյություն ունի, որից տարագրված հայերի թվաքանակը հազարների է հասնում. մի՞թե այդ շրջանում տեղահանությունն ու կոտորածները կազմակերպողների և իրականացնողների քանակը սահմանափակվում է մահապատժի ենթարկված Քեմալ և 15 տարվա բանտարկության դատապարտված Թևֆիկ բեյերով: Անձամբ միայն ինձ հայտնի է այդ խնդրին առնչված համարյա 20 հոգու անուն:

Իսկ ո՞րն է դրա անհրաժեշտությունը:

Երբ Քեմալի դատավարության ընթացքում մի շարք անուններ բացահայտվեցին, անհրաժեշտ էր, որ դրանք պատշաճ ուշադրության արժանացվեին, Ձեզ նման արդարադատ անձնավորությունը նրանց անմիջապես ծանուցագիր ուղարկեր, անհրաժեշտության դեպքում մի քանիսին ձերբակալեր և արագ կերպով իրականացներ նրանց դատաքննությունը: Արդյոք ի՞նչ պատճառներից ելնելով է, որ կարևորություն չի տրվում այդ խնդրին:

Այդ ինչպե՞ս է, որ մենք այն տարածքներում, ուր աքսորվել էինք՝ Մուշում և Սինոպում եղած ժամանակ, պաշտոնական անձ

---

[60] Խոսքը Յոզղատի մասին է:

չհանդիսանալով հանդերձ, տեղյակ ենք, թե ինչ սահմռկեցուցիչ կերպով են կատարվել Տրապիզոնի տեղահանությունն ու կոտորածները, որոնց դատաքննությունը ներկայում դեռ շարունակվում է, իսկ նման հնարավորությունների տեր Ձեր հարգարժան դատարանը չի կարողանում խորանալ մանրամասների մեջ:

Սինոպում մենք հանդիպեցինք առավոտները Տրապիզոնից դեպի Ստամբուլ մաքսանենգ կերպով իրեր և սննդամթերք տեղափոխող լազ նավաստիների և կարողացանք մանրամասներ իմանալ այն մասին, թե ինչպես են մեր խեղճ հայ հայրենակիցները ոչնչացվել և բնաջնջվել վալի Ջեմալ Ազմիի և իթթիհադական հրոսակախմբին պատկանող իր չարագործ գործակիցների կողմից: Պարզվում է, որ այս խեղճերին՝ կանանց և երբեմն նույնիսկ երեխաներին էլ ներառյալ, Ռումինիա ուղարկելու պատրվակով լցրել են առագաստանավերն ու մակույկները և շրջահայեցորեն ափից մեկ ժամ հեռացնելուց հետո անմիջապես ծովը նետել, իսկ երբ ծովում խեղդվողները փորձել են կառչել առագաստանավերի եզրերից, կացնով կտրել են նրանց մատները:

Անձամբ ականատես չենք եղել այդ արյունոտ և ցավոտ տեսարաններին, սակայն մի քանի ընկերներով ուշադրությամբ լսել ենք այդ ամենը սեփական աչքով տեսած 40-50 նավաստիների պատմածը: Բայց մի՞թե այդ պահին Տրապիզոնում գտնված պատվավոր և անկողմնակալ անձանց՝ այդ կապակցությամբ ունեցած տեղեկությունները ստանալով՝ կարողացանք բացահայտել ողջ ողբերգությունը:

Այն ժամանակ Տրապիզոնի մաքսային գլխավոր վարչության ծառայող, ներկայում մաքսային տեսուչ Բեսիմ բեյին ներկայացնում եմ որպես շատ ողջախոհ մի անձնավորություն: Այս մարդը պաշտոնից հեռացվել է Ջեմալ Ազմիի դաժանության մասին անհրաժեշտ մարմիններին տեղեկացնելու պատճառով:

Իսկ երկրորդին՝ Քենան[61] անունը կրող երիտասարդին, հանդիպել եմ Չորումում՝ Ռեֆիկ Հալիդ բեյի տանը: Քենան բեյին

---

[61] Դատական քննիչ Քենանը Տրապիզոնի դատաքննության 1919 թ. մայիսի 10-ի նիստում որպես վկա ցուցմունքներ էր տվել դատարանին:

ազատել էին Տրապիզոնի դատական քննչի պաշտոնից, որից հետո նա վերադարձել էր Ստամբուլ: Այս հերոսական անձնավորությունը հետ էր կանչվել այն ժամանակվա Արդարադատության նախարար Հալիլ բեյի կողմից՝ հայերի հետ կապված ողբերգական դեպքերի կապակցությամբ անմիջապես հետաքննություն կատարելու պահանջով հանդես գալու պատճառով: Քենան բեյը չէր բավարարվել միայն իր պաշտոնական պարտականությունների իրականացմամբ. անձամբ լուսանկարել էր այդ ողբերգական տեսարանները, որոնց ականատես էր եղել: Այդ ազնիվ անձնավորությունը ինձ պատմել է Ամասիայում անձամբ (...)[62] հայեր սպանած և սրտխառնոց առաջացնող մուհաջիրներից Մեհմեդ Քաբաշ անունը կրող մի արնախում մարդու մասին, որի անունը, սակայն, չենք հանդիպում դատական արձանագրություններում:

Աղերսում ենք, որ թե՛ լուրջ վերաբերվեք ականատեսների վկայություններին և թե՛ այսուհետ տեղի ունենալիք դատավարությունների ընթացքում առավել աչալրջությամբ ծանուցագիր ուղարկեք յուրաքանչյուր վկայակոչված անձնավորությանը:

Հուսով ենք, որ տրվելիք բացատրությունների միջոցով կհաստատվի, որ մեր անմեղ ազգը ոչ մի կապ չի ունեցել ավազակախմբերի կողմից կատարված հանցագործությունների հետ, իսկ հանցավորները հաստատապես կպատժվեն:

Արտասահմանցիները մեզ մեղադրում են վերոհիշյալ հանցագործներին թաքցնելու մեջ, մինչդեռ ժողովրդի մտքով երբեք չի անցել նրանց թաքցնել, որովհետև կատարված հանցագործությունների պատասխանատուն է ոչ թե ժողովուրդը, այլ իթթիհադական ավազակախումբը: Ժողովուրդն անմեղ է: Իսկ ճշմարտության լրիվ բացահայտումը իրականանալի է բոլոր հանցավորների դատապարտմամբ միայն:

Առիթից օգտվելով՝ արտահայտում եմ խորին հարգանքներիս հավաստիքը:

Ահմեդ Քադրի[63]

25-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

---

[62] Հոդվածի այս հատվածի տպագրումն արգելվել է գրաքննության կողմից:

[63] Ահմեդ (Փեհլիվան) Քադրին «Ալեմդար» օրաթերթի տնօրենն էր:

ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ԲՈՂԱՋԻՉԻԻ (ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵ) ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ՝ ժամը 14:30-ին, ռազմական արտակարգ ատյանում սկսվեց Բյույուք Դերեի տեղահանության դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս առաջին տեղակալ Ֆերիդուն բեյը: Մեղադրյալներն էին Բյույուք Դերեի նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը, Բաքերի խանութպան, սալոնիկցի Ռեֆիկ Հըֆզը բեյը և հացի փռի տեր Ջելալ էֆենդին: Մեղադրյալների դատապաշտպաններն էին Սելիմ Հյուսնի, Հաշմեթ և Մուստաֆա Ադիլ բեյերը:

Դատական նիստի քարտուղարն ընթերցեց այն հետաքննչական որոշումը, համաձայն որի՝ ամբաստանյալները մեղադրվում էին Բյույուք Դերեի շրջանում կատարված տեղահանության ժամանակ քրիստոնյա բնակչությանը կառավարության կողմից նշանակված ժամկետից ավելի վաղ տեղահանելու և բնակչությանը գույքը լքել հարկադրելու մեջ:

Որոշման ընթերցումից հետո դատախազը հիմնավոր համարեց վերոհիշյալ գործողությունների՝ հանցագործություն հանդիսանալու վերաբերյալ հայցը:

Ապա հարցաքննվեց նախկին պաշտոնյա Աբդուլ Քերիմ էֆենդին, որը հայտնեց, թե երբ կառավարությունը տեղահանության

մասին որոշում է ընդունել, ամրացված դիրքերի հրամանատարը իր մոտ է կանչել իրեն, մի քարտեզ ցույց տվել և հրահանգել 3 օրվա մեջ տեղահանել այդ շրջանների ոչ մահմեդական բնակչությանը՝ ռազմական դրության կապակցությամբ: Այնժամ ինքը առարկել է և ավելի հարմար համարել այդ ժամկետը մի շաբաթով երկարաձգել: Այդ գաղափարին կողմնակից է եղել նաև այն ժամանակվա ոստիկանապետ Բեդրի բեյը: Ժամկետը կարողացել են երկարաձգել: Գործել են ոչ թե բանավոր, այլ՝ գրավոր հրաման ստանալուց հետո միայն: Ոչ թե բռնագաղթեցում, այլ՝ մի վայրից մյուսը տեղափոխում հանդիսացող այդ գործողության մասին հաղորդվել է ոչ մահմեդականների ավագանու հանձնաժողովին. հանգամանք, որի շնորհիվ տեղահանությունն իրականացվել է կազմակերպված կերպով: Ինչ վերաբերում էր գաղթականների գույքին, այն պետք է ամբողջությամբ պահպանվեր և հետագայում կամաց-կամաց տեղափոխվեր: Քանի որ թղթապանակներում դրա վերաբերյալ կային արձանագրություններ, ապա չարաշահումներ անելու միտումներին միայն իր պես գիշեր-ցերեկ տքնաջան աշխատող ոստիկանն է արգելք եղել: Ժամանակի և միջոցների բացակայության պատճառով ամբողջ գույքն իրենց հետ չվերցրած անձանց հաղորդվել է, որ իրենց իսկ հարմարության համար կարող են դրանք թողնել ու հեռանալ, և որ իրենց իրերը հսկելու համար պահակ է կարգվելու:

Աբդուլ Քերիմ էֆենդին նաև հայտնեց, որ մի շաբաթ տևած տեղահանության ընթացքում անվտանգության ապահովման նպատակով հավելում է կատարվել պարեկախմբի թվակազմի մեջ: Աբդուլ Քերիմի ցուցմունքների համաձայն՝ իրականությանը չեն համապատասխանում այն լուրերը, որոնց համաձայն՝ ինքը հարվածել է մի կույր երեխայի ու հացթուխ Փանդելյանին սպառնալիքների միջոցով հարկադրել վերջինիս պատկանող հացի փուռը ցածր գնով վարձակալության տալ Ջելալ էֆենդուն: Աբդուլ Քերիմը նաև նշեց, որ երբեք չի ճանաչել Ասքանազ անունով որևէ մեկին, առավել ևս՝ չի յուրացրել նրա իրերը, հողում չի թաղել ինչ-որ

անձանց պատկանող սպասքը, և որ իրեն մեղսագրվող մյուս մեղադրանքները ևս հորինված են: Ըստ Աբդուլ Քերիմի՝ թեև իր ընտանիքը բաղկացած է եղել ինը հուգուց, սակայն տանն ընդամենը հինգ աթոռ են ունեցել, անգամ ստիպված են եղել սեղանի վրա նստել: Ամբաստանյալն իր զարմանքն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ իր նման մարդուն, որը հիմա անգամ երկու տեղանոց սեղանի մոտ է նստում, ինչպես կարելի է նման մեղադրանք հարուցել այն դեպքում, երբ իրենից շատ ավելի հանցավոր մարդիկ կան:

Աբդուլ Քերիմը նաև հայտնեց, թե ինքը տեղեկություններ չունի Նիկոլի անվամբ մի հունահպատակի պատկանող 1000 լիրա արժողությամբ մոտորանավակի մասին: Այս ցուցմունքները տալուց հետո մեղադրյալին դուրս տարան:

Այնուհետև հարցաքննվեց տեղահանության ժամանակ Բյույուք Դերեի թաղային ավագանու պաշտոնը վարած Ջելալ էֆենդին, որին հարցեր տվեցին տեղահանության մասին հաղորդագրություններ ստանալու վերաբերյալ: Ջելալ էֆենդին հայտնեց, որ գետնում թաղված, իսկ հետագայում՝ Բեյքոզի[64] կենտրոնական վարչության կողմից գտնված պղնձե մեծ կաթսայի վրա կնիք է եղել՝ ամրացված շրջաններին պատկանելու վերաբերյալ: Այդ կաթսան օգտագործվել է ձկան յուղ հալեցնելու նպատակով:

Ջելալ էֆենդուց հետո ամբաստանյալներից հարցաքննվեց Ռեֆիկ Հըֆզը բեյը, որը հերքեց Ջելալ բեյի հետ իր համագործակցությանը վերաբերող մեղադրանքը: Տեղահանության[65] գործողություններին անդրադառնալով՝ Ռեֆիկ Հըֆզը նշեց, որ թեև այդ խնդիրները չեն եղել իր պաշտոնական պարտականությունների շրջանակներում, սակայն ինքը տեղյակ է եղել դրանց մասին: Ըստ մեղադրյալի՝ ինքը ոչ մի ձևով չի օգտվել ռազմական գերատեսչության կողմից կատարված տների տեղափոխության

---

[64] Ստամբուլի շրջաններից մեկն է:

[65] Բառացի՝ դատարկման:

հետևանքով առաջացած խառնաշփոթ իրավիճակից և, ընդհանրապես, դրա կարիքը չի ունեցել:

Կաթսայի մասին եղած խոսակցություններին անդրադառնալով՝ Ռեֆիկ Հըֆզը բեյը հայտնեց, որ Ռազմական նախարարության ձկնորսական ջոկատը զբաղվել է Սև ծովում դելֆին որսալու գործողություններով, իսկ կաթսան օգտագործվել է ձկան յուղ հալեցնելու նպատակով:

Կրկին դահլիճ բերվեց Աբդուլ Քերիմ բեյը, որին հարցեր տվեցին այն մասին, թե տեղափոխության ընդհանուր ժամկետը 15 օրով երկարաձգելու նրա ջանքերի հետ մեկտեղ, ինչո՞ւ են նախապես համապատասխան հանգամանքներ ապահովել որոշ անձանց համար՝ դրդելով նրանց ավելի վաղ գործողությունների: Նախագահի կողմից տրված վերոհիշյալ հարցին մեղադրյալը պատասխանեց, թե նման մի բան եղել է:

Այն հարցին, թե ինչու տեղահանության հրամանը միաժամանակ չի հաղորդվել թե՛ մահմեդական և թե՛ քրիստոնյա ավագանիներին, մեղադրյալը պատասխանեց, թե անհրաժեշտ չեն համարել առանձին-առանձին հաղորդելու, քանի որ քրիստոնյա բնակչության տեղահանությունը սերտորեն առնչվում էր իր սեփական գործերն ու հաշիվներն ունեցող և միևնույն գյուղում բնակվող մահմեդական բնակչության գործերին:

Այս ցուցմունքներից հետո ժամանակի սղության պատճառով ժամը 16:10-ին նիստն ավարտվեց: Շարունակվելու է վաղը՝ ժամը 13:00-ին:

24-ը ապրիլի, 1919, «Ալեմդար»

ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ՝ ժամը 11:30-ից սկսած՝ Նազըմ փաշան ռազմական արտակարգ ատյանում շարունակեց Բողազիչիի դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ֆերիդուն բեյը: Նախ դահլիճ հրավիրվեց Վասիլյադիս անունը կրող վկան:

Վասիլյադիսը վկայեց, որ Բյույուք Դերեում բեռնափոխադրման 2 նավ է գոյություն ունեցել, որոնցից մեկը պատկանում էր մզկիթին, իսկ մյուսը՝ եկեղեցուն: Երբ իրենք այնտեղ էին գնացել մզկիթին պատկանող բեռնակիր նավով, վերադարձին Ջելալ և Մահմուդ է ֆենդիներն իրենց առաջարկել էին նավը գործածել, ապա վերանորոգել և վերադարձնել, սակայն 5-6 օր չէին վերադարձրել: Հետագայում ինքը լսել էր, թե մյուս նավը վաճառվել էր. այն գնել էր մեղադրյալներից Մահմուդ էֆենդին 120 լիրայով (նավն այդքան էր գնահատել ընտրական կոմիտեն):

Այդ պահին Ջելալ էֆենդին ևս հանդես եկավ խնդրին առնչվող մեկնաբանություններով: Նա մասնավորապես վկայեց, թե նավերի վերադարձը կատարվել է Վասիլյադիսի և նրա կնոջ նախաձեռնությամբ ու խրախուսմամբ:

Այնուհետև Մահմուդ էֆենդին նշեց, թե եթե անհրաժեշտ է նավը վերադարձնել, և եթե այդ խնդրում իր կողմից կատարված որևէ չարաշահում է գրանցվել, ապա ինքը պատրաստ է նավն անվճար կերպով վերադարձնել:

Ապա պաշտպանական խոսքով հանդես եկավ դատապաշտպան Հասան բեյը.

«Նախորդ նիստում Քերիմ բեյին հարցաքննելիս Դուք նրան դիմեցիք հետևյալ հարցով. արդյոք ինքը որևէ առնչություն ունեցե՞լ է այն ֆիրմայի հետ, որում ընդգրկված է եղել: Եթե Ձեր հարգարժան դատարանը հետաքննություն կատարի այդ ուղղությամբ, մենք կարող ենք շատ վկաներ ներկայացնել: Բացի այդ՝ կխնդրեի, որ ծանուցագրեր ուղարկեիք ընտրական կոմիտեի

կազմում ընդգրկված նախկին քաղաքապետեր Թևֆիկ և Մուսթաֆա բեյերին՝ որպես իմ պաշտպանյալի վկաների՝ Քերիմ բեյի կողմից իր պաշտոնական պարտականությունների կատարման վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով»:

Ապա դատապաշտպաններից Ադիլ բեյը նախագահին խնդրեց Վասիլյադիսին հարցնել Ռեֆիկ բեյից ստացած իր տպավորությունների մասին: Այնժամ Վասիլյադիսը նշեց, թե Ռեֆիկ և Քերիմ բեյերը լավ հարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ, սակայն Թալեաթի օրոք Ռեֆիկ բեյի հետ որոշ հարցեր են քննարկվել. Քերիմ բեյը հանդես է եկել իր դեմ ուղղված անօրինական գործողություններով: Ըստ վկայի՝ գույքի, իրերի և հողատարածքի կողոպտման հետևանքով տրվել էր 120.000 լիրայի վնաս: Վասիլյադիսը նաև հայտնեց, թե Ռեֆիկ և Ջելալ բեյերը նունպես իրենց մեղքի բաժինն ունեն այդ գործում և նախագահին հանձնեց մի բողոքագիր:

Բնականաբար Վասիլյադիսի մեղադրանքներին պատասխանեց Ռեֆիկ բեյը, որն ընդգծեց, թե ոչ մի գործողության մեջ չի եղել այդ մարդու հետ, նրա հետ իր ունեցած առնչությունները սահմանափակվել են իրար բարևելով միայն, հայտարարությունը, իր կարծիքով, ամբողջովին հորինված է, իսկ Վասիլյադիսի վկայակոչած տան խնդիրն էլ (...)[66] անդամ Սաբրի բեյի օգևանած տունն է եղել, որը պատկանել է առևտրական Թոքաթլըյան էֆենդուն:

Քերիմ բեյը ևս հայտնեց, թե չի կարող ընդունել Վասիլյադիսի վկայությունը:

Այնժամ դատարանի կազմը եզրակացրեց, թե անհրաժեշտ է առերես հարցաքննել այդ երկու վկաներին:

Նիստն ավարտվեց ժամը 12:10-ին. շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 13:00-ին:

11-ը մայիսի, 1919, «Այեմդար»

---

[66] Բառը ջնջված է:

ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմական արտակարգ ատյանը երեկ Մուսթաֆա Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակեց Բյույուք Դերեի տեղահանությանը մասնակից լինելու մեջ մեղադրվող վարչության նախկին պաշտոնյա Քերիմ բեյի, Բաքեր խանութի տեր Ռեֆիկ Հըֆզը, լազ Ջելալ և Հաֆըզ Մահմուդ էֆենդիների դատավարությունը:

Վկաներից Բյույուք Դերեի նախկին առաջին մուխտար Նիազի բեյը հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով.

«332 (1916) թվականից ի վեր առաջին մուխտար եմ[67]: Ինձնից առաջ այդ պաշտոնում է եղել Ջեմալ էֆենդին: Մենք ենք վաճառել մզկիթին պատկանող նավը, որովհետև նավապահեստարանն անհրաժեշտ էր նավագնացության գործակալությանը: Վնասված լինելու պատճառով նավն անհնար էր տեղափոխել: Ուստի ընտրական կոմիտեն նավը վաճառելու որոշում կայացրեց՝ ի նկատի ունենալով նրա հնացած լինելու հանգամանքը: Նախնական գնից ավել չտվեցին, Հետևաբար՝ նավը վաճառվեց 120 լիրայով՝ Մահմուդ էֆենդուն: Դրամը պահպանվում է:

Երկու ընտրական կոմիտեների կազմավորման ժամանակ նավը հետ վերցրեցին Հաջը Մահմուդ էֆենդուց, քանի որ այն անհրաժեշտ էր: Չնայած անհրաժեշտությանը՝ մենք այն դարձյալ վաճառեցինք՝ շատ վնասված լինելու պատճառով: Տեղեկություններ ունեմ առ այն, որ եկեղեցուն պատկանող նավը ևս տարվել է վերաբնակեցման ընթացքում»:

Վկաներից Սուլեյման էֆենդին ևս, որը Բյույուք Դերեի ընտրական կոմիտեի անդամ էր, դատարանի մուտքի մոտից հանդես եկավ հետևյալ վկայությամբ.

---

[67] Գյուղապետ:

«Բյույուք Դերեում գոյություն ունեին 2 բեռնատար նավեր: Մեկը պատկանում էր մզկիթին, իսկ մյուսը՝ եկեղեցուն: Եկեղեցուն պատկանող նավը (...)[68] է: Մզկիթին պատկանող նավը վնասվել էր նավապահեստարանում, որի պատճառով դուրս էր տարվել: Ընտրական կոմիտեի կողմից ընդունված որոշման հիման վրա՝ այն 120 լիրայով վաճառվեց Հաջը Մահմուդ էֆենդուն: Մենք չկարողացանք միջամտել Նավագնացության գործակալության կողմից նավապահեստարանը վնասելուն ուղղված գործողություններին, քանի որ այն ժամանակ արդեն մեկ տարի էր, ինչ Հաքքը բեյի անունը լսող յուրաքնչյուր ոք թողնում-փախչում էր: Բոլորս վրդովված էինք. չէ՞ որ թամբագործական արհեստանոցը պատրաստ էր»:

Այնուհետև հետևյալ վկայությամբ հանդես եկավ ընտրական կոմիտեի [անդամներից] Հաջի Մուստաֆա էֆենդին.

«Բյույուք Դերեում գոյություն ուներ երկու նավ, որոնցից մեկը պատկանում էր մզկիթին, իսկ մյուսը՝ եկեղեցուն»:

Հաջի Մուստաֆա էֆենդին նույնպես մյուս վկաների նման խոսեց նավի վնասված լինելու մասին, ընդգծեց Հաջի Մահմուդ էֆենդուն վաճառված լինելու հանգամանքը, ապա հայտնեց, որ նավը տվյալ պահին էլ գտնվում է վերջինիս մոտ, իսկ դրամը՝ իր:

Ապա վկաներից հետևյալ հայտարարությամբ հանդես եկավ Թոքաթլըյան Հովսեփ էֆենդու տանը պահակություն կատարած Մուստաֆա աղան.

«Թոքաթլըյան էֆենդին նախքան տարագրումը կողպել էր իր տան բոլոր սենյակների [դռները]: Կողպված չէր սրահներից մեկը միայն: Տեղահանությունից առաջ նա ինձ զգուշացրեց, որ եթե Ռեֆիկ բեյն ինձնից խնդրի նրա տան բանալիները, ես կարող եմ դրանք վստահել վերջինիս: Երեք օր անց ինձ մոտ եկավ Սաբրի բեյը և պահանջեց բանալին: Գնացի ու այդ մասին հայտնեցի

---

[68] Բառն անընթեռնելի է:

Ռեֆիկ բեյին, սա էլ ասաց՝ տուր, ես էլ տվեցի: Մի քանի օր անց նկատեցի, որ սենյակների բոլոր պատուհանները բաց են: Այդ մասին տեղյակ պահեցի Ռեֆիկ բեյին: Նա պատասխանեց, թե չի ուզում խառնվել: Իսկ Սաբրի բեյը հեռանալով՝ իր հետ էր վերցրել տան բոլոր իրերը»:

Վկաներից չէր ներկայացել Թոփհանե գործարանի հսկիչ, մայոր Հյուսնի էֆենդին, իսկ վկա Յունուս էֆենդին նախագահի այն հարցին, թե որևէ տեղեկություն ունի՞ Ռեֆիկ բեյի դեմ վկայություն տալու համար մեկին 300 լիրա առաջարկելու վերաբերյալ, վկան պատասխանեց, թե տեղյակ չէ:

Կրկին ունկնդրության արժանացավ նախորդ նիստում հարցաքննված վկա Վասիլյադիս էֆենդին, որը կրկնեց իր նախկին ցուցմունքները:

Ապա վկաներից պաշտոնաթող մայոր Շևքեթ էֆենդին հայտնեց, որ Բյույուք Դերեի տեղահանության մասին հրամանը քրիստոնյաներին հաղորդվել է վարչության պաշտոնյայի միջոցով: Շատերը հարկադրաբար լքել են իրենց իրերը: [Բնակչության] տեղահանումից քիչ անց կողոպտվել են շատ տներ, իսկ վարչության պաշտոնյա Քերիմ բեյն անտարբերություն է դրսևորել թալանի նկատմամբ:

Այնուհետև հարցաքննության ենթարկվեց վկաներից ժանդարմ, տասնապետ Ռեմիզը, որն ասաց, թե ինքը ոչ մի տեղեկություն չունի: Իսկ ամբաստանյալի օգտին վկայություն տալու նպատակով ներկայացած նախկին քաղաքապետ Թևֆիկ բեյը նշեց.

«Տեղահանության ընթացքում ես եղել եմ Բյույուք Դերեում: Ծանոթ եմ մեղադրյալների հետ. նրանց մասին ոչինչ չեմ լսել: Քերիմ բեյին ճանաչում եմ որպես գործունյա պաշտոնյայի»:

Ապա Թոփհանեի կայմակամ Մուսթաֆա էֆենդին հանդես եկավ հետևյալ վկայությամբ.

«Տեղահանության ժամանակ Բյույուք Դերեում չեմ գտնվել: Այնտեղ եմ եղել նախքան տեղահանությունը և դրանից հետո: Քերիմ բեյը պատվարժան և գործունյա պաշտոնյա է»:

Այնուհետև, քանի որ ավարտված էին ռազմական արտակարգ ատյանի հարցաքննությունները, նախագահը հաղորդեց, որ նիստը հետաձգվում է մինչև երկուշաբթի՝ ժամը 10:00-ը՝ մեղադրական եզրակացության և պաշտպանական ճառերի ունկնդրության համար, որից հետո նիստն ավարտվեց:

14-ը մայիսի, 1919, «Ազեմդար»

ԽԱՐԲԵՐԴԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՄԱՄՈՒՐԵԹ-ՈՒԼ ԱԶԻԶԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ՝ կեսօրվա ժամը 14:15-ին, ռազմական արտակարգ ատյանում Զեքի փաշայի նախագահությամբ կայացավ նիստ, որի ընթացքում հարցաքննվեցին Մամուրեթ-ուլ Ազիզի տեղահանությանը մասնակից լինելու մեջ մեղադրվողներ հանրակրթական տեսուչ Ֆերիդ և Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրի բեյերը:

Որպես դատախազ հանդես էր գալիս Սուղի բեյը, իսկ պաշտպանության կողմը ներկայացնում էր Յորղակի էֆենդին:

Սկզբում հրապարակվեցին Ֆերիդ բեյի անձնական տվյալները, որից հետո վերջինս վկայեց, թե աշխատել է նախ՝ Մամուրեթ-ուլ Ազիզի, ապա՝ Քոնիայի հանրակրթական տեսչություններում:

Այնուհետև բացահայտվեց Մեհմեդ Նուրի բեյի ինքնությունը, որից հետո դատական նիստի քարտուղարն ընթերցեց որոշումը, համաձայն որի.

«Բեհաեդդին Շաքիր և Նազըմ բեյերը եղել են Մամուրեթ-ուլ Ազիզի տեղահանությունն իրականացնողներից: 10 օրվա մեջ նրանց՝ ռազմական ատյան չներկայանալու դեպքում նրանք կզրկվեն քաղաքացիական իրավունքից»:

Ապա խոսքի իրավունք ստացավ Սուղի բեյը, որը պահանջեց առանձնացնել Մամուրեթ-ուլ Ազիզի նախկին նահանգապետ Նաբիք բեյի և Խարբերդի նախկին մութասարրիֆի գործերը, քանի որ վերջիններս աքսորվել էին Անտանտի պետությունների կողմից,

իսկ այդ տեղահանության հետ առնչություն ունեցած երկու պատգամավորներին, որոնք ներկայում գտնվում են Դիարբեքիրում, դատել այստեղ գալու դեպքում, Ֆերիդ և Ռեսնելի Նազըմ բեյերին դատել հեռակա կարգով՝ փախուստի մեջ գտնվելու պատճառով, իսկ Բեհաեդդին բեյի դատաքննությունը հետաձգել, քանի որ նրա վերաբերյալ ավելի կարևոր թղթապանակ է կազմվել:

Այս առաջարկը կարճատև քննարկումից հետո ընդունվեց դատարանի կազմի կողմից:

Այնուհետև ընթերցվեց հետաքննության կողմից ընդունված որոշումը, ըստ որի՝ Մամուրեթ-ուլ Ազիզի և Խարբերդի տեղահանության ընթացքում կատարված բռնությունների առնչությամբ Ֆերիդ և Մեհմեդ Նուրի բեյերը համարվում էին անուղղակի մասնակիցներ:

Ապա դատախազը մեղադրանքը պաշտպանելուց հետո պահանջեց, որ Նազըմ բեյը դատվի որպես Մամուրեթ-ուլ Ազիզի տեղահանության կազմակերպիչ և իրականացնող, իսկ Ֆերիդ և Մեհմեդ Նուրի բեյերը՝ որպես անուղղակի մասնակիցներ:

Նախագահի հարցին ի պատասխան՝ Նուրի բեյը հայտնեց, որ ինքը եղել է լիազորված անձ, իսկ Ֆերիդ բեյը՝ ոչ: Հետո Ֆերիդ բեյին դուրս տարան դահլիճից, և սկսվեց Մեհմեդ Նուրի բեյի դատական հարցաքննությունը: Վերջինս, տրված հարցերին ի պատասխան, հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով.

«Ուղարկված քարավաններից 9 հոգու ոչնչացման մասին լուրեր ստանալուց հետո նահանգապետը համապատասխան միջոցներ ձեռնարկեց: Ավանի ներսում որևէ դեպք չի գրանցվել, տեղահանվածներն իրենց հետ են վերցրել շարժական գույքը, իսկ ոչ շարժական գույքը ենթարկվել է բռնագրավման՝ հատուկ հանձնաժողովների կողմից: Տեղահանության ողջ ընթացքում ես գտնվել եմ կենտրոնում և աշխատել, ըստ կարելվույն, պաշտպանել հայերին. իմ ագարակում պատսպարված հայերը կարողացել են խուսափել տեղահանությունից: Տեղահանության մասին նախապես տրված հրամանը համընդհանուր բնույթ էր կրում: Ես եմ իրականացրել հայերի տեղահանությունը: Սուտ են այն տեղե-

կությունները, թե իբր ես կանանց՝ ինձ ուղղված այն հարցին, թե «Մեր տղամարդկանց ու՞ր եք տանում», պատասխանել եմ. «Նրանք գնում են ուտելիք գնելու: Լքված հողատարածքները ես լցնելու եմ մեղուներով»: Տեղահանությունն իրականացվում էր քաղաքացիական վարչության կողմից»:

Այս ցուցմունքները տալուց հետո վերոհիշյալը դուրս տարվեց. բերվեց Ֆերիդ բեյը, որը հետևյալ կերպ պատասխանեց իրեն ուղղված հարցերին.

«326 թ. (1910) մինչև 335 թ. (1919) ես աշխատել եմ Մամուրեթ-ուլ Ազիզի հանրակրթական տեսչությունում: Տեղահանության ընթացքում հիվանդացել եմ դիզենտերիայով: Իմ ունեցած տեղեկությունների համաձայն՝ տեղահանվածների մի մասը գնացել է Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Մալաթիայի ուղղությամբ: Ըստ ինձ հասած լուրերի՝ թե՛ Մալաթիա և թե՛ Դիարբեքիր տարված քարավաններից միայն մեկական քարավան է ենթարկվել չարագործությունների, սակայն համոզված չեմ այդ լուրերի հավաստիության մեջ, քանի որ ես կապ չեմ ունեցել: Առնչություն չունենալու հետևանքով պատճառների մասին գաղափար չունեմ:

325 թ. (1909) անդամագրվել եմ Միություն և առաջադիմություն կուսակցությանը: Տարագրված հայերի գույքը կորստի չի մատնվել, քանի որ հայերը հրապարակավ վաճառել են իրենց իրերի մի մասը, իսկ մնացածը՝ թողել: Ճշմարտությանը չեն համապատասխանում այն լուրերը, որոնց համաձայն՝ ես նախագահել եմ Տեղահանության գործերը կարգավորող հանձնաժողովը: Բնական եմ համարում, որ տեղահանությունը ղեկավարվել է նահանգապետի կողմից, քանի որ այն կատարվում էր օրենքի շրջանակներում»:

Դատախազը, նախագահի հարցին ի պատասխան, հայտնեց, որ որևէ դիտողություն չունի, որից հետո նիստը դադարեցվեց: Այն շարունակվելու է շաբաթ օրը՝ ժամը 15:00-ին:

30-ը հուլիսի, 1919, «Ալեմդար»

ՄԱՄՈՒՐԵԹ-ՈՒԼ ԱԶԻԶԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմական արտակարգ ատյանը երեկ՝ եվրոպական ժամով ժամը 15:00-ին, Զեքի փաշայի նախագահությամբ նիստ գումարելով, շարունակեց Մամուրեթ-ուլ Ազիզի տեղահանության դատավարությունը: Որպես դատախազ՝ մասնակցում էր Սուդի բեյը:

Մեղադրյալների աթոռներին էին հանրակրթական նախկին տեսուչ Ֆերիդ և Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրի բեյերը: Հարցաքննվելու նպատակով դահլիճ հրավիրվեց վկաներից Հալիլ փաշան, որը հայտնեց, թե մեղադրյալներին ճանաչում է կալանատնից, մեկ այլ վայրում չի հանդիպել և ոչ մի առնչություն չի ունեցել Մամուրեթ-ուլ Ազիզի հետ:

Այդ պահին դատախազ Սուդի բեյը, խոսքի իրավունք ստանալով, ընդգծեց, որ Հալիլ փաշային անհրաժեշտ է հարցաքննել ոչ թե որպես Մամուրեթ-ուլ Ազիզի և Խարբերդի տեղահանության անմիջական մասնակից, այլ պետք է նրան հարցեր տալ Հատուկ կազմակերպության և տեղահանության ժամանակամիջոցի վերաբերյալ՝ ի նկատի առնելով նրա՝ նախկինում տված ցուցմունքները, որոնց շնորհիվ պարզվել է, որ նա տիրապետում է տեղեկությունների:

Այնժամ նախագահ Զեքի փաշայի տված հարցերին պատասխանելով՝ Հալիլ փաշան հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով.

«Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր Սյուլեյման Ասքերի բեյի կողմից, իսկ [այդ հաստատության կազմավորումը] կատարվել էր Էնվերի հրամանով»:

Դատախազի պահանջով և նախագահի հարցին պատասխանելով՝ Հալիլ փաշան հայտնեց, որ կենտրոնական շտաբում իր գտնվելու ընթացքում Ռեսնելի Նազրմ և Բեհաեդդին Շաքիր բեյերը կապ չեն ունեցել Հատուկ կազմակերպության հետ: Այդ ժամա-

նակահատվածում տվյալ գործերով զբաղվել են միայն դոկտոր Նազըմ և Աթիֆ բեյերը: Այս ցուցմունքները տալուց հետո Հալիլ փաշան դուրս եկավ դահլիճից:

Այնուհետև վկաներից հարցաքննվեց Վանի նախկին նահանգապետ Թահսին բեյը, որը վկայեց, որ տեղահանության ժամանակ ինքը գտնվել է Էրզրումում, տեղահանությունը կատարվել է կառավարության հրամանով, քանի որ Դիարբեքիրի ճանապարհը վատն էր, Խարբերդից ուղարկվող քարավանները տարվել են Մալաթիայի ուղղությամբ: Թահսին բեյը նաև հայտնեց, որ Դիարբեքիրի ուղղությամբ ուղարկվածները Դերսիմի շրջանում մեծ մասամբ հարձակման են ենթարկվել, և որ այդ քարավանների վրա գրոհած անձինք ձերբակալվել են, դատվել ռազմական ատյաններում ու դեռ այն ժամանակ դատապարտվել հինգ տարվա ազատազրկման: Վկան նշեց, որ Հատուկ կազմակերպության ղեկավարների շրջանում լավ ոստիկաններ էլ են եղել, այդ կազմակերպության պարտականությունների մեջ առաջին հերթին մտնում էին ռազմական խնդիրները, Բեհաեդդին Շաքիրը թե՛ Բարձր Դռան և թե՛ Ռազմական նախարարության հետ կապվելու համար տիրապետում էր երկու գաղտնագրի:

Ապա հարցաքննվեց գնդապետ Հասան Թոսուն բեյը, որը հայտնեց, թե մեղադրյալներին չի ճանաչում, տեղեկություններ չունի, թե ինչու է ստեղծվել և որտեղ է գտնվել Հատուկ կազմակերպությունը, որովհետև շփումներ չի ունեցել: Արևելյան գործերի ղեկավարությունը միջոցներ էր տրամադրում Աֆղանստան, Հընդկաստան և Իրան մեկնողներին, նաև խնամում էր տեղի բնակիչներին:

Նիստն ավարտվեց. շարունակվելու է երեքշաբթի օրը՝ ժամը 15:00-ին:

3-ը օգոստոսի, 1919, «Այեմդար»

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆՈՒՄ ՄԱՄՈՒՐԵԹ-ՈՒԼ ԱԶԻԶԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմական արտակարգ ատյանը երեկ՝ ժամը 15:30-ին, դատարանի նախագահ Զեքի փաշայի նախագահությամբ շարունակեց Մամուրեթ-ուլ Ազիզի տեղահանության դատաքննությունը: Դատախազի պաշտոնում էր Սուդի բեյը: Մեղադրյալի աթոռին էին հանրակրթական տեսուչ Ֆերիդը և Դերսիմի պատգամավոր Մեհմեդ Նուրին: Նախ դատարան հրավիրվեց կայմակամ Հյուսամեդդին բեյը, որը երդվելուց հետո իրեն ուղղված հարցերին տվեց հետևյալ պատասխանները. ինքը եղել է թե՛ Հատուկ կազմակերպության անդամ և թե՛ տվյալ կազմակերպության լուծարումից հետո լուծարմանը լիազորված անձ: Հատուկ կազմակերպության մեջ եղել է մի հանձնաժողով, որը նպատակ է ունեցել ապահովել իսլամական հաղորդակցումը: Այդ խնդիրներով զբաղվել են Սուլեյման Ասքերի բեյն ու քաղաքի պարետ Հալիլ բեյը, հետագայում՝ Ջևադ բեյը: Նա նշեց նաև, որ Հատուկ կազմակերպությունը հետագայում վերածվել է Արևելյան գործերի վարչության: Ըստ նրա՝ Հատուկ կազմակերպության հիմնադրման սկզբում, այսինքն՝ Ասքերի և Հալիլ բեյերի ժամանակ (վերջիններս ներկայում ստացել են փաշայի կոչում) Աքրֆ, Նազըմ, Բեհաեդդին Շաքիր ու Ռըզա բեյերը, որպես քաղաքացիական անձ, գտնվել են Հատուկ կազմակերպության կազմի մեջ, սակայն այդ քաղաքացիականները զբաղվել են ոչ թե զինվորական գործերով, այլ՝ զինվորական գործերը թեթևացնող այլ խնդիրներով: Նա նշեց, թե իր կարծիքով Բեհաեդդին Շաքիր բեյը պատերազմի սկզբում եղել է Արդահանի կողմերը գրոհող կամավոր զորամասի հրամանատարը, որովհետև Հատուկ կազմակերպությունը գրեթե զինվորական կազմակերպություն էր և բաղկացած էր կանոնավոր զորքի պես կամա-

վորներից: Հյուսամեդդին բեյն ասաց, թե ինքը տեղահանության ժամանակ եղել է Ստամբուլում և զբաղվել իրեն հանձնարարված պարտականությունների կատարմամբ:

Կայմակամ Հյուսամեդդին բեյն այս ամենն ասելուց հետո դուրս տարվեց դահլիճից:

Այնուհետև վկաներից դատարան հրավիրվեց գնդապետ Նուսուհի բեյը, որը հայտնեց, թե չի ճանաչում մեղադրյալներին և տեղահանության ընթացքում եղել է ոչ թե Մամուրեթ-ուլ Ազիզում, այլ՝ Բիթլիսում: Վկան Բիթլիսի տեղահանության մասին որոշ ցուցմունքներ տալուց հետո նշեց, որ տեղահանության ժամանակ կատարված կոտորածին տեղիք է տվել բինբաշի (մայոր) Ֆայիք բեյը: Ապա դատախազի պահանջով Նուսուհի բեյն սկսեց պարզաբանումներ անել և հայտնեց, թե ըստ իրեն հասած տեղեկությունների՝ բինբաշի Ֆայիք բեյն այն ժամանակ դատվել է Մամուրեթ-ուլ Ազիզի ռազմական ատյանի կողմից և արդարացվել, իսկ Բիթլիսի փոխնահանգապետ և վիլայեթի վարչության դիվանատան ղեկավար Մուսթաֆա Վասըֆ բեյը եղել է մի շատ ծույլ ու շահամոլ անձնավորություն:

Այնուհետև դատապաշտպան Յորղաքի էֆենդին, խոսքի իրավունք ստանալով, ասաց.

– Արդեն երկու նիստ է, ինչ վկաները հարցաքննվում են այս դատական հայցի էության հետ կապ չունեցող հարցերի առնչությամբ: Ըստ էության՝ դատախազությունն էլ է այդ կարծիքին:

Նախագահը պատասխանեց.

– Ըստ էության՝ մենք էլ ենք կիսում Ձեր կարծիքը: Դատը կշարունակենք հինգշաբթի օրը՝ ժամը 15-ին:

Նախագահի վերոնշյալ խոսքերից հետո նիստն ավարտվեց:

8-ը օգոստոսի, 1919 թ., «Ալեմդար»

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆ ՓԱՐԻԶՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՎ ՄԵԾԱՑԱԾ, ՍԱԿԱՅՆ ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԺԵՎԱԽՈՎԻ «ԱԹԱԹՅՈՒՐՔ» ԳՐՔԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՈՐԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ 2008 թ. ՄՈՍԿՎԱՅԻ «ՄՈԼՈԴԱՅԱ ԳՎԱՐԴԻԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:

ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ:

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵԼ Է ԳԵՎՈՐԳ ՄԱԴՈՅԱՆԸ

Առաջին հայացքից սույն հավելվածի մեջբերումներն ուղղակիորեն քիչ են առնչվում «Թուրքերը թուրքերի մասին» խորագրի հետ, սակայն պատմությանը հայտնի է, որ երիտթուրքերի կողմից իրականացվող Հայոց ցեղասպանությունն ի վերջո իր ավարտին հասցրեց Քեմալ Աթաթյուրքը:

Կան նորահայտ փաստեր Աթաթյուրքի և բոլշևիկյան Ռուսաստանի համագործակցության վերաբերյալ:

ԵՊՀ հրատարակչություն

ԱՌԱՋՆՈՐԴԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ապրիլ 1920, Ստամբուլ... Հետաքրքրասերներն ամեն օր կարող են հետևել, թե ռազմական նախարարության առջևի ընդարձակ հրապարակում ինչպես են ընթանում խալիֆայության բանակի նորակոչիկների ուսումնական վարժանքները:

Անգլիացիների զրահամեքենաները Ֆերիդ* փաշային հասցրեցին կառավարության շենք: Բացահայտ և խելակորույս կերպով Ֆերիդը որոշում է ազգայնամոլների դեմ իսկական քաղաքացիական պատերազմ սկսել: Խորհրդարանը լուծարված է... Թուրքական իսլամի գերագույն առաջնորդ շեյխ ուլ իսլամը, որ նախկինում գահընկեց էր անում մեղավոր սուլթաններին, բոլոր հավատավոր մուսուլմաններին հրամայում է պայքարել Քեմալի և ազգայնամոլների դեմ: Ջինվորական հատուկ դատարաններ են ստեղծվում Անատոլիայի ազգայնամոլներին դատելու համար: Ինչպես Ալի Ֆուադը, Իսմեթը, Բեքիր Սամին, Քարա Վասըֆը, Հալիդե Էդիպն ու իր ամուսին դոկտոր Ադնանը, Ալֆրեդ Ռյուս-

---

* Դամաթ Մահմեդ Ադիլ Ֆերիդ փաշա էֆենդի (1853-1923) – Օսմանյան կայսրության քաղաքական գործիչ, որ Մեհմեդ 6-րդի կողմից երկու անգամ (1919 թ. մարտի 4 – 1919 թ. հոկտեմբերի 2 և 1920 թ. ապրիլի 5 – 1920 թ. հոկտեմբերի 21) նշանակվել է մեծ վեզիր (ծան. թարգմ.):

տեմն ու շատ ուրիշներ*, «3-րդ բանակի նախկին տեսուչ, հրաժարական տված սալոնիկցի Մուստաֆա Քեմալ էֆենդին՝ Ալի Ռիզա էֆենդիի որդին» ևս մահվան է դատապարտված: Այս լուրն իմանալով՝ Քեմալը զայրույթով բացականչում է. «Այս դատավճիռները չեն ուրախացնում,– և անմիջապես արտահայտում իր լիակատար արհամարհանքը,– Մեր մահվան դատավճիռները քաղաքական ոչ մի կշիռ չունեն»: Սակայն նրա շրջապատը, հատկապես Իսմեթը, այնքան էլ հանգիստ չէ և վախը չի թաքցնում:

Բայց պատրանքը երկար չի իշխի. մայիսի վերջին ֆրանսիական հատուկ ծառայությունները կգրառեն, որ «հետապնդումներն ընդամենը ծաղր են», իսկ թերթերից մեկը կպնդի, թե «անիմաստ հետապնդումների դարաշրջանն ավարտված է»: Սակայն տվյալ պահին Ֆերիդի հրահրած պայքարը սարսափ է հարուցում: Անատոլիայում կարգուկանոն հաստատելու համար մեծ վեզիրն ստեղծում է հատուկ ջոկատներ, որ խալիֆաթի բանակ են հորջորջվում: Խալիֆայության, և ոչ թե սուլթանության... մի՞թե սուլթանը խալիֆի համեմատությամբ պակաս ընդունելի է:

Կարգուկանոնի այս լավ վճարվող պաշտպանները, որ իրենց սև համազգեստով տպավորություն էին գործում, Ստամբուլի գրավումից մի քանի ամիս անց սկսեցին զորաշարժը: Հաջող պահ է ընտրված. անգլիացիների վարձկան, նախկին ժանդարմ Անզավուրին ճնշում է չերքեզ Էթհեմը, չնայած առաջինիս թնդանոթներին, գնդացիրներին և սուրբ երրորդությանը՝ «հավատքը հոգում, Ղուրանը շուրթերին և սուլթանի հրամանը ձեռքին»:

Հյուսիս-արևմտյան Անատոլիայի այս հատվածում, որ չափազանց մոտ է մայրաքաղաքին, իրեն լիապես անատոլիական զգալու համար խալիֆայության բանակն առաջ է շարժվում գյուղացիների աջակցությամբ, որ ցնծությամբ են դիմավորում օրինա-

---

* Ազգայնամոլների առաջնորդներից միայն Քյազիմ Քարաբեքիրն էր, որ չէր դատապարտվել մահվան: Այս հանգամանքը մինչ օրս զարմացնում է շատ քեմալիստների:

կան իշխանության պաշտպաններին, որպեսզի նրանց միջոցով վռնդեն «դավաճան» Քեմալի կողմնակիցներին:

Բռնկվում է քաղաքացիական պատերազմը: Շեյխ ուլ իսլամի մեղադրանքներին ի պատասխան Քեմալը կենտրոնացնում է անատոլիական 153 մուֆթիների, որպեսզի նույնքան համոզիչ և Ղուրանի նույն քաղվածքներով իր պայքարին կրոնական հիմնավորում տա: Մեծ վեզիրը հայրենիքի դավաճան է հայտարարվում: Սակայն ճոռոմ հայտարարություններն ու ղուրանյան մեջբերումները բավարար չեն: Հարկավոր է մարտնչել և հեղել «եղբայրների արյունը»: Խալիֆայությանը լոյալ զորքերը հիմնականում կազմված էին չերքեզներից, վրացիներից, ալբանացիներից և արաբներից, խելամիտ հանգամանք, եթե հաշվի առնենք հյուսիս-արևելյան Անատոլիայում չերքեզների և ալբանացիների մեծ թիվն ու նրանց նվիրվածությունը սուլթան-խալիֆին: Ազգայնամոլների ռազմական ներուժը սահմանափակ էր, և այնուամենայնիվ Քեմալի մի քանի կողմնակիցներին՝ Ռեֆետին, չերքեզ Էթհեմին և Արիֆին հաջողվեց կանգնեցնել հավատարիմների առաջընթացը: Հունիսի վերջին խալիֆայության բանակը լուծարվեց:

Թուրքերը բանտված էին իրենց մայրաքաղաքում, գերի էին՝ դատապարտված անգլիացիների, հույների և օսմանյան հայերի ստորացումներին ու ատելությանը: Թուրքերի նկատմամբ նման վերաբերմունքի օրինակները լոկ շատանում էին: Դպրոցականներին ծեծում էին դասընկեր հույները, այն բանի համար, որ հրաժարվում էին գոռալ՝ «Կեցցե՛ Վենիզելոսը»*: Կանանց անպատվում էին՝ տրանվայում պոկելով նրանց բաժինն առանձնացնող շղարշը: Տղամարդկանց դեմքին հարվածներ էին տեղում այն բանի համար, որ ճանապարհը չեն զիջել օտարերկրյա սպային:

Զավթված Ստամբուլն ամբողջովին մեկուսացված չէր Անատոլիայից: Պարզապես բոլոր մեկնել ցանկացողները պետք է անգլիացիների, ֆրանսիացիների, ինչպեսև նրանց հետ համագործակցող հույների և հայերի մանրակրկիտ ու լկտի խուզարկությանը ենթարկվեին:

Լոկ չորս հոգի խուսափեց նման խուզարկությունից: Այդ չորսը՝ ճանաչված ազգայնամոլներ, անգլիացիների օրինությամբ Անատոլիա ուղարկվեցին՝ «Մուստաֆա Քեմալին հանդիպելու»: Եվ միթե կարելի է երկմտել, որ նրանք, առանց վայրկյան իսկ կորցնելու, Քեմալի գիրկը նետվեցին:

Ստուգումները չէին կանգնեցնում նրանց, և այդպիսիք քիչ չէին, ում տոմսը միակողմանի էր՝ դեպի Անատոլիա: Անատոլիա փախչելը միակ լուծումն էր Բեքիր Սամիի, Հալիդե Էդիպի, Յունուս Նադիի և այլ ազգայնամոլների պարագայում, որոնց գլուխների համար կառավարությունն ու դաշնակիցները պարգև էին խոստացել: Զգեստափոխվելով և ժանդարմների, երկաթգծային բանվորների ու վարպետների աջակցությամբ տեղաշարժվելով

* Էլեֆթերիոս Վենիզելոս (1864-1936), անցյալ դարասկզբի հույն քաղաքական գործիչ (ծան. թարգմ.):

միայն գիշերները, օգտագործելով «*Կարակոլի*»* մշակած գաղտնի երթուղիները, շատերը կարողացան միանալ ազգայնամոլներին: Դա հեշտ չէր: Որքա՜ն ահ ու սարսափ ապրեցին այդ սեփականատեր-արտադրողները, որ անսպասելիորեն հայտնվեցին պայքարի և ընդհատակյա գործունեության աշխարհում: Երբ սովոր ես այցելել գեղարվեստի սրահներ, և դու արտառոց խնամված ձեռքերով մի կին ես՝ ինչպես Հալիդե Էդիպը, բավական դժվար կլինի, որ քեզ պատկերացնես պայքարի ելածների շարքերում:

Օսմանյան վերջին խորհրդարանի պատգամավորները՝ զինվորականներ, քաղաքացիական անձինք, հայտնի և անհայտ դեմքեր, նախընտրեցին գնալ ազգայնամոլների մոտ՝ հետիոտն, ձիերով, սայլերով, շոգենավով կամ գնացքով: Սակայն նրանց խիզախությունը, այնուամենայնիվ, չպետք է մոռացության մատներ բազմաթիվ զինվորականների և բարձրաստիճան պաշտոնյաների սպասողական քաղաքականությունը: Լոկ ստամբուլյան կառավարության ֆինանսական ճգնաժամն ստիպեց նրանց մեկնել: 1920 թ. դեկտեմբերին, զավթումից ինը ամիս անց, Անկարայի զինվորական ղեկավարությունը կոչ հղեց ստամբուլյան սպայակազմին. «Մահն ու չքավորությունը կհետապնդեն ձեզ, քանի դեռ գտնվում եք Ստամբուլում: Մինչդեռ այստեղ ապահովված կլինեք, ձեր ոռճիկը կավելանա հինգ անգամ: Մի՛ հապաղեք մեկնել և շտապեք փրկել հայրենիքը»:

Քեմալի համար Անատոլիա մեկնելու դրդապատճառներն էական չեն. ցանկացած պատճառով Անկարա ժամանելն ու ազգայնամոլների շարժմանը միանալը ողջունելի է: Քեմալն անձամբ է ընդունում նրանցից շատերին, որ կարողացել են դուրս պրծնել Ստամբուլից: Նրան հատկապես ուրախացրեց իր հին ընկերոջ՝ Իսմեթի ժամանումը, որ հետագայում կարևոր դեր պիտի խաղար

---

* «*Քարաքոլ* (Սև ձեռք) *ընկերակցություն*». ստեղծվել է 1918 թ. հոկտեմբերի 20-ին (ծան. թարգմ.):

Քեմալի շրջապատում. «Բարի՜ գալուստ, Իսմե՛թ: Շատ ուրախ եմ, որ եկար, ի՜նչ լավ է, որ այսքան շուտ ժամանեցիր»:

Նոր եկածներն անմիջապես հասկանում էին, որ Անկարան բոլորովին էլ դրախտ չէ: Քաղաքում մոլեգնում էին մալարիան, ճահճային տենդն ու որովայնային տիֆը: Սակավ տներ էին բնակության համար պիտանի, և եվրոպական մակարդակի ոչ մի հյուրանոց չկար: Անգամ քիչ թե շատ տանելի շենքերում ջուր չկար: Ռեստորանների փոխարեն համեստ սրճարաններ էին՝ ճոճվող սեղաններով և ջարդած աթոռներով: Խանութները կարելի էր մի ձեռքի մատների վրա հաշվել: Քաղաքում տեղաշարժվում էին ոտքով կամ սայլակներով: Մինչև 1929 թվականի վերջը Անկարայում միայն մեկ՝ հին և հնամաշ մեքենա կար, որ, Իսմեթ Ինենյուի խոսքերով, Քեմալի տրամադրության տակ էր: Նախարարները տեղաշարժվում էին ֆայտոններով, որ ընթանում էին անմայթ և կեղտի ու փոշու մեջ կորած փողոցներով: Ջելալ բեյը, էկոնոմիկայի նախարար դառնալով, նախընտրեց հեծյալ շրջագայել:

Պատգամավորներն ստիպված էին տեղավորվել արական դպրոցում: «Նրանց հետ դպրոցականի պես էին վարվում»,-նշում էր ֆրանսիացի սպան, որ գերեվարվել էր մարտի 16-ին և ազատվել մայիսի սկզբին: Իսկապես՝ ընդհանուր ննջարան, ճաշը՝ խիստ ժամակարգով, թշվառ բյուջե. այս ամենը հուսահատեցնող էր: Բայց ի տարբերություն ֆրանսիացիների, անատոլիացիների համար, հատկապես նրանց, որ միացել էին ընդդիմադիր շարժմանը, Անկարան «մեծ քաղաք» էր: Նրանք այստեղ չէին եկել համեստ և դաժան կյանքի հմայքը փնտրելու: Դեռ ավելին. Անկարայում գտնվողները՝ թե՛ հնաբնակները, թե՛ նոր ժամանածները, կամավոր էին ընտրել այս ուղին: Մի քանի օր անց Անկարայում սկսեց իշխել ալեկոծ և լարված մթնոլորտը: Յուրաքանչյուրն սկսեց գիտակցել, որ ավանտյուրայի մեջ է ներքաշված: Անկարայում ընդունված առաջին օրենքներից մեկը «անխմիչք օրենքն» էր, որից հետո ոստիկանապետ Դիլավերն սկսեց խեցգետին աճեցնել և տարածել անիսոնի օղի, թուրքերի սիրած խմիչքը: Սա

արտառոց դեպք էր համարվում: Շուտով Անկարայում խոսում էին միայն «Դիլավերի ջրի» մասին:

Անկարայում իշխող մարտական, վճռական ոգու վառ օրինակ է Անատոլիայի տեղեկատվական գործակալության (Anadolu Ajansi) ստեղծումը: Այն, որ Քեմալն ուշադիր է մամուլի նկատմամբ և իր ծրագրերը հաջողությամբ պսակելու հարցում վստահ է տեղեկատվության դերին, նորություն չէ: Այս են հաստատում «Մինբեր» թերթի ստեղծման պատմությունն ու Քեմալի բազմաթիվ հարցազրույցները՝ տրված թուրքական և հատկապես օտարերկրյա մամուլին:

Սեբաստիայում տեղի ունեցած կոնգրեսի ժամանակ Քեմալը հիմնում է ազգայնամոլների պաշտոնաթերթը՝ «Ազգային կամք»: Անկարա ժամանելով՝ Քեմալը ձգտում է ընդլայնել դրա ազդեցությունը՝ ձևականորեն փոխելով վերտառությունը «Ազգային ինքնիշխանության» և որոշում է ստիպողաբար հասկացնել իր զրուցակիցներին, որ ազգայնամոլներին միանալու լավագույն ապացույց կհանդիսանա «Ազգային ինքնիշխանություն» թերթին բաժանորդագրվելը: Անգամ 90 տոկոսանոց անգրագիտություն ունեցող երկրում պարզ գիտակցելով տեղեկատվության ազդեցությունը՝ նա բազմաթիվ հեռագրեր է հղում, ուր պահանջում էր վերահսկել փոստային ծառայությունը և խոչընդոտել կառավարական և թշնամաբար տրամադրված արտերկրյա մամուլի տարածմանը: Մայիսից նա գրաքննություն է մտցնում. նախկինում ազգայնամոլներն այս բանի համար քննադատում էին անգլիացիներին, երբ վերջիններս Ստամբուլում գրաքննություն մտցրեցին:

Այնուամենայնիվ թերթերը բավարար չէին, նաև թղթի հետ կապված խնդիրներ կային: Եվ ապրիլի 6-ին Քեմալն ստեղծում է «Anadolu Ajansi» տեղեկատվական գործակալությունը: Իրականում տեղեկատվական գործակալության գաղափարն իրենը չէր, այլ ստամբուլյան առավել հեղինակավոր թերթերից մեկի տնօրեն Յունիս Նադիինը և Հալիդե Էդիպինը: Անկարայի ճանապարհին Յունիս Նադին, որի թերթն արգելել էին անգլիացիները, և Հալիդե Էդիպը՝ ազգայնամոլ շարժման «Ժաննա դ'Արկը», միահամուռ

որոշում են կայացնում Թուրքիայի և արտասահմանի համար տեղեկատվական-քարոզչական գործակալություն ստեղծելու անհրաժեշտության մասին: Ի՞նչպես անվանեն այն:

«Հալիդե Էդիպն առաջարկում է. «Թուրքական գործակալություն», «Անկարայի գործակալություն» կամ «Անատոլիայի գործակալություն»: Անատոլիայի գործակալություն տարբերակն ինձ լավագույնն է թվում. չէ՞ որ հենց Անատոլիան պետք է պաշտպանի իրեն և ողջ հայրենիքը»:

Քեմալին երկար համոզելու կարիք չեղավ. Նադիի և Էդիպի Անկարա ժամանելուց չորս օր անց գործակալությունն ստեղծվեց: «Հավաս-Ռոյթեր» գործակալությունը կորցրեց իր մենաշնորհը: Այսուհետ անատոլիական գործակալության պաշտոնագրերը կհասցվեն ոչ միայն իսլամի տեղեկատվության կենտրոն, այլ նաև ռազմական և աշխարհիկ գրասենյակներ:

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Անկարայի ողջ բնակչության ուշադրությունը գրավեց Ազգային ժողովը, որ Քեմալը որոշեց ստեղծել Ստամբուլի զավթման հաջորդ օրը:

Երբ Յունիս Նադին հայտարարեց, թե «Անկարայում գլխավոր խնդիրը բանակի բացակայությունն է»,– Քեմալն անմիջապես ընդհատեց նրան. «Ինձ համար Ազգային ժողովը տեսություն չէ, այլ իրականություն, ամենակարևոր հանգամանքը. նախ Ազգային ժողով, ապա՝ բանակ, Նադի՛ բեյ: Համայն ժողովուրդը բանակ կդառնա, իսկ Ազգային ժողովը՝ նրա լիազորը: Բանակի համար հարյուրհազարավոր, միլիոնավոր մարդիկ են պետք: Երկու-երեք հոգին չի կարող անհրաժեշտ որոշումներ կայացնել: Դա կարող է անել միայն ազգը...»: Միայն պետական գործիչն էր ի վիճակի նման մտքեր արտահայտելու: Երկխոսությունը բերված է Յունուս Նադիի հուշերում, որ հրատարակվեցին հիսունական թվականներին, այն հաստատող այլ աղբյուրներ չկան:

Ազգայնամոլների պաշտոնաթերթ «Ազգային ինքնիշխանությունն» ասես փոխադրում է Քեմալի մտքերը, երբ խոսում է «պատմական իրադարձության» մասին. «Այս իրադարձությունը մեր ազգի գոյատևման ներուժի ամենահամոզիչ ապացույցն է: Մեր պատմությունը շատ հարուստ է այսպիսի հրաշքներով: Մեր ազգը բազում ցնցումներ է տեսել և ամեն անգամ դուրս է եկել դրանցից: Ազգը, որ դեռևս երեկ իրեն համարում էր վերացման դատապարտված, այսօր ոտքի է ելնում: Մեր ազգը հզոր կայսրություն ստեղծեց Անատոլիայի սրբազան հողի վրա Էրթողրուլի* սերունդների հովանու ներքո: Այն մշտապես իսլամի նվիրյալ

---

* Էրթողրուլ (1198-1281) – Օսմանյան հարստության հիմնադիր, Օսմանյան կայսրության առաջին սուլթան Օսման առաջինի հայր (ծան. թարգմ.):

պաշտպան էր»: Ազգայնամոլների մամուլը, առանց կարմրելու անդրադառնում էր իսլամին և օսմանյան պատմությանը:

Նեղ շրջանակներում Քեմալը չէր թաքցնում իր անհանգստությունը. կառավարական զորքերը կանգնած էին Անկարայի մատույցներում: Նա հայտնեց երիտասարդ Ռեջեփին. «Հիշի՛ր, Ռեջե՛փ, երբ դու ժամանեցիր, ես հարցրի, թե քո կարծիքով ինչ է պահանջում ազգային շահը, իսկ դու պատասխանեցիր, որ հարկ է զոհողության գնալ: Իսկ ես ասացի քեզ, որ մեր պատմական առաքելությունը Ազգային ժողով ստեղծելն է: Հարկ է, որ կատարենք մեր պարտքը, և ժողով գումարելու համար ես անհրաժեշտ միջոցներ եմ ձեռնարկել»: 1920 թ. ապրիլի 23-ը սովորականի նման սկսվեց: Սակայն օրվա կեսին, աղոթքից հետո, Հաջի Բայրամի մզկիթի առջևից սկիզբ առավ երթը: Առջևից տանում էին Ղուրանի տողերով զարդարուն ոսկեկտավ դրոշը, իսկ կողքերից տասնյակ խոջաներ միաձայն աղոթք էին կարդում: Մի քանի հարյուր մետրից թափորը կանգ առավ քաղաքի կենտրոնական հրապարակում:

Հրապարակում վեր էր խոյանում այն շենքը, ուր նախկինում ընթանում էին «Միասնություն և առաջընթաց» կուսակցության նիստերը: Ծավալուն, քառակուսի շենքը ճարտարապետը զարդարել էր երկու նեղլիկ պատշգամբներով: Դրանց վրա կկանգնեն Քեմալն ու իր համախոհները: Քեմալը գնում էր դրոշի ետևից: Շենքին մոտենալով՝ նա բարձրացավ աստիճաններով և մկրատով կտրեց կենտրոնական մուտքի կարմիր և սպիտակ ժապավենները: «Հանուն բարեգութ և ողորմած Ալլահի...» աղոթքի հնչյունների ներքո Քեմալը մտավ միջին չափի մի դահլիճ: Առաջին հայացքից այն նման էր նեղ սեղաններով և նստարաններով մի դասարանի: Դահլիճի խորքում ամբիոնն էր, որի վերևում զինադրոշն էր, իսկ նախագահության սեղանն՝ ի նշան սգո, ծածկված էր փռոցով: Հոգևոր սպասավորները, որ միացել էին Քեմալին, աղոթք էին հնչեցնում: Ալլահը մեծ է, և նրա սպասավորները Թուրքիո Ազգային մեծ ժողովի պաշտպանությունն էին աղերսում:

Իսլամական արարողակարգն ավարտելով՝ խոսեց ավագագույն երեսփոխանը. «Ազգային մեծ ժողովի աշխատանքները հայտարարում եմ բացված, ազդարարելով ամբողջ աշխարհին, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին անկախության համար անհրաժեշտ աշխատանքն սկսվում է այստեղ...»: Բացման արարողությունը կարճ տևեց: Քեմալը մի քանի խոսք ասաց, որպեսզի հիշեցնի, որ Ազգային ժողովը կազմված է օսմանյան խորհրդարանի պատգամավորներից, որոնք կարողացել են լքել Ստամբուլը, ինչպեսև այն պատգամավորներից, որ ընտրվել են* մայրաքաղաքի զավթումից հետո: Նա նաև հավելեց, որ նոր ժողովն օրինական է, և դահլիճը նրան սատարեց ծափողջույններով:

Հաջորդ օրը Ազգային ժողովը լուրջ գործի անցավ: Քեմալը հանդես եկավ ծրագրային ելույթով: Փաշան խոսում էր իշխող, քիչ խռպոտ ձայնով: Նրա ճառը, որ ժողովրդական թուրքերենի և օսմանյան վերնախավի ընտրելագույն լեզվի համադրություն էր, որոշակի ուղղվածություն ուներ և զուրկ էր ճարտասանական ցանկացած պաճուճանքից: Ազգային ժողովի այս ամբիոնը շուտով պիտի դառնար իր երկրի կենտրոնում Քեմալի մարմնավոր և հոգևոր ներկայության խորհրդանիշ: Թե՛ ցերեկը, թե՛ գիշերը՝ նավթի լամպերի լույսի ներքո նա հառնում էր ամբիոնին. «հզոր կամքն ընդգծող ծնոտ, բարձր ճակատ», ավյունով լեցուն, մեծ ձգտումներով, կտրուկ, զգուշավոր, անհաղթելի, ճարտասան, հրաշագործ, որ հաճախ կարող էր ժամերով խոսել, ինչն ստիպեց, որ մի անգամ պատգամավորներից մեկն ասի. «Ստիպեք, որ նա լռի, այլապես վերջիվերջո համոզելու է ինձ»: Սակայն թվում է, թե նրա ելույթների երկարությունը իր հաջողության բաղադրիչներից

---

* Ամեն տարածք հինգ ներկայացուցիչ էր ընտրել տեղի երևելիներից և Իրավունքների պաշտպանության միավորումից: Երբեմն ընտրությունը խիստ յուրօրինակ էր եղել: Օրինակ Արևմտյան Անատոլիայի դիվիզիայի հրամանատար գնդապետ Քյազիմն «ընտրվել» է Քեմալից հեռագիր ստանալով, ուր վերջինս գնդապետին ժողովի պատգամավոր տեսնելու ցանկություն էր հայտնել:

մեկն էր, եթե հավատանք մեկ այլ պատգամավորի խոսքերին, որ Անկարայում Ֆրանսիայի դեսպան Շամբրենի հետ մի անգամ զրուցելիս համեմատել է ֆրանսիացիների և թուրքերի հռետորական արվեստը. «Ձեր փայլուն ճարտասանները Բուրբոնյան պալատում ելույթ են ունենում մեկ-երկու ժամից ոչ ավել, մինչդեռ մեր ղազին կարող է չորս օր անընդհատ խոսել: Այ թե հռետոր է»:

Քեմալն այդ շաբաթ օրը, չնայած հոգնածությանը, խոսեց չորս ժամ: Վերլուծեց զինադադարից ի վեր տեղի ունեցած իրադարձությունները և ներկայացրեց իր գործողությունները՝ Ամասիայի հռչակագրից մինչև Անկարայում Ազգային ժողով գումարելը: Մարաթոնյան ճառ, որ Գլխավոր շտաբի զեկուցագրի էր նման, և ճառագում էր հռետորի եռասիրությունն ու պաճուճված էր մի քանի ուղղադավան և չեզոք կապակցություններով, որ կարող էին շփոթեցնել ցանկացած զգուշավոր և կասկածամիտ մարդու. «Ազգային ժողովը կփրկի փադիշահին, խալիֆին և Օսմանյան պետությունը՝ ամբողջ աշխարհին ցույց տալով, որ տակավին ողջ է օսմանյան հարստությունը... Ալլահը մեզ հետ է»: Պե՞տք է արդյոք զարմանալ, որ Քեմալի խոսքերից հետո ծափողջույններ պիտի հնչեին և բացականչություններ՝ «Թո՛ղ այդպես լինի»:

Անկուշտ Քեմալը ճառը շարունակեց դոնփակ: Այս անգամ նա ժամանակ չվատնեց հանրահայտ փաստերը հնչեցնելու վրա և սահմանափակվեց իր գործունեության հիմնական սկզբունքները թվարկելով. «Մեր խնդիրն է, որ հասու լինենք ազգի ազատագրմանը ազգային սահմաններում: Մենք պանթուրքիստական քաղաքականության չենք ձգտել, որպեսզի արտաքին դժվարությունների չհանդիպենք: Մենք չենք պաշտպանել նաև օտարերկրացիներին վախեցնող պանիսլամիզմը: Սակայն մենք մուսուլմանների բարոյական և նյութական օգնության կարիքն ունենք: Ի դեպ, մեզ աջակցում են իսլամական պետությունները: Բոլշևիկներն իրենց գաղափարներն ունեն: Մենք կարծում ենք, որ արդարացի կլինի օգտագործել ցանկացած օգնություն, պայմանով, որ չխառնվեն

մեր գործերին: «...» Քանի որ անգլիացիները զավթել են Ստամբուլը, փադիշահի հետ կապեր հաստատելը ոչնչի չի հանգեցնի»:

Ինչ կարելի է ավելացնել: Ամեն բան ցինիկաբար է ասված, ոչ երկիմաստ:

Ոչ մի բոպե չկորցնելով՝ Քեմալը նոր ելույթ է սկսում, այս անգամ բաց նիստի ժամանակ: Նա հայտարարում է՝ Ազգային ժողովը ներկա պահին պետք է կառավարություն ձևավորի, նույնիսկ մինչև սահմանադրության ընդունումը: Ազգային ժողովի նախագահը պետք է գլխավորի նաև կառավարությունը: Եվ որպեսզի պահպանողականները հանգստանան և սթափվեն, Քեմալը հավելում է, թե՝ սուլթանը մեր գերագույն կառավարիչն է, խալիֆը և իսլամական համայնքի գլխավորը, ուստի մենք չենք կարող թույլ տալ, որ խալիֆաթն առանձնացնեն սուլթանությունից: Նույն այս պատճառով անօգուտ և անհնար է Անատոլիայում փադիշահի ներկայացուցիչ նշանակել: Լարված պահ է: Սակայն ոչ ոք չի երկմտում՝ հայտարարության վերջում երեք բոպեանոց ծափահարություններով ողջունում են հռետորին:

Կառավարական կոչերի և հիացական բացականչությունների ներքո նա կրկին մոտենում է ամբիոնին, որպեսզի կատարի Ազգային ժողովի նախագահի պարտականությունները, ուր հենց նոր ընտրեցին իրեն: Նա ընդամենը մի քանի նախադասություն է ասում, բայց ինչպիսի. «Ազգային ժողովը «...» գումարվել է, որպեսզի փրկի սուլթան-խալիֆին «...»: Ես պետք է աշխատեմ հանուն ժողովրդի և երկրի բարօրության՝ չհետապնդելով որևէ անձնական նպատակ «...»: Թո՛ղ Ալլահը կյանք և քաջառողջություն շնորհի մեր փադիշահին և կայսերական գահից հեռու վանի բոլոր վտանգները, որպեսզի այն ազատ դարձնի»:

Լիակատար հաջողություն. երկիրը կառավարելու համար ստեղծվեց Ազգային մեծ ժողովը, Քեմալն ընտրվեց Ազգային ժողովի և կառավարության նախագահ: Կառավարության կազմում ընդգրկվեցին նրա ընկերները. Բեքիր Սամին՝ արտաքին գործոց նախարար, Հաքի Բեհիշը՝ ֆինանսների նախարար, Ալի Ֆուադի

հայրը՝ Իսմայիլ Ֆազիլը՝ աշխատանքի նախարար, Ֆեզին՝ պաշտպանության նախարար, իսկ Իսմեթը՝ գլխավոր շտաբի պետ: Հարկ է նշել, որ Ֆեզիի նշանակումը, որը Ստամբուլի զավթումից հետո ազգայնամոլներին հրապարակայնորեն «ավազակ» էր անվանել և նրանց միացավ միայն ժողովի ստեղծումից հետո, զարմացրեց շատերին, բայց ոչ Քեմալին:

Համախոհների այս միավորման մեջ առանձնակի տեղ էր զբաղեցնում Ջելալեդին Արիֆը, որ արդարադատության նախարար էր նշանակվել: Ստամբուլի այս նախկին գլխավոր դատավորը, որ նաև սահմանադրության լավագույն գիտակն էր Թուրքիայում, օսմանյան խորհրդարանի վերջին նախագահն էր եղել, Անկարա էր ժամանել խիստ որոշակի մտքով և չափազանց մեծ ձգտումներով: «Ազգային ժողովը ոչ այլ ինչ է, եթե ոչ լուծարված խորհրդարանի շարունակություն»,– հայտարարեց նա՝ պահանջելով նախագահի պաշտոնը: Քեմալը, որին ուրախացրել էր այս ակնառու լիբերալի ժամանումն Անկարա, որոշեց, որ նպատակահարմար կլինի, եթե նրան ընդգրկեն կառավարության կազմում, ինչն ազգայնամոլների կողմից մեծ զոհողություն չի լինի: Բանակցություններից հետո ստիպված եղավ Արիֆին զիջել փոխնախագահի պաշտոնը, ընդ որում քվեարկության ժամանակ նա ընդամենը մեկ ձայն պակաս հավաքեց, քան Քեմալը նախագահության համար: Հետագայում Քեմալը թողնելու էր, որ Արիֆը վարի գրեթե բոլոր նիստերը, բացառությամբ կարևոր քննարկումների, որ վերապահում էր իրեն:

ԱՇԽԱՏԵԼԻՍ

Ապրիլի 25-ին Քեմալն ամբիոնին մոտեցավ ևս չորս անգամ. Ազգային ժողովի աշխատանքը շարունակվում էր: Կատարվող իրադարձություններից հուզվելը, փորձի պակասը, Անկարայի վրա կախված վտանգը՝ այս ամենը բորբոքում էր պատգամավորների ցանկությունն ու ձգտումը:

Բուռն քննարկում էր սկսվել, և ելույթ ունեցողները հաճախ նախահարձակ էին լինում: Միայն ֆրանսուհի լրագրող Բերտա Ժորժ-Գոլին համարձակվեց ազգայնամոլների շարժումով և նրանց առաջնորդներով տպավորված գրել, թե՝ «Անկարայի ժողովը բավականաչափ մոտ է անգլիական խորհրդարանին»: Ի՞նչպես նա չտեսավ, կամ չկամեցավ տեսնել երիտասարդ սպաների, խոջաների, գույնզգույն գլխանոցներով այլազան ցեղերի առաջնորդների, եվրոպական համալսարանները լքած երիտասարդ ձեռնարկատեր-մեծահարուստների, ինչպես և հոգևոր վերնախավի ներկայացուցիչների միջև առկա խոր մրցակցությունը: Հսկայական անդունդ կա պահպանողականների և հեղափոխականների միջև, որ չեն ցանկանում բավարարվել սուլթան-խալիֆին «ազատելով» և հանդես են գալիս Անկարայում նոր հասարակություն ստեղծելու օգտին, որ կտարբերվի Ստամբուլի կողմից պարտադրվածից:

Քեմալն ստիպված էր հավասարակշռել և խուսանավել նրանց միջև, որ իրեն չմեղադրեն բռնակալության մեջ:

Արդյունքը Ազգային ժողովի ապրիլ քսանության հռչակագիրն էր, «որ հանդգնեց ժողովրդին ասել ճշմարտությունը»: «Ազգային մեծ ժողովն աշխատում է, որ ազատի խալիֆին՝ մեր փաղիշահին, որպեսզի բացառի Անատոլիայի մասնատումն ու մեր մայրաքաղաքը միացնի հայրենիքին: Մենք՝ ձեր ներկայացուցիչներս, երդ-

վում ենք Ալլահի և Մուհամեդ մարգարեի անվամբ, որ այն ենթադրությունը, թե մենք «խալիֆի և փադիշահի դեմ ենք հանդես գալիս» սոսկ մոլորության մեջ գտնվող մուսուլմանների հերյուրանք է, որ միտված է երկիրը պաշտպանող ուժերի կործանմանը և երկիրն առանց առաջնորդի թողնելուն «...»: Թող Ալլահն անիծի դավաճաններին, որ թշնամուն են օգնում: Զորակցություն և ուժ բոլոր նրանց, որ գործում են հանուն խալիֆի՝ մեր փադիշահի, ժողովրդի և երկրի ազատագրման»:

Քեմալը պատգամավորների առջև հանդես էր գալիս, որ համոզի, թե ժողովրդի դժգոհությունը գնալով աճում է, կամ պաշտպանելու համար այս կամ այն սկզբունքը, ինչպես, ասենք, երբ նա հայտարարեց, թե՝ «Ազգային ժողովը պարզապես բաղկացած չէ թուրքերից, չերքեզներից, քրդերից և լազերից: Այն բոլոր մուսուլմանների սրտաջերմ միությունն է...»: Վերջապես մի շարք օրենքներ ընդունվեցին՝ այդ թվում և հայրենիքի դավաճանների նկատմամբ կիրառելիք գործողությունների օրենքը: Սակայն առաջին ընդունված օրենքը հարկերի մասին օրենքն էր: Գրչի մեկ հարվածով պատգամավորները չորս անգամ բարձրացրեցին անասնագլխի հարկը: Սա խիզախ որոշում էր. ո՞ր երկրում, ո՞ր դարում եք տեսել, որ արդեն իսկ տուժած գյուղացիությունը ոգևորությամբ ընդունի հարկերը բարձրացնող կառավարությանը: Սակայն քաղաքացիական պաշտոնյաներն ու զինվորականները, որ Ազգային ժողովի կեսն էին կազմում, չէին մտածում այս մասին: Փաստորեն նրանք այլ ընտրություն չունեին: Դեռևս Սեբաստիայում Մուստաֆա Քեմալը հիմնարար հարց էր բարձրացրել. «Որքա՞ն փող ունենք»: Երկու ժամվա ընթացքում քննարկվեցին եկամտի բոլոր հնարավոր աղբյուրները՝ տասանորդ, այծերի հարկ, եկամտահարկ, բանկային վարկ, ներքին փոխառություն կամ փոխառություն ԱՄՆ-ից, կամավոր նվիրատվություն: Հետևությունը մեկն էր. դրամագլուխը փոքր է, իսկ հայթայթելու հնարավորություններ-

ը՝ սակավ: Ազգային ժողովը պիտի վճռականորեն գործեր, և այն իր վրա վերցրեց պատասխանատվությունը:

Այսպիսով խնդիրներն անասելի շատ էին և ոչ միայն Անատոլիայում, այլ նաև Արևմուտքում, իսկ ավելի ճիշտ՝ Բեռլինում: Մայիսի սկզբին Հունաստանի կառավարությունը տեղեկացրեց եւրոպական դիվանագետներին, որ Էնվերը և Թալեաթը ներկա են գտնվել Բեռլինի պանիսլամիստական կոնգրեսին, որ անց է կացվել մարշալ Լյուդենդորֆի նախագահությամբ:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԱՊԵՐ

Մի քանի օրից առավել ճշգրիտ տեղեկատվություն ստացվեց: Բեռլինում Ֆրանսիայի դեսպանի տեղեկություններով, իբրև թե կոնգրեսը, սուլթանին զրկել է խալիֆի իրավասությունից և «Թուրքիայի խորհրդային հանրապետություն» հռչակել: Թալեաթը հռչակվել է կառավարիչ, Էնվերը՝ «Եվրոպայի լիազոր ներկայացուցիչ Մոսկվայում», իսկ Մուստաֆա Քեմալը՝ «թուրքական զորքերի գլխավոր հրամանատար՝ դիրեկտորիայի ենթակայության ներքո», որը ղեկավարում է Թալեաթը: Նույն աղբյուրները մասնավորեցնում էին, թե իբրև Քեմալը կոնգրեսի ղեկավարներից պահանջել է վերացնել բոլոր այն անձանց, որ պատասխանատու են մսխումների համար կամ հանցանք են գործել:

Քեմալ, որ թուրքական զորքերի հրամանատարն է, բայց Թալեաթի ղեկավարության ներքո, Քեմալ, որ բանակցում է Էնվերի, Թալեաթի և տարագրության մեջ գտնվող այլ միութենականների հետ. ինչպիսի անակնկալ: Այն, որ նախկին եռյակն ու դրա հանցակիցները կցանկանային համագործակցել Քեմալի հետ, զարմանալի չէ: Բայց Քեմալն ինչ կարիք ունի մերձենալու առաջնորդներին մի կուսակցության, որն ինքը չի ընդունում, մարդկանց հետ, որ գորշ գույներով էին պատկերացնում Թուրքիայի ապագան: Մի՞թե նրանց հետ շփվելիս՝ վտանգ չի առաջանում, որ ծայրահեղ հակա-ազգայնամոլները ավելորդ հաղթաթուղթ կստանան: Նրանք, ում համար «ազգայնամոլներն ու երիտթուրքերը նույնական են», նրանք, որ ցանկացած առիթ կօգտագործեն վտարանդի միութենականների նախաձեռնած «գերմանա-բոլշևիկա-քեմալական ընդլայնված ճակատը» բացահայտելու համար...

Աթենքից և Բեռլինի ֆրանսիական դեսպանից ստացված տեղեկությունները հաստատող տվյալներ չկան: Բայց, այնուամե-

նայնիվ, Քեմալը համաձայնեց շփվել, առնվազն գրավոր, նախկին եռյակի անդամների և առաջին հերթին Թալեաթի հետ:

1919 թ. ավարտին և 1920-ի փետրվարի վերջին օրերին Թալեաթն առնվազն երկու նամակ է թելադրել իր զինակիցներից մեկին, որ իր և Քեմալի միջև միջնորդի դեր էր խաղում: Եվ ի՞նչ էր գրում նախկին մեծ վեզիրը: Հասցեատիրոջ պատասխան քայլերին անվստահ Թալեաթը զգուշավոր կերպով ներկայացնում է միութենականների եւրոպական կառույցն ու շփումները բոլշևիկների հետ: Տեղեկացնում է գումարային խնդիրների մասին, միաժամանակ հավելելով, որ դրամական օժանդակություն չի խնդրում: Այնուհետև ուրվագծում է պանիսլամիստական և պանթուրքիստական շարժման բնորոշ կողմերը:

Լոկ 1920 թ. հոկտեմբերի վերջին Քեմալն ուշացմամբ պատասխանեց, դրսևորելով նաև զգուշավորություն, անորոշություն, անվստահություն: Նա չի հրաժարվում Թալեաթի հետ համագործակցելուց, սակայն իր պայմաններն է առաջադրում: Տարբեր ճակատներով ուժերը չտարրալուծելու համար, Քեմալը հրաժարվում է Սիրիայի և Իրաքի հակաֆրանսիական և հակաբրիտանական գործողություններից. կարճ ասած նա հաստատում է պանիսլամիզմի առավելությունների հանդեպ անվստահությունը: Ազգային ժողովի նախագահն առաջին հերթին բացարձակ անդրդվելի էր մի հանգամանքում. ինքը և միայն ինքն է ի զորու և իրավասու Անատոլիայում պայքար կազմակերպելու հարցում:

Երբ Թալեաթն ստացավ Քեմալի պատասխանը, իր վերջն արդեն մոտ էր. 1921 թ. մարտին նա պետք է սպանվեր հայազգի Թեհլիրյանի ձեռքով, որ վրեժխնդիր էր լինելու 1915-ին հայերի հանդեպ իրականացված դաժան հաշվեհարդարի համար: Քեմալն այլևս շփում չի ունենա Թալեաթի հետ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՆԴՈՒԳՆ ՔԱՅԼԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

1920 թ. փետրվարին Քեմալը զորահրամանատարներին դիմեց մի կոչով, ուր իրադրությունն էր վերլուծում՝ արտահայտելով իր կարծիքն ու սպասելով համախոհների պատասխան քայլերին: Գնահատելով Անկարայում տիրող իրադրությունը, նա գրում էր, որ դաշնակիցները «փորձում են մեզ շրջափակման մեջ վերցնել»: Սրան դիմակայելու համար «կա՛մ մենք պիտի համաձայնության գանք ստամբուլյան կառավարության հետ, կա՛մ ռազմական գործողությունների հստակեցման և նոր ռեսուրսների ձեռք բերման նպատակով պետք է համագործակցենք բոլշևիկների հետ»: Քեմալը կարծում էր, որ մեկուսացումից ազատվելու համար իր պարագայում ցանկացած միջոց ընդունելի է: Ապրիլին նա Մոսկվա՝ Լենինին է հղում «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անդրանիկ առաջարկն ուղղված խորհրդային կառավարությանը»: Անթաքույց կերպով Քեմալն առաջարկում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Մոսկվայի և Անկարայի միջև ու ազգայնամոլների մասնակցությունը «իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարում», ընդորում այդ պայքարում առաջին թիրախներից մեկը պիտի լինի «Հայաստանի իմպերիալիստական կառավարությունը»: Այս ամենի դիմաց Քեմալը օգնություն էր խնդրում: Թուրքերի խնդրանքը որոշակի էր. հինգ միլիոն ֆունտ կանխավճար, զենք-զինամթերք, դեղորայք և սննդամթերք:

ՓՈՔՐԻԿ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ

1920 թ. ապրիլի 26-ի նամակն առաջին հերթին մի յուրօրինակ մարտահրավեր է պատմությանը, ռուս-թուրքական տասներեք պատերազմներին և ռուսների հանդեպ թուրքերի թշնամական տրամադրվածությանը, որի վկայությունն է անատոլիական ասացվածքը. «Եթե ջուրը կարող է երբեմն կանգ առնել, ապա Ռուսաստանը երբեք կանգ չի առնի»:

Այս նամակը պրագմատիզմի և քաղաքական համաձայնողականության մի գլուխգործոց է: Քեմալը մարքսիզմի համակիր չէ, չնայած քիչ ավելի ուշ նրա գրադարանում կհայտնվեն թուրքական կոմունիստական կուսակցության հրատարակած տասնյակ գրքերը՝ այդ թվում և երկու աշխատություն Լենինից: Նա չի պատկերացնում, թե ինչ ասել է «կոմունիզմի հեղափոխական ոգի», սակայն շատ շուտ կյուրացնի, թե ինչ օգուտ կարելի է քաղել բոլշևիկների հակաիմպերիալիստական ելույթներից:

Քեմալը, թերևս, պատրանքներ չի ունեցել Մոսկվայի հետ մերձենալու հարցում. «Բոլշևիկ լինելը մի բան է, իսկ բոլշևիկյան Ռուսաստանի հետ համաձայնության գալը՝ բոլորովին այլ»: Այս առումով, ի դեմս Լենինի, նա շատ ըմբռնող գործընկեր էր գտել: 1921-ի դեկտեմբերին՝ Արալովին ընդունելիս, որ նոր էր Անկարայում դեսպան նշանակվել, Լենինն ասում էր. «Անշուշտ, Մուստաֆա Քեմալ փաշան սոցիալիստ չէ, բայց հավանաբար լավ կազմակերպիչ է, տաղանդավոր հրամանատար, որ գլխավորեց բուրժուական հեղափոխությունը: Քեմալն առաջադեմ մարդ է և պետության խելոք ղեկավար: Նա ընկալել է մեր սոցիալիստական հեղափոխության նշանակությունը և սոցիալիստական Ռուսաստանի հանդեպ բարեկամորեն է տրամադրված... Հարկ է օգնել նրան, ավելի ճիշտ՝ օգնել թուրք ժողովրդին»:

Վերջապես ոչ հանկարծակի Քեմալը գիտակցեց, թե ինչ հնարավորություններ է ընձեռում Մոսկվայի հետ ձեռք բերված համաձայնությունը: Դեռևս Ամասիայում՝ ինը ամիս առաջ, փաշան ու

իր շրջապատը քննարկում և փորձում էին գնահատել Ռուսաստանի հետ մերձեցման առավելություններն ու թերությունները: 1919-ի սեպտեմբերին Քեմալն ու Քարաբեքիրը Բաքու ուղարկեցին Հալիլ փաշային և դոկտոր Ֆուադ Սաբիտին: Ֆուադ Սաբիտը, Հալիլ փաշան և Բախա Սաիտը՝ «Քարագոլ»-ի առաջնորդներից մեկը, Բաքվում թուրքական կոմունիստական բջիջ ստեղծեցին, անկեղծորեն կամենալով բոլշևիկներին ցույց տալ իրենց կոմունիստական տրամադրությունները: Քեմալն ուշադիր կերպով ծանոթացել էր Հալիլ փաշայի և Ֆուադ Սաբիտի զեկուցագրին: Այնպես որ Լենինին հասցեագրված նամակը հանպատրաստից չէր:

Եւ այնուամենայնիվ Մոսկվայի հետ մերձենալը խիզախ քայլ էր, որին թուրքերը պատրաստ չէին: Այս է վկայում Մոսկվայի՝ «Ռուսաստանի և Ասիայի մուսուլմաններին» ուղղված կոչի վերաբերյալ պատգամավորների կեցվածքը: Մոսկովյան ուղերձի որոշ մտքեր, ինչպես, ասենք, «դուք, ում մզկիթներն ավերվեցին», կամ ցինիզմով լեցուն՝ «Թուրքիայի մասնատման և Թուրքիայի տարածքում Հայաստան ստեղծելու մասին դաշնակիցների պայմանագիրը ձախողման է դատապարտված» արտահայտությունը, ծափերի արժանացան: Սակայն պատգամավորները հիմնականում կասկածամտորեն էին տրամադրված. «Մենք չգիտենք, թե ինչ է բոլշևիզմը... մեզ ծանոթ չէ բոլշևիկների ուժը. Մոսկվայի այս կոչը քարոզչություն է»: Եվ կրկին Քեմալն ամբիոն է բարձրանում, որ համոզի, որ վստահություն ներշնչի: Քաղաքականության երկվությունն այնպիսին է, որ Քեմալն, իբրև հմուտ դիվանագետ, սոսկ Մոսկվայի ուղղությամբ չի հառում հայացքը: Մոսկվայի հետ բանակցելիս նա փորձում դիվանագիտական քայլերն ուղղել նաև Իտալիայի և Ֆրանսիայի կողմը: Տնտեսական համաձայնագրի քննարկման նպատակով Անկարա է ժամանում Ֆագոն՝ Սֆրոցի ընկերը: Իսկ Բեյրութի ***ֆրանսիական զինվորական միավորման գլխավոր բարդուղար*** դե Քեքսը Քեմալի հետ քսանօրյա կար-

ճատև զինադադար է կնքում՝ ռազմագերիների փոխանակման և Կիլիկիայի որոշ շրջաններից զորքերի դուրս բերման համար:

Իզուր չարչարանք՝ պատգամավորները ոչ միայն չեն շնորհավորում Քեմալին, այլ հակառակը՝ դժգոհություն են արտահայտում և բացատրություն պահանջում: Քեմալը փորձում է հանգըստացնել պատգամավորներին, բացատրելով, որ դա հարկադրական քայլ էր, որ զինադադարը հնարավորություն կընձեռի կառավարումը կորցնող զորքերը վերակազմավորելու, և բացի այդ՝ ֆրանսիական կառավարությունը «մեզ օրինական գործընկեր է ճանաչում»: «Ֆրանսիացիները լրջորեն կամենում են բանակցել մեզ հետ, սա նրանց հետաքրքրությունների շրջանակում է (Սիրիայում), բայց մենք ևս դրանում հետաքրքրված ենք»:

«Իսկ բոլշևիկնե՞րը,– հարցնում է պատգամավորներից մեկը:

– Մեզ համար Արևելքը հենման կետ է Արևմուտքի քաղաքականության դեմ, որ ձգտում է ոչնչացնել մեզ: Սակայն այս մերձեցումը մեզ վախեցնում է: Կովկասը թշնամաբար է տրամադրված մեր նկատմամբ, նրանք ճանաչում են Հայաստանը: Եթե Կովկասում բոլշևիկների հետ ավելի շուտ համաձայնության գան, քան մենք, ի՞նչ ենք անելու: Հանուն մեր երկրի և մեր ժողովրդի պետք է որքան հնարավոր է շուտ բոլշևիկների հետ պայմանագիր կնքել: Թող դրանով զբաղվի կառավարությունը...»:

Սակայն նա ոչինչ չէր կարող ասել Մոսկվայի հետ համաձայնության գալու մասին, և դրա համար պատճառ կար. Քեմալի երկու պատվիրակները Մոսկվա կժամանեն միայն հունիսի 1-ին, որովհետև նրանք ստիպված էին շրջանցիկ ճանապարհներով տեղ հասնել՝ անգլիացիների հետ ընդհարումներից խուսափելու համար:

Բոլշևիկները պատասխանեցին անհապաղ: Քեմալին ուղղված պատասխանում, որ ստացվեց երկու օրից, ասվում էր, որ միութենականների նախկին եռյակից մեկը՝ Ջեմալը, հունիսի 3-ին կժամանի Մոսկվա, «քննարկելու Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության և Թուրքիայի գործակցության, Ռուսաստանի օգնության սկզբունքները, ինչպես և Պարսկաստանում և Հնդկաստանում ընդվզումներ կազմակերպելով՝ Անգլիայի համար զգալի դժվարություններ ստեղծելու հարցը»: Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Չիչերինը պատասխանը գրեց նույն օրը, սակայն արագ պատասխանը չի նշանակում համաձայնություն:

Ինչպես մեկ շաբաթ անց հաղորդեց Ջեմալը, Մոսկվան պատրաստ կլինի ստորագրել համագործակցության մասին պայմանագիրն այն բանից հետո, երբ «կարգավորված կլինի հայկական հարցը»: «Թանկագի՛նս,– Ռադեկը հայտնեց Ջեմալին,– եթե դուք լուծեք հայկական խնդիրը, ձեզ ուղղվելիք մեր օգնության հարգն ու կարևորությունը հարյուր անգամ կավելանա... Հայաստանի համար մի փոքրիկ տարածք զոհեցեք,– խնդրում էր Կոմինտերնի պատասխանատու աշխատակիցը,– այս զոհաբերությունը շատ կարճ ժամանակով է»:

Քեմալիստներից «շատ կարճ ժամանակով զոհողություն» պահանջելով, իսկ հայերին հայտնելով «հայերի և նրանց հարևան մուսուլմանների միջև դարավոր անհաշտությանը վերջ դնելու» ցանկության մասին, Չիչերինն ու Ռադեկն իրենց անձնական նպատակն են հետապնդում: Բանն այն է, որ Մոսկվան հուսահատ ճիգերով փորձում էր բարեկամներ գտնել. լեհերը մոտենում էին Կիևին, գեներալ Վրանգելը հարձակման էր անցել, Աղրբեջանի խորհրդային երիտասարդ իշխանությունը խիստ անկայուն վիճակում էր, իսկ Դաղստանում ընդվզման ալիք էր բարձրացել: Հասունացել էր Վրաստանի և Հայաստանի բուրժուական հանրապետությունների հետ փոխզիջման գնալու պահը: Մոսկվան պայմանագիր է ստորագրում՝ ճանաչելով Վրաստանի անկախությունն ու ինքնիշխանությունը, սակայն հրաժարվում է դրանից 1921-ի փետրվարին: Կարմիր բանակը ոչինչ չձեռնարկեց,

երբ հայերը չհեռացան Արցախից և Զանգեզուրից՝ տարածքներ, որ Ադրբեջանի կառավարությունն իրենն էր համարում: Ավելի ցնցող էր, որ Մոսկվան Երևանի կառավարությանը թույլ տվեց ճնշել հայ բոլշևիկների կազմակերպած ապստամբությունը:

Չիչերինի նամակում թուրք ազգայնամոլների համար միայն մի բան էր նկատելի. «Ռուսաստանի և Արևելքի մուսուլմաններին հղված ուղերձի» համաձայն՝ յուրաքանչյուր ժողովուրդ ինքնորոշման իրավունք ունի: Չիչերինը բացել էր բոլոր փակագծերը. «Եթե կամենում եք համագործակցել մեզ հետ, եթե ցանկանում եք ստանալ մեր օգնությունը, նախ հանրաքվեներ կազմակերպեք Քրդստանում, Լազստանում, Արևելյան Թրակիայում և Հայաստանում»: Խեղճ Հալիլ փաշա, որ շնորհավորանքների էր սպասում ռուսներից ոսկով երկու միլիոն ֆունտ, վաթսուն հազար հրացան և հարյուր թնդանոթ ստանալու կապակցությամբ. բոլորը մոռացել էին նրա նամակի մասին:

Քարաբեքիրը ցասման մեջ էր. «Այն պահին, երբ Անտանտան մեզ գրոհում է Արևմուտքից, բոլշևիկները Հայաստանի, Քրդստանի, Լազստանի, և դեռ սա քիչ է, Արևելյան Թրակիայի ազգաբնակչությանը հրահրում են, որ մեզնից անջատվեն, հավանաբար այդ տարածքները զավթելու ցանկությամբ... Հարկավոր է ըստ կարելվույն շուտ զավթել Ալեքսանդրապոլը (Կարսից արևելք և Երևանից հյուսիս-արևելք տեղակայված քաղաք), իսկ եթե հնարավոր է՝ ողջ Հայաստանը, որպեսզի Մոսկվայում գտնվող մեր ընկերները հաղթական բանակի կողմից ներկայանան»: Հուրախություն ազգայնամոլների իրենց առաջնորդը Քեմալն էր, և ոչ թե Քարաբեքիրը:

Երկշաբաթյա մտորումներից հետո Քեմալը համաձայնության է գալիս Մոսկվայի հետ: Չիչերինն առաջարկել էր իր ծառայությունները իբրև միջնորդ՝ թուրքերի, հայերի և պարսիկների միջև: Քեմալն ընդունում է նրա առաջարկը և չեղյալ հայտարարում զորահավաքի հրամանը, որ արձակել էր, որպեսզի զորքերն ուղարկի հայերի դեմ: Խորհուրդների երկրի օգնությունն արժեր դրան և մոռացության մատնեց «հայերի բարբարոսական արարքները», որ դեռ բոլորովին վերջերս այդքան բուռն կերպով Քեմալը մերկացնում էր Ազգային ժողովում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՄԱՌԸ

«Այն օրերին,– հիշում է Սալիհ Բոզոքի որդին,– իրավիճակն այնքան լարված էր, որ մի առավոտ, երբ պատրաստվում էի դպրոց գնալ, հայրս ասաց ինձ. «Երևի խիստ սխալ էր, որ քեզ ստիպեցի մոտս գալ... Ո՞վ գիտե, գուցե այլևս չես տեսնի մորդ և եղբայրներիդ»:

1920 թ. ամռանը հեղձուցիչ մթնոլորտ էր տիրում Անկարայում:

ԲԱՐԴ ԴՐՎԱԳՆԵՐ

Սարսափելի ամառն սկսվեց Ստամբուլից հեռու, Անկարայի արևելքում գտնվող Յոզղատում բարձրացված խռովությամբ: Յոզղատը Չափանօղլու ընտանիքի ազդեցիկ ավատատերերի տիրույթն էր, որոնք վերահսկում էին ոչ միայն այս տարածքը, այլ նաև Անատոլիական սարահարթի մի զգալի մասը: Ինքնավստահ և ինքնագոհ Չափանօղլուները իրենցից բացի ուրիշ ոչ մի հեղինակություն չէին ընդունում: Չիարշավի հանդես կազմակերպելով՝ նրանք հավաքեցին իրենց կողմնակիցներին և ճոխ ճաշկերույթի ժամանակ՝ ջահերի լույսի ներքո, հայտնեցին իրենց որոշումը:

Քեմալն անմիջապես պատասխան քայլեր ձեռնարկեց և նրանց հանդարտեցնելու համար ուղարկեց չերքեզ Էթհեմին՝ իր ջոկատով: Էթհեմը հենց նոր էր ճնշել Ադափազարի, Բոլուի,

Դյուզգեի խոռվությունները էական օգնություն ցուցաբերելով Արևմտյան ճակատի հրամանատար Ալի Ֆուադին:

Էթհեմի չորսհազարանոց միավորման ժամանումն Անկարա աննկատ չանցավ: Փողոցների հիացած ամբոխը ողջունում էր իր փրկչին: Բարձրահասակ, զինվորական խրոխտ կեցվածքով *Էթհեմն* ասես գլխավոր շտաբի սպա լիներ, որ և երբեք չէր եղել: Զորություն ճառագելով՝ նա անցնում էր շրջապատված իր չերքեզ քաջարի թիկնապահներով, որ հպարտ էին իրենց համազգեստով և զենքերով: Քեմալն Էթհեմին գերագույն պատվի արժանացրեց՝ նրան տրամադրելով իր մեքենան, որ միակն էր Անկարայում:

Սակայն Էթհեմի հետ կապված Քեմալը պատրանքներ չուներ՝ նա ընդամենը «ճակատագրից շփացած» մեկն է: Բայց մի՞թե նախկին կրտսեր սպան չէր կարող երազել առավել կարևոր դերի մասին: Մի՞թե նրան փրկչի պես չեն դիմավորում: Եվ երբ նրան ընդունեց Քեմալը, արգո զորահրամանատարներով շրջապատված Էթհեմը չէր կարող դիմանալ հպարտ կեցվածք ընդունելու գայթակղությանը: Յոզղատում խռովությո՞ւն է... «Ես վստահ եմ, որ խռովությունը կճնշեմ հինգ օրում, գուցե և տասը»: Քեմալը լուռ է, նա ուշադիր լսում է, իսկ հետո Արևմտյան ճակատին առնչվող մի քանի կազմակերպչական մանրամասներ ճշտում:

Քեմալին այլ բան է անհանգստացնում. ինչպես օգտագործի Էթհեմի ուժերն ու մարտական ոգին, առանց նրան քաղաքական դեր տրամադրելու, ինչի հույսը Էթհեմը կարող էր ունենալ՝ հաշվի առնելով իր ռազմական հաջողությունները: Եվ Յոզղատի գործողությունն ավելի բարդացրեց իրավիճակը, քանի որ Էթհեմը ժամանակն իզուր չէր կորցնում: Նրան հանձնարարեցին սանձել Յոզղատը, և նա այդ արեց իրեն բնորոշ ոգևորությամբ և դաժանությամբ. կատաղի գրոհով նա գրավեց քաղաքը, կախեց բոլորին, ով ձեռքն ընկավ, և «***Հատուկ կազմակերպությունում***» եղած ժամանակների սովորությամբ մի քանի հայի տուն այրեց: Քեմալը կարող էր «ի սրտե» շնորհավորել նրան. Էթհեմը մրրիկից արագ էր գործում: Երբ Յոզղատի «ազատագրումից» հետո չերքեզն անցնում էր Անկարայով, նրա հետևից շարժվում էին գողացված

անասունների նախիրն ու թալանված ինչքով բեռնված քարավանը, որ խլվել էին իբրև ռազմավար: Սակայն երբ հիացած ամբոխը ոգևորված դիմավորում էր նրան, բանակի հրամանատարությունն այլ կարծիքի էր: Ֆեզին և Իսմեթը Էթիեմի վարքագիծն անընդունելի ներկայացում էին համարում և մշտապես հիշեցնում էին, որ Ազգային ժողովն օրենք է ընդունել, որով պահանջվում է, որ բոլոր կամավորական ուժերը ենթարկվեն զինվորական նախարարությանը:

Իսկ այս առնչությամբ ի՞նչ էր մտածում Քեմալը: Նա ինքն էլ Տրիպոլիտանիայում ճաշակել էր պարտիզանական պատերազմի ցնորքը, երբ իտալացիների դեմ տեղացիների ջոկատներն էր կազմավորում: Սակայն Քեմալն այլևս այն երիտասարդը չէ, որ աֆրիկյան անապատում ինքն իր քմահաճույքին էր մատնված: Նա վաղուց լքել է անհիմն խիզախության և պատահական հաջողության վրա հիմնված՝ բախտախնդիր աշխարհը: Նա խորապես համոզված է. պարտիզանական ջոկատների միջոցով անհնար է հայրենիքն ազատել ու պետություն կերտել:

Սակայն այս պահին Քեմալն ստիպված էր ընդունել, որ Էթիեմի փառքն իր բարձրակետում է, իսկ Անատոլիան, կարծես, պատրաստ է բազում արկածախնդրությունների, ինչպես, ասենք, «Կանաչ բանակի» առաջարկածը:

Այս երկու բառը՝ «Կանաչ բանակ», պարուրված են խորհրդավորության, գազանության, բացառիկության մթնոլորտով, որ բնորոշ էր նախահեղափոխական Ռուսաստանին և Թուրքիային: «Կանաչ բանակն» ստեղծվել էր Ռուսաստանի հարավում. Սպիտակ բանակի շարքերն անցնել չցանկացող գյուղացիներն սկսել էին թաքնվել անտառներում (այստեղից էլ ծագում է անվանումը՝ «կանաչ» բանակ). Քարաբեքիրը փոխ էր առել այս անունը:

Առասպելն էապես գերազանցում է իրականությանը: Ստամբուլի զավթումից մի քանի շաբաթ անց, Քեմալի օգնության խնդրանքին ի պատասխան Քարաբեքիրը Էրզրումից Անկարա մի նամակ է ուղարկում. «Ես առաջարկում եմ այս միավորումը «Կա-

նաչ բանակ» կոչել: Հայտնի է, որ «Կանաչ բանակը» լուրջ կորուստներ պատճառեց Դենիկինի թիկունքում: Բացի այդ՝ կանաչ գույնը լուրջ տպավորություն է գործում մեր մարդկանց վրա: «Կարմիր» բառը կարող է բացասական ազդեցություն թողնել թե՛ երկրի ներսում, թե՛ սահմաններից դուրս: Իսկ կանաչ բանակն ի՞նչ է, ոչ ոք չի գիտակցում, սակայն այդ գույնը սիրում են»:

Իր հուշերում Քեմալը համեմատաբար ավելի որոշակի բացատրություն է տալիս. «Ազգային մեծ ժողովի բացումից հետո Անկարայում մի կազմակերպություն ստեղծվեց, որ «Կանաչ բանակ» անվանեցին: Ես շատ լավ էի ճանաչում դրա հիմնադիրներին, որ ինձ մերձավոր էին: Սակայն այս կազմակերպությունը գերազանցեց ազգային ուժի ստեղծման իր նախնական խնդիրն ու ավելի մեծ նպատակներ սկսեց հետապնդել»: Ինչպիսի՞ նպատակներ... Հայտնի չէ: Քեմալի կարծիքով այս գաղտնի կազմակերպությունը վտանգավոր է և պետք է լուծարվի որքան հնարավոր է շուտ:

«Կանաչ բանակի» ծրագիրը կարդալիս բոլշևիզմի և իսլամի մի տարօրինակ խառնուրդի մեջ ես խորասուզվում: «Կանաչ բանակն ի բարօրություն մարդկանց ստեղծված կազմակերպություն է... Այն կազմված է խոնարհ մեծամասնությունից, որ տքնում է գերակա փոքրամասնության համար...»: Ծրագրի հիմքում կարելի է գտնել «տասներեքդարյա» իսլամական օրենքի սկզբունքները, խոստովանությունը, պահեցողությունն ու զոհաբերությունները: Այն գրավեց մտավորականների և քաղաքական կարկառուն գործիչների՝ Անկարայի կառավարության ֆինանսների նախարար Հաքքի Բեքիշին, Յունուս Նադիին, Հալիդե Էդիպին: Ավելի ուշ կատարելության արևելյան ձգտումը նկարագրելիս Հալիդե Էդիպն այսպես կբացատրի «Կանաչ բանակի» հաջողությունը. «Չբավարարված ցանկությամբ բորբոքված համակրելի մարդկանց տձև հավաքածու»:

Այս մտավորականները հասկացան, որ իրենց հիացրած ու կազմավորած Արևմուտքն իրենց երկրի մահվանն է կարոտ: «Կա-

նաչ բանակն» իրենց իսկ հակասություններից փախչող այս խմբի համար լավագույն ապաստարանը թվաց:

Սակայն ապաստարանը կարող է որոգայթի վերածվել: Յոզդատի դեպքերից քիչ անց Էթհեմին դիմեց ֆինանսների նախարարը՝ «Կանաչ բանակի» գլխավոր քարտուղարը, առաջարկելով անդամակցել իրենց կազմակերպությանը: Իր հուշերում Էթհեմն իրեն ձեռնտու կողմից է ներկայանում. «Ես հարցրեցի նրան՝ Իսկ Քեմալ փաշան տեղյա՞կ է»: «Բնականաբար,– պատասխանեց նա: – Ինչպես կարող էի առանց նրա հրամանի այսպիսի կարևոր գործով զբաղվել»:

Որքա՜ն կարգապահ է Էթհեմը: Եվ որքա՜ն փոփոխական է Քեմալը, որ մի քանի օրից պահանջում է լուծարել «Կանաչ բանակը», իսկ հետո, երբ Բեքիշը կարողացավ համոզել նրան, թողեց: Պարզ է՝ մութ հանգամանքներ կան...

ԲԱՆԱԿԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Քեմալն անում էր ինչ կարող էր: Հալիդե Էդիպը հիշում է նրա «արտասովոր եռանդը»: Նրա շրջապատը տառապում էր Քեմալի անհավանական աշխուժությունից և անդադար լարված աշխատանքից: Եթե հավատանք ականատեսներին, ցանկացած իրադրության մեջ Քեմալը հանդես էր գալիս ցնցող ինքնատիրապետմամբ: Երիտասարդ տարիների նյարդայնությունն ու տվայտանքները մոռացության են մատնված «անատոլիական բախտախնդրությունից» ի վեր: Քեմալի հանգստությունն անդրադառնում էր իր շրջապատի վրա: «Ասես վանքում ապրելիս լինեք»,– գյուղատնտեսական դպրոցում հաստատվածներին հայտարարեց նոր վերադարձած Յակուբ Կադրին: Այնուամենայնիվ «վանական» Քեմալը ո՛չ միստիկի վերածվեց, ո՛չ ասկետի: Նա նույնը մնաց. ամենատարբեր հաճույքների սիրահար էր, ոգելից խմիչքներ էր օգտագործում, սակայն հեշտությամբ կառավարում էր իրեն:

Օր օրի իրադրությունն ավելի էր բարդանում: Հունիսի 22-ին հույները հարձակման անցան: Ամեն բան կատարվեց մի քանի օրում: Հունիսի 12-ին Ռոբեկն ու Միլնը ֆրանսիացի գործընկերներին ընդունեցին ծովակալական հածանավի վրա: Իրադրության նրանց վերլուծությունը պարզ էր՝ ազգայնամոլները երեք ամսում Թրակիայում և Սև ծովի ափամերձ գոտում «հզոր բանակ» կուտակեցին և «կարող են ուժերն ուղղել Կոստանդնուպոլսի կողմը»: Եւս երեք ամիս անց սպառնալիքն առավել որոշակի էր դարձել: Իրենց զեկուցագրերում ֆրանսիացիները նշում էին, որ անգլիացիները լրջորեն մտահոգված և նույնիսկ վախեցած են կատարվածից: Ազգայնամոլներին նկատել էին Դարդանելի կողմերում՝ ի մասնավորի՝ Իզմիթի, Ստամբուլից հարյուր կիլոմետրից էլ պակաս հեռավորության վրա: Ազգայնամոլների երեք ինքնաթիռ

ռմբակոծում էր քաղաքը, իսկ Քեմալի բանակը՝ Ալի Ֆուադի գլխավորությամբ, «փշալարերով շրջափակված կառավարական ճամբարից երեք հարյուր մետր» հեռավորության վրա էր: Ավելի վատ բան. շրջապատել էին մայրաքաղաքից հիսուն կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շիլեն:

Ռոբեկն ու Միլնը կարծում էին, որ պետք է մի բան ձեռնարկել: Ֆրանսիացիներն ավելի զուսպ էին: Առանց քաղաքական որոշման միջամտությունն անհնարին է. և Ֆրանշեն* փակագծերը բացելու առիթը բաց չի թողնում՝ ամեն բանի մեղավորը մարտի 16-ի գործողությունն է:

Արդեն որերորդ անգամ իբրև փրկիչ հանդես է գալիս Վենիզելոսը: Հունաստանի վարչապետը հայտարարեց, որ իր զորքերը պատրաստ են գործողություններ սկսել, և հստակեցրեց, որ դրա դիմաց ոչ մի փոխհատուցում չի պահանջելու: Հույների հարձակումը կօգնի և մյուս խնդրի լուծման հարցում: Հունիսի 22-ին ընդամենը երեք օր էր մնում, որ Օսմանյան կայսրության կառավարությանը ներկայացված խաղաղության պայմանագրի ընդունման՝ դաշնակիցների սահմանած ժամկետը լրանար:

Հույները վճռական հարձակման են անցնում և տասնութ օրից հաղթանակի հասնում. հունական զորքերն անցան չորս հարյուր կիլոմետր՝ ընդհուպ մինչև Էսքիշեհիր, որ Անկարայից երկու հարյուր կիլոմետր է հեռու: Հարձակման արդյունքը տպավորիչ էր՝ 4500 գերի, հարյուրավոր թնդանոթներ, ինչպեսև «դիվական զինվորների» համբավ:

Անկարայում խառնաշփոթ է: Պատգամավորները վայրիվերումների մեջ են: Ինչպես միշտ, որոշում են դիմել Քեմալին. «Ի՞նչ կասի Մուստաֆա Քեմալ փաշան... Ի՞նչ տեղի կունենա, եթե հույները գրավեն Անկարան»: Պատգամավորների հետ գաղտնի

---

* Լուի-Ֆելիքս-Մարի-Ֆրանսուա Ֆրանշե դ'Էսպերե – ֆրանսիացի ռազմական-քաղաքական գործիչ, մարշալ (1921), Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամ (1934):

հանդիպման ժամանակ Քեմալը փորձում է հանգստացնել նրանց. «Ինչո՞ւ չհաջողվեց դիմակայել հունական հարձակմանը: Ես կբացատրեմ: Մեր բանակը փոքրաթիվ էր և թույլ: Մինչև կառավարության ստեղծումը ոչ ոք չէր կարող դիմակայել հույներին: Բացի այդ՝ մեր ուժերի մի մասը նետված էր ներքին խռովությունների ճնշմանը... Սակայն այս պահին մենք չենք կարող զորահավաք հայտարարել: Մեր ժողովուրդը հոգնել է երկար տարիներ ձգվող պատերազմներից... Չի կարելի ժողովրդին բանակի վերածել: Հարկ է զենք ունեցողներին համոզել, որ պարտիզանական պատերազմ ծավալեն: Իսկ ճակատ ուղարկված զորքերը չտրոհելու համար, հարկավոր է 3-5 հազարանոց ջոկատներ կազմավորել՝ ներքին խռովությունները ճնշելու համար»: Մինչդեռ ուշադիր մեկնաբանը երեք շաբաթ առաջ ընդգծել էր. «Ազգային ուժը մարտ ամսից սկսյալ զգալի վերակազմավորման է ենթարկվել. անկազմակերպ ջոկատներն ու խմբավորումները փոքրաթիվ զորքերի օժանդակությամբ վերածվեցին զենքով և զինամթերքով ապահովված՝ կազմակերպված և շարժունակ միավորումների»:

Պատգամավորները փոքր-ինչ հանգստացան: Սակայն խուճապը նորից սկսվեց, երբ տեղեկացան Բուրսայի գրավման մասին: Սա ծանր հարված էր Մուստաֆա Քեմալի հեղինակությանը: Ազգայնամոլների «***Ազգային կամք***» պաշտոնաթերթը լացակումած հայտնում էր. «Բուրսան մեր երկրորդ Մեքքան է... Իսկ այժմ այն դավաճանների ձեռքում է՝ Փրկչի պես խաչված, վիրավոր և տառապած: Բուրսան բավականաչափ ամրացված չէր, զինված չէր»:

Քեմալը, որ մոտ երկու շաբաթ անցկացրեց ճակատում, փորձում է հանգստացնել բոլորին: Սակայն երկխոսությունը չի ստացվում: Պատգամավորներն իմանում են, որ հույների գրոհից առաջ Բուրսան տարհանվել էր: Վախով բռնված՝ նրանք վեր են ածվում ռազմարվեստի գիտակների: Նրանք քննադատում են բանակն ու զինվորական հրամանատարությանը, առաջարկում են դատի տալ թշնամու գրոհից առաջ փախուստի դիմած հրամանատար-

ներին, պատգամավորներից կազմավորել կամավորական ջոկատներ և ավելացնել ճակատի սպայակազմը: «Նաև անթույլատրելի է, որ ամեն սպա իր համհարզն ունի: Ինչո՞ւ չօգտագործենք բոլշևիկների փորձը»:

Զինվորականների նեղ շրջանակում Քեմալը քայլ առ քայլ փորձում է պաշտպանվել: Բուրսայի անկո՞ւմը... «Հնարավոր է, որ Բուրսան լավ պաշտպանված չէր: Բայց կարևորը երկիրը պաշտպանելն է: Անցյալում, եթե Մեդինան պաշտպանելու համար նախապես նահանջեին Սիրիայից, հնարավոր է կարողանային փրկել այն: Այ թե ինչով է կարևոր, որ հնարավոր ամեն բան արվի ամբողջ երկիրը փրկելու համար՝ ուշադրությունը չբևեռելով միայն մի տարածքի վրա»: Ստեղծե՞նք միայն սպայակազմից բաղկացած նոր միավորումներ... Դա «ոչ մի իմաստ չունի և նախադեպը չկա աշխարհի ոչ մի երկրում, թերևս բացառությամբ բոլշևիկների: Սպայակազմի ուսուցանումն ու պատրաստումը երկարատև գործընթաց է և արդարացի չի լինի, որ թողնենք նրանց ոչնչացնել»: Քեմալը զիջման է գնում միայն համհարզների հարցում. «Թո՛ղ զինվորականները վճարեն իրենց համհարզներին: Իսկ եթե նրանք չեն կամենում նրանց վստահել իրենց ընտանիքները, թող անեն ամեն ինչ համհարզների ինչքը ճակատ ուղարկելու համար»:

Քեմալը փորձում է հանդարտեցնել անհանգստացած պատգամավորներին. «Ես եմ հրամայել, որ լքեն Բուրսան: Ռազմական տեսանկյունից կարևոր չէ որևէ դիրքից կառչելը, կարևոր է արդյունքի հասնելը: Ամենակարևորը Բուրսան չէ, այլ երկրի ազատագրումը... Չի կարելի տրվել զգացմունքներին»: Քեմալը չի պաշտպանվում, նա հարձակվում է: Պատգամավորներն իրենց հերթին են քննադատության ենթարկվում: Փաշայի և պատգամավորների հարաբերությունը նկարագրող դիպուկ և եզրափակիչ խոսքը Հալիդե Էդիպինն է. «Ինչպես հայտնի է, Քեմալը կարող էր Ազգային ժողովն օգտագործել ըստ իր հայեցողության»:

ՍԵՎՐՅԱՆ ՃԵՆԱՊԱԿԻ

Օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում, որ հայտնի է իր ճենապակիով, վերջապես խաղաղության պայմանագիր կնքվեց: Ժամը 13-ին Ստամբուլում ամեն բան հինգ րոպեով կանգ առավ. հինգ րոպե, որ ստիպեց մոռանալ պատմության հինգ դարերը: 433 հոդվածից բաղկացած խաղաղության միջազգային պայմանագիրը փաստացի Իզմիրն ու Թրակիայի մեծ մասը հանձնում էր Հունաստանին, նախատեսում էր Ազգերի լիգայի հովանու ներքո անկախ Քրդստանի ստեղծումը և անկախ Հայաստան (ամերիկյան սենատը հենց նոր էր հրաժարվել հայկական մանդատից) էր հիմնում ու ազդեցության տարածքներ ստեղծում՝ Ֆրանսիայի համար Անատոլիայի հարավ-արևելքում, իսկ Իտալիայի համար՝ հարավ-արևմուտքում:

Օսմանյան կայսրությունն այլևս գոյություն չուներ: Նրա փլատակների վրա հաղթողները անլուրջ մի կայսրություն էին կցմցում՝ Ստամբուլի և Սեբաստիայի, Սև ծովի և Կեսարիայի միջև: Տասնհինգ հազար զինվորական և ժանդարմ, ինչպես և սուլթանի անձնական թիկնազորը պետք է կարգուկանոն ապահովեին այս ուղղանկյան տարածքում: Ստորացուցիչ կապիտուլյացիայի ռեժիմը երկարաձգվեց, և օտարերկրացի մասնագետներին հանձնարարվեց վերահսկել օսմանյան դրամաշրջանառությունը:

«Աշխարհի ամենամեծ կառավարիչ» սուլթանն ու իր կառավարությունը ճանաչեցին այս մահվան դատավճիռը. երբ նախարարները, պատգամավորներն ու գեներալները հավաքվեցին փաղիշահի մոտ, լոկ մի մարդ քաջություն ունեցավ խաղաղության այս ստորացուցիչ պայմանագրին կողմ չքվեարկելու:

Արժե՞ արդյոք խղճալ կամ ատել կայսեր այս հավատարիմ ծառաներին: Նրանց մեծ մասն ինքն իրեն հաշիվ չէր տալիս, իսկ

ոմանք կորուստներին համակերպվել էին դեռ հույների հարձակման սկզբում, ինչպես ասենք արդարադատության նախարարը:

«Լրագրող – Մեր կառավարությունը բողոքելո՞ւ է հույների հարձակման դեմ:

Նախարար – Մեր կառավարությունը պաշտոնապես մահվան է դատապարտել Մուստաֆա Քեմալին: Մենք նրան հայրենիքի և խալիֆի դավաճան ենք հայտարարել... Ինչո՞ւ պետք է բողոքենք հույների հարձակման դեմ, որ մեզ օգտակար եղավ:

Լրագրող. – Այս հարձակումը արժանի դիմադրության կարժանանա՞:

Նախարար. – Ո՛չ, Քեմալի բանակում բացակայում են անհրաժեշտ կարգուկանոնն ու կազմակերպվածությունը: Այն կազմված է հանցագործներից և ավազակներից:

Լրագրող. – Որքա՞ն կտևի այս հարձակումը:

Նախարար. – Ես զինվորական չեմ: Սակայն ես համոզված եմ, որ հունական բանակը կգործի արագ ու վճռական և մի քանի շաբաթից կհայտնվի Անկարայի մատույցներում»:

Իսկ Ստամբուլի մամուլն այլ կերպ էր արձագանքում: Ի նշան սգո՝ պայմանագրի ստորագրման օրը գրեթե բոլոր թերթերը սև շրջանակներով տպվեցին, իսկ «***Այեմդարը***» ողբում էր «բազմադարյա փառքը, մարգարտի պես անապակ պատմությունը, որ հավերժացնում է բազում սերունդների մատուցած զոհերը...»:

Անգամ հաղթողներն առանձնակի հպարտ չէին ստորագրված պայմանագրով: Սֆորցան[70*], Իտալիայի արտաքին գործոց նախարար դառնալով, Թուրքիային առաջարկեց «բարեկամական, տնտեսական և բարոյական աջակցություն՝ տրամադրելով լիակատար ինքնուրույնություն»:

Լոնդոնում և Փարիզում գիտակցում էին, որ առնվազն քսան դիվիզիա է հարկավոր, որպեսզի պայմանագրի կետերը կատար-

---

* Կառլո Սֆորցա (24.01.1872-04.09.1952) – իտալացի քաղաքական գործիչ, 1920-1921, 1947-1951 թթ. ԱԳ նախարար:

վեն: Սակայն նրանք չէին կամենում մարտնչել: Ֆրանսիական սենատը հրաժարվեց գաղութարար զորքեր ուղարկել Փոքր Ասիա, որպեսզի չվտանգի աֆրիկյան գաղութների ապագան: Եթե հավատանք Ֆրանսիայի նախագահ Պուանկարեին*, պայմանագրի ստորագրման արարողությունը հուղարկավորության էր նման. «Սևրի ճենապակու գործարանի տարածքում ստորագրվեց պայմանագիրը... որ նույնքան փխրուն էր... Չի կարելի դրան դիպչել. Հունաստանի և Իտալիայի հակադիր նպատակները քիչ մնաց վերջին պահին ամեն բան փչացնեն: Մի քանի անգամ ստիպված եղան ստորագրման արարողությունը հետաձգել: Վերջապես այն կայացավ՝ հոգնության և ոգևորությունից զուրկ մթնոլորտում, ինչն ստիպեց, որ մի քանի ուշադիր դիտորդներ խոսեն ճնշված հոգեվիճակի մասին, ասես այն ի ցույց էր դնում Արևելքում Ֆրանսիայի ազդեցության նկատելի նվազումը»: Միակ մարդը, որ միամիտ բավարարվածությամբ ձեռքերն էր շփում, Հունաստանի վարչապետ Վենիզելոսն էր, որ պատրաստակամորեն ընդունել էր Լոնդոնի և Փարիզի կողմից իրեն վստահված ժանդարմի դերը:

Դեռևս 1920 թ. հունիսի 18-ին գեներալ Վիլսոնը գրառել էր իր օրագրում. «Հույների օգնությունն անհրաժեշտ է մեզ, բայց այս ամենը կավարտվի Թուրքիայի ու Ռուսաստանի հետ պատերազմով և Կոստանդնուպոլսից մեր հարկադիր հեռացմամբ»:

---

* Ռայմոն Պուանկարե (1860-1934)–ֆրանսիացի պետական-քաղաքական գործիչ, 1913-1920 թթ. Ֆրանսիայի նախագահ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Աշունը եկավ: Անկարան շրջապատող բլուրների վրա գյուղացիները բերք են հավաքում: Մի փոքր ավելի հյուսիս՝ Չորումից եկող ճանապարհով անցնողներին ստուգելիս ոստիկանությունը բռնում է հույն ձեռներեց Միլթիադիին: Նա Ստամբուլից էր ժամանել և հայտնում էր, որ ցանկանում է Մուստաֆա Քեմալին հանձնել մոր նամակը: Նրան անմիջապես Անկարա են հասցնում, ուր համենայնդեպս տեղավորում են բանտում, իսկ Զյուբեյդեի նամակն անմիջապես հասցնում են Քեմալի նոր նստավայր:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Զյուբեյդեի նամակը թվագրված է օգոստոսի 15-ով: «Սիրելի՛ որդիս. Վաղուց ինձ նամակ չես ուղարկել և քո մասին լուր չես տվել...»: Մոր և որդու փոխհարաբերությունները հեշտ չէին ձևավորվում, չնայած նրանց ապշեցուցիչ նմանություններին. իշխելու միևնույն ցանկությունը, պարտության նկատմամբ անհանդուրժողականությունը և հատկապես համոզման ուժը: Թերևս տարբեր էին նրանց համոզմունքները, անգամ հակադիր. Զյուբեյդեն անանց արժեքները և փադիշահի գերակա իշխանությունը ճանաչող ուղղադավան մուսուլման էր, ինչը բնորոշ էր գյուղական բնակչությանը:

Որդիական պարտքը կատարող և մորը հարգող Քեմալը փորձում էր համոզել նրան, որ իր գաղափարներն արդար են: Վերոնշյալ նամակից քսան ամիս առաջ Քեմալը գրել էր մորը. «Սիրելի՛ մայրիկ. Ստամբուլից մեկնելուցս ի վեր չեմ կարողացել քեզ գրել՝ բացառությամբ մի քանի հեռագրերի»: Սրան հաջորդում է իր հրաժարականի, կառավարության դեմ հանդես գալու, Սիվասում կոնգրեսի կազմակերպման մանրամասն հիմնավորումը: Եւ վերջապես եզրափակիչ փաստարկը. «Դու լավ գիտակցում ես, որ ես գիտեմ, թե ինչ եմ անում: Եթե վստահ չլինեի վերջնական հաղթանակի հարցում, ոչինչ չէի ձեռնարկի: Հարգանքով համբուրում եմ ձեռքերդ...»:

Քեմալն սկսեց խորասուզված ընթերցել մոր նամակը: Զյուբեյդեն գրում էր իր առողջության, Քեմալի քույր Մահբուլեի և, իհարկե, քաղաքականության մասին. «Եթե Անատոլիայում կարգուկանոն չհաստատվի, Ստամբուլում իրավիճակն աղետալի կդառնա... Կասկածից վեր է, որ Անատոլիայում շուտով կճանաչեն կառավարության ուժն ու հայացքները»: Քեմալը բորբոքված է: Նա անմիջապես գրում է իր ներքին գործերի նախարարին. «Վստահ եմ, որ նամակն այս կեղծ է. անհրաժեշտ քայլեր ձեռնարկեք»: Միլթիադին կանգնեց անկախության տրիբունալի առջև, որ նոր էր ստեղծվել՝ դավաճաններին դատելու համար: Սակայն վերջ ի վերջո Միլթիադին արդարացվեց:

1926 թ. Քեմալը կասի Զյուբեյդեի մասին, որ «իր աչքերում նա երևելի կնոջ բարոյականության, մաքրասրտության և շնորհների մարմնավորումն էր»:

ԿԱՐՄԻՐ ՀՈՍԱՆՔ

Այս դրվագը, թերևս, այնքան էլ կարևոր չէ: Անկարայում աշնան սկզբի ամենակարևոր իրադարձությունը Ռուսաստանի հետ բանակցություններն էին: Կարմիրը մտավ նորաձևության մեջ: Առաջինը զինվորականներն էին. դեռևս հուլիսի վերջերին թուրք հեծյալները և կարմիրբանակայինները հանդիպեցին Նախիջևանի մերձակայքում՝ ադրբեջանական տարածքում և եղբայրական հաջերմ հարաբերություններ սկսեցին (1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանը ճանաչեց Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի՝ Կարմիր բանակի կողմից «ժամանակավոր զավթումը»): Ռուսների ողջույնին ի պատասխան՝ թուրքերը պաճուճավոր հանդիսավորությամբ արձագանքեցին. «Կարմիր արևը վեր է խոյանում սքանչելի վեհությամբ՝ իր վառ լույսը ճառագելով Անատոլիայի գետերի և մառախլապատ լեռների վրա»: Դատելով աստղերից, գլխարկներին ամրացված կարմիր ժապավեններից և ալ փողկապներից, կարելի էր մտածել, թե ազգայնամոլները պարզապես սիրահարվել են բոլշևիկներին...

«Ռուսաստանից բացի՝ որևէ այլ հույս ունե՞նք»: Հավանաբար ո՛չ. Ֆրանսիայի հետ կնքված ժամանակավոր զինադադարը խախտվել էր ֆրանսիական ընկերություններից մեկին պատկանող՝ Զոնգուլդակի հանքերի գործարկման հետ կապված: Կիլիկիայում դարձյալ պատերազմ էր: Երկու օր տևած ջարդերի ընթացքում մի քանի հազար թուրք փախավ Ադանայից, իսկ Այնթապի պաշարումը, ուր թուրքերը հերոսաբար դիմադրում էին, ամիսներ ձգվեց: Կոնյայի կարճատև, սակայն կատաղի խռովությունը, որ պահպանողականներն էին բարձրացրել, ցույց տվեց, որ չնայած օսմանյան կայսրության կողմնակիցները ամեն հույս կորցրել են, բայց դեռևս կարող են վնաս պատճառել: Արևելյան Անատոլիային շարունակում էր սպառնալ Հայաստանը: Եվ վերջապես՝

հունական զորքերը դարձյալ հարձակման են անցել: Մնում են միայն իտալացիները՝ իրենց հնարավորությունների չափով, և հատկապես բոլշևիկները:

Քեմալը ևս՝ միամիտ երեխա չէր: Ուշադիր ընթերցելով 1909 թ. Փարիզում հրատարակված «Իրատեսական արտաքին քաղաքականություն» գրքույկը, նա կարողանում էր թացն ու չորը դատել: Հուլիսի 3-ին նա հայտարարեց. «Մեր ընկերներն ասում են մեզ, որ հարկ է բոլշևիկ դառնալ: Սակայն մենք մեր ավանդույթներն ու սկզբունքներն ունենք, որոնց հարազատ ենք մնում: Մենք կապ ենք պահում բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Այս է ամենը»: 14 օգոստոսի. «Գիտեք, որ համաշխարհային պատերազմի վերջում պրոլետարական հեղափոխություն եղավ Ռուսաստանում... Հարկ է ողջունել այն, քանի որ ուղղված է հայտնի թշնամիների դեմ... Բոլշևիկները... նյութական և բարոյական օգնություն ցույց տվեցին մեզ... Բայց մենք ոչ մեկի խրատների կարիքը չունենք... Մինչ օրս մենք չենք մտածել և առավել ևս ձեռնարկել ոչինչ, որպեսզի բոլշևիկյան սկզբունքները կիրառենք մեր ազգի պարագայում»:

Երկու բառ՝ «մինչ օրս». մի կողմի համար խոստում, մյուսների՝ խաբեություն: Հրաշալի վերջաբան է Լենինի և Մուսթաֆա Քեմալի միջև կայացած շախմատային խաղի համար:

Երկու խաղացողների ուժերն անհավասար են: Ի տարբերություն թուրքերի, որ ամեն ինչի կարիք ունեին, բոլշևիկների ձեռքում հայտնվել էին Դենիկինի և Վռանգելի սպիտակ բանակների թողած զենքի պաշարները: Սակայն նրանք որոշել էին ոչինչ չտալ առանց փոխհատուցման: Մոսկվայի ներկայացուցիչները հայտարարեցին, որ պատրաստ են թուրքերին ոսկի, թնդանոթներ, գնդացիրներ և հրացաններ տրամադրել, միայն Անկարայում կոմունիստական կուսակցության ստեղծման, և, որ ավելի վատ է, Հայաստանին մեծ զիջումներ անելու պայմանով:

Երբ Քեմալի պատվիրակներ՝ արտգործնախարար Բեքիր Սամին և էկոնոմիկայի նախարար Յուսուֆ Քեմալը, անվտանգու-

թյան նկատառումներից ելնելով, Կարմիր Խաչի աշխատակիցների համազգեստ հագած Մոսկվա հասան, Քարաբեքիրը դեռևս Քեմալի թույլտվությանն էր սպասում, որ Հայաստանում «պաշտպանությունն ուժեղացնի», ավելի ճիշտ հարձակման անցնի: Սակայն Քեմալը չափազանց զգուշավոր է և ձեռնպահ է մնում այս քայլից, ինչը մի շարք պատգամավորների դժգոհության առիթ հանդիսացավ, ովքեր նրան մեղադրում էին «արևելքում կրավորական կեցվածք ընդունելու համար»:

Սակայն Քեմալի զգուշավորությունը բավարար չէ: Մեկ ամիս շարունակ Չիչերինը Սամիից կենսական տարածքներ էր պահանջում Հայաստանի համար, իսկ ավելի ստույգ, պահանջում էր, որ թուրքերը թողնեն Վանը, Բիթլիսն ու Մուշը: Բոլշևիկները նախընտրում էին Հայաստանի հետ բանակցություններ վարել: Սակայն Սևրի պայմանագրի հեռանկարով բավարարված Հայաստանն առանձնապես չէր կամենում Մոսկվայի բարեկամական վերաբերմունքին արժանանալ և ետ կանչեց բանակցությունների մեկնած իր ներկայացուցիչներին, ինչն ստիպեց բոլշևիկներին, որ համաձայնության գալու համար Երևան ժամանեն:

Այս ընթացքում՝ օգոստոսի 26-ին Չիչերինն ու Սամին ստորագրում են պայմանագրի նախագիծը: Մի խնդիր է մնում. պայմանագիրը չի լինի, եթե թուրքերը «որոշ տարածք չզիջեն» Հայաստանին:

Ինչ հիասթափություն ապրեց Քեմալը, որ սրանից դեռ մեկ ամիս առաջ ցանկությունն ընդունել էր իբրև իրականություն. «Այս պահից կարելի է համարել, որ նման պայմանագրի ստորագրումը մեծ տպավորություն կգործի Եվրոպայի վրա»: Իր բախտից՝ Մոսկվան դեռ չէր յուրացրել դիվանագիտական արվեստով բոլորին գերազանցելը: Բոլշևիկների առաջին սխալը Լեհաստանն էր: Լեհերին Կիևից քշելով՝ նրանք կարողացան հասնել մինչև Վարշավա: Համարյա հասնելով նպատակին՝ նրանք հանդիպեցին լեհերի կատաղի դիմադրությանը. լեհերին խորհրդատվական

օժանդակություն էր ցույց տալիս ֆրանսիացի զինվորականների մի խումբ, որոնց թվում էր նաև մի ոմն կապիտան դե Գոլ...

Բոլշևիկները երկրորդ անգամ «սայթաքեցին» Բաքվում՝ Արևելքի ժողովուրդների առաջին կոնգրեսի ժամանակ, որ գումարվել էր սեպտեմբերի 1-8-ը: Թուրքերին, պարսիկներին, հայերին, հնդիկներին, չինացիներին, թուրքմեններին, ղրղզներին, քրդերին, թաթարներին, ադրբեջանցիներին և կալմիկներին կոմունիզմի դրոշների ներքո ժողովելու համար Կոմինտերնի առաջնորդներ Զինովևն ու Ռադեկը հրաշալի ներկայացում էին սարքել: Իրենց շրջապատելով կոմունիստական շարժման այնպիսի աստղերով, ինչպես՝ ամերիկացի Ջոն Ռիդը, ֆրանսիացի Սադուլը, հունգարացի Բելա Կունը և «բոլշևիզմի գործի երևելի մարտիկ» Ե. Դ. Ստասովան, Զինովևն ու Ռադեկը Բաքվի մեծ թատրոնում երկու հազար պատգամավոր հավաքեցին: «Մենք հավաքվել ենք, որ քննարկենք համաշխարհային խնդիրները»,– հայտարարեց Զինովևը: Սակայն շատ շուտով Մոսկվայի պատվիրակները հասկացան, որ իսլամն ու ազգայնամոլությունն անհամեմատ ավելի շատ են ոգեշնչում պատգամավորներին, քան համաշխարհային հեղափոխության խոստումները: Քեմալը, որ սկզբում զուսպ կեցվածք էր ընդունել այս կապակցությամբ, հետո լիովին բավարարված էր Բաքվի համաժողովով: Մի՞թե Զինովևը չհայտարարեց, որ «Թուրքիայի ապագան հենց իրեն՝ Թուրքիային է պատկանում», հավելելով՝ «Մենք պատրաստ ենք օգնելու բոլոր հեղափոխականներին, ովքեր հանդես են գալիս անգլիական կառավարության դեմ»:

Ազգային ժողովում հակառակորդները գրոհում են Քեմալին, և նա հակահարձակման է անցնում: Սեպտեմբերի 4-ին Ազգային ժողովում արտաքին գործերի նախարարի ընտրություններն են: Քեմալի թեկնածու Ռեֆեթին հաղթեց Նազիմը՝ «Կանաչ բանակի» առաջնորդներից մեկը, որին պաշտպանեցին նորաստեղծ «Ազգային խումբը»՝ կազմված մոտ հարյուր հոգուց, որ «ռադիկալ

հայացքների կողմնակից էին». հատկապես՝ բոլշևիզմի կամ սոցիալիզմի, ձախ միութենականության և ցանկացած տեսակի առաջադիմականության: Քեմալը տանել չի կարող նման ընդդիմակացություն և պահանջում է, որ չերքեզ Էթեմը հասու լինի Նազըմի հրաժարականին:

Քեմալը վճռում է ի ցույց դնել իր հաստատակամությունն ու իրադրության տերը մնալ: «Մեր ընկերները,– գրում է նա Ալի Ֆուադին,– Ազգային ժողովում «Ժողովրդական խումբ» են ստեղծել: Նրանք վստահ են, որ առանց սոցիալական ծրագրի երկիրն անկախության չի հասնի «...» Չէինք կամենա, որ կառավարությունից դուրս քաղաքական խմբեր լինեին: Բայց այժմ մենք եզրակացրել ենք, որ կառավարությունը կարող է սոցիալական ծրագիր ունենալ»: Այնուհետև Քեմալն ավելացնում է. «Երկրում կոմունիստական կուսակցության ստեղծումը հակասում է մեր շահերին: Սա կհանգեցնի ամբողջությամբ Ռուսաստանին ենթարկվելուն: Ընդհատակյա կոմունիստական կուսակցության ստեղծումը պետք է անհնարին լինի... Քանի դեռ Արևմուտքում և Արևելքում իրադրությունն անորոշ է, հարկ է զգուշանալ հեղափոխություններից: Ինչպես գրել եմ ընկեր Մուսթաֆա Սուբհիին՝ ոչինչ չի կարելի ձեռնարկել առանց կառավարության համաձայնության: Բնական է, մենք բացահայտ կերպով հանդես չենք գա կոմունիզմի և բոլշևիզմի դեմ»:

Հարգանքի արժանի պարզություն և անկեղծություն: Եվ Քեմալն անտեղի ժամանակ չի կորցնում: Ֆուադին դիմելու նախօրեին նա ներկայացնում է սոցիալական մի ծրագիր, որ «Ժողովրդական խմբի» պատրաստածի վարպետորեն արված վերաձևակերպումն էր: Իսկ արդեն սեպտեմբերի 18-ին Ազգային ժողովին ներկայացնում է սահմանադրության նախագիծը: Ով ականջ ունի՝ կլսի. խաղի կանոններն ու օրվա արարողակարգը թելադրում է ինքը, և միայն ինքը:

Քեմալն անցնում է հարձակման, սակայն դա բավարար չէ: Հոկտեմբերի սկիզբ... Անկարան սիրալիր կերպով ընդունում է

ռուսական առաջին առաքելությունը՝ 24 հոգի և հեռախոսակապի սարքավորումներով բեռնված մի մեքենա:

Այժմ Քեմալն ուժեղացնում է ճնշումը: Բոլշևիկներն ու իրենց կողմնակիցները ցանկանում են կուսակցությո՞ւն ստեղծել: Քեմալն առաջ է անցնում նրանցից՝ վճռելով պաշտոնապես ստեղծել թուրքական կոմունիստական կուսակցությունը: «Որոշեցինք,– գրում է նա Ալի Ֆուադին,– որ առավել խելամիտ և պարզ քայլ կհանդիսանա, երկրի ներսում և վստահելի մարդկանց միջոցով, կոմունիստական կուսակցության ստեղծումը: Նադին, Բեհիշը և մի քանի այլ «տատանվողներ» շրջապատվեցին այնպիսի անսպասելի կոմունիստներով, ինչպես՝ Իսմեթը, Ջելալը, Ֆուադը, Ռեֆեթն ու, ըստ որոշ տեղեկությունների, հենց ինքը՝ Քեմալը: Ազգայնամոլների պաշտոնաթերթ «Ազգային ինքնիշխանությունը» բացում է փակագծերը. «Հեղափոխական սկզբունքների հարցում խիստ սխալված կլինենք, եթե փորձենք Թուրքիայում կիրառել Ռուսաստանի մեթոդները: Բոլշևիկյան հեղափոխությունը կիրառելի չէ բոլոր կոմունիստական շարժումների համար... Կույր կապկումը ցանկացած դեպքում վատ բան է, հատկապես երբ այն վերաբերում է հեղափոխությանը»:

1921 թ. հունվարի 29-ին Թուրքիա վերադարձած Մուսթաֆա Սուբհին, որ Բաքվում հիմնել էր Թուրքիայի առաջին կոմունիստական կուսակցությունը, նրա կինն ու 12 մերձավոր գաղափարակիցները զոհվում են հանելուկային հանգամանքներում. նրանք խեղդվեցին Սև ծովում՝ Տրապիզոնի մերձակայքում: Այս սպանության կատարողները այդպես էլ չգտնվեցին: Մի մասը կարծում է, որ դա ժանդարմների մեղքով էր, մյուսները թե՝ միութենականների կողմից կաշառված նավազների: Սակայն, Քեմալի հետ ջերմ հարաբերությունները չի փչացնի Թուրքիայում բոլշևիկների ամենաակնառու համախոհներից մեկի՝ Փարիզի քաղաքագիտական դպրոցի նախկին փայլուն սանի մահը, որին զոհեցին ինտերնացիոնալ և պետական շահերից ելնելով:

Մոսկվան լռություն պահպանեց անգամ այն ժամանակ, երբ Քեմալը հարված հասցրեց Անատոլիայի կոմունիստներին: Սուբհիի մահվանից մի քանի օր առաջ ձերբակալվել էին երիտասարդ կոմունիստական կուսակցության առաջնորդները:

Դժվար է հավատալ, որ Քեմալը զարմացավ, երբ տեղեկացավ, թե Չիչերինը Թուրքիայի և Ռուսաստանի միջև դաշնության ստորագրումը կապում է ազգայնամոլների կողմից Հայաստանին արվելիք տարածքային զիջումների հետ: Եվ այնուամենայնիվ նա ինքն իրեն հարց էր տալիս. արժե՞ արդյոք Քարաբեքիրի ուզածի պես արհամարհել այս «շանտաժը» և հայերի դեմ հարձակում սկսել, թե ավելի լավ է Իսմեթի և Ալի Ֆուադի կարծիքով շարժվել և ամրացնել Արևմտյան ճակատը: Քարաբեքիրի փաստարկներն ավելի համոզիչ էին, և նրա զորքերն արագ կոտրեցին հայկական պաշտպանությունը: Կրակի դադարեցումից և բանակցություններից հետո 1920 թ. դեկտեմբերի 3-ին Թուրքիան և Հայաստանը Ալեքսանդրապոլում պայմանագիր ստորագրեցին. Հայաստանը մնում էր անկախ, սակայն Թուրքիային էր հանձնում Կարսը և երեք նահանգ:

Մոսկվան չի կարող թույլ տալ, որ թուրքերն այսքան խորանան Այսրկովկասում: Դեկտեմբերի 4-ին Մոսկվայի ռադիոն հայտարարում է, որ «Հայաստանը հռչակվում է խորհրդային հանրապետություն... Խորհրդային հանրապետություն դառնալով՝ այդ երկիրը կփրկվի»: «Հայաստանի աշխատավոր զանգվածների կոչով» Կարմիր բանակը մուտք է գործում Հայաստան: Սակայն, չնայած համախոհների բացասական վերաբերմունքին և հայերի հուսահատությանը, Լենինը կտրականապես հայտարարում է. «Հայաստանի և Կարսի համար մենք ոչ մեկի հետ չենք պատերազմելու, առավել ևս Քեմալի»:

«Բուրժուական» Հայաստանը դատապարտված էր: Ինչպես հետագայում պիտի գրի այդ հանրապետության նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, դաշնակիցները, «մեզ ծանր կացության մեջ թողնելով, հեռացան ճիշտ այնպես, ինչպես եկել

էին»: Հայերը կփորձեն դիմադրել Մոսկվային, սակայն 1921 փետրվարին Վրաստանի խորհրդայնացումը նրանց կզրկի անկախության վերջին հույսից: Բոլշևիկներից ազատվելու համար Վրաստանի և Հայաստանի նախկին «բուրժուական» կառավարությունները կփորձեն բանակցություններ վարել Թուրքիայի հետ: Սակայն արդեն չափազանց ուշ էր. Ռուսաստանն իր հսկողության տակ էր վերցրել Կովկասը, իսկ Քեմալն արել էր իր ընտրությունը Մոսկվայի և Անտանտայի միջև: Նա քաջ գիտակցում էր, որ Վրաստանին և Հայաստանին առաջարկելով մերձենալ Անկարայի հետ, Անտանտան ձգտում էր մասնատել իր երկիրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ---------- 3

«Մեր պատմությունը միշտ էլ կառուցել ենք ժխտման և ուրացման վրա » ---------- 5

«Եթե 1915 թվականին տեղի ունեցածը ցեղասպանություն չէ, մի՞թե այն դադարում է լինել հանցագործություն» ---------- 25

«Տեղահանումը սիստեմատիկ ոչնչացման քաղաքականություն էր» ---------- 29

«Աքսորի պատասխանատուներն են Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաները» ---------- 35

1919 թվականի դատավարությունները ---------- 45

Ովքե՞ր տիրացան հայերի գույքին ---------- 47

1915 թվականի զոհերը և առգրավված կյանքի ապահովագրությունները ---------- 57

Հանրապետության հիմնադիրները բոլորն էլ իթթիհաթականներ էին ---------- 64

«Հատուկ կազմակերպությունից» (Թեշքիլաթը Մահսուսա)

քեմալական ռեժիմ տեղափոխված անձնակազմը ---------- 73

Մալթայի աքսորյալները ---------- 77

Մի՞թե պարտավոր ենք պաշտպանել իթթիհաթականների գործողությունները --- 90

Անատոլիայում մի ուրվական է պտտվում ---------- 95

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Յոզղատի տեղահանության և կոտորածների դատական նիստերը ---------- 121

Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատական նիստերը ---------- 177

Բյույուք Դերեի տեղահանության և կոտորածների դատական նիստերը ---------- 237

Խարբերդի տեղահանության և կոտորածների դատական նիստերը ---------- 247

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՌԱՋՆՈՐԴԸ

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Նոր ժամանակներ ---------- 257

Նոր սահման ---------- 260

Նոր խորհրդարան ---------- 265
Աշխատելիս ---------- 271
Վտանգավոր կապեր ---------- 274

Գ Լ ՈՒ Խ ԵՐԿՐՈՐԴ

Հանդուգն քայլերի ժամանակը ---------- 276
Փոքրիկ գլուխգործոց ---------- 277
Հայկական խաղաթուղթ ---------- 280

Գ Լ ՈՒ Խ ԵՐՐՈՐԴ

Սարսափելի ամառ ---------- 282
Բարդ դրվագներ ---------- 282
Բանակին ուղղված քննադատությունը ---------- 287
Սևրյան ճենապակի ---------- 291

Գ Լ ՈՒ Խ ՉՈՐՐՈՐԴ

Պատերազմի և խաղաղության միջև ---------- 294
Պատերազմ և խաղաղություն ---------- 294
Կարմիր հոսանք ---------- 297

ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

III

ТУРКИ О ТУРКАХ

III

ԿԱԶՄՈՂ ԵՎ ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԱՆԱՍ.
ԳԻՏ. ԹԵԿՆ., ԴՈՑԵՆՏ
ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

СОСТАВИТЕЛЬ И РЕДАКТОР КАНД.
ФИЛ. НАУК ДОЦЕНТ
РУБЕН МЕЛКОНЯН

Կազմի ձևավորումը՝ **Ս. Մ. Մելքոնյանի**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բդոյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Կ. Հ. Սարգսյանի**

Ստորագրված է տպագրության՝ 13. 10.2011թ.:
Չափսը՝ 60X84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Հրատ. 16,5 մամուլ, տպագր. 19,3 մամուլ = 17,9 պայմ. մամուլի:
Տպաքանակը՝ 500: Պատվեր՝ 59:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
Ереван Издательство ЕГУ, Ал. Манукяна 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52
Дом типографии ЕГУ, Ереван, Абовяна 52